Մուշեղ Հովսեփյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԴԻՈՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
/1926-2018/

(փաստաթղթեր, ականատեսների
վկայություններ)

Երևան
Հայաստանի հանրային ռադիո
2018

ՀՏԴ 070:654.19(091)
ԳՄԴ 76.031
Հ 872

Հրատարակվում է ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության
խորհրդի որոշմամբ

Հայաստանի ռադիոյի պատմություն /1926-2018/ (փաստաթղթեր,
ականատեսների վկայություններ), Երևան, 2018թ.:
Մտահղացումը՝ Ռուբեն Ջաղինյանի,
Արմեն Ամիրյանի
Հեղինակ՝ Մուշեղ Հովսեփյան
Խմբագիր՝ Լևոն Գալստյան
Լրագրող՝ Կարինե Գևորգյան
Արխիվային աշխատողներ՝ Էմմա Հովսեփյան,
Մարինե Մարտիրոսյան
Համակարգող՝ Արևիկ Ուդումյան
Շարվածքը՝ «Թասկ» ՍՊԸ-ի

Հովսեփյան Մուշեղ
Հ 872 Հայաստանի ռադիոյի պատմություն 1926-2018 (փաստաթղթեր, ականա տեսների վկայություններ)/ Մ. Հովսեփյան.- Եր.: Հայաստանի հանրային ռադիո, 2018.- 252 էջ:

Գրքում ներկայացվում են ՀՀ հանրային ռադիոյի ձևավորման և զարգացման շրջափուլերը, նախկին և գործող մոդելները, ձևաչափերը՝ սկսած ձևավորման շրջանից մինչև մեր օրերում ռադիոյի գործառությունը համացանցում և թվանշային հեռարձակման անցնելու իրողությունը: Գիրքը լրագրության բնագավառում Հայաստանի ռադիոյի ամբողջական պատմության ներկայացման առաջին փորձն է:

ՀՏԴ 070:654.19 (091) ԳՄԴ 76.031

ISBN 978-9939-1-0861-2 © Հայաստանի հանրային ռադիո, 2018

Բովանդակություն

Հեղինակի կողմից 5

Գլուխ առաջին 7

Առաջին հանրապետությունը և առաջին ռադիոն 7

Գլուխ երկրորդ 27

Հայաստանի հանրապետական ռադիոյի հիմնումն ու զարգացման շրջափուլերը 27

1. Հայաստանի հանրապետական ռադիոյի ձևավորման նախադրյալները և հիմնումը.....27

2. Հանրապետական ռադիոն Հայրենական մեծ պատերազմի տարիներին 77

3. Հանրապետական ռադիոն հետպատերազմյան ժամանակաշրջանում..92

4. Հանրապետական ռադիոն «հալոցքի ժամանակաշրջանում».....112

5. Հանրապետական ռադիոն՝ «հեռուստատեսության դարաշրջանում» 145

6. Հանրապետական ռադիոն վերակառուցման ժամանակաշրջանում.....161

Գլուխ երրորդ 192

Արցախյան գոյամարտի լուսաբանումը հանրապետական ռադիոյում.....192

Գլուխ չորրորդ 200

ՀՀ հանրային և մասնավոր ռադիոընկերությունների արդի փուլը 200

1. Հայաստանի հանրային ռադիոն արդի փուլում 200

2. ՀՀ հանրային ռադիոն և հայաստանյան ռադիոշուկան.....218

3.Հայաստանյան ռադիոշուկայի օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները 223

4.Ռադիոլորտի լիցենզավորումը Հայաստանի Հանրապետությունում 233

5. Հանրային ռադիոն գլոբալացման դարաշրջանում 241

Օգտագործված գրականության ցանկ.....249

Հեղինակի կողմից

Նրանք, ովքեր սիրում են ռադիո, լսում են ռադիո և, մանավանդ, նրանք, ովքեր աշխատում կամ մասնագիտորեն առնչվում են ռադիոյին, կհաստատեն, որ առնվազն ծիծաղելի են ռադիոյի մոտալուտ մահը գուժող պնդումները: Այդ պահերին ուզում ես մտնել ռադիոեթեր և ուղիղ կապով հայտարարել. «Սիրելի՛ ունկնդիրներ, հանգի՛ստ եղեք, ռադիոն չի մեռնում, պարզապես մեռնող և հառնող աստվածների պես գնում և գալիս են ռադիոընդունիչ նոր գործիքներ, նոր տեխնոլոգիաներ: Սիրելինե՛ր, ինչպես երեկ, այսօր էլ, վաղն էլ ռադիոն լինելու է օպերատիվ, ակուստիկ, ամենահաս, մատչելի, տեղեկատվության հեռարձակման մեծ շառավիղ ունեցող անփոխարինելի միջոցներից մեկը»:

Այսօր երկրների զարգացման փորձը վկայում է զանգվածային լրատվամիջոցների խիտ ցանցի բացառիկ ազդեցությունը հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական գործընթացների վրա: Դա աներկբայորեն հաստատում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի կատարած ուսումնասիրությունները:[1] Ի դեպ, արդի փուլում աշխարհի զարգացած երկրներում նաև ռադիոյի հզորությամբ են որոշում տվյալ երկրի հասարակական-քաղաքական, տնտեսական և սոցիալ-մշակութային զարգացման մակարդակը:[2]

Հայաստանի հանրային /հանրապետական/ ռադիոն (այսուհետև՝ ՀՌ) անցել է զարգացման տարբեր պատմական շրջափուլեր: Սկզբնապես մրցակցել է մամուլի հետ, ապա՝ հեռուստատեսության, իսկ արդի փուլում՝ արդեն համացանցի հետ: Այն իր տարածման և ազդեցության շառավիղը ձևավորել է դեռևս անցյալ դարի 1920-ական թվականներին: Մասնավոր և միջազգային ռադիոկայանների հետ մրցակցության պայմաններում ՀՌ-ն այսօր դարձել է տեղեկատվության հավաքման, մշակման, տարածման, հանրային կարծիքի ձևավորման գործուն զանգվածային լրատվամիջոցներից մեկը: ՀՌ-ն Սփյուռքում լայն ճանաչում ունեցող այն եզակի ռադիոընկերություններից է, որը հեռարձակվում է բոլոր մայրցամաքներում և ունի հազարավոր հայ և

1 Տես՝ UNESCO Statist, PB, Paris, 2010.
2 Տես՝Шеин В.Н., Современная радиожурналистика. теория и практика, Минск, 2010, стр. 112.

օտարազգի ռադիոլսողներ:

ՀՌ-ն այսօր տեխնիկական և ստեղծագործական ներուժով այն շարժունակ կառույցն է, որը կարողանում է լսարանին գրեթե ակնթարթորեն իրազեկել տեղական և միջազգային կարևոր իրադարձություններին և իրողություններին:

ՀՌ-ի մասին գրվել է և դեռ կգրվի: Սույն գիրքը չի հավակնում սպառելու ամենը, մանավանդ, երբ ինչպես յուրաքանչյուր պատմություն, այնպես էլ ՀՌ-ի պատմությունը, հարաշարժ ու անընդհատ լրացվող նյութ է: Մենք, ընդամենն ամփոփելով և վերաիմաստավորելով նախընթաց փորձը, մեթոդաբանորեն առավել համապարփակ դիտանկյունից ենք զննել հայտնի ու նորահայտ փաստերը և հատկապես կարևորել այնպիսի էական գործոններ, ինչպիսիք են՝ ռադիոլսարանը, ռադիոյի գործառույթներն ու դրանց փոխակերպումները, ռադիոժանրերի դրսևորումները, թեմատիկան և ժուռնալիստական վարպետությունը՝ չանտեսելով, իհարկե, ինչպես պատմական, այնպես էլ սոցիալ-գաղափարական տեսանկյունները:[3]

Այսպիսով, հարուստ փաստական և արխիվային տվյալների հիման վրա ներկայացվում է ՀՌ-ի ամբողջական պատմությունը՝ սկսած Առաջին հանրապետության տարիներին հիմնված պետական ռադիոկայանից, որի գոյությունը տասնամյակներ շարունակ «մոռացվել» էր:

Եվ այսպես, սիրելի՛ ընթերցող, եկեք թերթենք Հայկական ռադիոյի տարեգրության հայտնի և անհայտ էջերը:

Մուշեղ Հովսեփյան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

---

3 Պողոսյան Ստ., Սովետական Հայաստանի հեռուստատեսությունը և ռադիոն,Եր. 1985 թ., Ерицян С., Телевидение в системе средствмассовой информациию Автореф. канд.дис.-Москва,1987г.,Երիցյան Ս., Խոհեր՝ կադրից դուրս, Եր., 2002թ., Овсепян М., Деятельность республиканского радиовещание в чрезвычайных ситуациях. Автореф. канд. дис.- Москва, 1991г., Մարության Ստ., Եթերում Երևանն է, Եր.,1998թ., Հովսփյան Մ., Ռադիո՝ուկայի օրինաչափությունները և զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀ հրատ., Երևան, 2002 թ.:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՌԱԴԻՈՆ

Ռադիոն հաղորդում է, թե երբ է տեղի ունեցել իրադարձությունը, հեռուստատեսությունը՝ ինչպես է տեղի ունեցել, թերթերը՝ ինչու է այն տեղի ունեցել

ԼՈՒԻ ՄԵՐԼԵՆ

1991 թ-ին բացվեց հայոց նորագույն պատմության առջև 70 տարի կախված ծանր ու անթափանց վարագույրը: Անկախ Հայաստանն իրեն վերադարձրեց խորհրդային պարտադրանքով «մոռացված» պատմությունը: Եվ բազում պատմական իրադարձությունների և փաստերի թվում վերադարձրեց նաև ՀՌ-ի կենսագրության առաջին պոկված էջերը: Հետ քաշվեց վարագույրը, և պարզ դարձավ, որ, ըստ էության, Առաջին հանրապետությունն է հիմնել առաջին պետական ռադիոկայանը: Այս կառույցի ուսումնասիրությունը ոչ միայն անհրաժեշտ էր պատմագիտորեն, քաղաքականապես և ճանաչողական առումով, այլև ուներ գիտամշակութային հույժ կարևոր նշանակություն:

Սկզբնապես ռադիոն ձայնային չէր. պարզապես գործնական նշանակություն ունեցող տեղեկատվություն էր փոխանցվում ռադիոկապով: Բայց Առաջին հանրապետությանն օդի պես պետք էր մի այնպիսի գործիք, որը կարողանար օպերատիվ կապ հաստատեր այլ երկրների հետ, հաղորդեր և ընդուներ անհրաժեշտ տեղեկություններ հանրապետության արտաքին և ներքին կացության և ստեղծված իրավիճակի մասին, օպերատիվ լուսաբաներ բավականին բարդ և պայթյունավտանգ տարածաշրջանում գտնվող մեր նորանկախ պետության ներքին և արտաքին քաղաքականությունը:

Նման խնդիր լուծելու համար, սակայն, ժամանակը խիստ աննպաստ էր. երկիրը փաստացի գտնվում էր արտակարգ իրավիճակում: Բայց զարմանալիորեն հենց այդ արտակարգ իրավիճակն էլ պահանջում էր անհապաղ գտնել հարկավոր տեխնիկա, ստեղծագործական կազմ ու համապատասխան կահավորված շենք: Եվ ծնվեց ռադիոկայանը:

Նորանկախ հայկական պետությունն այսուհետ կարող էր պատրաստել և տարածել մեծ թվով ռադիոհաղորդագրություններ և ռադիոտեղեկատուներ:

Առաջին հանրապետության երկրորդ լրատվամիջոցը, որն արդյունք էր գիտատեխնիկական առաջընթացի, դարձավ լրատվության հավաքման, մշակման-հաղորդման հուսալի կապի միջոց և տարածող:

Առաջին հանրապետության նախարարների խորհրդի, խորհրդարանի, ուժային գերատեսչությունների կողմից ընդունված օրենքները, որոշումներն ու հրամանները, ռադիոտեղեկատուների տեքստերը, նամակները, ծառայողական գրագրությունները, հանձնարարությունները և նշումները ամբողջական պատկերացում են տալիս Առաջին հանրապետության ռադիոյի ծավալած գործունեության մասին:

Ուժեղ երկիր ունենալու համար «Ուժեղ ռադիո» էր պետք

Առաջին հանրապետության հիմնադրման առաջին իսկ տարում Նախարարների խորհուրդը որոշեց Երևանում հզոր ռադիոկայան հիմնել և տարածաշրջանի կարևորագույն քաղաքների ու կենտրոնների հետ օպերատիվ կապ հաստատել: Ռադիոկայանի հիմնումով պետք է համակարգվեր պատերազմական դրության մեջ գտնվող հանրապետության տարբեր շրջանների միջև առկա կապը և օպերատիվ միջոցառումներ ձեռնարկվեին՝ թշնամու հնարավոր ոտնձգությունները կանխելու համար: Նախարարների խորհուրդը 1918 թ. նոյեմբերին դիմեց Հայաստանի կառավարությանը (Խորհրդին) 200.000 ռուբլի հատկացնելու խնդրանքով:

Փաստաթղթում նշված է.

«Օրագիր 76: Մինիստրների խորհրդի նիստ»:

16 նոյեմբերի 1918 թ.:

Նախագահում էր՝ մինիստր - նախագահ՝ Յ.Քաջազնունին:

> «Խնդրել Հայաստանի Խորհրդից Երևանում Ռադիոկայան կառուցելու համար Ներքին գործոց մինիստրին

200 000 ռուբլի վարկ բացելու մասին»:[4]

Այդ գումարով պետք է ձեռք բերվեր նորագույն ռադիոկայան: Խորհուրդը հանձնարարեց արտաքին և ֆինանսների նախարարություններին գործնական քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ այլ երկրներում գտնվող մեր դիվանագիտական ներկայացուցիչների միջոցով: Հանրապետության վարչապետը դիվանագիտական ներկայացուցիչներին հեռագրեց հետևալը. «Գործուն աջակցություն ցուցաբերել ձեռք բերելու և Հայաստան տեղափոխելու նորագույն ռադիոկայան՝ կապը այլ երկրների հետ արդյունավետ կազմակերպելու համար»:[5]

Չնայած նորաստեղծ հանրապետության չափազանց ծանր ֆինանսական դրությանը, պետական ռադիոկայանի հիմնման աշխատանքներն ակտիվորեն շարունակվեցին: Արդեն 1919թ. ապրիլի 28-ին Նախարարների խորհուրդն ընդունեց նոր օրենք՝ ռադիոկայանի ձեռք բերման աշխատանքներն արագացնելու և ռազմական նպատակներով օգտագործելու վերաբերյալ: Եվ միայն մայիս ամսին դրանք վերջնականապես պսակվեցին հաջողությամբ: Թիֆլիսում գտնվող Հայաստանի արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը և արդարադատության նախարար Ա. Հարությունյանը շտապ հեռագրեցին հանրապետության վարչապետ Ա.Խատիսյանին՝ հայտնելով նոր տիպի ռադիոկայանի ձեռքբերման հնարավորության մասին. «Հաղորդում ենք, որ այժմ հնարավորություն կա Թիֆլիսում համեմատաբար էժան գնով ժամանակակից ռադիոսարքեր, նոր տիպի «Մարկոնի» ռադիոկայան՝ 50.000 ռուբլով ձեռք բերելու համար: Մենք որպես կանխավճար արդեն մուծել ենք 15.000 ռուբլի»:[6] Հեռագրին հետևում է վարչապետ Ա. Խատիսյանի՝ մայիսի 12-ով թվագրված հրամանը.

«Օրագիր 80

Մինիստրների խորհրդի 1919թ. Մայիսի 12-ի նիստ:

Նախագահում էր՝ մինիստր-նախագահի պաշտոնակա-

4 Ֆ. 199,g 1, գ.11, թ.9
5 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, g. 1, գ. 486, 1-ին մաս, թ. 142:
6 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, g. 1, գ. 486, 1-ին մաս, թ. 142:

տար Ա. Խատիսյանը.

1.Մինիստրների նախագահի զեկուցումը 50.000 ռուբլով ռադիո-կայան ձեռք բերելու հնարաւորութեան մասին:

Համաձայն 1919թ. Ապրիլի 27-ի օրենքի յատկացնել 50.000 ռ. և յանձնարարել Ֆինանսների մինիստրութեանը 50.000ռ. վարկ բանալ Զինուորական մինիստրութեանը»:[7]

Անհրաժեշտ մուծումներից հետո Թիֆլիսում գնված ռադիոկայանը տեղափոխվում է Երևան և հանձնվում զինվորական նախարարությանը:

Այդ նպատակով նախարարների խորհուրդը որոշում է. «Ներքին գործերի մինիստրութեանը տրամադրել հարիւր իննսունմեկ հազար /191.000/ ռուբլի, ուժեղ ռադիօկայանի աշխատանքները աւարտելու համար»[8]:

Թիֆլիսից ժամանած մասնագետների ջանքերով համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ավարտվում են ռադիոկայանի մոնտաժման աշխատանքները:

«Օրագիր 110:

Մինիստրների խորհրդի 1919թ. յունիսի 28-ի նիստից.

Համաձայն 1919թ. Յունիսի 5-ի որոշման բանալ Ներքին գործերի մինիստրութեանը 191.620ռ. վարկ ուժեղ ռադիո-կայանի աշխատանքները ավարտելու համար»:[9]

«Ավարտելով նախապատրաստական աշխատանքները, համաձայն՝ Մինիստրների խորհրդի 1919թ. սեպտեմբերի 15-ի երեկոեան նիստի. «Ռադիո-կայանը յանձնել Զինուորական մինիստրութեան այն պայմանով, որ այն գործածի Կառաւարութեան ընդհանուր կարիքների համար: Կազմել մի յանձնա ժողով Ներքին Գործոց եւ Զինուորական Մինիստրութիւնների ներկայացուցիչներից գեներալ Շահբուդաղեանի նախագահութեամբ, կայանը

7 Ֆ.199.g.1,գ.43.թ.95
8 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 127, g.1, գ.11, թ.142:
9 Ֆ.199g.1, գ.43,թ. 143

փորձելու և ընդունելու համար»:[10]

Ինչպես նշվում է պատմական արժեք ունեցող այս փաստաթղթերում. «ռադիոկայանն ուներ 9 կիլովատ ու 17 ամպեր հզորություն, լրատվություն կարող էր ուղարկել մինչև 1000 վերստ»:[11] Այն պատմության մեջ մտավ «Երևանի ուժեղ ռադիոկայան» անունով. հավանաբար նկատի են առնվել ռադիոկայանի այն ժամանակների համար համեմատաբար մեծ հզորությունը և հեռարձակման շառավղի լայն դիապազոնը: Թերևս ավելի նպատակահարմար կլիներ «ուժեղ»-ի փոխարեն «հզոր» բառի օգտագործումը, որն ավելի համահունչ էր ռադիոկայանի տեխնիկական հնարավորություններին և ավելի էր համապատասխանում նրա կոչմանը: «Մարկոնի» տիպի այդ ռադիոկայանն իր ժամանակի համար լավագույններից էր Եվրոպայում և մեծ տարածում ուներ աշխարհի տարբեր երկրներում: Ինքը՝ իտալացի ռադիոինժեներ Գուլիելմո Մարկոնին, ռադիոկայանների արտադրությանը նպաստելու և ֆիզիկայի բնագավառում ունեցած մեծ վաստակի համար 1909 թ. արժանացել է Նոբելյան մրցանակի: Ի դեպ, 1920թ-ին նա Հաշտության վեհաժողովում Իտալիայի պատվիրակության ղեկավարն էր, որն ստորագրել է Հայաստանի անկախությունը հռչակող փաստաթուղթը:



Գուլիելմո Մարկոնի

10 Ֆ199,g1.գ 43.թ.205
11 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, g. 1, գ.65, թ. 5:

«Ուժեղ ռադիո», ուժեղ սկիզբ

Երևանի ուժեղ ռադիոկայանն սկսեց գործել 1919 թ-ի հոկտեմբերի սկզբին՝ ռադիոհեռագրային կապ հաստատելով հանրապետության և հարևան պետությունների արդյունաբերական մի շարք խոշոր քաղաքների հետ: Այդ փաստը հաստատում է նաև Առաջին հանրապետության վերջին վարչապետ Ս.Վրացյանը, որը «Հայաստանի Հանրապետություն» գրքում պետական ռադիոկայանի գործարկման մասին գրել է. «1919 թ. հոկտեմբերի սկզբին արդեն վերջացել էր կառուցումը Երևանի ուժեղ ռադիոկայանի, որը գործում էր մինչև Բասրա, Տաշքենդ ու Հաշտարխան»:[12]

Երևանի ուժեղ ռադիոկայանն աշխատում էր շուրջօրյա ռեժիմով, որի 22 ժամը տրամադրված էր ռադիոհեռագրային կապին, իսկ երկուսը՝ ժ. 14-16-ը լրատվական աշխատանքներին:[13] Ստացված օպերատիվ լրատվությունը տրամադրվում էր թերթերին կամ թռուցիկների ու տեղեկատուների տեսքով փակցվում քաղաքի մարդաշատ վայրերում: Ռադիոկայանը տեղակայված էր Երևանի երկաթուղային կայարանի վարչական շենքի տարածքում, որը հնարավորություն էր տալիս ակտիվ ռադիոկապի մեջ լինելու հանրապետության տարբեր շրջանների հետ, տարածելու և ընդունելու մեծ թվով ռադիոհաղորդագրություններ և ռադիոամփոփոգրեր:

Կապի միջոցից՝ լրատվության միջոց

Պետք է նշել, որ նորաստեղծ ռադիոկայանը դեռևս չուներ այն տեխնիկական և ստեղծագործական հնարավորությունները, որոնք հատուկ են ժամանակակից ռադիոընկերություններին: Այն ժամանակ ռադիոն տեխնիկապես դեռևս «ձայնային» չէր, չուներ զանգվածային լսարան, միայն նոր մուտք էր գործում լրատվության ասպարեզ և ժամանակ էր պետք, որ նա իրեն դրսևորեր որպես ամենաօպերատիվ զանգվածային լրատվամիջոց:

Հիմնադրման սկզբնական շրջանում պետական ռադիոկայանը բացառապես օգտագործվում էր որպես գերատեսչական «կապի»

12 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջ 323:
13 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, g.1, գ. 574, թ. 27:

միջոց, ռադիոհեռագիր՝ ռադիոհաղորդագրություն ուղարկելու համար, որը հիմնականում օգտագործվում էր ծառայողական նպատակներով: «Նեղ» ռադիոկայանի երկու մասնակիցների միջև եղած կապը բնորոշում էր այդ միջոցի առանձնահատկությունը, ինչպես նաև ռադիոհաղորդումների ձևը, նշանակությունն ու կառուցվածքը: Այն ժամանակ դեռևս բացառվում էր ռադիոհեռագրի հնարավոր կապը զանգվածային լսարանի հետ, և, բնականաբար, այնպիսի հաղորդագրություններ, որոնք ուղղված պետք է լինեին նման լսարանի, դեռևս բացակայում էին: Այդ էր պատճառը, որ այն սկզբնական շրջանում համապատասխանում էր զինվորական նախարարության պահանջներին, և հենց նախարարությունն էլ սկսեց ռադիոկայանի շահագործման աշխատանքները:

Երևանի ուժեղ ռադիոկայանի գործունեության երեք շրջանները

Երևանի ուժեղ ռադիոկայանի գործունեությունը պայմանականորեն կարելի է բաժանել ստեղծագործական երեք շրջանի. առաջին՝ 1919 թ. հոկտեմբերի սկզբից մինչև 1920 թ.ապրիլի 12-ը, երբ այն գտնվում էր զինվորական նախարարության ենթակայության ներքո, երկրորդ՝ 1920 թ. ապրիլի 12-ից մինչև 1920 թ. դեկտեմբերի 2-ը, երբ այն անցավ արտաքին գործերի նախարարության տրամադրության տակ, և, երրորդ՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ից մինչև 1926 թ. սկիզբ, երբ ռադիոկայանը տնօրինեց Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը և ծառայեցրեց իր նպատակներին:

Առաջին շրջան

Ինչպես նշեցինք, առաջին շրջանում պետական ռադիոկայանը գտնվում էր ռազմական նախարարության ենթակայության ներքո, չնայած օրենքով պատկանում էր հանրապետության կառավարությանը և պետք է կատարեր նրա խոսնակի դերը: Հանրապետությունում դեռևս չկար մի միասնական կառույց, որը կառավարեր ռադիոկայանը պետականորեն՝ կենտրոնացված համակարգով ապահովելու նրա օգտագործումը բազմապիսի համապետական պահանջները

բավարարելու համար, ինչպես նաև հետևեր հանրապետությունում ռադիոհեռագրային ցանցի հետագա զարգացմանը: Այդ էր պատճառը, որ առաջին շրջանում ռադիոկայանը բացառապես ընդունում և պատրաստում էր ռադիոհեռագրեր և տեղեկատուներ զինվորական, ռազմական թեմաներով:

Այսպես կոչված քաղաքացիական ռադիոհեռագրակապն առաջին շրջանում հասկանալի պատճառներով չկիրառվեց: Պետական ռադիոկայանն սկզբնական շրջանում օպերատիվ ռադիոկապ հաստատեց Մոսկվա, Կարս, Բաքու, Թիֆլիս, Սևաստոպոլ, Կրասնոդար, Տաշքենդ քաղաքների, այնուհետև՝ հանրապետության տարբեր շրջաններում գտնվող հայոց բանակի ռազմականների հետ: Արտասահմանի հետ կապն իրագործվում էր Մերձավոր Արևելքում գտնվող Բասրա քաղաքի ֆրանսիական ռադիոկայանի միջոցով և նրա օգնությամբ: Ռադիոկայանը հեռագրեր էր ընդունում և հաղորդում երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն:

Այդ տարիներին պետական ռադիոկայանի ղեկավար նշանակվեց այդ գործի հմուտ մասնագետ, հայոց բանակի սպա, պորուչիկ Կ.Վարդանյանը, որին հետագայում փոխարինեց պորուչիկ Գ.Տեր-Հովհաննիսյանը:

Ներկայացնում ենք Երևանի ուժեղ ռադիոկայանի աշխատակիցների ոչ ամբողջական ցուցակը, թվագրված՝ 25.05.1921թ-ին.

«Գրիգորի Տեր- Հովհաննիսյան - ռադիոյի տնօրեն
Ալեքսանդր Ուլիխանյան- էլեկտրամեխանիկ
Պերճ Բարեղամյան - կրտսեր էլեկտրամեխանիկ
Մկրտիչ Հարությունյան - ավագ ռադիոլսորդ
Սուրեն Քանանյան - կրտսեր ռադիոլսորդ
Եվգենի Օսիպով - կրտսեր ռադիոլսորդ
Բաբկեն Խուդգարյան - կրտսեր ռադիոլսորդ
Գեղամ Շահգելդյան - կրտսեր ռադիոլսորդ
Կոնստանտին Բուտաև - աշակերտ
Աշոտ Վարդազարյան - աշակերտ
Բագրատ Խաչիկյան - հերթապահ
Ենոք Մարտիրոսյան - հերթապահ»:[14]

14 Ֆ.127.ց.1,գ.13.թ. 45

Պետական ռադիոկայանի աշխատակազմի նմանատիպ թվաքանակն ընդունված տարբերակ էր այն ժամանակվա ռադիոկայանների համար, որոնք ոչ միայն ժամանակին լրատվություն էին ընդունում և տարածում, այլև հետևում էին ռադիոկայանի տեխնիկական բնականոն աշխատանքին:



Երևանի Ուժեղ ռադիոկայանի առաջին աշխատակիցների ցուցակը (1921թ.)

Ռադիոկայանի լրատվական գործունեությունն սկսվում էր ամեն օր ժամը 14-ից, երկու ժամ թարմ լրատվություն էր տրամադրվում թերթերին, կառավարական տեղեկատուին, ռադիոտեղեկատուների տեսքով լրատվություն էր տարածվում քաղաքի մարդաշատ վայրերում:[15]

Հաշվի առնելով ռազմական օպերատիվ լրատվության կարևորությունը մեր հանրապետության համար՝ ռադիոկայանն ամեն օր ռադիոտեղեկատուի տեսքով օպերատիվ լրատվություն էր ստանում Մոսկվայից, որը միջնորդավորված ձևով հաղորդվում էր Թիֆլիսի ռադիոկայանի միջոցով: Դրանք տեղեկություններ էին Ռուսաստանում ընթացող քաղաքացիական պատերազմի և երկրում ստեղծված

15 Նույն տեղում, թ. 202:

ռազմաքաղաքական բարդ իրավիճակի մասին:[16]

Ռադիոկայանն ակտիվ կապի մեջ էր գտնվում նաև Ռուսաստանի հարավում գտնվող Դենիկինի կառավարության հետ, որի հետ Հայաստանի Հանրապետությունն ուներ դիվանագիտական հարաբերություններ և ռազմական համագործակցություն: Հարևան երկրների նորաստեղծ կառավարությունների հետ հանրապետության ղեկավարությունը պարբերաբար ռադիոկայանի միջոցով կատարում էր ռազմական օպերատիվ լրատվության փոխանակում տարածաշրջանում ստեղծված կացության շուրջ. հետագայում ռադիոկայանը ակտիվ կապի մեջ էր նաև Ղրիմի թերակղզում հաստատված Վրանգելի կառավարության հետ՝ ընդհանուր ճակատ ունենալով բոլշևիկյան Ռուսաստանը: Հայաստանի կառավարության այդ դիրքորոշումը պաշտպանում էին Երևանում լույս տեսնող «Յառաջ», «Ռազմիկ», «Զանգ», «Ժողովուրդ», Թիֆլիսում՝ «Մշակ» օրաթերթերը, որոնք հավանություն էին տալիս Կառավարության արտաքին և ներքին քաղաքականությանը՝ խրախուսելով նրա արևմտամետ դիրքորոշումը:

Ռադիոկայանի հետ կապ հաստատած քաղաքներից, հատկապես հայկական ներկայացուցչություններից ստացվում էին այդ պետություններում առավել կարևոր դեպքերի և իրադարձությունների մասին օպերատիվ ռադիոհաղորդումներ, որոնք վկայում էին նրանց դրական տրամադրվածությունը մեր նորաստեղծ պետության նկատմամբ:

Ունենալով կայուն և անխափան կապի հնարավորություն՝ ռադիոկայանը կարողանում էր պարբերաբար ընդունել և հաղորդել անհրաժեշտ հաղորդագրություններ ու ծածկագրեր, ինչպես նաև հաճախակի որսում էր տարբեր ռադիոկայանների հաղորդած լրատվական հաղորդագրությունները, որոնց մեջ թշնամական բնույթի տեղեկատվությամբ աչքի էր ընկնում հատկապես Բաքվի ռադիոկայանը: Վերջինս պարբերաբար ռադիոծածկագրեր էր ուղարկում Հայաստանում բնակվող մուսուլմաններին՝ նրանց կոչ անելով անհնազանդության ու ապստամբության: Մեր նորաստեղծ հանրապետության համար ստեղծված այսպիսի անբարենպաստ պայմաններում պետական ռադիոկայանն անգնահատելի ծառայություն

16 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց.1, գ. 24, թ,10:

էր մատուցում զինվորական նախարարությանը, օգնում նրան ժամանակին միջոցներ ձեռք առնելու թշնամական գործողությունները կանխելու և համարժեք գործողություններ կիրառելու համար: Երևանի ուժեղ ռադիոկայանի ջանքերով բացահայտվեց և վնասազերծվեց Երևանում Ադրբեջանի մշտական ներկայացուցչի լրտեսական գործունեությունը: Հայաստանում ժամանակին այդ փաստին արձագանքեց նաև կառավարական լրատուն, «Յառաջ», «Ռազմիկ», «Զանգ» և «Մշակ» թերթերը: Գործունեության առաջին շրջանում ռադիոկայանը պատրաստեց 163 ռադիոհեռագրական ամփոփագիր՝ օրվա կարևոր հաղորդագրություններով ու լուրերով: Նկատի ունենալով, որ 1920 թ. սկզբներին հանրապետության ներքին դրությունը համեմատաբար կայունանում էր, և նախադրյալներ էին ստեղծվում տնտեսական բարգավաճման ու քաղաքական ճանաչման համար, ինչպես նաև արտաքին գործերի նախարարության աշխատանքներն ակտիվացնելու և արտասահմանյան երկրների հետ կապն ընդլայնելու նպատակով, կառավարությունը նպատակահարմար գտավ Երևանի ուժեղ ռադիոկայանը հանել զինվորական նախարարության ենթակայությունից և հանձնել արտաքին գործերի նախարարությանը:[17]

Այդ նպատակով Կառավարությունը լրացուցիչ միջոցներ հատկացրեց ռադիոկայանի աշխատանքը բարելավելու համար.

> «Օրագիր 242:
> Մինիստրների խորհրդի 1920 թվի Ապրիլի 15-ի նիստի, Նախագահում էր Մինիստր-Նախագահ՝ Ա.Խատիսեան:
> Հաղորդակցութեան Մինիստրի զեկուցումը Ռադիո կայարանի կարիքների համար փոխարինաբար 264000ռ. տալու մասին:
> Համաձայն զեկուցման որոշվում է տալ փոխարինաբար 264 000ռ»:[18]

1920թ.օգոստոսի 17-ին Հայաստանի Հանրապետության հաղորդակցության նախարարությունն արտգործնախարարությանն առաջարկեց նոր ռադիոկայան կառուցել.

17 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 574, թ. 3:
18 Ֆ.199,ց.1,գ.118,թ.58

«Ձեր ամսի 13-ի հ. 4757 գրության հարցումին կարող ենք ասել, որ իսկապես մեր ունեցած ուժեղ ռադիոկայանը կարողանում է կապ հաստատել միայն նախկին Ռուսաստանի մի քանի ռադիոկայանների հետ, իսկ օտարներից միայն Բասրայի ռադիոկայանի հետ մոտ 1000 վերստ հեռավորության վրա: Եվրոպական պետություն-ներն արդեն փոխել են իրենց ռադիոկայանների սիստեմը, որոնք հնարավորություն են տալիս ավելի փոքր ուժով կապ պահպանել: Մեր նախարարությունը վաղուց կարիք ունի նոր սիստեմի ռադիոկայանի և այդ ուղղությամբ արել է մի քանի քայլեր: Ձեր առաջարկից պետք է օգտվել, եթե ֆինանսական պայմանները ձեռնտու լինեն»:[19]

Երկրորդ շրջան

Երկրորդ շրջանում ռադիոկայանի ստեղծագործական աշխատանքն ընթանում էր երեք հիմնական ուղղություններով՝

ա/ պաշտոնական,

բ/ ներքին կյանք,

գ/ գաղութային կյանք /նկատի ունեին հայ գաղթօջախները/:[20]

Ռադիոհաղորդումների պաշտոնական բաժնում պատրաստում էին ռադիոհեռագրեր, ռադիոտեղեկատուներ ու ռադիոամփոփագրեր կառավարության, խորհրդարանի, նախարարությունների կողմից ընդունված այն օրենքների ու որոշումների մասին, որոնք հրատապ նշանակություն ունեին հանրապետության արտաքին և ներքին քաղաքականությունը տարածաշրջանում և այլ երկրներում լուսաբանելու համար:

Այսպես, ռադիոկայանը օպերատիվ արձագանքեց 1920 թ. մայիսյան ապստամբությանը, երբ բոլշևիկյան հովերով տարված զինվորականության մի ստվար մասն անհնազանդության ու ապստամբության կոչով դիմեց հայոց բանակին՝ փորձելով ապակայունացնել հանրապետության ներքին իրավիճակը և

19 ՀԱԱ,Ֆ.200, ց.1,գ.574, թ.64;

20 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 262-2մաս,թ. 47:

զավթել իշխանությունը: Օգտագործելով լրատվամիջոցների հնարավորությունները՝ կառավարությունը բացատրական աշխատանք տարավ զինվորականության շրջանում՝ ձգտելով նրանց հետ պահել կործանարար և չմտածված գործողություններից, որոնք կարող էին պարարտ հող ստեղծել բոլշևիկների համար՝ տապալելու նորաստեղծ հանրապետությունը: Հանրապետության վարչապետ Հ. Օհանջանյանը ռադիոկապով դիմեց Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) զինվորական գնդերին՝ կոչ անելով «…հետ կանգնել բոլշևիկյան հովերով տարված սպաների ազգադավ, խառնակիչ բռնարարքներից, որոնց նպատակն է քայքայել և կործանել մեր նորելուկ հանրապետությունը: Մենք թույլ չենք տա արյան գնով նվաճված ազատության ոտնահարումը և օրենքի ամբողջ խստությամբ կպատժենք դավաճաններին»:[21] Ռադիոկայանն օպերատիվորեն անդրադարձավ նաև Հայաստանի մի շարք քաղաքներում զինվորականության բարձրացրած խռովությունների լուսաբանմանը՝ պարբերաբար ռադիոն տրամադրելով պետական և հասարակական նշանավոր այրերին, որոնք ողջախոհության և զսպվածության կոչ էին անում զինվորականությանը: Արդեն մայիսի վերջին ապստամբությունը ճնշվեց, իսկ զորագնդերը վերադարձան զորանոցներ: Այդ իրադարձությանն էր անդրադարձել նաև ժամանակի ամենահեղինակավոր թերթերից մեկը՝ «Մշակը», որը մայիսի 14-ի համարում անդրադառնալով Ալեքսանդրապոլում սկսված խառնակություններին՝ Հայաստանի հանրապետության վարչապետ Համո Օհանջանյանին հուշում էր Ս. Մուսայելյանին և նրա կողմնակիցներին պատժել օրենքի ամենայն խստությամբ: «Մշակն» այն համարում էր բոլշևիկյան խռովություն, դավաճանություն՝ նոր ոտքի կանգնող հանրապետության նկատմամբ:

Արդեն հունիսին հանրապետության մամուլը և ռադիոն պարբերաբար սկսեցին անդրադառնալ հայոց բանակի ամառային գործողություններին, որոնք ուղղված էին Հայաստանի ներքին թշնամու դեմ: Հանրապետության հիմնադրման օրվանից պետության ներսում գտնվող թուրք բնակչությունը բազմիցս ապստամբում և ընդվզում էր մեր կառավարության վարած քաղաքականության դեմ՝ անհնազանդություն հայտնելով նրա ընդունած որոշումների

21 ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ. 574, թ.113:

կատարմանն ու իրագործմանը: Այդ պատճառով Հայաստանի կառավարությունը 1920 թ. ամռանը ձեռնարկեց լայնամասշտաբ հարձակում հարավային ուղղությամբ և ընդամենը երկու ամսում «Հայոց պանծալի բանակը ոչնչացրեց թշնամական խմբավորումները Զանգիբասարում, Վեդիում, Արարատում, Շարուրում՝ հասնելով Նախիջևանից 20 վերստ հեռավորության վրա գտնվող Շահթախթի կայարանը,- հաղորդում է ռադիոկայանը, որին լրացնելով՝ «Ռազմիկ» թերթը նշում է, որ «...այժմ հայոց բանակը, ջախջախիչ հարվածներ հասցնելով մի-մի թարախապալար դարձած մուսուլմանական շուրաներին, մաքրեց հանրապետության տարածքը թշնամական տարրերից, նախադրյալներ ստեղծեց Նախիջևանի վերամիավորմանը Հայաստանին»:[22]

Ցավոք, այդ ուրախությունը կարճատև էր: Ընդամենը մի քանի ամիս անց ուխտադրուժ քեմալական Թուրքիան հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա՝ գրավելով նրա տարածքները և բնաջնջելով խաղաղ բնակչությանը: Պետական ռադիոկայանն այդ ժամանակահատվածում գործում էր մեծ ծանրաբեռնվածությամբ և հնարավորինս ընդլայնում էր ռադիոկապն այլ երկրների ռադիոկայանների հետ՝ տալով բազմաթիվ հաղորդագրություններ թուրքական և բոլշևիկյան փոխհամաձայնեցված ռազմական գործողությունների մասին:

Ռադիոկայանը լրատվական հոսքը չդադարեցրեց մինչև Հայաստանի Հանրապետության անկումը՝ արձանագրելով ու դառնալով նրա պատմության և միաժամանակ ճակատագրական և բախտորոշ օրերի և իրադարձությունների վկան ու տարեգիրը:

«Ներքին կյանք» բաժնում ռադիոկայանը պարբերաբար անդրադառնում էր հանրապետությունում տիրող սոցիալ-տնտեսական իրավիճակին, հանրապետության տնտեսությունում տեղի ունեցող փոփոխություններին և ներքին վիճակի կայունացմանն ուղղված միջոցառումների լուսաբանմանը: Ուժեղ ռադիոն հիմնականում տեղեկագրեր էր պատրաստում գյուղատնտեսության բնագավառում տեղի ունեցող փոփոխությունների, հատկապես հացահատիկի արտադրության մասին. «1920 թվականի ամառը բավականին հաջող

22 Մեր թղթակիցը հաղորդում է, «Ռազմիկ», 1920, 30-ը հուլիսի:

էր հայ գեղջուկի համար, առաջին անգամ հավաքվել է հարուստ բերք՝ բնակչության և բանակի կարիքները հոգալու համար, հատկապես ցորեն շատ են հավաքել Արարատյան դաշտում, Շարուրի և Նախիջևանի ազատագրված տարածքներում»:[23] Ցավոք, նմանատիպ հաղորդագրությունները մեծ թիվ չեն կազմում և բավականին կցկտուր են: Եվ, այնուամենայնիվ, հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու այդ տարիներին հանրապետությունում ստեղծված ներքին կացության մասին:

«Գաղութային կյանք» բաժնում ռադիոկայանը հիմնականում անդրադառնում էր Մերձավոր Արևելքում, Թուրքիայում, Իրանում, ԱՄՆ-ում և եվրոպական երկրներում մեր բազմահազար գաղթական հայրենակիցների կյանքին, քաղաքական իրավիճակին. «Սիրիայում և Լիբանանում կուտակված տասնյակ հազարավոր հայեր դանդաղ մեռնում են սովից և ցրտահարությունից, անհապաղ միջոցներ են անհրաժեշտ այդ դժբախտներին փրկելու և կյանքի տանելի պայմաններ ստեղծելու համար: Հայաստանի Հանրապետության կառավարությունը դիմում է Փարիզի վեհաժողովին՝ հատուկ քննարկման նյութ դարձնելու հայ գաղթականության անմխիթար վիճակը և պայմաններ ստեղծելու նրանց վերադարձը հայրենի օջախներ»:[24] Այս բաժնում ռադիոկայանը մեծ տեղ էր հատկացնում նաև արտասահմանյան երկրներում ապրող հայ մեծահարուստ, քաղաքական դիրք ունեցող անձանց հայանպաստ գործունեությանը, հատկապես Պողոս Նուբար փաշայի ջանքերին, որոնց նպատակն էր պաշտպան կանգնել արևմտահայերի արդար պահանջներին տարբեր վեհաժողովներում և կոնֆերանսներում: Հատկապես մեծ ոգևորություն առաջացրեց 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի դաշնագիրը, որը «նոր հույս տվեց արևմտահայ բեկորներին վերադառնալու հայրենի բնօրրան և վերածնելու ավերված տունը»,[25] սակայն այդ ոգևորությունը կարճ տևեց, հազարավոր հայեր նորից ստիպված տարագրվեցին այլ երկրներ՝ հիմնելով նոր գաղթօջախներ:

Ռադիոկայանն արձագանքեց նաև 1920թ. ամռանը Կիլիկիայում

23 Նույն տեղում, թ.167:
24 Նույն տեղում, թ.124:
25 Նույն տեղում, թ.196:

տեղի ունեցող դեպքերին, Մ. Տամատյանի գլխավորությամբ Կիլիկիայի հայկական պետությանն առնչվող քաղաքական իրադարձություններին: Հանրապետության ղեկավարները կարևորում էին պատմական Կիլիկիայի տարածքում հայկական պետականության հաստատման փաստը, սակայն գործուն աջակցություն նրանք այդպես էլ չկարողացան ցուցաբերել: Հետագա իրադարձություններից պարզ դարձավ, որ կիլիկիահայությունը, ինչպես նաև Առաջին հանրապետությունը դատապարտված էին կործանման՝ դառնալով միջազգային դիվանագիտության, գերտերությունների շահերի և խարդավանքի զոհեր:

Երրորդ շրջան



ԴԵԿՐԵՏ

26 Ռադիո կայարանը զօրական կացութեան մէջ յայտարարելու մասին.

Ուժեղ-Ռադիո կայանի քայքայած տնտեսութիւնը վերականգնելու և վերաշինելու համար ուժեղ Ռադիո-կայանը յայտարարւում է զինուորական դրութեան մէջ. Նրա բոլոր բանուորները ու պաշտօնեաները յայտարարւում են մոբիլիզացիայի ենթարկւած. աշխատանքները պիտի տարւեն ռազմական կարգով.

Նախագահ՝ Ս. Կասեան

1920 թիւ Դեկտ. 17

Հր. Կոմ. 20 թ. Դեկտ. 21 № 13

1920թ. դեկտեմբերի 17-ին Խորհրդային Հայաստանի հեղկոմի նախագահ Ս.Կասյանի կողմից ստորագրված դեկրետը Երևանի ուժեղ ռադիոկայանի վերաբերյալ
Դեկրետների ժողովածու,պրակ 1. 1920-1921թթ. էջ 18-19

Երևանի ուժեղ ռադիոկայանի երրորդ շրջանն ընդգրկում է 1920թ. դեկտեմբերի 2-ից մինչև 1926թ. օգոստոս ամիսը:

Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո Երևանի ուժեղ ռադիոկայանի գործելաոճը գաղափարապես վերակառուցվեց և համապատասխանեցվեց պարտադրած պայմաններին: Այդ ծանր օրերին ռադիոկայանը կարողացավ պահպանել իր աշխատակազմը և ընդգրկվեց նորաստեղծ Խորհրդային Հայաստանի զանգվածային

լրատվական միջոցների համակարգում՝ օպերատիվ հեռագրական կապ հաստատելով նորաստեղծ խորհրդային հանրապետությունների միջև:

Ռադիոկայանն անգնահատելի ծառայություն մատուցեց հատկապես 1921թ. փետրվարյան ժողովրդական ցասման դեպքերը օբյեկտիվ ներկայացնելու ժամանակ: Ինչպես վկայում է այդ օրերի ականատես Ստ. Զորյանը. «Ռադիոկայանն այդ ծանր օրերին միակ լրատվական կապի միջոցն էր, որը մեզ կապում էր արտաքին աշխարհի հետ»:[26] Ստեղծված քաղաքական բարդ պայմաններում ռադիոկայանը դարձավ այն օպերատիվ լրատվամիջոցը, որով ռադիոհեռագրեր էին փոխանցվում Բաքվի և Թիֆլիսի ռադիոկայաններին Հայաստանում տիրող իրավիճակի, մասնավորապես Երևանում տեղի ունեցող դեպքերի մասին. «Բոլշևիկյան տեռորի և զինվորականությանը հետապնդելու պատճառով Երևանում տեղի են ունենում ժողովրդական բազմամարդ միտինգներ, որոնք վերաճել են ըմբոստության խորհրդային իշխանությունների դեմ: Ստեղծվել է «Հայրենիքի փրկության կոմիտե»՝ Ս.Վրացյանի նախագահությամբ:[27]Հանրապետության համար այդ ծանր և բախտորոշ օրերին իր ծառայությունն է առաջարկում հայ մեծանուն բանաստեղծ Հովի. Թումանյանը, որը Թիֆլիսում գտնվող Ս.Օրջոնիկիձեի խորհրդով ռադիոյի օգնությամբ կապվում է Երևանում գտնվող «Հայրենիքի փրկության կոմիտեի» հետ՝ հորդորելով հետ կանգնել «նոր արյունահեղությունից ու մարդկային զոհերից», սակայն, արդյունքի չհասնելով, Ս.Օրջոնիկիձեի խնդրանքով մեկնում է Երևան՝ անձամբ հանդիպելու «Հայրենիքի փրկության կոմիտեի» ղեկավարներին: Երկար բանակցություններից հետո Հովի. Թումանյանը ռադիոգիր է ուղարկում Թիֆլիս՝ Ս. Օրջոնիկիձեին, որով հերքում էր այն վտանգավոր տեղեկատվությունը, իբր թե բոլշևիկների իշխանությունը դաշնակցականներն են տապալել, որոնք ցանկանում են իշխանությունը զավթելուց հետո պատերազմ հայտարարել Խորհրդային Ռուսաստանին: Երևանից ուղարկված ռադիոգրերով մեծանուն բանաստեղծը համոզում էր բոլշևիկյան պետական այրերին, որ ապստամբությունը ժողովրդական ընդվզում է, բոլշևիկյան կառավարողների լուրջ սխալների հետևանք, որ դաշնակցականները

26 Զորյան Ստ., Հուշերի գիրք, Երևան,1991,էջ 35:
27 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջ 429:

ոչ թե ապստամբություն են հրահրել, այլ ղեկավարել են ժողովրդական շարժումը մինչև հարցի վերջնական լուծումը:

Փաստորեն ռադիոկայանի օպերատիվ արձագանքը 1921 թ-ի փետրվար-մարտ ամիսներին փրկեց հանրապետությունը նոր արյունահեղություններից, և հարցը լուծվեց համեմատաբար «քիչ» արյան գնով. «Ապրիլի 2-ին խորհրդային կարմիր զորամասերը մուտք գործեցին Երևան՝ ստիպելով «Հայրենիքի փրկության կոմիտեին» Գառնիի վրայով նահանջելու Զանգեզուր, որտեղ դեռևս գտնվում են Հայաստանի Հանրապետության զորքն ու իշխանությունը»:[28] Այս դեպքը մեկ անգամ ևս հավաստեց, որ ռադիոկայանը աստիճանաբար պետության ձեռքին դառնում էր հզոր գաղափարական, քաղաքական զենք:



С. С. Р. А.
НАРОДНЫЙ КОМИССАРИАТ ПОЧТ И ТЕЛЕГРАФОВ.
"14" апреля 1921 г.
№ 18/120
гор. Эривань.

В АРМРЕВКОМ.
копия в НАРКОМИНДЕЛ.

Для нужд Эриванской Мощной радиостанции необходимы некоторые инструменты и материалы, подробный список коих при сем прилагается.

В виду того, что таковые невозможно приобрести на местном рынке, прошу в срочном порядке отпустить аванс Советскими деньгами на приобретение означенных материалов в Тифлисе или же покупку эту поручить представителям Армении в Тифлисе или в Баку.

Это должно быть сделано в течение десяти дней, иначе радиостанция будет

Ռադիոկայանի վերազինման համար մշտապես ֆինանսական միջոցներ էին պահանջվում (1921թ.)

1922 թ-ին Երևանի ուժեղ ռադիոկայանը տեխնիկապես վերազինվեց, որը հնարավորություն տվեց ընդլայնելու լուրերի ընդունման և հաղորդման շառավիղը և անցում կատարելու «խոսակցական» ռադիոլրագրությանը:

Սակայն հանրապետության տարբեր շրջաններում

28 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջ 488:

ռադիոհանգույցների բացակայության պատճառով Երևանի ուժեղ ռադիոկայանի աշխատանքը դեռևս ներփակվում էր մայրաքաղաքի սահմաններում և չուներ զանգվածային լսարան:

Նույն թվականի կեսերից ռադիոկայանի հաղորդումներն սկսեցին եթեր տրվել հատուկ այդ նպատակով քաղաքի մարդաշատ վայրերում տեղադրված բարձրախոսներով: Օրական եթեր էր հեռարձակվում 60 րոպե ռադիոհաղորդում: Չունենալով հիմնական ստեղծագործական կազմ՝ ռադիոկայանը մեծ մասամբ եթեր էր տալիս գիտահանրամատչելի հաղորդումներ՝ հիմնական նյութը քաղելով ռուսական մեծ հանրագիտարանից՝ լսարանին ծանոթացնելով նշանավոր գիտնականների, գրողների, մշակույթի և արվեստի գործիչների կյանքին, ինչպես նաև լրատվական թողարկումներ հանրապետությունում և արտերկրում տեղի ունեցած քաղաքական և տնտեսական իրադարձությունների մասին:[29]

Աշխատանքներն ավելի արդյունավետ և օպերատիվ դարձնելու համար հանրապետության կառավարության հատուկ որոշմամբ հանրապետության պետական խոշորագույն լրատվական գործակալությունը՝ ԱրմենՏԱ-ն /այժմ՝ Արմենպրես/ 1923թ. հոկտեմբերի 10-ից ամենօրյա լրատվություն էր տրամադրում ռադիոկայանին:

Այդ տարիներին անհրաժեշտություն էր առաջացել ընդլայնելու ռադիոլսարանը, որին իր գործուն աջակցությունն է հայտնել Ալեքսանդր Թամանյանը: 1925 թ-ի հոկտեմբերի 1-ին նա հատուկ գրությամբ դիմում է Ժողկոմխորհին՝ Երևանի համար մեծ լսարանի սպասարկող ռադիոընդունարան /բարձրախոս/ ունենալու նպատակահարմարության մասին.

> «Ի պատասխան Ձեր ս.թ. սեպտեմբերի 24-ի գրության հայտնում ենք վոր Յերեվան քաղաքի համար ցանկալի ենք համարում ունենալ Ռադիյո-ընդունարան մեծ լսարանի համար, որը կարժենա 2700 ռուբլի (համաձայն Կովկասյան յեվ Անդրկովկասյան Ռադիյո –ընդունարանի ներկայացրած ցուցակում մատնանշված գներին), իսկ Լենինականի համար ցանկալի է ունենալ Ռադիյո-

29 ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ.191, ց.1, գ. 84, թ. 59:

ընդունարանի լսարան 300-400 մարդու համար, վորը կարժենա 1100 ռուբլի՝ համաձայն վերոհիշյալ ցուցակին: Պետպլանի փոխ. Նախագահ՝ Ա. Թամանյան»:[30]

Ուշագրավ է, որ այդ տարիներին ռադիոկայանի աշխատակիցներն ընտրվել են մրցութային կարգով և նույնիսկ հանձնել են քննություններ, ինչպես վկայում է արխիվում հայտնաբերված փաստաթողթը, որը թվագրված է 1922 թ-ի ապրիլի 8-ով:

Փաստաթղթից երևում է, որ Ռադիոյի աշխատակիցները քննություն են հանձնել մի շարք առարկաներից, այդ թվում՝ թվաբանությունից, հայոց և ռուսաց լեզուներից: Կարելի է ենթադրել, որ ռադիոկայանը որոշակի պայմաններ է դրել իր աշխատակիցների առաջ: Գրությունից պարզվում է, որ շատերը չեն հաղթահարել քննության պահանջները և ստացել են անբավարար:[31]

1926 թ-ին հանրապետական նշանակության ռադիոկայանի մոնտաժման աշխատանքներին զուգընթաց աստիճանաբար նվազեց Երևանի ուժեղ ռադիոկայանի դերը՝ տեղը զիջելով մեծ հզորություն ունեցող հանրապետական ռադիոկայանին, որը երկաթուղային կայարանի վարչական շենքում մոնտաժված ստուդիայից 1926 թ. սեպտեմբերի 1-ին եթեր հեռարձակեց 25 րոպե տևողությամբ առաջին փորձնական ռադիոհաղորդումը:

Կատարելով իր պատմական առաքելությունը՝ 1926 թ.օգոստոսին Առաջին հանրապետության ռադիոկայանը դադարեցրեց իր աշխատանքները: Աշխատակիցները (առաջին հերթին ռադիոհաղորդավարները) տեղափոխվեցին հանրապետական նշանակության ռադիոկայան:

30 Ֆ.130,ց.1,գ.44,թ.30
31 Ֆ127,ց.1, գ. 11, թ.207

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՌ-Ի ՀԻՄՆՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՓՈՒԼԵՐԸ

1. ՀՌ-Ի ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆՈՒՄԸ 1926Թ.

ՀՌ-ի հիմնման համար նախադրյալներ ստեղծվեցին դեռևս 1920-ականների սկզբներին: Չնայած Առաջին հանրապետությունից ժառանգություն մնացած Երևանի ուժեղ ռադիոկայանը դարձավ «խոսող», սակայն հնարավորություն չուներ մեծ շառավղով լրատվություն տարածելու և կապ հաստատելու այլ քաղաքների և պետությունների հետ:

1923 թ-ի նոյեմբերի 21-ին Անդրֆեդերացիայի փոստ-հեռագրական Ժողկոմատը գրություն է ուղարկում ՀԽՍՀ ժողկոմխորհ՝ Երևանում եվրոպական չափանիշներին համապատասխանող ռադիոկայան կառուցելու համար՝ հետևյալ բովանդակությամբ.

> «Սեպտեմբերի առաջին օրերին ակադեմիկոս Ա.Թամանյանի նախագահությամբ, հատուկ հանձնաժողովը, որի կազմում էին ռադիո հրահանգիչ ինժեներ Ցարեվիչը, Երևանի ռադիոկայանի տնօրեն Խացեվիչը, Երևանի հեռախոսացանցի փոխտնօրեն Մազմանովը կատարել են տեղազննումներ ապագա ռադիոկայանի կառուցման համար: Ըստ կազմված ակտի, հետազոտված տարբերակներից նախընտրելին Քանաքեռի տարածքն է, որը գտնվում է հրետանային կայազորի հարևանությամբ: Հանձնաժողովը կենտրոնացել է հենց այս տարածքի վրա»:

Փաստաթղթում հայկական կողմին առաջարկում էին արագացնել նախնական աշխատանքները, քանի որ շինարարության համար անհրաժեշտ մեքենաներն ու սարքավորումներն արդեն ճանապարհին էին:[32]

1920-ականներին ինչպես անհատ անձինք, այնպես էլ որոշ

32 Ֆ.130,g.1,գ.44, թ.23

տեխնիկական խմբակներ տնայնագործական, ինքնաշեն ռադիոընդունիչներով հաղորդումներ էին որսում տարբեր երկրներից և քաղաքներից, հատկապես Մոսկվայից, պարբերաբար լսելով օտար ռադիոկայանների մասնավորապես ֆրանսիական, թուրքական, հունական հաղորդումներ: Այդ հաղորդումները մեծ տարածում գտան հանրապետությունում՝ հիմք դառնալով ռադիոսիրողների խմբակների կազմակերպմանն ու հանրապետական նշանակության ռադիոկայանի ստեղծմանը:

Անցած դարի 20-ականներին խստիվ արգելվում էր անլեգալ ռադիոսարքերի կիրառումը: Դրանք ձեռք բերելու և օգտագործելու համար անհրաժեշտ էր գրանցվել ՆԳ բաժիններում՝պատասխանելով հատուկ կանոնակարգի հարցերին: Այդ արգելքը ԽՍՀՄ-ում վերացվեց 1962 թվականին:

Ռադիոխմբակներ էին ստեղծվում նաև նախկին Խորհրդային Միության շատ քաղաքներում,որոնք ցանկանում էին հաղորդակցվել տարբեր հանրապետություններում գտնվող իրենց գործընկերների հետ:

Ռադիոսիրողների շարժումը Հայաստանում առավել ակտիվորեն սկսեց գործել 1924 թ-ից: Այս թվականին էր, որ կազմակերպվեց «Ռադիոսիրողների ընկերություն»-ը, որին անդամագրվեց 12 հոգի:[33] Կարևորելով նոր զանգվածային լրատվամիջոցի տեխնիկական և ստեղծագործական հնարավորություններն ու ապագան, մայրաքաղաքի գիտական օջախներում սկսեցին ռադիոխմբակների ձևավորման

33 Գալյան Մ., Մի ակնարկ Հայաստանի ռադիոսիրողների շարժման մասին,Եր., Ռադիոաշխատող, 1937,, 1937, N 4-5, էջ 32:

աշխատանքները:

Բայց դրանք ընթանում էին իշխանությունների խիստ վերահսկողությամբ. կար զգոնություն:

1924 թ-ին ուշադրության կենտրոնում են հայտնվում և՛ ռադիոսիրողները, և՛ բոլոր նրանք, ովքեր հետաքրքրված էին ռադիոգործով և ունեին անձնական ռադիոսարքեր:

> Հուլիսի 31-ին ընդունվում է 5-րդ դեկրետը, ըստ որի՝ քաղաքական վերահսկողություն է սահմանվում մասնավոր ընդունող ռադիոկայանների նկատմամբ: Փաստաթղթերից մեկը վկայում է. «Կազմակերպությունները և անհատները, ովքեր ցանկանում էին տեղադրել ռադիոընդունիչ պարտավոր էին անձը հաստատող փաստաթղթերով ներկայանալ մոտակա փոստային բաժանմունք և լրացնել անկետա՝ 2 օրինակից»: Ի դեպ, դիմողը պետք է սպառիչ հիմնավորումներ տար դիմումում ներառված 19 կետերին: [34]



Անդրշրջկապի լիազորը գաղտնի գրությամբ պահանջում է անլեգալ ռադիոսարքերից օգտվողների ցուցակը (1928թ.)

34 Ֆ.127,ց.5,գ.8,թթ.63-64:

Հետագայում ՀՍԽՀ Ժողկոմխորհը գաղտնի փաստաթղթի միջոցով ներկայացնում է ներքին կանոններ, որոնք սահմանափակում էին ռադիոսիրողների աշխատանքը: Օրինակ, նրանց արգելվում էր օգտագործել կամ կիրառել սիրողական ռադիոընդունիչներ, որոնք պատրաստված էին տնային պայմաններում կամ արտասահմանյան էին:[35]

Այնուամենայնիվ ռադիոսիրողների ջանքերով Երևանի պետական համալսարանի տեխնիկական ֆակուլտետում պրոֆեսոր Ա.Անժուրի ղեկավարությամբ ձևավորվեցին առաջին ռադիոխմբակները, որոնց մասնակցում էր ավելի քան 100 ունկնդիր: Հայաստանի տարբեր շրջաններից և մայրաքաղաքից պարապմունքների մասնակցողերիտասարդ ռադիոսիրողների համար Երևանի պետական համալսարանում կազմակերպվեցին հատուկ դասընթացներ: Կարճ ժամանակում հատուկ դասընթացն ավարտեց ավելի քան 500 ունկնդիր, որոնք մայրաքաղաքում և հանրապետության շրջաններում բացեցին ռադիոսիրողների խմբակներ՝ ուսուցանելով և նախապայմաններ ստեղծելով հանրապետությունում ռադիոգործի զարգացմանն ու առաջընթացին: Հայաստանում ռադիոսիրողների շարժման երախտավորներից էր նաև ռադիոինժեներ Կոնստանտին Ավետիսյանը, որը հետագայում դարձավ նորաստեղծ հանրապետական ռադիոկայանի առաջին վարիչը:

1925 թ-ին ավելի հաճախ է քննարկվում Երևանում նոր, լայնատարած ռադիոկայան կառուցելու խնդիրը: ՀԽՍՀ տնտեսական խորհրդակցության նիստում /15.04.1925/ առաջարկվում է պարզել Հայաստանի համար անհրաժեշտ «լայնավետ» ռադիոյի ուժի չափը /200 կամ 250 կիլոմետրի վրա տարածող/ ու դրանց ճշգրիտ արժեքը.

> «Այն դեպքում յեթե 250 կիլոմետրանոց ռադիոյի արժեքը բարձր է 200-անոցից վոչ ավելի քան 100 տոկոսով, նպատակահարմար համարել ունենալ առաջին տեսակի»[36]:

Իսկ ՀՍԽՀ Ժողկոմխորհի 09.09.1925 նիստում քննարկվում է Գ.Աթարբեկյանի անվան Երևանի ուժեղ ռադիոկայանի կառուցման

35 Ֆ.127,g .5, գ.8, թ.62 §5:
36 Ֆ.130,g.1,գ.44,թ.19

համար պահանջվելիք ծախսերի հարցը, որի 3.ա կետով հաստատվում է ռադիոկայանի կառուցման ծախսերի նախահաշիվը, որը կազմում էր 51.106 ռ. 12 կոպեկ:[37]

Նոր ռադիոկայանի կառուցման պայմաններում խիստ արդիական է դառնում մեծ և փոքր լսարանների համար պահանջվելիք ռադիոընդունիչների ձեռքբերման խնդիրը: Այդ ուղղությամբ քննարկումներ են ընթանում 09.10.1925թ-ի նիստում, որտեղ որոշվում է.

> «Անհրաժեշտ համարել ձեռք բերել այնպիսի ապպարատներ, որոնք հնարավորություն կտան լսել Մոսկվայի կայանից:Աշխատանքներին մասնակից անել մասնագետ ույժերի»:[38]

Հաջորդ իսկ տարում 1926 թ-ի նոյեմբերի 19-ի ՀԽՍՀ Ժողկոմխորհի կարգադրիչ նիստում քննարկվում է նաև գավառների ռադիոֆիկացիայի խնդիրը. որոշվում է.

> «Գտնել անհրաժեշտ միջոցներ կառուցելու 35 փոքր հզորություն ունեցող ռադիոկայաններ հանրապետության բոլոր գավառային կենտրոններում, առաջին հերթին՝
>
> 1. Ալավերդու յեվ Ղաթարի գործարան 2կ.
> 2. Յերեվանի գավառում 3կ.
> 3. Լենինական 3կ.
> 4. Լօռու Փամբակ 2կ.
> 5. Նոր-Բայազետի 2կ.
> 6. Զանգեզուրի 2կ.
> 7. Դարալագյազի 2կ.
> 8. Դիլիջանի 2կ.
> 9. Եջմիածնի 2կ.
>
> Ընդունող ռադիոկայանների կառուցման համար

37 Ֆ.130.g.1,գ.44,թ.26
38 Ֆ.130,g.1,գ.44,թ.31

կատարվելիք ծախսը սահմանել մոտավորապես 40000ռ.: Ռադիոընդունողների վրա աշխատելու համար հատուկ անձանց վճարելիք ծախսը կրճատելու նպատակով, որոշվում է այդ աշխատանքը գավառակներում դնել խրճիթ-ընթերցավարների վրա, վորոնց վերապատրաստելու համար Յերեվանում կազմակերպել 15 հատուկ կուրսեր»[39]:



ՀԽՍՀ գավառների ռադիոֆիկացման քարտեզը (1926թ.)

Կարճ ժամանակում մշակվեց ռադիոկայանների տեղակայման քարտեզը, որը Երևանի լայնահաղորդ ռադիոկայանի միջոցով Հայաստանի կենտրոնի և գավառների միջև կապ հաստատելու համար նախատեսվող ռադիոցանցի սխեմա էր:[40]

Ռադիոսիրողների մասին հետաքրքիր փաստական տվյալներ է տպագրել երիտասարդական «Ավանգարդ» թերթը, որի 1925 թ. ապրիլի 22-ի համարում զետեղված «Ովքեր են ռադիոսիրողները» թղթակցությունում կարդում ենք. «Մինչև հիմա ռադիոսիրողների վրա

39 ՀԱԱ,Ֆ.113,ց.2,գ.1263,թ 15 և շրջ.:
40 ՀԱԱ,Ֆ.113,ց.5,գ.520, թ.8:

նայում են որպես զվարճությամբ զբաղվողների:

Սակայն էականն այն է, որ ռադիոն միացնում է գավառը կենտրոնին, ամենահեռու ընկած գյուղը՝ քաղաքին: Ռադիոն ամենաէժան ու ամենամատչելի միջոցն է ամենալայն զանգվածների լուսավորման գործում: Նա միաժամանակ նաև քաղաքական զենք է: Ռադիոյի առջև գլուխ են խոնարհում թե՛ սահմանը, թե՛ տարածությունը: Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր երիտասարդ բանվոր և գյուղացի հետաքրքրվի ռադիոգործով, տարածի նրա գաղափարները լայն զանգվածների մեջ, ուսումնասիրի ռադիոգործը և խմբակներ կազմակերպի: Մենք պետք է ձեռք բերենք ռադիոն»: Արդեն կայացած կազմակերպությունը 1925 թ-ին ընդունվում է համամիութենական ռադիոսիրողների կազմակերպության կողմից և դառնում նրա լիիրավ անդամը: Սրանից ելնելով՝ ՀԿԿ Կենտկոմը 1925 թվականի փետրվարի 23-ին որոշում է ընդունում Երևանում հիմնելու հանրապետական նշանակության ռադիոկայան, որին նախորդել էր 1925 թ-ի փետրվարի 2-ին Անդրֆեդերացիայի փոստ-հեռագրական Ժողկոմատի Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Աթարբեկովի գրությունը ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ս.Լուկաշինին՝ Երևանի ռադիոկայանի լայնածավալ աշխատանքների համար միջոցներ հատկացնելու հարցին դրական լուծում տալու առաջարկով: Սարքավորումների տեղադրման և դրանց հետագա սպասարկման հանձնառուն դառնում էր Անդրֆեդերացիայի համապատասխան նախարարությունը:[41] Կազմակերպչական աշխատանքներ կատարելուց հետո 1925թ. Ապրիլի 6-ին տեղի է ունենում ՀԽՍՀ Պետպլանի նախագահության նիստը, որտեղ կարևորվում է Երևանում լայնատարած ռադիոկայանի կառուցումը: Զեկույցով հանդես է գալիս Ալեքսանդր Թամանյանը և կատարում հետևյալ առաջարկությունները.

Քաղվածք.

1. «Յերեվանում լայնատարած ռադիո-կայանի կառուցումը գտնել անհրաժեշտ:
2. Հայաստանի համար բավական համարել ունենալ մեկ լայնատարած ռադիո-կայան 200 կիլոմետր տարածման սահմաններով:

41 Ֆ.130,g.1, գ.44,թթ.15-16:

Երևանի պատմության թանգարանում պահպանված ռադիոբարձրախոս (1920-1930թթ.)

3. Կայանի արժեքը, համաձայն փոստհեռժողկոմատի տված տեղեկությունների, վորոշել 15 000 ռուբլի:
4. Գտնել անհրաժեշտ կազմակերպիչ ռադիո սիրողների խմբակ հասարակական ինիցիատիվան բարձրացնելու նպատակով»:[42]

Նույն թվականին ՀԿԿ Կենտկոմի որոշմամբ ստեղծվում է իրեն կից ռադիոհանձնաժողով՝ հսկողության տակ առնելու նորաստեղծ հանրապետական ռադիոկայանի հիմնման աշխատանքները, իսկ հետագայում կազմակերպելու նաև նրա բնականոն աշխատանքը:

«Խորհրդային Հայաստան» թերթի 1926թ. հունիսի 13-ի համարից ընթերցողները տեղեկանում են, որ սկսվել է Երևանի լայնահաղորդ ռադիոկայանի շինարարությունը, որը ԽՍՀՄ-ի մասշտաբով 12-րդն էր իր տեսակի մեջ: Թերթը տեղեկացնում էր, որ երկաթուղային կայարանի վարչական շենքում սկսվել են ռադիոկայանի սարքավորումների մոնտաժման աշխատանքները, սարքերը բերվել էին Մոսկվայից և Նիժնի Նովգորոդից: Արդեն օգոստոսին շահագործման հանձնվեց 1,2 կիլովատանոց հաղորդիչ կայանը, կազմակերպվեցին առաջին փորձնական հաղորդումները»:

42 Ֆ.130,ց.1,գ.44,թ.18

Լսեցեք, լսեցեք, խոսում է Երևանի լայնահաղորդ կայանը

Հանրապետական նշանակության պետական՝ այժմյան Հանրային ռադիոկայանը, որը տեղակայված էր երկաթուղային կայարանի վարչական շենքում, իր մոնտաժված ստուդիայից 1926թ. սեպտեմբերի 1-ին եթեր հեռարձակեց 25 րոպե տևողությամբ առաջին փորձնական ռադիոհաղորդումը:

Երևանի հին կայարանի շենքն է, որտեղից էլ առաջին անգամ՝ 1926թ. սեպտեմբերի 1-ին, հեռարձակվել է փորձնական հաղորդումը

Առաջին հաղորդման տեքստը, ցավոք, չի պահպանվել: Հետագա տարիներին հանրապետական ռադիոկոմիտեի առաջին նախագահներ՝ Վահրամ Կարագուլյանը և Գառնիկ Ղազարյանը վկայում են, որ փորձնական եթերների ժամանակ հիմնականում հաղորդում էին ժողովրդական երաժշտություն՝ մայրաքաղաքի լավագույն երգիչ-երգչուհիների մասնակցությամբ: Իսկ առաջին եթերի ժամանակ ռադիոխոսնակ Սուրեն Քանանյանը մի քանի անգամ ընդմիջելով երաժշտությունը՝ արտասանել է. «Լսեցեք, լսեցեք, խոսում է Երևանի լայնահաղորդ կայանը» բառերը և հաղորդել տեղական

նշանակության մի քանի լուր: Ահա այսպես է սկսել իր գործունեությունը հանրապետության ամենախոշոր ռադիոընկերությունը՝ Հանրային ռադիոն, 1926թ. սեպտեմբերի 1-ին: Նույն տարում նախադրյալներ են ստեղծվում նաև հանրապետության տարբեր մարզերում մոնտաժվող ռադիոհանգույցների օգնությամբ Երևանից հեռարձակվող հաղորդումները հանրապետության այլ վայրերում տարածելու համար:

Պահպանվել են հետաքրքիր տեղեկություններ առաջին փորձնական հաղորդումների նախապատրաստման մասին, թե ինչպես ռադիոհաղորդումների կազմակերպիչները շրջում էին Երևանով մեկ՝ այս կամ այն երգչին գտնելու և ռադիոկայան հրավիրելու համար, որը ոչ միշտ էր հաջողվում:[43]

Ռադիոյի առաջին փորձնական հաղորդումների մասին հետաքրքիր դրվագներ է ներկայացրել անվանի երգիչ Ռուբեն Մաթևոսյանը, որն առաջին երաժշտական հաղորդումների մասին մեզ պատմեց հետևյալը.

Ես գիտեմ, որ 1926 թվականին է հիմնադրվել Հայաստանի ռադիոն, բայց այս թվականն առաջին փորձնական եթեր



Երևանի լայնահաղորդ ռադիոկայանի առաջին վարիչ Կոնստանտին Ավետիսյանի գրությունը կայանի շահագործման վերաբերյալ (13.09.1926)

43 Գալյան Ա., Ռադիոյի երաժշտական հաղորդումները,Եր., Ռադիոաշխատող, 1937, № 4-5, էջ 35-36:

ունենալու համար է նշվում: Պաշտոնապես, ռադիոն՝ իբրև երևույթ, հանդես է եկել 1927 թվականից: 1926 թվականի փորձնական եթերին ռադիոյի միկրոֆոնից հնչել է խոսնակի ձայնը.
-Խոսում է Երևանը, միկրոֆոնի մոտ է նորաստեղծ «Արևելյան անսամբլ»-ը երաժիշտ Արամ Մերանգուլյանի ղեկավարությամբ:

«Արևելյան երգչախումբ» (հետագայում Ռադիոյի ժողգործիքների անսամբլ) (1927թ.)

Եվ հենց առաջին ռադիոեթերին հնչել է մեր անսամբլի ձայնը, որը հաջորդ տարի «Արևելյան»-ից վերանվանվեց «Ժողովրդական գործիքների անսամբլ»-ի: Անսամբլում արդեն ներգրավված էին այդ գործի վարպետները, այդ թվում ինքը՝ Արամ Մերանգուլյանը, թառահար էր: Ի դեպ, նա անսամբլը ղեկավարել է ուղիղ 40 տարի, և մահվանից հետո Հայաստանի կառավարությունը որոշեց հավերժացնել նրա անունը՝ անսամբլը կոչելով Արամ Մերանգուլյանի անունով: Լավագույն երաժիշտներից էին Սողոմոն Ալթունյանը, Մարգար Մարգարյանը, Կարո Սարգսյանը, Արշավիր Ֆիրջուլյանը: Քանոնահար Ֆիրջուլյանը 1930-ականների կեսերին արդեն հայտնի էր իբրև երաժիշտ:

Հանրապետության գլխավոր օրաթերթը՝ «Խորհրդային Հայաստանը», № 192-համարում, նույնպես ուշագրավ փաստեր է հրապարակել առաջին ռադիոհաղորդումների մասին: «Ռադիոգրություն Երևանից» թղթակցության մեջ ասվում է. «Երկու օր է արդեն, որ Երևանի լայնահաղորդ ռադիոկայանը փորձնական աշխատանք է կատարում ինքնուրույն տեղեկություններ հաղորդելու: Ռադիոկայանից հաղորդված խոսակցությունները, երգեցողությունը և դաշնամուրի ձայնը այլ վայրերում լսվում են շատ պարզ և առանց աղավաղման: Ռադիոհաղորդումներ հաղորդելու փորձը կատարված է 850-1050մ երկարություն ունեցող ռադիոալիքներով: Այժմ փորձ է արվում ռադիոհաղորդումներ լսելու բնակարաններում՝ առանց ցանցի ընդունող ապարատը միացնելու էլեկտրական թելերի հետ»: Հետագայում ևս հանրապետության գլխավոր օրաթերթն իր մշտական ուշադրության կենտրոնում է պահում ռադիոյի փորձնական հաղորդումների աշխատանքները և պարբերաբար անդրադառնում դրան: Նույն թերթի սեպտեմբերի 12-ի համարում «Երևանի լայնահաղորդ ռադիոկայանի փորձարկումը շատ հաջող անցավ» թղթակցության մեջ նշվում է, որ «վերջին տեղեկությունների համաձայն, կայանի հաղորդումները լսվում են հազար կիլոմետր հեռավորության վրա», իսկ սեպտեմբերի 26-ի համարում լույս տեսած թղթակցությունում նշվում է, որ «հանձնաժողովը գտավ, որ Երևանի ռադիոկայանը Անդրկովկասի առաջնակարգ կայաններից է և անհրաժեշտ համարեց իսկույն ևեթ անցնել կայանի օգտագործմանն ու բարձրախոսների տեղադրմանը»:

Սակայն այդ ռադիոհաղորդումները դեռևս պարբերական բնույթ չէին կրում, նորաստեղծ ստեղծագործական կոլեկտիվը ռադիոկայանի աշխատանքները կարգավորելու համար դեռևս համապատասխան հմտություն ու փորձ չուներ, և դեռ ժամանակ էր պետք այն ձեռք բերելու համար:

Հայ ռադիոժուռնալիստիկայում ՀՌ-ի առաջին պարբերական հաղորդման օրվա վերաբերյալ հետազոտողների միջև տարակարծություններ կան: Մինչև վերջերս ընդունված էր 1926 թ-ի նոյեմբերի 7-ը. ռադիոյի ծնունդը կապվում էր Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հերթական տարեդարձի հետ:[44] Ռադիոլրագրող Ստ. Մարությանի կարծիքով՝ ռադիոյի պարբերական հաղորդումները եթեր են տրվել 1926 թ. սեպտեմբերի 22-ին:[45] Սովետական ռադիոյի օրվան նվիրված համարում «Խոսում է Երևանը» շաբաթաթերթը նշում է 1927թ. ապրիլի 6-ը,[46] երբ հանրապետական մամուլում առաջին անգամ տպագրվեցին առաջին ռադիոծրագրերը: Իսկ 1937 թվականին մասնագիտական բանավիճային «Ռադիոաշխատող» ամսագրում այն ժամանակվա ռադիոկոմիտեի նախագահ Գառնիկ Ղազարյանը Հայաստանի ռադիոհաղորդումների և ռադիոֆիկացման 10-ամյակի կապակցությամբ նշում է 1927 թվականի հունիսի 15-ը:[47]Մեր կարծիքով՝ ստույգն այս թվականն է: «Ռադիոաշխատող» ամսագրի հոդվածագիր, ռադիոկոմիտեի նախագահ Գառնիկ Ղազարյանը ռադիոկայանի հիմնադիրներից էր, եղել էր այդ հաղորդումների կազմակերպման անմիջական մասնակիցը և հոդվածը հրապարակելիս էլ ռադիոկոմիտեի նախագահն էր: ՀՌ-ի պարբերական հաղորդումների մեկնակետը, այսպիսով, 1927 թվականի հունիսի 15-ն է:[48]

---

44 Պողոսյան Ստ., Սովետական Հայաստանի հեռուստատեսությունը և ռադիոն,Եր., 1985թ., էջ 7:

45 Մարության Ստ., Եթերում Երևանն է, Եր., 1998թ., էջ 11:

46 Սովետական ռադիոյի օրը «Խոսում է Երևանը», Եր., 1962, 7-15 մայիսի:

47 Ղազարյան Գ., Սովետական Հայաստանի ռադիոհաղորդման և ռադիոֆիկացման 10 տարին, Ռադիոաշխատող, Եր., 1937թ., № 6, էջ 7:

48 ՂազարյանԳ.,Սովետական Հայաստանի ռադիոհաղորդման և ռադիոֆիկացման 10-տարին, Ռադիոաշխատող, Եր., 1937թ., N 6, էջ4-7:

Առաջին ռադիոծրագրերը

ՀՌ-ի հաղորդումների պարբերականությունը կանոնակարգելու և հաճախականությունը կարգավորելու համար իրադարձային էր հանրապետական մամուլում ռադիոծրագրերի լույս ընծայումը: 1927 թ-ի ապրիլի 6-ին հանրապետական մամուլում տպագրված առաջին ռադիոծրագրերը կազմված էին հիմնականում լուրերից և համերգներից: Այդ ծրագրերում ընդգրկվում էին նաև այն ժամանակ շատ տարածված ռադիոթերթերը, որոնք պարունակում էին ինչպես օպերատիվ, այնպես էլ ժամանակավրեպ լրատվություն: Ռադիոթերթերը պատրաստվում էին կոնկրետ խավի կամ սոցիալական խմբի համար: ՀՌ-ն պարբերաբար եթեր էր տալիս բանվորական, գյուղացիական, պիոներական և զինվորական ռադիոթերթեր, որոնք ռադիոունկնդիրներին էին մատուցվում դասախոսությունների և հանրամատչելի զրույցների տեսքով: Նկատի ունենալով, որ բնակչության զգալի մասի կրթական մակարդակը բավականին ցածր էր, ՀՌ-ի միջոցով գաղափարախոսական քարոզչական աշխատանքներին զուգահեռ, մատչելի, պարզ ձևով տարիքային և սոցիալական տարբեր խմբերին էր ներկայացվում օրվա կարևոր լուրերի և իրադարձությունների մասին պատմող լրատվություն, տարբեր հանրապետություններում և արտասահմանյան երկրներում տեղի ունեցած առավել հետաքրքիր և ուշագրավ դեպքեր և փաստեր: Սկզբնական շրջանում՝ փորձնական հաղորդումների ժամանակ, ռադիոն հիմնականում աշխատում էր երեկոյան ժամերին՝ 18-24-ը: Հետո նաև կիրակի օրերին ժամը 11-ից մինչև 13-ը և երեկոյան՝ 17.30-24.00-ը: Ռադիոհաղորդումների եթերային պարբերականությունը պահպանվում էր երեքշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերին:

Չնայած ռադիոհաղորդումների պարբերականությանը՝ ռադիոծրագրերը ոչ միշտ էին լիարժեք: Նյութերի սղության պատճառով դրանք հաճախ կազմվում էին հապճեպ և ոչ պրոֆեսիոնալ: Այդ տարիների ամենատարածված ռադիոթերթերից էր «Բանվորական ռադիոթերթը»: Ժամանակի պահանջին համահունչ այդ ծրագիրը պարբերաբար լրատվություն էր հաղորդում երկրում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների և դեպքերի մասին: Ռադիոթերթը

բաղկացած էր մի քանի կայուն խորագրերից: Առաջնորդողը որպես կանոն քարոզչական ռադիոզրույց էր՝ նվիրված կուսակցական և բանվորական կյանքին ու առօրյային: Յուրաքանչյուր համարում պարտադիր ընդգրկվում էր տեղերից բանգյուղթղթակիցների ուղարկած թղթակցություններն ու ակնարկները, Մոսկվայից՝ ռուսերեն հաղորդվող լուրերը, թղթակցություններ գիտության և տեխնիկայի վերջին նվաճումների մասին: Ռադիոթերթը թեմատիկ էջեր էր հատկացնում նաև հանրապետությունում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների և դեպքերի լուսաբանմանը, հաստիքային և արտահաստիքային թղթակցական ցանցի միջոցով լսարանին ներկայացնում հանրապետության տարբեր շրջաններում և մայրաքաղաքում տեղի ունեցած իրադարձությունները: Եթեր հեռարձակվող ռադիոթերթերը պատրաստվում էին հանրապետական թերթերի խմբագրություններում՝ պատասխանատու բաժնի վարիչների կողմից և եթեր հեռարձակվում ռադիոյի աշխատակիցների ջանքերով:

Ռադիոկայանի հեռարձակման շառավիղը

Հիմնման առաջին տարիներին ռադիոկայանի հեռարձակման շառավիղն այնքան էլ մեծ չէր, այն հիմնականում ընդգրկում էր Երևանն ու շրջակա գյուղերը: Հանրապետությունում գործող ռադիոսիրողների ջանքերով և օժանդակությամբ առաջին իսկ տարում՝ 1927 թ-ին, ռադիոֆիկացվեց 25 գյուղ, հաջորդ տարին՝ ևս 40-ը՝ ռադիոընդունիչների թիվը հասցնելով 200-ի, որից 80-ը Երևանում: 1928 թ-ին ռադիոհաղորդումների լսելիության շառավիղն ընդլայնելու և մասնագիտական կադրեր պատրաստելու համար ՀՍՍՀ ժողկոմիտեի որոշմամբ հաղորդումների ղեկավարումը հանձնարարվեց Լուսժողկոմատին, իսկ տեխնիկական սպասարկումը՝ Փոստհեռժողկոմատին:

Ռադիոունկնդիրների շրջանակը մեծացնելու նպատակով ռադիոֆիկացվեցին մշակութային օջախները, ինչպես նաև Պետական թատրոնը, Կոնսերվատորիան, Կուլտուրայի տունը, Գյուղացու տունը, Կարմիր բանակի տունը, հասարակական վայրերում տեղադրվեցին բարձրախոսներ, մշակույթի օջախներում ստեղծվեցին «կարմիր անկյուններ», որտեղ բնակչությունը հավաքվում էր ունկնդրելու ՀՌ-ի հաղորդած վերջին լուրերն ու ժողովրդական երաժշտությունը:[49] Ռադիոֆիկացմանը զուգընթաց շարունակվում էին հրապարակվել օրենքներ, որոնք կանոնակարգում և սահմանափակում էին ռադիոսիրողների և մասնավոր ռադիոընդունիչներ ունեցողների աշխատանքները:

1928 թ-ի արխիվում պահպանված մի շարք գաղտնի գրագրություններից կարելի է ենթադրել, որ ռադիոյի կյանքում ավարտվում է ռոմանտիզմի դարաշրջանն ու սկսվում են կուսակցական ագիտպրոպագանդայի ժամանակները, խստացվում է կուսակցական վերահսկողությունը, անգամ Ռադիոկոմիտեի նախագահ է նշանակվում ՀԿԿ Կենտկոմի քարտուղարը:

Ստորև ներկայացնում ենք ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի գաղտնի փաստաթղթերից մի քանիսն առանց մեկնաբանության.

---

49 1928 թվական՝ տարեգրության էջեր, «Եթերում է Երևանը»,Երևան, 1967թ., 14 հոկտեմբերի, էջ 1:

«ՆԳԺԿ-ի համար 441 գրությունն ուղղված ԲՈԼՈՐ ԳԱՎԱՌՉԲԱԺԻՆՆԵՐԻՆ».

Գաղտնի

«Հաճախ պատահում են դեպքեր, յերբ տեղերում, զանազան ռադիո-սիրողներ առանց համապատասխան իրավունքի հաստատում են ռադիոապպարատներ, չտոմարագրելով այդպիսին փոստ-հեռագրական որգաններում և ոգտվում են նրանցից անլեգալ ճանապարհով:

Համաձայն ԽՍՀՄ Ժողկոմխորհի ս/թ մայիսի 14-ի որոշման ոլորտային վարչությունները, տնատերերը կամ կապալառուները պարտավոր են կազմել և ներկայացնել իրենց բնակարաններում գտնվող մասնավոր ոգտագործության ռադիո-ապպարատների ցուցակները և տոմարագրման յենթարկել այդ առթիվ ունեցած փաստաթղթերը համապատասխան փոստ-հեռագրական որգաններում: Գյուղերում այդ աշխատանքը կատարում է Գյուղխորհուրդը:

«Սույն վորոշման հայտարարության կամ պարտադիր վորոշման ձեվով կիրառումը միանգամայն ընդմիշտ արմատախիլ կանի ռադիոյի անլեգալ ոգտագործումը, վորի համար առաջարկվում ե Ձեզ լայն աջակցություն՝ փոստ-հեռագրական գործակալներին այդ ասպարեզում հաջող պայքարի համար»:

Վարչական վարչության պետ՝ Վարդանյան
ՆԳԻԿ-ի քարտուղար՝ Աբրահամյան
Ֆ.127,ց.6,գ.31,թ.221

Անդրշրջկապի լիազոր Հովհաննիսյանը ՀՍԽՀ Ներքի գործերին ուղղված մեկ այլ գաղտնի նամակով, թվագրված 24.07.1928 թ., առաջարկում է միջոցներ ձեռնարկել անլեգալ գործող ռադիոկայանները հայտնաբերելու և թույլտվություն չունեցողներին խիստ պատասխանատվության ենթարկելու մասին:

Ֆ.127, ց.6, գ. 31,թ. 198

1928 թ-ից ուժեղանում է վերահսկողությունը ռադիոկայանների աշխատանքների նկատմամբ: Ուշագրավ է Անդրֆեդերացիայից երեք հանրապետություններին ուղարկված /գաղտնի/ շրջաբերական նամակը՝ թվագրված 08.06.1928 թ:

«Էրիվան ԿՅ Հովհաննիսյանին
/ՀԿՊՏ/ ՓՀԺԿ-ին ուղեկցվող դիրեկտիվ նամակով /08.05.1928/ հ. 22/30 փաստաթղթով Ձեզ առաջարկվում է ծանոթանալ ՓՀԺԿ-ի դիրքորոշմանը ռադիոհեռարձակման հարցերին: Ձեր հանրապետություններում ռադիոհեռարձակման գործի ամբողջական փոխանցման գաղափարը ՓՀԺԿ-ին, ագիտպրոպագանդայի իդեոլոգիան ամեն անգամ պետք է ուղեկցվի հեռարձակման հարցերի քննարկման ժամանակ:
Բոլոր ժողովներում ներկայացված ներկայացուցիչների ունեցած կողմնորոշման և ձեր կողմից կատարված աշխատանքների մասին ձեզնից պահանջվում է հայտնել «Ս»-ին: Ձեզնից պահանջվում է նաև շահագրգռվածություն՝ վերոհիշյալ կողմնորոշումը անմիջական քննարկման դնել համապատասխան կուսակցական օրգաններում:
ՍԿ ՔՎԱՆՏԱՆԻԼԻ
ՍԿՅ ՄՆԱՑԱԿԱՆՈՎ»:

Առաջին տարիներին ռադիոյում դեռևս չկային հաղորդավարներ, այդ պատճառով ռադիոխոսնակի պարտականությունները կատարում էին ռադիոյի աշխատակիցները կամ հաղորդվող հոդվածների, զրույցների, թղթակցությունների հեղինակները: Միայն 1929-ից սկսած ռադիոհաղորդումներն սկսեցին վարել հաղորդավարները: ՀՌ-ի առաջին հաղորդավարներն են եղել Վերգինե Բաբայանը և Սուրեն Քանանյանը (ի դեպ, Ս. Քանանյանը որպես ռադիստ-ռադիոլսորդ՝ աշխատել է նաև Առաջին հանրապետության ռադիոկայանում):

Հանրապետական նշանակության ռադիոկայանն արդեն հաջորդ իսկ տարում չի կարողանում բավարարել լսարանի աճող պահանջները. շենքային սուղ պայմանները և նոր տեխնիկայի

բացակայությունը հնարավորություն չեն տալիս ավելի արդյունավետ ու օպերատիվ կազմակերպելու աշխատանքները:Այդ նպատակով մինչև Երևանում ռադիոյի կենտրոնական ստուդիայի շենքի կառուցելը՝ «Անդրփոստ-հեռժողկոմատը» ՀՌ-ին տրամադրում է 700 ռուբլի, իսկ Երքաղխորհուրդը հատկացնում է չորս սենյակ նորակառույց «Ինտուրիստ» հյուրանոցի վերջին հարկում՝ ռադիոստուդիայի աշխատանքները կազմակերպելու համար: Ստուդիան միացվում է Քանաքեռում շահագործման հանձնված Աթարբեկյանի անվան «ՌՎ-21» ռադիոկայանին՝ Երևանի հասարակական վայրերում տեղի ունեցող զեկուցումները, համերգները, ելույթները և հանդեսները Հայաստանի զանազան գավառներ և քաղաքներ հաղորդելու նպատակով, ընդարձակվում է նաև լրատվության հաղորդման շառավիղը:

Երևանի «Ինտուրիստ» հյուրանոցը. 1920-ականներին այստեղ՝ 4-րդ հարկում աշխատել է Հայաստանի ռադիոն (մինչև 1936թ.)

Այժմ «Գրանդ հոթել Երևան» հյուրանոցի վերջին հարկում տեղակայված ռադիոստուդիայի աշխատանքների մասին հետաքրքիր բան է պատմել նաև Ռուբեն Մաթևոսյանը, որը կապված է մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի հետ.

> *«Ինտուրիստ» հյուրանոցում՝ կինո «Մոսկվայի» դիմաց, որն այսօր այլ անուն ունի՝ «Գրանդ հոթել Երևան»... 4-րդ հարկում ժամանակին ծվարել է Հայաստանի ռադիոն: Այնտեղ է ապրել նաև Եղիշե Չարենցը՝ 2-րդ հարկում և անգիր է իմացել թե՛ մեր փորձերի ժամերը, թե՛ մեր անսամբլի ելույթի ժամերը և պարտադիր ներկա է եղել*

բոլոր համերգներին՝ վերապրելու այն գեղեցիկ պահերը, որ տալիս էր անսամբլը՝ միկրոֆոնի առջև: Հետո Ռադիոն տեղափոխվել է ավելի ազատ տարածք՝ Փոստի շենք … Հետո նոր միայն կառուցվել է այս շքեղ շենքն ու ռադիոն տեղափոխվել է այստեղ: Խոսքը ներկայիս Ռադիոտան մասին է:

Ռադիոկայան Քանաքեռում

Քանաքեռում շահագործման հանձնված ռադիոկայանին բազմիցս անդրադարձել է «Խորհրդային Հայաստան» թերթը: Դեռևս 1927 թ-ի օգոստոսին «Քանաքեռում ռադիոկայան է կառուցվում» թղթակցության մեջ թերթն իր ընթերցողներին հայտնում էր, որ «…մոտ ժամանակներս Քանաքեռում վերսկսվելու են 4 կիլովատ հզորություն ունեցող ռադիոկայանի կառուցման աշխատանքները: Կայանը պատրաստ կլինի 1928 թվականին»: Նույն ռադիոկայանի մոնտաժման աշխատանքներին խանգարող օբյեկտիվ պատճառներին թերթն անդրադարձել է 1929 թ-ի հունիսի 7-ի «Ինչու՞ են ձգձգվում Քանաքեռի ռադիոկայանի մոնտաժման աշխատանքները» թղթակցությունում: Նշվում է, որ «կայանի ուշ գործի դրվելու գլխավոր պատճառը Թիֆլիսի նոր կառուցվող կայանի շահագործման ձգձգումն է, որն ունենալու է 20 կիլովատ հզորություն: Նախկին ռադիոկայանը, որը գտնվում է Նավթլուղում, ունի 4 կիլովատ ուժ:

Վերջնականապես որոշվում է Նավթլուղի մոտ գտնվող այդ ռադիոկայանի սարքավորումը փոխադրել Հայաստան՝ Քանաքեռ: Այս կայանի սարքավորումը (խոսքը 4 կվտ ռադիոկայանի մասին է) համապատասխանում է տեխնիկայի վերջին խոսքին և ավելի նոր է: Կայանը վերջնականապես պատրաստ կլինի և գործի կդրվի այս տարվա սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամսին: Հայաստանում Քանաքեռի ռադիոկայանը լինելու է առաջինը, թե՛ իր սարքավորումներով, թե՛ ուժով»:[41]

Քանաքեռի ռադիոկայանի սարքավորումները երկար ձգձգումներից հետո Երևան են հասել միայն 1929 թ-ի դեկտեմբերի սկզբներին, այդ պատճառով էլ ռադիոկայանն սկսել է գործել 1930 թ-ի մարտի վերջին:

Նորաբաց ռադիոկայանն ի վիճակի էր կապ հաստատել Խորհրդային Միության բոլոր խոշոր քաղաքների և արդյունաբերական կենտրոնների, անգամ եվրոպական մի շարք ռադիոկայանների հետ: Շնորհիվ նորաբաց ռադիոկայանի ավելի մեծ թափով սկսեցին ռադիոֆիկացնել հանրապետության շրջանները, տեղադրվեցին մի քանի հազար ռադիոկետեր, կառուցվեցին հարյուրավոր ռադիոհանգույցներ, հանրապետության բնակչության ճնշող մեծամասնությունը հաղորդակից դարձավ Երևանից և այլ հանրապետություններից հեռարձակված հաղորդումներին և երաժշտությանը:

Երաժշտական հաղորդումները

Նոր ռադիոկայանի շահագործումը հնարավորություն տվեց բացի ամենօրյա լրատվական թողարկումներից, կազմակերպելու երաժշտական հաղորդումներ տարբեր տարիքային և սոցիալական խմբերի համար: Ռադիոհամերգներում օգտագործվում էր ինչպես կենդանի հնչողությունը, այնպես էլ գրոմոֆոնային երաժշտությունը: Իսկ առաջին երաժշտական անսամբլը՝ «Արևելյան»-ը, ռադիոկոմիտեում ձևավորվեց 1928 թ-ին, որին նվագակցում էին Սողոմոն Ալթունյանը, Լևոն Մադոյանը, Արտեմ Մեջինյանը և ուրիշներ: Հետագայում այն վերանվանվեց «Հայկական ժողովրդական գործիքների անսամբլի», որը ժողովրդական երաժշտության երախտավոր Ա.Մերանգուլյանի ղեկավարությամբ մեծ ներդրում ունեցավ հայ երգարվեստի և երաժշտության տարածման գործում: Ավելի ուշ անսամբլը կոչվեց Արամ Մերանգուլյանի անունով և գործում է մինչ օրս:

Ռադիոունկնդրում (1930-ականներ)

1920-ական թվականների վերջերին և 30-ականների սկզբներին ձևավորվեցին Ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբը և երգչախումբը՝

արվեստի խոշոր գործիչներ Ռ. Ստեփանյանի, Թ. Ալթունյանի և Կ. Զաքարյանի ղեկավարությամբ: 25 հոգուց բաղկացած երգեցիկ խումբը ղեկավարում էր Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) կոնսերվատորիայի շրջանավարտ, երիտասարդ խորմեյստեր Թաթուլ Ալթունյանը: Պարբերաբար ռադիոյով ելույթ էին ունենում կամերային անսամբլը, լարային տրիոն, փողային նվագախումբը: Մինչդեռ այս ամենն սկսվեց ընդամենը մի քանի փոքրիկ արևելյան անսամբլներով, այսպես կոչված «սազանդարներով», որոնք նոր բացված երաժշտական ստուդիայի ուսուցիչներն ու աշակերտներն էին: Ահա այսպիսի կադրերի օգնությամբ կազմակերպվեցին Ռադիոյի առաջին երաժշտական հաղորդումները: ՀՌ-ն երաժշտական բաժնում մեծ տեղ էր հատկացնում նաև օպերաներին ու բալետներին. Հայկական օպերաներից առաջինը ռադիոյով հաղորդել են Ա. Տիգրանյանի «Անուշի» և Ա. Խաչատրյանի «Գայանեի» ռադիոմոնտաժները: Այդ նպատակով օգտագործվում էին նաև Մոսկվայից պարբերաբար ստացվող տոնֆիլմերը, որոնցից «Կարմեն» օպերայի մոնտաժը և «Եվգենի Օնեգինը» մեծ հետաքրքրություն առաջ բերեցին ռադիոլսարանում: Ունկնդիրների համար հատուկ կազմակերպվում էր երաժշտական ինքնակրթության հաղորդումների շարք՝ ընդգրկելով տարբեր տարիքային խմբերի և սոցիալական խավերի: Այդ տարիներին առավել պրոպագանդվող ձևերից էին.

ա/ առանձին կատարողների համերգները,

բ/ երգերի ուսուցման ժամերը,

գ/ համերգ-հանելուկներ:

Ընդհանուր հաղորդացանցում երաժշտական հաղորդումները հասնում էին 70 տոկոսի: Օրական, միջին հաշվով կազմակերպվում էր 4-5 երաժշտական հաղորդում, ամիսը՝ 90-100 համերգ: Դրանք, ինչ խոսք, բարձրացնում էին ռադիունկնդիրների երաժշտական կուլտուրան, նպաստում ռադիոլսարանի ակտիվ հանգստի կազմակերպմանը: Ուշագրավ վիճակագրություն է պահպանվել Ա.Տոնիկյանի մի հոդվածում, ըստ որի 1928-1929 թթ. ռադիոյի երաժշտական հաղորդումների 85 տոկոսը կազմում էր արևելյան երաժշտությունը, 1929-32 թթ. այն կազմել է ընդամենը 60-65 տոկոս,իսկ 1933-37 թթ. եվրոպական և արևելյան երաժշտության տոկոսները հավասարվեցին:

Չնայած երաժշտական հաղորդումները մեծ տեղ էին գրավում ռադիոյի ընդհանուր հաղորդացանցում, այնուամենայնիվ, գլխավոր դերում մնում էին հասարակական-քաղաքական հաղորդումները: Այդ հաղորդումների միջոցով լսարանին էին մատուցվում «Վերջին լուրերի» թողարկումները, ռադիոթերթերը, արտաստուդիական հաղորդումները, ինչպես նաև կուլտուր-լուսավորչական բնույթի հաղորդումներ («Համալսարանը՝ ռադիոյով»):

«Վերջին լուրեր» ծրագիրը

Հասարակական-քաղաքական հիմնական հաղորդաշարը «Վերջին լուրեր» ծրագիրն էր, որի անդրանիկ հաղորդումը եթեր հեռարձակվեց 1929 թ. մայիսի 27-ին, որը դարձավ պարբերական՝ օրական եթեր հեռարձակելով 4-5 թողարկում: Ծրագիրը հետագա տարիներին աստիճանաբար մեծացրեց պարբերականությունն ու հաճախականությունը՝ դառնալով Ռադիոյի կայուն և լսելի ծրագրերից: Ամեն օր «Վերջին լուրերի» միջոցով հանրապետության ռադիոլսարանին էր մատուցվում Հայաստանում և արտերկրում տեղի ունեցող առավել կարևոր դեպքերի և իրադարձությունների մասին ներկայացվող ամփոփագրերը: Ծրագիրը 1920-30-ական թվականներին եթեր էր հեռարձակվում հիմնականում երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, թուրքերեն, մասամբ էլ քրդերեն:[50]

Առաջին ռադիոթերթերը

1927թ. հունվարից եթեր հեռարձակվեցին առաջին ռադիոթերթերը, որոնք հիմք հանդիսացան ՀՌ-ում 1920-30-ական թթ. սկզբներին հասարակական-քաղաքական հաղորդումների կազմակերպմանը: Ռադիոհաղորդումների թեմատիկայի ընդլայնմամբ աստիճանաբար ձևավորվեցին լսարանային խմբերը, ՀՌ-ով սկսեց պարբերաբար եթեր հեռարձակվել «Գյուղական ռադիոթերթը», որին հաջորդեց «Բանվորական ռադիոթերթը», այնուհետև՝ ռադիոթերթեր կոմերի-տականների, պիոներների, կարմիրբանակայինների համար: Որպես կանոն, այդ ռադիոթերթերը պատրաստում էին հանրապե-տական համապատասխան թերթերի պատասխանատու աշխատակիցները:

50 Մարության Ստ., Եթերում Երևանն է, Եր., 1998թ., էջ 18:

«Համալսարանը՝ ռադիոյով» հաղորդումը

1929 թ-ի աշնանը ՀՌ-ում հիմնադրվեց առաջին կուլտուրլուսավորչական «Համալսարանը՝ ռադիոյով» հաղորդումը, որը նպատակ ուներ, Մոսկվայի ռադիոհամալսարանի փորձի օրինակով, բարձրացնել տեղական ռադիոունկնդիրների կրթական և գիտական մակարդակը: Հաղորդման շրջանակներում հաճախակի կազմակերպվում էին կրթության, արդյունաբերության զարգացման, գյուղատնտեսական վերելքի, խորհրդային շինարարության և հարակից թեմաներով բանավեճեր և քննարկումներ: Այս հաղորդման հիմնադրմանը ժամանակին անդրադարձել է նաև «Խորհրդային Հայաստան» օրաթերթը: Նոյեմբերի 19-ի համարում «Համալսարանը՝ ռադիոյով» հոդվածում թերթն անդրադարձել է հանրապետությունում ռադիոգործի զարգացմանը, խրախուսել ռադիոհամալսարանի հեռարձակումը հանրապետական ռադիոյում, ողջունել ռադիոհամալսարանին կից գործող խորհրդակցական կայանի աշխատանքը: Երևանի ռադիոհամալսարանը, ինչպես և առաջարկում էին «Խորհրդային Հայաստան» թերթում հանդես եկած հեղինակները, առաջին ուսումնական տարին սկսեց վեց



Առաջին նկարում Երևանի լայնահաղորդ ռադիոկայանի աշխատակիցների առաջին ցուցակն է (1928թ.)
Նրանք, ովքեր ՀԿԿ անդամ չէին ազատվեցին աշխատանքից (1929թ.)

բաժնով՝ հանրակրթական, արդյունաբերական ձեռնարկությունների ռացիոնալիզացիայի, խորհրդային շինարարության, կոոպերացիայի, մանկավարժական և հակակրոնական, որոնցից յուրաքանչյուրի ուսուցումը տևեց 7 ամիս՝ հոկտեմբերի 15-ից մինչև մայիսի 15-ը:[51] Հաջորդ ուսումնական տարվանից ռադիոհաղորդումներում մեծ տեղ են հատկացվել գյուղատնտեսական և անասնաբուծական գիտելիքների դասավանդմանը: Դրան համապատասխան՝ ավելացվեցին ռադիոհամալսարանի դասախոսության ժամերը՝ յուրաքանչյուր բաժնի համար նախատեսելով շուրջ 1100 րոպե հաղորդում: Կարճ ժամանակահատվածում հաղորդումը դարձավ ամենալսելի և սիրված հաղորդաշարերից մեկը, որը տարիներ շարունակ գիտահանրամատչելի լրատվություն էր մատուցում լսարանին՝ ծանոթացնելով գիտության, տեխնիկայի, կրթության բնագավառում տեղի ունեցող վերջին նորույթներին ու հաջողություններին:

Կլարա Թերզյան, *վաստակաշատ ռադիոլրագրող*

Պատկերացնո՞ւմ եք՝ 1920-ականներին Հայաստանի բնակչության կեսը, գուցե կեսից ավելին եղել են անգրագետ, և ռադիոն ի՞նչ է եղել նրանց կյանքում՝ լուրեր է հաղորդել, երաժշտություն՝ ճիշտ է շատ սահմանափակ, բայց ինչ ունեցել են, ժողովրդի համար եղել է սիրելի: Ես հետաքրքրվել եմ ռադիոյի պատմությամբ: Այսպիսի հաղորդումներ են եղել՝ տնային տնտեսուհիներին խրատներ՝ ինչպես պատրաստել կերակուրները, ինչպես լվացքը լեղակաջրել... Այսինքն, ճիշտ են վարվել, մարդիկ այդ բոլորի կարիքն ունեին: Եվ ինչ-որ ավանդույթ է ստեղծվել: Երբ ես 1953 թվականին եկա Ռադիո, ուղղակի ապշում էի՝ բոլորը զգում էին և՛ ռադիոյի կարևորությունը, և՛ ինչ ճանապարհ է անցել ռադիոն:

Կատարելով պատմական իր առաքելությունը 1930-ականների վերջին ռադիոհաղորդումը դադարեց եթեր հեռարձակվելուց, իր տեղը զիջելով նոր ձևավորված հասարակական-քաղաքական

51 Տոնիկյան Ա., Երաժշտական հաղորդումները երկրորդ տասնամյակի շեմին, «Ռադիոաշխատող», Եր., 1937, № 6, էջ 21:

խմբագրության այլ հաղորդաշարերի:

Հանրապետական ռադիոն՝ Հանրապետական ռադիոկոմիտե

1929 թ-ի վերջերին հիմնվեց Հանրապետական ռադիոկոմիտեն, որն ուներ 12 աշխատակից և տարեկան պատրաստում էր 2160 եթերաժամ ռադիոհաղորդումներ:

Արխիվային խունացած փաստաթղթերում մինչ օրս պահպանվել է 1928 թ-ի հունիսի 20-ին հրամանագրված ՀՌ-ի տասներկու հոգուց բաղկացած աշխատակիցների ցուցակը: Համաձայն փաստաթղթի՝ ռադիոկայանի հիմնադիր անձնակազմի անդամներն էին.

«1. Ավետիսյան Կոնստանտին - ռադիոկայանի վարիչ
2. Քանանյան Սուրեն - ռադիոկայանի վարիչի տեղակալ
3. Քանանյան Սամվել - ռադիստ
4. Սանդոյան Վարդգես - հերթապահ
5. Շահբազյան Թադևոս - ռադիստ
6. Չարչօղլյան Մնացական - ռադիոմեխանիկ
7. Թումասյան Մեխակ - ռադիոլսորդ
8. Չելիշև Կոնստանդին - ռադիոլսորդ
9. Գևորգյան Սարգիս - հերթապահ
10. Մանուկյան Գառնիկ - հերթապահ
11. Խաչատրյան Անդրանիկ - հերթապահ
12. Մելիք-Ստեփանյան Եղիշե - պահակ»

Առաջին հիմնադիր կազմի ռադիոգործում ձեռք բերած նվաճումներն ու հաջողությունները, կայուն և հիմնավոր նախադրյալներ ստեղծեցին հաջորդ տասնամյակներում հանրապետական ռադիոյի զարգացման համար: Առաջին հիմնադիր կազմը ձևավորվել էր ռադիոսիրողների շարժման մասնակիցներից, որոնց ազատամիտ և ստեղծագործ գործելաոճը և մոտեցումները մեծապես նպաստեցին հանրապետական ռադիոկայանի հետագա զարգացմանը: Սակայն այդ գործելաոճը և համարձակ մոտեցումները ոչ միշտ էին ընդունվում հանրապետության ղեկավարության կողմից, մանավանդ որ նրանք ակտիվ ռադիոկապի մեջ էին ոչ միայն Խորհրդային Միության տարածքում

գործող, այլև արտասահմանյան ռադիոկայանների հետ: Կարճ ժամանակահատվածում պետանվտանգության աշխատակիցների ներկայացրած շինծու մեղադրանքների պատճառով այդ կազմի մեծ մասը հեռացվեց աշխատանքից, խստացվեց կուսակցական վերահսկողությունը ռադիոկայանի նկատմամբ: 1928-1929թթ-ին այս կազմից հեռացան բոլոր նրանք, ովքեր կուսակցական չէին /ՀԿԿ անդամ/, այդ թվում՝ ռադիոկայանի վարիչ Կոնստանտին Ավետիսյանը:

Ստորև ներկայացվող ՀԽՍՀ ներքին գործերի Ժողկոմատի վարչական վարչության պետի շրջաբերական գաղտնի նամակը պատկերացում է տալիս, թե ինչպես են հետապնդվել բոլոր նրանք, ովքեր կհամարձակվեին տանն անլեգալ, չգրանցված ռադիոընդունիչներ ունենալ:Նման խիստ գրաքննության և հետապնդման պայմաններում, այնուամենայնիվ, հանրապետական ռադիոյում ստեղծվում էր նյութատեխնիկական բազան և ձևավորվում էր ստեղծագործական ներուժ, որը հնարավորություն տվեց 1931 թ-ի դեկտեմբերի 22-ին ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահության որոշմամբ ստեղծել ՀԽՍՀ ռադիոհաղորդման կոմիտե, որի նախագահ նշանակվեց Ռուբեն Դաշտոյանը:

Ներկայացնում ենք այդ փաստաթուղթը՝

> «1931 թվականի դեկտեմբերի 19-ին ՀԽՍՀ կենտգործկոմի նախագահությունը որոշում է ընդունում ռադիոհաղորդումների կոմիտե հիմնելու մասին:

Քաղվածք արձանագրությունից.

> ՎՈՐՈՇԵՑԻՆ
>
> 21.1/ ՀԽՍՀ տերիտորիայի վրա ռադիոհաղորդումը ղեկավարելու համար
>
> Կենտգործկոմին կից հիմնել ՀՍԽՀ Ռադիո Հաղորդման կոմիտե:
>
> 2/ ՀՍԽՀ Ռադիո Հաղորդման կոմիտեն հաստատել հետեվյալ կազմով՝
>
> Նախագահ- ընկ.Ռ.Դաշտոյան, Նախագահի տեղակալներ՝ ընկ. ընկ. Կարագյոզյան Վ., Գեվորգյան Բ., անդամներ ընկ. ընկ., Յեղիշե Հովսեփյան /ՓՀԺ լիազոր/, Ադոյան

Պետիկ /կենտկոմի կուլտ պրոպ./, Հայկազունի Հարություն /ՀԱՄԽԻՑ/ Թոփչյան Ստեփան /Ժողտնտխորհից/, Աստվածատրյան /Լուսժողկոմատից/, Բադիկյան Անիկ /Կոլտնտկենտրոնից/, Խաչանյան Ռուբեն /Դիվիզիայի քաղ.բաժնից/, Գեվորգյան Միհրան /ԼՅԿԵՄ կենտկոմ/, Զաքարյան Վարդան /Հայկոոպից/:

Նոր կազմին առաջարկվում է ներկայացնել Ռադիո Հաղորդման կոմիտեի կանոնադրության նախագիծը և ծախսերի նախահաշիվը /19.12.1931թ./»: [52]

1932 թվականի սեպտեմբերի 25-ին ստեղծվում է կանոնադրություն՝ Հայաստանի ռադիոխորհրդի մասին, որը հաստատվում է ՀԽՍՀ ժողկոմխորհի կողմից 1932թ-ի հոկտեմբերի 5-ին:

«1. ԽՍՀՄ Փոստհեռժողկոմատի Անդրկովկասյան Շրջկապի ՀՍԽՀ Լիազորի Վարչության կից հիմնվում ե ՀՍԽՀ ռադիո-խորհուրդ:

2. Ռադիո-խորհուրդը ղեկավարում ե ՀՍԽՀ տերիտորիայի վրա ռադիոհաղորդման ամբողջ գործը (քաղլուսավորական, գեղարվեստական, յերաժշտական, ուսուցման յեվ այլ ռադիո աշխատանքները):

Ռադիոխորհրդին մասնակցում է Լուսժողկոմատի հատուկ ներկայացուցիչը»:[53]Հաջորդ իսկ տարում կանոնադրության բոլոր կետերը քննարկվում և հաստատվում են ՀԽՍՀ Կենտգործկոմի կողմից. «1933 թվականի մարտի 14-ին ՀԽՍՀ կենգործկոմի նախագահության նիստում հաստատվում է Ռադիոհաղորդումների հանրապետական կոմիտեի կանոնադրությունը՝ 11 կետով»:

Քաղվածք

«2. Հանրապետական Կոմիտեի իրավասության խնդիրներն են

ա/ ՀԽՍՀ սահմաններում ռադիո-հաղորդման ամբողջ գործի, միջքաղաքային տրանսլիացիայի, մասսայական

52 ՀԱԱ.ֆ.112,ց.1,գ.570,թթ.1-2

53 ՀԱԱ,ֆ.113,ց.1,գ301,թթ.38 և շրջ.

ռադիո հաղորդումների անմիջական ոպերատիվ ղեկավարությունը:
գ/ Քաղ. Լուսավորական յեվ գիտա-կրթական ռադիո-աշխատանքների ընդհանուր ղեկավարությունն ու կազմակերպումը:
դ/ Մշակումը ռադիո-պարբերականների յեվ այլ տեքստային հաղորդումների հրատարակման ու տարածման, գրական յեվ յերաժշտական ստեղծագործությունների, ռադիո նկարումների, առանձին դասախոսությունների յեվ այլնի հաղորդման, միջոցառումների ունկնդիրների պահանջի ու կազմի ուսումնասիրությունը:
6. Հայաստանի Ռադիո Հաղորդման Հանրապետական Կոմիտեն ունի հետեվյալ հիմնական սեկտորները և աշղեկները՝
ա/Գեղարվեստական-քաղաքական
բ/ Կազմահրահանգչական յեվ կադրերի
գ/Պլանային հաշվառման յեվ վարչա-տնտեսական
դ/Ուսումնական
յե/Մասսայական-քաղաքական հաղորդումների յեվ
զ/մանկական հաղորդումների սեկտոր:
7.Ընթացիկ աշխատանքները ղեկավարելու համար Կոմիտեն իրենից առանձնացնում է նախագահություն, վոչ ավել քան 5 հոգուց:
11.Ռադիո-Հաղորդման Կոմիտեն ունի իր կնիքը՝ անվանադրությամբ համապատասխան փորագրովի /14.03.1933թ./»:[54]

54 ՀԱԱ,ֆ.112,ց.3,գ.231,թթ.14 և շրջ.



Գլավլիտի գաղտնի հրամանագիրքը (1935թ.)

Չնայած ներկայացված կազմին, իրականում աշխատանքները կազմակերպում էր ՀՌ-ի հիմնադիրներից մեկը՝ Վահրամ Կարագուլյանը, որն ընդմիջումներով ռադիոն ղեկավարեց մոտ 10 տարի: Նրա օրոք և անմիջական մասնակցությամբ ՀՌ-ում հիմնվեցին հիմնական խմբագրությունները, ինչպես նաև ձևավորվեցին ռադիոյի կազմակերպչական և ստեղծագործական աշխատանքը կարգավորող գործառույթները:

Հասարակական-քաղաքական հաղորդումների խմբագրությունը

1932 թ-ին ՀՌ-ում հիմնվեց հասարակական-քաղաքական հաղորդումների խմբագրությունը, որը կազմակերպում և հեռարձակում էր գլխավոր քաղաքական ծրագիրը՝ «Վերջին լուրերը»: Լրատվական թողարկումներն սկսեցին եթեր հեռարձակվել նախօրոք հայտնի և կոնկրետ ժամի, որպեսզի ռադիոլսարանը մշտապես տեղյակ լինի օրվա ընթացքում տեղի ունեցող իրադարձություններին, դեպքերին

և փաստերին, ինչպես նաև հետևի դրանց զարգացումներին: Հաշվի առնելով օպերատիվ լրատվության նկատմամբ լսարանի աճող հետաքրքրությունը՝ ռադիոկոմիտեի ղեկավարությունը 1932 թ-ի նոյեմբերի 11-ին որոշում կայացրեց ռադիոհաղորդումների ցանցից հանել ժամանակի պահանջներին արդեն չհամապատասխանող ռադիոթերթերը՝ դրանք փոխարինելով ռադիոտեղեկագրերով («ռադիոբյուլետեններով»): Ռադիոտեղեկագրերով հաղորդվող հոդվածները, թղթակցությունները, ելույթները, զրույցները, տեղեկությունները ծավալային առումով շատ ավելի փոքր էին, հակիրճ ու կոնկրետ, քան ռադիոթերթերի երկարաշունչ, հաճախ էլ ոչ օպերատիվ, ժամանակավրեպ լրատվությունը: Այս նորամուծությունն արդեն համապատասխանում էր ռադիոյի տեխնիկական և ստեղծագործական առանձնահատկություններին՝ նախանշելով օպերատիվության ասպարեզում նրա առավելությունները մյուս զանգվածային լրատվամիջոցների նկատմամբ: Սա պայմանավորված էր նաև ռադիոյի նկատմամբ թերթի ազդեցության աստիճանական թուլացմամբ, որը հնարավորություն տվեց ռադիոյին օպերատիվությամբ գերազանցել տպագիր խոսքին և ստեղծել այդ յուրահատկություններին համապատասխան առաջին ռադիոհաղորդումները:

Կառուցվածքային փոփոխություններ է կատարվում նաև ՀՌ կոմիտեի կազմում. 1933 թվականին սեպտեմբերի 4-ի նիստում ՀՍԽՀ Կենտգործկոմը լուծարում է ՀԽՍՀ կենտգործկոմի նախագահությանն առընթեր Ռադիոհաղորդման Հանրապետական Կոմիտեն և որոշում.

«ՀԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին առընթեր կազմակերպել Ռադիո հաղորդման յեվ ռադիոֆիկացիայի Կոմիտե» /4.09.1933/:[55]

Առաջին ուղիղ ռադիոռեպորտաժը և «Այծիկին տանում են,տանում են, սարի գլխին փոխանը հանում են...»

1934թ-ի մայիսի 1-ին Երևանի Լենինի (այժմ Հանրապետության) հրապարակից հասարակական-քաղաքական հաղորդումների խմբագրությունը կազմակերպեց առաջին ուղիղ ռադիոռեպորտաժը:

55 ՀԱԱ.ֆ.112,g.3,գ.231,թ.12

Այն վարել է Ռադիոյի լավագույն հաղորդավարներից՝ Եղիշե Հովհաննիսյանը:Հետագա տարիներին մայիսմեկյան շքերթի ուղիղ ռեպորտաժը ռադիոյով հաղորդելը դարձավ ավանդական և շարունակվեց մինչև 1988 թ.: Մայիսմեկյան առաջին ռեպորտաժին հաջորդեց 1937 թ. սեպտեմբերի 15-ին տեղի ունեցած առաջին մարզական ուղիղ ռեպորտաժը հանրապետական մարզադաշտից՝ Երևանի «Սպարտակ» և Մոսկվայի «Դինամո» ֆուտբոլային թիմերի մասնակցությամբ:

1930-ական թվականներին զգալիորեն ընդարձակվեց հանրապետական ռադիոլսարանը, ռադիոաշխատակիցները հաղորդումներ պատրաստելու համար սկսեցին օգտագործել ռադիոյի ստեղծագործական և տեխնիկական հնարավորությունները (արտահայտչամիջոցները, ռադիոժանրերը, ռադիոգործառույթները, թեմատիկ առանձնահատկություններ և մոտեցումներ) ՀՌ-ում պարբերական դարձան ռադիոռեպորտաժների, ռադիոփոխկանչերի, ռադիոմիտինգների հեռարձակումը: Աստիճանաբար կայունացավ ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման ողջ համակարգը:

1930-ականներին ռադիոհաղորդումներն սպասված էին հանրության կողմից, և ցանկացած խոտան կամ վրիպակ բողոքի առիթ էր դառնում: Բնակչությունն ավելի որակյալ սպասարկում էր պահանջում Ռադիոկոմիտեից:

ՀԽՍՀ ՀԱՄԽ-ի կուլտուրայի բաժնի վարիչ Մայսկու գրությունը ԽՍՀՄ կապի մինիստրություն այդ խնդրին է առնչվում:

> «Չնայած նրան, վոր ՀԱՄԽ-ի նախագահության ս/թ մարտի 5-ի նիստում Դուք անձամբ նշեցիք գործի վատ կացությունը և խոսք տվեցիք կարգավորել օրերի ընթացքում բոլոր խնդիրները, բայց մինչ որս դրությունը մնում է անփոփոխ, անգամ, ավելի վատ: Մինչ որս մի շարք գործարաններից ու շրջաններից շարունակում են տեղալ բազմաթիվ բողոքներ ռադիոների վատ աշխատելու և բարձրախոսներ ձեռք բերելու մասին: Երևան մայրաքաղաքի տրանսիլացիոն ցանցը վերջին երեք շաբաթվա ընթացքում Աբովյան փողոցի աջ թևից

մինչեվ Կոնդը աղավաղվում է և հաղորդումները տրվում են անչափ ջղայնացնող անջատումներով»:

Նամակում պահանջվում է հաշվի առնել բնակչության բողոքները՝ բաժանել որակյալ բարձրախոսներ, որակյալ կադրեր պատրաստել և վերջ տալ խայտառակ դրությանը» /13.07.1933թ/:[56]

Ռադիոյի աշխատանքների վերաբերյալ արխիվային փաստաթղթերում հանդիպել ենք նաև ամենահաս և պատժիչ Գլավ-լիտի գործունեությունը հաստատող մի շարք շրջաբերականների, որոնցից հատկապես ուշագրավ են հետևյալ գաղտնի նամակները՝ թվագրված 1935 թ-ին: Գլավլիտը շրջաբերական /գաղտնի/ նամակով տեղեկացնում է շրջանային լիազորներին և պահանջում լուրջ ուշադրություն դարձնել ռադիոյի աշխատանքներին.

«Գաղտնի

Այսու առաջարկում եմ, սույնն ստանալուն պես՝

1. Անմիջապես հավաքել համամիութենական Կենտգործկոմի Կոմիտեյի նախկին քարտուղար Ա. Յանուկիձեյի նկարը: Անձամբ ստուգել ակումբները, գրախանութները, դպրոցները և այլ վայրեր: Հավաքված նկարները պետք ե վոչնչացենել Ձեր ներկայությամբ:
2. Անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել ռադիո հաղորդումներին, կինոներին, ներկայացումներին, ցուցահանդեսներին և զանազան թերթերին, ապահովելով գրաքննական աշխատանքները: Գրությունն ստանալուց յերեք որ հետո ուղարկել գրավոր հաշվետվություն ռադիո բազաների դրության և վերոհիշյալ նկարի հավաքելու մասին:

ՀԽՍՀ ՅԵՆՋՈՒՐԱՅԻ

ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ /Գույլան/ 21.06. 1935թ.»:[57]

Իսկ այս մեկն արդեն ՀԽՍՀ Գլավլիտի Ռադիոկոմիտեի լիազոր ներկայացուցչի նամակն է ՀԽՍՀ Գլավլիտին Երևանի ռադիոյից

56 Ֆ.128,ց.1, գ.1604,թ.15
57 Ֆ.1254,ց.1,գ.10,թ.12

կողմնակի անձանց կողմից տրված անվայել հաղորդման և նման դեպքերը կանխելու համար.

«ՀԽՍՀ Գլավլիտին
Այս տարվա փետրվարի 19-ին մեր հաղորդումը վերջացավ ժ. 24.00-ին: Մեր հաղորդումը վերջանում ե: Մի քանի րոպեից մի քանի բնակարաններում /Ղ.Ղուկասյանի 20, Եկմալյան 10/ լսվում ե նոր հաղորդում, մոտավորապես հետեվյալ բովանդակությամբ:
Լսեցեք, այժմ կյերգի «Սերդցա կրասավեցա, այնուհետեվ «Գարուն ե եկել, բացվել է վարդը», «Աղջի Հոռոմ, Հոռոմին տանում են…», «Այծիկին տանում են, տանում են,սարի գլխին փոխանը հանում են…»:
Հիշյալ յերգերը վոչ ռադիոստուդիայից ե հաղորդված յեվ վոչ ել քաղաքի ռադիո յենթակայաններից: Այս հաղորդումը կազմակերպված է յեղել մտածված կերպով՝ նշված թաղամասի ռադիո սիրողների բնակարաններում դա միանգամայն հնարավոր ե՝ առանց մեծ դժվարության և ընդարձակ սարքավորումների:
Նման դեպքերի հայտնաբերման յեվ կանխելու համար խնդրում եմ համապատասխան միջոցների ձեռնարկում:
ԳԼԱՎԼԻՏԻ ՌԱԴԻՈ ԿՈՄԻՏԵՅԻ ԼԻԱԶՈՐ՝
Եղիշե Հովհաննիսյան
03.03.1935թ.»:[58]

Ռադիոծրագրեր և ռադիոհանդեսներ

Ռադիոկոմիտեի աշխատանքն ավելի արդյունավետ և նպատակային դարձնելու համար 1932 թ-ի նոյեմբերին ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահությունը որոշում ընդունեց թույլատրելու Ռադիոկոմիտեին ինքնուրույն հրատարակելու ռադիոծրագրեր, ինչպես նաև մասնագիտական ամսագրեր: Հաջորդ տարի ռադիոն սկսեց հրատարակել «Խոսում է Երևանը» մեթոդական ձեռնարկը, որը նաև բանավիճային էր և նպատակ ուներ պատրաստելու բանիմաց,

58 Ֆ.1254,ց.1,գ.10,թ.12

գործին հմտորեն տիրապետող ռադիոաշխատողներ: Նույն թվականին լույս տեսավ նաև մանկական ռադիոհաղորդումներին նվիրված առաջին պատկերազարդ ամսագիրը: Հայերեն և ռուսերեն տպագրվող նյութերը մանուկներին ներկայացնում էին եթեր հեռարձակվող ռադիոբեմադրությունների, պատմվածքների, ձայնագրությունների ցանկը: Մանկական ռադիոհաղորդումներին նվիրված պատկերազարդ ծրագիրը նպատակ ուներ նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաներին օգնելու եթեր հեռարձակվող նյութերով, կողմնորոշելու ուսման, հանգստի կազմակերպման գործում, արդյունավետ կազմակերպելու օրվա ռեժիմը: Ծրագիրը սակայն, երկար կյանք չունեցավ և հետագա շարունակություն չգտավ ռադիոծրագրերի շարքում: Մանկական պատկերազարդ ամսագրից պահպանված հատուկենտ համարները բավականին հետաքրքիր տեղեկություններ են պարունակում երեխաների հետաքրքրությունների, նախասիրությունների, նրանց մատուցվող նյութերի, մոտեցման եղանակների և քաղաքականության մասին: ՀՌ-ի հրատարակած ռադիոծրագրերից ամենաերկարակյացը «Խոսում է Երևանն» էր, որը հրատարակվեց 1933թ.՝ Վ. Կարագուլյանի խմբագրությամբ: Չնայած 1940-ական թվականներին ժամանակավորապես ընդհատվեց ռադիոծրագիրը, սակայն հետագա տարիներին անընդմեջ լույս տեսավ՝ դառնալով իր տեսակի մեջ եզակի ծրագրերից մեկը: Բազմիցս անվանափոխվեց («Խոսում և ցուցադրում է Երևանը», «Եթերում է Երևանը», «Եթեր»), սակայն չփոխեց ծրագրային և թեմատիկ ուղղվածությունը՝ դառնալով ՀՌ-ի վարած ծրագրային քաղաքականության յուրատեսակ տարեգիր: Հրատարակված ծրագրերն ունեն ճանաչողական և աղբյուրագիտական արժեք, դրանք առատ նյութ են տալիս ռադիոժուռնալիստիկայի տեսությունն ու պատմությունն ուսումնասիրողներին:

Հանրապետական ռադիոկոմիտեն 1935-36 թթ. լույս ընծայեց նաև մասնագիտական երկու ամսագիր՝ «Ռադիոաշխատողը» և «Ռադիոֆրոնտը»: Այստեղ տպագրվում էին վերլուծական նյութեր հեռարձակվող ծրագրերի, հաղորդումների, ռադիոյի բնագավառում տեղի ունեցած վերջին նվաճումների և հաջողությունների մասին: Մասնագիտական ամսագրերը նախատեսված էին ընթերցող

լայն հասարակայնության համար, պարբերաբար կարծիքներ և առաջարկություններ էին տպագրվում:

Ամսագրերում առավել հաճախակի էին հանդես գալիս Վ. Կարագուլյանը, Գ. Ղազարյանը, Ա. Տոնիկյանը՝ անդրադառնալով ռադիոհաղորդումների և ծրագրերի մատուցման առանձնահատկություններին, ռադիոկոմիտեի վարած ծրագրային քաղաքականությանը, լսարանի հետ աշխատելու առավել արդյունավետ ձևերին և մեթոդներին: Ցավոք, դրանք կարճ կյանք ունեցան և որոշ ժամանակ անց փակվեցին: Հետագա տարիներին ռադիոկոմիտեն մասնագիտական ամսագրեր հրատարակելու հնարավորություն չունեցավ:

Գլխավոր խմբագրություններ՝ երաժշտական, գրական-դրամատիկական, մանկապատանեկան

1930-ական թվականներին հիմնվեցին ՀՌ-ի երաժշտական, գրական-դրամատիկական, մանկապատանեկան հաղորդումների գլխավոր խմբագրությունները, ձևավորվեցին և գործնականում կիրառվեցին առաջին ռադիոժանրերը, ռադիոյի արտահայտչամիջոցները, հաղորդումների և ծրագրերի տեսակները, որոնք ամբողջացրին Ռադիոկոմիտեի ստեղծագործական աշխատանքը՝ նախադրյալներ ստեղծելով ռադիոժուռնալիստիկայի հիմնական գործառույթների և առանձնահատկությունների ձևավորման, կայացման և զարգացման համար:

Երաժշտական հաղորդումների խմբագրության հիմնադրումից հետո բարելավվեց երաժշտական ծրագրերի եթերային մատուցումը: Ռադիոյի երաժշտական հաղորդումներում օգտագործվում էին երաժշտական արվեստի բազմաթիվ ձևեր և ժանրեր՝ սկսած օպերայից մինչև ժողովրդական երգերը, սիմֆոնիկ, երաժշտական համերգներից մինչև զվարճալի ծրագրերը: Խմբագրությունը երաժշտական ծրագրեր էր պատրաստում ինչպես համընդհանուր, այնպես էլ ավելի պատրաստված լսարանի համար, որոնք ցանկանում էին ընդլայնել իրենց գիտելիքը՝ երաժշտության պատմության, տեսության այս կամ այն հարցի վերաբերյալ: Երաժշտական ծրագրերը շատ ընդգրկուն էին՝ ծանոթություն դասականների և

ժամանակակից հայ և արտասահմանյան երգի մասին, զրույցներ նշանավոր կոմպոզիտորների կյանքից, վերլուծական երաժշտական հաղորդումներ, լուրեր երաժշտական փառատոններից: Երաժշտական կատարումները հիմնականում հեռարձակվում էին կենդանի եթերով: Հաղորդվում էին «Արևելյան» անսամբլի, աշուղական խմբի, սիմֆոնիկ և կամերային նվագախմբերի, լարային կվարտետի, «երգեցիկ» խմբերի կատարումները, իսկ դասական ստեղծագործությունները եթեր էին հեռարձակվում հիմնականում տոնֆիլմի միջոցով,[59] ինչպիսիք էին՝ Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի մոնտաժը, Բիզեի «Կարմեն», Չայկովսկու «Եվգենի Օնեգին», Ռոսինիի «Սևիլյան սափրիչ» օպերաների մոնտաժները: Եթեր էր տրվում նաև գրամոֆոնային երաժշտություն: Լսարանի հետ կապն ավելի անմիջական դարձնելու համար պարբերաբար կազմակերպվում էր երաժշտական ռադիոեթեր՝ մայրաքաղաքի մի շարք երաժշտական օջախներից՝ Օպերայի և բալետի թատրոնից, Հայֆիլհարմոնիայից, Կոմունարների այգուց, որտեղ պարբերաբար կազմակերպվում էին համերգներ՝ «Արևելյան» և սիմֆոնիկ նվագախմբերի մասնակցությամբ:[60]

«Արևելյան անսամբլ»-ը 1936 թ-ին մասնակցեց համամիութենական ռադիոփառատոնին և դարձավ դափնեկիր: Այդ տարիներին Ռադիոյում ստեղծվեցին նաև այլ նվագախմբեր՝ կամերայինը, լարային տրիոն, փողային նվագախումբը, մանդոլինահարների խումբը: Հաղորդումները եթեր էին տրվում հայերեն, ռուսերեն, թուրքերեն, մասամբ էլ՝ քրդերեն: Աստիճանաբար Ռադիոն սկսեց ուշադրություն դարձնել նաև արտասահմանյան լավագույն կատարողների պրոպագանդմանը:

Երաժշտական հաղորդումների խմբագրությունը, միջին հաշվով, ամսական կազմակերպում էր 100-120 համերգ: Խմբագրությունն անհրաժեշտ էր համարում ռադիոեթերը տրամադրել նաև արվեստի ինքնագործ խմբակների և ինքնուս գուսանների ելույթներին՝ հաղորդումները բովանդակալից և լսարանին հոգեհարազատ դարձնելու համար:

Խմբագրությունը կազմակերպում էր նաև երաժշտական

59 Կարագուլյան Վ., Ռադիոհաղորդումների բնույթը, Ռադիոաշխատող, Եր., 1936, №4-5, էջ 28:

60 Թերլեմեզյան Ռ., Ռադիոն և մասսաների երաժշտական դաստիարակությունը, Խորհրդային Հայաստան, 1940, 22 հոկտեմբերի:

ինքնակրթության հաղորդումների շարքեր, որոնք նպատակ ունեին զանգվածային լսարանին հասանելի դարձնել գրական հայերենով ժողովրդական և ժամանակակից երաժշտությունը՝ նրանց համար կազմակերպելով երգի ուսուցման դասեր: Բացի այդ, ռադիոն կազմակերպում էր առանձին կատարողների համերգներ, հանդիպում սիրված երգիչ-երգչուհիների հետ, երգի ուսուցում նրանց կատարմամբ, համերգ-հանելուկներ և այլն: Նմանատիպ հաղորդաշարերը բավականին մեծ լսարան ու պահանջարկ ունեին ունկնդիրների շրջանում՝ վայելելով համաժողովրդական սեր և հարգանք հայ երաժշտությունը պրոպագանդողների նկատմամբ: Այդ հաղորդաշարերն օգնեցին բարձրացնելու ռադիոունկնդիրների երաժշտական կուլտուրան, ձևավորելու գեղագիտական ճաշակ՝ մասսայականացնելով ժողովրդական և ժամանակակից երգերը ռադիոունկնդիրների շրջանում: Երաժշտության քարոզման այս ձևերը հետագայում մեծ կիրառություն գտան ռադիոյում, հատկապես մանկապատանեկան և երիտասարդական հաղորդումներում՝ հարյուրավոր նոր երգեր ուսուցանելով ռադիոլսողներին:

Այդ գործի երախտավորներից մեկի՝ Թաթուլ Ալթունյանի մասին պահպանվել է մի ուշագրավ տեղեկանք, որը բնութագրում է վարպետի գործունեությունը 1930-ական թվականներին՝ տրված Ռադիոկոմիտեի նախագահ Գառնիկ Ղազարյանի կողմից:

«Տեղեկանք Թաթուլ Ալթունյանին 28.01.1936թ.
Տրվում է ընկ.Թաթուլ Ալթունյանին առ այն, որ նա, սկսած 1934 թվականից աշխատում է ՀՍԽՀ Ժողկոմխորհին կից ՀՌ կոմիտեյում, որպես խորմեյստեր, յեվ այդ աշխատանքում իրեն դրսեվորել է որպես բարեխիղճ յեվ կարգապահ աշխատող:
Այս ընթացքում նա կարողացել է ստեղծել գեղարվեստա-երաժշտական անսամբլ՝ ընդարձակ և բազմաբնույթ երգացանկով, որն արժանացել է ռադիո լսողների բարձր գնահատականին յեվ գովեստին»:

ՌԱԴԻՈ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ.ՂԱԶԱՐՅԱՆ».[61]

61 Ֆ.1045,g.1,գ.306,թ.9

Գրական-դրամատիկական հաղորդումները ռադիոյում հիմնադրվեցին 1932 թ-ին: Դրանք եթեր էին տրվում երեք լեզվով՝ հայերեն, ռուսերեն, թուրքերեն, մասամբ էլ՝ քրդերեն: 1934 թ. ծնվեցին առաջին ռադիոթատրոնները՝ Գ. Սունդուկյանի «Պեպոյի», «Խաթաբալայի», Ա. Շիրվանզադեի «Պատվի համարի», Ա.Պուշկինի «Հավերժահարսի» բեմադրություններով: Նույն ժամանակի ծնունդ էր նաև «Թատրոնը միկրոֆոնի մոտ» հաղորդաշարը: Հանրապետական ռադիո էին հրավիրվում ժողովրդական, վաստակավոր, ինչպես նաև քաղաքի լավագույն երիտասարդ դերասանները:

Ժամանակի ոգուն և գաղափարախոսությանը համապատասխան՝ գրական-դրամատիկական հաղորդումները եթեր էին հեռարձակում Խորհրդային պետության հիմնադրմանը նվիրված պատմական իրադարձությունների ռադիոբեմականացումները՝ «Կարմիր բանակի մուտքը Հայաստան», «Բուդյոննու հեծելազորը» մոնտաժները[62], Հայաստանի խորհրդայնացման հերթական տարեդարձին նվիրված հեղափոխական պիեսները: 1936թ. եթեր հեռարձակվեցին «Օղակում» պիեսը, ինչպես նաև 26 կոմիսարներին նվիրված ռադիոկոմպոզիցիաները:

Ռադիոյի գրական-դրամատիկական հաղորդումների խմբագրությունը պարբերաբար ստուդիա էր հրավիրում մեր անվանի գրողներին ու բանաստեղծներին, որոնք հանդես էին գալիս իրենց ստեղծագործությունների կատարմամբ: Ռադիոյի մշտական հյուրերն էին Դ.Դեմիրճյանը, Ավ. Իսահակյանը, Ստ. Զորյանը, Ն. Զարյանը, Վ. Թոթովենցը և ուրիշներ: Խմբագրությունը այդ ավանդույթը շարունակեց նաև հաջորդ տարիներին, խոսափողի մոտ հրավիրելով մեր լավագույն գրողներին:

Այդ թվականներին գրական-դրամատիկական հաղորդումների խմբագրության հիմնական խորագրերն էին «Գրական ընթերցումները», «Ռադիոթատրոնի ժամը», «Թատրոնը խոսափողի մոտ», «Խոսափողի մոտ է ստեղծագործողը», որոնք երկար տարիներ իրենց հաստատուն տեղն ունեցան ռադիոյի գրական-գեղարվեստական հաղորդումների ցանկում:

---

62 Կարագուլյան Վ.,Ռադիոհաղորդումների բնույթը, Երևան, Ռադիոաշխատող, 1936, № 9- 10, էջ 18:

«1939 թ-ին մեծ շուքով նշվում է «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակը: Այս առթիվ հանձնարարականներ է ստանում նաև «Ռադիոհաղորդման կոմիտեն»:
Գրական-դրամատիկական հաղորդումների խմբագրությունը պատրաստել էր հաղորդումների մի ամբողջ շարք՝ հրավիրելով մեծ թվով ասմունքողների և դերասանների:
Ինչպես համամիութենական, այնպես էլ ՀՌ-ով հաղորդվեցին բազմաթիվ նյութեր՝ Երևանում տեղի ունեցած հանդիսությունների մասին»:

Նախապատերազմյան տարիներին ռադիոյում զգալիորեն ավելացան արտաստուդիական հաղորդումները: Կազմակերպվում էին ռադիոէքսկուրսիաներ՝ թանգարաններում, մշակույթի տներում, դիտարժան վայրերում: Ունկնդիրներին հետաքրքրող հարցերի հիման վրա ստեղծվում էին նոր հաղորդաշարեր և ծրագրեր:

Մանուկների և պատանիների համար տրվող հաղորդումները Ռադիոյում կազմակերպվել են դեռևս 1931 թվականին: Դրանք այն ռադիոհաղորդումներն են, որոնք ունեն մշտական, հասցեագրված, կայուն լսարան, որի հետ մշտական կապի ընթացքում պատրաստվում են կոնկրետ տարիքային խմբին կամ լսարանին հասցեագրված ծրագրեր: Մանկապատանեկան հաղորդումները երկարատև աշխատանքային փորձի շնորհիվ ձևավորեցին մի շարք հաղորդաշարեր և ծրագրեր, որոնք համապատասխանում էին լսարանի աշխարհընկալմանը, հետաքրքրություններին, տարիքային խմբերի իմացական աստիճանին: Կարևոր առանձնահատկություններից են՝ խաղային, մրցակցային ձևերը, ինչպես, օրինակ՝ խաղ-վիկտորինաները, մարզական և բառային մրցույթները, հաղորդում, որի շարունակությունը հնարում են խաղի մասնակիցները, մրցություն-խաչբառերը և այլն:

Մանկապատանեկան հաղորդումների աշխատանքն սկզբնական շրջանում ղեկավարում էր Արտակ Տոնիկյանը, որի օգնությամբ հետագայում կազմավորվեցին նաև Ռադիոյի երիտասարդական հաղորդումները: Առաջին տարիներին խմբագրությունը պատասխանում էր ռադիոլսող երեխաների նամակներին, կազմակերպում

հանդիպումներ, կոնֆերանսներ (քաղաքներում ու շրջաններում) պատանի թղթակիցների և հաղորդավարների հետ՝ խմբագրություններում աշխատելու համար:[63]



Հայաստանի ռադիոյի մանկական բաժին ուղարկված նամակները (1939-1941թթ).

Այդ տարիներին ռադիոյով իր առաջին բանաստեղծություններն է կարդացել նաև Սիլվա Կապուտիկյանը և տարիներ շարունակ մասնակցել ռադիոհաղորդումների պատրաստմանը՝ որպես պատանի բանաստեղծուհի և հաղորդավար: Մանկապատանեկան հաղորդումների խմբագրությունն իր ակտիվում ընդգրկեց նաև շնորհալի ասմունքող, դեռևս աշակերտուհի Հրաչուհի Ջինանյանին, որը սիրով իր ողջ գիտակցական կյանքը կապեց ռադիոյին:

1939 թ-ից սկսած՝ վեց տարի շարունակ, մանկապատանեկան հաղորդումների խմբագրությունը բացի ռադիոեթերից, գեղարվեստական ձևավորված ամենամյա ծրագիր էր տպագրում և տարածում դպրոցականների շրջանում: Միջոցառումները նպաստեցին, որ ավելի շատ երեխաներ ունկնդրեն մանկապատանեկան հաղորդումները և մշտապես կապի մեջ լինեն ռադիոյի հետ:

Այդ սերունդը սիրով էր հիշում այն օրերը, երբ դպրոցից շտապում էին տուն՝ լսելու Արուս Ոսկանյանի, Ռուզաննա Վարդանյանի,

63 Տոնիկյան Ա., Ռադիոյի մանկապատանեկան հաղորդումները, Ռադիոաշխատող, 1937, № 7, էջ 20-27:

Ավետ Ավետիսյանի, Հրաչուհի Ջինանյանի, Գարուշ Խաժակյանի և այլ անվանի դերասանների ընթերցումները կամ լսելու Ռադիոյի մանկական երգչախմբի ելույթները:[64]

1930-ական թվականներին Ռադիոյի մանկապատանեկան հաղորդումների գլխավոր խմբագրությունը մեծ տեղ հատկացրեց Պատանի հանդիսատեսի թատրոնին, որի շատ ներկայացումներ հնչել են ռադիոթերում:

1934 թ-ին խմբագրությունն առաջին անգամ կազմակերպում և բեմադրում է Ազատ Մանուկյանի «Չարի վերջը» մանկական օպերան: 1936 թ-ի հունիսի 6-ին Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում տեղի է ունենում օպերայի անդրանիկ բեմադրությունը: Այն կրկնվում է մի քանի անգամ, որովհետև դահլիճը չէր բավարարում հանդիսատեսին՝ անգամ կանգնած վիճակում դիտելու օպերան:

1930-ականներին խմբագրության լավագույն բարեկամներն են եղել Ռոմանոս Մելիքյանը, Աթաբեկ Խնկոյանը, Մովսես Արազին, Ստեփան Զորյանը, Նաիրի Զարյանը, Գեղամ Սարյանը, որոնք հաճույքով ելույթ էին ունենում մանկական ծրագրերում՝ նրանց տրամադրելով իրենց պատմվածքների և բանաստեղծությունների նոր շարքերը: Հաղորդումներին մասնակցում էին նաև անվանի մանկավարժներ Մարուքե Դուրգարյանը, Արշավիր Շավարշյանը և շատ ուրիշներ:

Տարիների ընթացքում ստեղծվում են նոր հաղորդաշարեր, հանդեսներ, որոնց նախապատրաստման գործով զբաղվել են անվանի մանկավարժներ, լրագրողներ, գրողներ, հոգեբաններ:

Մանկապատանեկան հաղորդումների խմբագրության ջանքերով ստեղծվեց նաև երիտասարդական հաղորդումների բաժինը, որը մանկապատանեկանի մասն էր կազմում: Երիտասարդական հաղորդումների սկիզբը դրվեց 1935 թ. մի խումբ երիտասարդ նախաձեռնողների՝ Ա. Տոնիկյանի, Վ. Բարխուդարյանի, Գ. Բաղալյանի, Գ.Հակոբյանի շնորհիվ, որոնք կարճ ժամանակահատվածում կարողացան ստեղծել և եթեր հեռարձակել առաջին երիտասարդական հաղորդումները: Սակայն թե՛ կազմով, թե՛ գործունեությամբ երիտասարդական հաղորդումները 30-ական թվականներին դեռևս

64 Հալաջյան Գ. Իմ մանկության ռադիոն, ՀՀ Ազգային հեռուստատեսության 1-ին ծրագիր, 1996, 22-ը նոյեմբերի:

կայացած չէին, ինչպես մանակապատանեկան հաղորդումների գլխավոր խմբագրությունը:

Ռադիոգործառույթների կիրառումը ՀՌ-ում

1930-ական թվականներին հիմնականում ձևավորվեցին նաև ռադիոյի գործառույթները՝ իրազեկում, հանրային կարծիքի ձևավորում և արտահայտում, կազմակերպական և գեղագիտական-երաժշտական ճաշակի ձևավորման գործառույթներ: Կիրառվեցին այնպիսի նոր ձևեր, մեթոդներ ու կանոններ, որոնց միջոցով կազմակերպվում էր ռադիոյի ամենօրյա աշխատանքը, նրա մշտական կապը լսարանի հետ:

Ռադիոյի գործառույթներն ընդգրկում էին հասարակական կյանքի բոլոր բնագավառները /տնտեսություն, քաղաքականություն, արվեստ, մշակույթ, գիտություն և այլն/, որոնք հետաքրքրություն էին առաջ բերում ռադիոլսարանի շրջանում:

1930-ական և հետագա տարիներին այդպիսի ծրագրերից էր ՀՌ-ի «Վերջին լուրեր» լրատվական-տեղեկատվական թողարկումը, որը լսարանին իրազեկում էր հանրապետությունում, տարածաշրջանում և արտասահմանում կատարված և կատարվող դեպքերին, փաստերին և իրադարձություններին: Լրատվության տարրեր են պարունակել նաև հիմնադրված խմբագրությունների համարյա բոլոր ծրագրերը: Արդեն 1930-40-ական թվականներին Ռադիոն ամեն օր պատրաստում և եթեր էր հեռարձակում 4-6, իսկ այժմ՝ 10-12 լրատվական թողարկումներ:

Լրատվական թողակումները որպես կանոն, տևում էին 5-10 րոպե, ունեին իրենց յուրահատուկ բառապաշարը, մատուցման և ներազդման հատուկ ձևերը: Լրատվական ծրագրերն ամբողջ աշխարհում ընդունված է պատրաստել «շրջված բուրգի» մեթոդով, այսինքն՝ քաղաքական օպերատիվ լրատվությունից մինչև եղանակի տեսություն: Այսպիսի հաղորդումների հիմնական արժանիքը օպերատիվությունն ու օբյեկտիվությունն է, ժանրային առումով հիմնականում օգտագործվում է հակիրճ հաղորդագրության լուրի ժանրը, որը համապատասխանում է լրատվական թողարկումների բնույթին: Ռադիոլրատվության մյուս ժանրերը՝ ռեպորտաժ, ռադիոհարցազրույց, ռադիոթղթակցություն և այլն, նույնպես շատ են տարածված: Ռադիոյի արտահայտչամիջոցներից

այս գործառույթը հիմնականում օգտագործում է բանավոր խոսքը, ինչպես նաև՝ երաժշտությունը, ձևավորված «աղմուկը» և մոնտաժը:

Հանրային կարծիքի ձևավորման և արտահայտման գործառույթը Ռադիոյում կիրառվել է դեռևս հիմնադրման օրվանից: Մշակվեցին ռադիոլսարանի հետ աշխատելու ձևեր և մեթոդներ, որոնք նորություն էին ռադիոժուռնալիստիկայի պատմության մեջ և պետք է «օգնեին» ռադիոլրագրողներին լսարանի համար ամենահետաքրքիր և հեղինակություն վայելող հաղորդումների ստեղծմանը: 1930-40-ական թվականներին մեծ ժողովրդականություն վայելող ռադիոմիտինգներն ու ռադիոհավաքույթներն օգնում էին մարդկանց՝ մասնակից դառնալու երկրի քաղաքական և տնտեսական կյանքին, ակտիվորեն մասնակցելու երկրում ծայր առած շինարարությանը, յուրացնելու նոր հողեր, կառուցելու նոր հիդրոկայաններ, գործարաններ ու ֆաբրիկաներ: Նմանատիպ հաղորդումներ պատրաստելը ռադիոաշխատողներից պահանջում էր երկարատև, բազմակողմանի, արդյունավետ կազմակերպական աշխատանք, որն սկսվում էր հաղորդումը եթեր տալուց դեռ շատ առաջ և անպայման ունենում էր շարունակություն:

Ռադիոլրագրողները հաճախակի վերադառնում էին իրենց ելույթներին, պարզաբանում, վերլուծում ռադիոլսարանի հետ իրենց կատարած աշխատանքի արդյունավետությունը: Կիրառվում էին նոր ձևեր՝ հանդիպումներ, զրույցներ, հարցումներ, «ռադիոբարեկամների ակումբներ», բանվորագյուղացիական թղթակիցների շրջայցեր՝ այն ամենը, ինչը որակվում էր «մասսայական աշխատանք»: Ցանկացած ռադիոլրագրող իր մասնագիտական գործունեության զգալի մասը հատկացնում էր հասարակական կարծիքի ուսումնասիրմանը, հաղորդումները պատրաստելու ժամանակ ելակետ էր ընդունում ձեռքի տակ եղած հարցման կամ ուսումնասիրության արդյունքները:

Ռադիոյի հաջորդ կարևոր, հիմնական գործառույթներից է կազմակերպական գործառույթը: Ռադիոն միշտ կատարել և հիմա էլ կատարում է կազմակերպական գործունեություն, սակայն պատմական տարբեր ժամանակաշրջաններում այդ գործառույթը ենթարկվել է զգալի փոփոխությունների. փոխվել են գործունեության ձևերը, իրագործման բնույթը, բայց կայուն է մնացել լսարանի վրա ներազդման ուժն ու հմտությունը:

07.01.1929թ-ի ՀՍԽՀ Ժողկոմխորհի կարգադրիչ նիստի թ. 2 արձանագրությունից պարզ է դառնում, որ պետական մարմինները խիստ կարևորում են ռադիոյի դերն ու նշանակությունը հասարակության կյանքում: Արձանագրության մեջ ուշագրավ են հետևյալ կետերը:

«ՎՈՐՈՇԵՑԻՆ

27/ա- Առաջարկել պետական յեվ կոոպերատիվ կազմակերպություններին ու հիմնարկներին ոգտագործել ամբողջությամբ տեղական ռադիո-ապպարատները, պրոպագանդա տանել ռադիոյի դերի յեվ նշանակության մասին,հետեվել ռադիո-հաղորդմանը, համապատասխան դիտողություններ տալ Կենտրոնին, ընդառաջել բանվորների յեվ գյուղացիների ցանկություններին ակումբներում յեվ գյուղերում ռադիո-ընդունիչներ ունենալու համար, գրականություն ձեռք բերել և այլն:

Նույն նիստում Առեվտրի ժողկոմատի Հայաստանի Լիազոր Վարչությանը հանձնարարվում է.

ա/շտապ միջոցներ ձեռնարկել ռադիո պիտույքների մատակարարումը կանոնավորելու համար «Գոսշվեյմաշինայի» միջոցով: Առաջարկել Անդրշրջկապի Պետի Հայաստանի Լիազորի Վարչությանը յեվ պետհրատին հրատարակել հանրամատչելի ռադիո գրականություն:

Գավառներում յեվ շրջանային կենտրոններում ունենալ շրջիկ ռադիոապպարատներ»:

Ֆ.128, ց.1, գ.1591, թ.68

Ռադիոյի կազմակերպական գործունեությունը հիմնականում ուղղվում էր քաղաքական, սոցիալ-տնտեսական հիմնահարցերի վերլուծմանը: Հաճախ այն կատարվում էր կոնկրետ արտակարգ իրավիճակից ելնելով: Օրինակ, ՀՌ-ն 1920-30-ական թվականներին մեծ ջանքեր գործադրեց՝ կազմակերպելու հեռակա ռադիոուսուցում՝ անգրագիտությունը հանրապետությունում վերացնելու համար: Ռադիոուսուցման գծով տրվող հաղորդումների նպատակը ռադիոլսող բանվորների և գյուղացիների մտավոր, կրթական մակարդակի

բարձրացումն էր: Պետության, տեխնիկայի, պատմության, արվեստի առանձին հարցերի շուրջ նշված տասնամյակներում ռադիոյով կազմակերպվեցին հարյուրավոր զրույցներ, հանդիպումներ, քննարկումներ և բանավեճեր:[65]

Այս գործառույթի շրջանակներում կազմակերպվում էին հաղորդաշարեր, որոնք բնակչությանը կոչ էին անում ակտիվորեն մասնակցնելու հայրենիքի բարգավաճման աշխատանքներին, արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառներում կատարվող արմատական փոփոխություններին, անձնական ներդրում ունենալ երկրով մեկ ծավալվող շինարարությանն ու մրցությանը: 1930-ական թվականներին Ռադիոյի հասարակական-քաղաքական խմբագրությունն այս թեմաներով եթեր էր տալիս «Իմ հայրենիքը», «Առաջավոր ճակատում», «Կարմիր ամբիոն» խորագրերը կրող հաղորդումները, որոնք բնակչությանը «գաղափարապես կողմնորոշում» էին հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ իրենց ներդրումն ունենալու գործում. «Դարեր շարունակ հայ մարդը, բազում թշնամիներից հալածված, չի կարողացել զբաղվել խաղաղ, ստեղծագործ աշխատանքով, այժմ եկել է պահը, երբ մենք միասնաբար, ձեռք ձեռքի տված պետք է շենացնենք մեր հայրենիքը, կարմիր դրոշի ներքո կառուցենք մեր նոր կյանքը, նոր օջախը, մեր ապագան»:[66]

Այսօր հանրային ռադիոյի «ոսկե» ֆոնդում մեծ տեղ է գրավում դրամատուրգիան: Այն կյանք է առել մշակութային հաղորդումների խմբագրության աշխատակիցների, հանրապետության հեղինակավոր գրականագետների, արվեստաբանների, գրողների, թարգմանիչների, դրամատուրգների, երգիծաբանների, ճանաչված դերասանների, ասմունքողների ու ռեժիսորների շնորհիվ: Ի տարբերություն ՀՌ-ով եթեր տրվող մյուս ծրագրերի, գեղարվեստական հաղորդումներն ստեղծվում էին նախնական կամ սցենարական պլանով: Սցենարական պլանը հնարավորություններ էր ընձեռում «սեղանի շուրջ» փորձեր կազմակերպել դերասանական խմբի կամ ասմունքողների հետ,

65 Կարագուլյան Վ., Ռադիոհաղորդումների կիրառումը, Ռադիոաշխատող, 1937, № 4-5, էջ 26:

66 Մարգարյան Վ., Տիրապետել բոլշևիզմին, Ռադիոֆրոնտ, ՀԽՍՀ ԺԿԽ-ին կից ռադիոկոմիտեի ամսագիր, Երևան, 1937, № 4-5, էջ 39:

նախօրոք մշակել «կոմպոզիցիայի» կամ «գրական ընթերցման» ռադիոտարբերակը, ընտրել թեմային համապատասխան երաժշտություն (ձևավորման համար) և մոնտաժել «դրսից բերված» ձայնագրությունները: Ռադիոթատրոնն ունկնդիրներին մասնակից էր դարձնում հեղինակի կերտած կերպարներին, ներաշխարհին ու աշխարհընկալմանը: Գեղարվեստական հաղորդումներն առանձնանում էին իրենց լեզվական բարձր որակով: Մեծ նշանակություն էր տրվում հայերենի գեղարվեստական ոճավորման ներքին հնարավորություններին: «Ռադիոթատրոնի» համար նախատեսված ռադիոբեմականացումների ձայնագրություններն իրականացվում էին ոչ միայն հանրապետության ճանաչված թատրոնների բեմերում, այլև հանրապետական ռադիոկոմիտեի ստուդիաներում: Երբեմն եթեր էին տրվում թողարկումներ գրաբարով կամ միջին հայերենով, երբ պատումի լեզուն մատչելի էր կամ առնվազն կարող էր ընկալվել /«Գրական ընթերցումներ», «Ռադիոթատրոն», «Պոեզիայի ժամ»/:[67] Այդպիսով, ՀՌ-ն բազմաթիվ ռադիոունկնդիրների ներկայացրել է հայրենական և արտասահմանյան գրողների և դրամատուրգների լավագույն ստեղծագործությունները:

1930-ական թվականներին՝ ՀՌ-ն ընդարձակելով իր ստեղծագործական հնարավորությունները, խմբագրությունների և բաժինների շնորհիվ արմատավորվեց հանրապետական լրատվամիջոցների համակարգում՝ դառնալով նրա կարևոր մասը:

Հատկանշական է ՀԽՍՀ Ժողկոմխորհի որոշումը Ռադիոհաղորդումների կոմիտեի աշխատանքների վերաբերյալ, որը մեկ անգամ ևս վկայում է Ռադիոկոմիտեի հաջողությունների և ձեռքբերումների մասին.

> «Առաջարկել Ռադիո Հաղորդման Կոմիտեյին, վոչ ուշ, քան 1936թ ոգոստոսի 15-ը Հյուրանոցի շենքից Ռադիո ստուդիան տեղափոխել նոր շենք /Փոստի շենք/:
>
> Պարտավորեցնել Ռադիո Հաղորդման կոմիտեյին, Արվեստի վարչության հետ միասին վերանայել քաղաքային յեվ շրջանային հաղորդումների ռեպերտուարը այն հաշվով, վորպեսզի ապահովվի գեղարվեստական, քաղաքական, գրական հաղորդումների ավելի բարձր վորակ:

67 Հովեյան Հ., Գրական գեղարվեստական հաղորդումների առանձնահատկությունները հանրային ռադիոյի եթերում, «Ժուռնալիստիկա», պրակ Գ, Երևան, 2001, էջ 53: 5

Ռեպերտուարում ավելացնել ԽՍՀՄ ժողովուրդների յերգերի յեվ ստեղծագործությունների քանակը լայն չափով լուսաբանել սոց. շինարարության խնդիրները:
Հանձնարարել ռադիո Հաղորդման Կոմիտեյին 1936 թ. Սեպտեմբերից կազմակերպել ինքնուրույն կամերային նվագախումբ:
Յերաժշտական հաղորդումների գծով նկատվող ռեպերտուարի կրկնողությունները վերացնելու նպատակով՝
ա/ Նոր գործերի պատվերներ տալ կոմպոզիտորներին.
բ/ Թարգմանել տալ կլասսիկների լավագույն նմուշները.
գ/ Համամիութենական Ռադիո Հաղորդման Կոմիտեյի միջոցով ձեռք բերել տոնֆիլմերի ժապավենների յեվ գրամաֆոնային պլաստինկաներ:
դ/ Հավանություն տալ Ռադիո Հաղորդման Կոմիտեյի ձեռնարկմանը՝ մանկական ոպերաների կազմակերպման յեվ այսուհետեվ սիստեմատիկ դարձնել մանկական ոպերաների բեմադրումը յեվ հաղորդումը»:[68]

1936թ-ից Հայաստանի ռադիոն իր աշխատանքները շարունակեց Փոստի շենքի 4-րդ հարկում՝ մինչև 1956 թվականը

Տասնամյակի վերջին Հայաստանում բացի հանրապետական ռադիոկայանից, գործում էին միջին հզորության ևս երեք ռադիոկայաններ, որոնցից երկուսը՝ Երևանում, մեկը՝ Լենինականում, ինչպես

68 ՀԱԱ,ֆ.113,ց.4, գ. 5214,թթ.և շրջ.

նաև 11 գյուղական և շրջանային ռադիոհանգույցներ, որոնք ոչ միայն կազմակերպում էին տեղական ռադիոհաղորդումներ, այլև՝ հեռարձակումներ Երևանից և երկրի այլ քաղաքներից: Արդեն 1935 թվականին Հայաստանում գործում էին 570 ռադիոընդունիչներ, որոնցից 106-ը՝ գյուղերում, ինչպես նաև՝ 41 ռադիոհանգույց և 19 հազար ռադիոկետ: Այդ տարիներին հիմնադրվեց ՀՌ-ի լարային ցանցը, որի միջոցով մայրաքաղաքը կապվում էր հանրապետության բոլոր շրջանների հետ: Տարեցտարի ավելանում էր կայանների հզորությունը և ռադիոհաղորդումների քանակը. եթե 1927 թ-ին ՀՌ-ն պատրաստում էր 300 եթերաժամ հաղորդում, ապա 1930-ին այն հասավ 2100 ժամի, շրջաններում և քաղաքներում շահագործման հանձնված ռադիոկայանների շնորհիվ այն 1939-ին հասավ 4100 ժամի: Նույն թվականին խորհրդային ռադիոհաղորդումներում առաջին անգամ կիրառվեց օպերատիվ տեղեկատվության հեռարձակման մի նոր ձև՝ պետական, պաշտոնական օպերատիվ լրատվության պատրաստումն ու մատուցումը ռադիոունկնդրին: Այս նոր մոտեցումը կիրառվեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ բոլոր ռադիոկայաններն ամեն օր պարբերաբար եթեր էին հեռարձակում ռազմաճակատային վերջին նորությունները, ինչպես նաև անդրադառնում թիկունքում տիրող վիճակին: Հետագայում լրատվության մատուցման օպերատիվ ձևերը կատարելագործվեցին և մեծ կիրառություն գտան լրատվական թողարկումների պատրաստման ժամանակ, հատկապես 5 և 10 րոպեանոց օպերատիվ լրատվական թողարկումներում:

Այսպիսով, 1920-30 թթ. ՀՌ-ում հիմնադրվեցին հասարակական-քաղաքական, երաժշտական, գրական-դրամատիկական, մանկապատանեկան հաղորդումների գլխավոր խմբագրությունները, ձևավորվեցին և գործնականում կիրառվեցին առաջին ռադիոժանրերը, ռադիոյի արտահայտչամիջոցները (բանավոր խոսք, երաժշտություն), հաղորդումների և ծրագրերի տեսակները, որոնք ամբողջացրին ռադիոկոմիտեի ստեղծագործական աշխատանքը՝ նախադրյալներ ստեղծելով ռադիոժուռնալիստիկայի հիմնական գործառույթների և առանձնահատկությունների ձևավորման, կայացման և զարգացման համար:

Այդ շրջանում հանրապետությունում սկսվեց ևս մի կարևոր

գործընթաց:

«1940 թ-ի փետրվարի 29-ի նիստում ՀԽՍՀ Ժողկոմխորհը որոշում է ընդունում Հայաստանում սկսել «հեռախոսաֆիկացիայի» աշխատանքները, որն իրականացնելու համար կպահանջվեր շուրջ 1250,0 ռուբլի»:[69]

1940թ. մայիսի 7-ին Ռադիոյի օրվան նվիրված հերթական տարեդարձի կապակցությամբ «Խորհրդային Հայաստան» և երիտասարդական «Ավանգարդ» պաշտոնաթերթերն անդրադարձ էին տպագրել ՀՌ-ի գործունեության վերաբերյալ: Կարևորելով ՀՌ-ի դերն ու նշանակությունը հանրապետական զանգվածային լրատվամիջոցների համակարգում՝ «Խորհրդային Հայաստան» օրաթերթը վերլուծաբար ներկայացրել էր Հայաստանում ռադիոգործի արմատավորման հիմնախնդիրները, մայրաքաղաքում և շրջաններում ռադիոֆիկացման աշխատանքները, սոցիալական և տարիքային խմբերի համար ռադիոհաղորդումներ պատրաստելու գործում ՀՌ-ի աշխատակիցների ստեղծագործական ամենօրյա աշխատանքը:

Իսկ երիտասարդական «Ավանգարդ» թերթը, անդրադառնալով ՀՌ-ի հիմնադրման պատմությանն ու շրջաններին, կարևորել էր նրա դերը՝ լսարանին օպերատիվ լրատվություն հաղորդելու և բնակչության շրջանում կուլտուր-լուսավորչական գործունեություն ծավալելու առաքելությունը: Մասնավորապես, անդրադառնալով այն երիտասարդական նախաձեռնության դրդապատճառներին ու նախադրյալներին, որոնց շնորհիվ Հայաստանում հիմնադրվեցին ռադիոսիրողների առաջին խմբակները, մայրաքաղաքի և շրջանների ռադիոֆիկացման գործում հանրապետության երիտասարդական կազմակերպությունների ունեցած ավանդի ու ներդրման, ռադիոխմբագրությունների հիմնադրման աշխատանքների վերաբերյալ: Հետագայում, հաշվի առնելով երիտասարդների ունեցած ներդրումը Հայաստանում ռադիոգործի զարգացման ասպարեզում, այն ժամանակվա հանրապետական ղեկավարությունը 50-60-ական թվականներին ՀՌ-ում բացեց երիտասարդական հաղորդումների խմբագրություն:

69 ՀԱԱ,Ֆ.113,ց.4,գ.5272,թթ. 4,6

2. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՌԱԴԻՈՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1941-1945թթ. ռադիոունկնդրումն այնպես էր կազմակերպված, որ լսարանն օպերատիվ լրատվություն ստանար պատերազմական գործողություններից

Պատերազմական չորս երկարուձիգ տարիների ընթացքում ՀՌ-ի աշխատակիցները ոչ միայն գրչով, այլև զենքով պաշտպանեցին հայրենիքը՝ իրենց ավանդը ներդնելով վերջնական հաղթանակի գործում: Այդ դժվարին տարիներին ՀՌ-ն պատրաստեց և եթեր հեռարձակեց մի քանի հազար հաղորդագրություններ, թղթակցություններ, ակնարկներ, հարցազրույցներ, ռեպորտաժներ, նամակներ ռազմաճակատում և թիկունքում տիրող իրավիճակի մասին՝ հավատ և հույս ներարկելով ռադիոունկնդիրներին հաղթանակի նկատմամբ:

ՀՌ-ի գործունեությունը 1941-1945թթ. այնպես էր կազմակերպված, որ լսարանը մշտական և օպերատիվ լրատվություն ստանար պատերազմական գործողությունների մասին: ՀՌ-ն հեռարձակում էր մարտական ռեպորտաժներ ռազմաճակատի տարբեր տեղամասերից, ակնարկներ և պատմվածքներ զինվորների հերոսության, խիզախության, թիկունքի աշխատավորության հաստատակամության և անձնվիրության մասին: Պատերազմական տարիներին ռադիոժուռնալիստիկայի

ամենամեծ ձեռքբերումներից մեկը՝ զինվորների «խոսող նամակներն» էին, որոնց շնորհիվ հազարավոր մարդիկ գտան իրենց հարազատներին:

Հայրենական մեծ պատերազմի գույժը ՀՌ-ն հաղորդեց 1941 թվականի հունիսի 22-ին՝ ժամը 12-ին, երբ Մոսկվայից հեռարձակվեց պաշտոնական հայտարարություն ֆաշիստական Գերմանիայի հարձակման մասին. «1941 թ. հունիսի 22-ի լուսադեմին գերմանական բանակի կանոնավոր զորքերը գրոհեցին մեր սահմանապահ զորամասերի վրա՝ Բալթիկ ծովից մինչև Սև ծով ձգված ճակատում…»: Առաջին պաշտոնական ամփոփագրին հաջորդեց «Վերջին լուրերի» թողարկումը պատերազմական գործողությունների մասին: Պատերազմի առաջին օրվա ընթացքում եթեր հեռարձակվեցին ևս մի քանի լրատվական թողարկումներ՝ ռադիոունկնդրին սպառիչ տեղեկություն հաղորդելով ստեղծված պատերազմական բարդ իրավիճակի մասին:

Մենք նույնպես պատրաստվում ենք

Պատերազմի շունչն զգացվում էր նաև Հայաստանում, հանրապետության ղեկավարները օպերատիվ միջոցառումներ էին ձեռնարկում թշնամու հնարավոր հարձակումներից պաշտպանվելու համար: Պահպանվել են ուշագրավ փաստաթղթեր.

> «Երևան քաղաքի Հակաօդային պաշտպանության տնօրենի 11.07.1941թ-ի հույժ գաղտնի նամակը ՀԽՍՀ Ժողկոմխորհի նախագահի տեղակալ ընկ. Աղբալյանին.
> Քաղաքին սպառնացող իրադրության համաձայն ՀՕՊՇ -ը 22/y1 -ի հետ, Երևան քաղաքում իրականացնում է մշտական հերթապահություն, այդ թվում հեռագրատանն ու ռադիո ստուդիայում: Անհրաժեշտ է մշտական պատրաստվածություն և հսկողություն սահմանել հեռարձակող միջոցների տարածքներում:
> Ելնելով այդ հանգամանքից՝ խնդրում եմ քաղաքի ՀՕՊՇ շտաբը բերել արտակարգ իրավիճակի, և հատկացնել 5 հավելյալ հաստիք.

1. Հերթապահ հեռախոսավարներ հեռագրատանը - 3 հոգի
2. Ռադիո ստուդիայում -2 հոգի ամեն մեկին վճարելով 300 ռուբլի աշխատավարձ

Երևան քաղաքի ՀՕՊՇ-ի տնօրեն Քամալյան»:[70]

Հաշվի առնելով արտակարգ իրավիճակի պայմանները՝ ՀՌ-ն անցավ ամենօրյա հաղորդումների պատրաստման, օրական եթեր հեռարձակելով 6,5-7 ժամ ռադիոհաղորդում:

Պատերազմական արտակարգ իրավիճակի պայմաններում հաղորդումներ պատրաստելու համար հատկապես կարևորվեց Ռադիոյի կազմակերպչական գործառույթը: Ամենամատչելի զանգվածային լրատվամիջոցը՝ ռադիոունկնդիրներին ամենօրյա թարմ լրատվություն էր հաղորդում ռազմաճակատում տիրող իրավիճակի վերաբերյալ, ձևավորում հասարակական կարծիք երկիր ներխուժած ուխտադրուժ թշնամուն ոչնչացնելու և դուրս քշելու վերաբերյալ: Պատերազմական տարիներին հանրապետական ռադիոյի բոլոր խմբագրությունները համախմբվեցին հասարակական-քաղաքական խմբագրության շուրջ, որպեսզի օգնեն խմբագրակազմին «Վերջին լուրերի» լրատվական թողարկումներում պատրաստելու օպերատիվ, հրատապ լրատվություն: Խմբագրության աշխատակիցները, հաշվի առնելով ստեղծված իրավիճակի ողջ լրջությունը, սահմանել էին խիստ հերթապահություն օպերատիվ լրատվության ընդունման և հեռարձակման համար:

«Քաղվածք ՀՍԽՀ Գլավլիտի 30.04.1942 թ-ի հ.2 հրամանից՝
Պար.1
Համաձայն Երևանի Քաղսովետի Գործադիր կոմիտեյի որոշման ս.թ մայիսի 1-ից ՀՍՍՌ Գլավլիտի կենտրոնական ապարատում աշխատանքներն սկսել առավոտյան ժամը 8-ին և ավարտել ցերեկվա ժամը 4 անց 30 րոպեին,հաշված նույն ժամանակում նաև կես ժամյա հանգիստը:
Պար.2

70 ՀԱԱ,Ֆ.113,ց.26,գ.120,թ.1

Տպարաններին և Ռադիոկոմիտեյին կից աշխատող լիազորների աշխատանքներն սկսել և ավարտել, համաձայն նույն ձեռնարկների կողմից սահմանված ժամերին:

ՀՍՍՌ ԳԼԱՎԼԻՏԻ ՊԵՏ՝ Հ. Պետրոսյան»:[71]

Այս աշխատաոճը ռադիոլրագրողների մոտ դարձավ չգրված օրենք մինչև պատերազմի հաղթական ավարտը:

Լրատվությունը ռադիոունկնդրին մատչելի մատուցելու համար լրագրողները հանդես եկան գովելի նախաձեռնությամբ՝ Մոսկվայի ռադիոյի ամենօրյա օպերատիվ լրատվական թողարկումները թարգմանում էին հայերեն, իսկ տեղական լուրերը թարգմանաբար տրամադրում Մոսկվայի ռադիոյին: Ռադիոյի բոլոր խմբագրությունները պատերազմական տարիներին հայրենասիրական բնույթի խորագրերով հաղորդումներ էին պատրաստում տարբեր տարիքային խմբերի և սոցիալական խավերի համար: Առավել ընդունվածներից էր «Իմ հայրենիքը», որով հաղորդումներ էին պատրաստում ռադիոյի բոլոր խմբագրությունների աշխատակիցները:

Պատերազմական գործողությունների մասին պաշտոնական լրատվությունը ՀՌ-ն ստանում էր «Ռադիո Մոսկվայից»՝ «Վերջին ժամ» և «Սովինֆորմբյուրոյի» ամփոփագրերը պարունակող թողարկումներից: Մոսկվայում պատերազմի առաջին օրերին հիմնվեց լրատվական նոր ծառայություն (Սովինֆորմբյուրո), որը պաշտոնական լրատվություն էր հաղորդում և տրամադրում ԽՍՀՄ-ի տարածքում գործող բոլոր պետական լրատվամիջոցներին մինչև պատերազմի ավարտը:

ՀՌ-ի աշխատակիցները Հայրենական Մեծ պատերազմի ամբողջ ընթացքում եռանդով ու նվիրվածությամբ իրենց մասնագիտական պարտքն էին կատարում՝ հաղորդելով բազմաթիվ նյութեր ռազմաճակատում և թիկունքում տիրող իրավիճակների մասին: Թղթակիցները պարբերաբար մեկնում էին հանրապետության տարբեր շրջաններ ու քաղաքներ, պատրաստում բազմաբնույթ ու բազմաժանր հաղորդումներ թիկունքի անձնվեր ու նվիրական աշխատանքի, ժողովրդի անկոտրում կամքի ու թշնամուն հաղթելու վճռականության մասին: Ռազմաճակատ մեկնած քսան ռադիոաշխատողներից ութը՝

71 Ֆ.1254,ց.7,գ.1,թ.14

խմբագիրներ Սիմոն Եղիազարյանն ու Շահեն Հովհաննիսյանը, երգիչ Գուրգեն Գուլոյանը, դաշնակահար Վալենտին Իզրայիլովը, հրահանգիչներ Սահակ Ջանոյանը, Վաչե Սարգսյանը և Կազբեկ Ազիզյանը զոհվեցին:

Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերից ՀՌ-ն պարբերաբար եթեր էր հեռարձակում հանրապետության տարբեր շրջաններում ու քաղաքներում տեղի ունեցող բազմամարդ միտինգների ու հավաքույթների մասին: Հունիսի 30-ին եթեր տրվեց միտինգի մասնակից Երևանի կարող բանվորուհիների կոչը ռազմաճակատ մեկնող զինվորներին. «Մենք՝ կարող բանվորուհիներս, կոչ ենք անում բոլոր աշխատողներին պատրաստ լինել թշնամուն դիմագրավելու համար, հավաստիացնում ենք Ձեզ՝ մեր երկրի քաջ պաշտպաններ, որ մինչև վերջ կլինենք ձեր մարտական ընկերն ու հոգատար քույրը»:[72]

Հայ մտավորականության բաց նամակը

Հուլիսի 14-ին ռադիոն եթեր հեռարձակեց հանրապետության մտավորականության բաց նամակը ողջ աշխատավորությանը: Նամակ-կոչի հեղինակները Հայաստանի կանանց կոչ էին անում փոխարինել ռազմաճակատ մեկնող ամուսիններին, եղբայրներին և, եթե պահանջվի, նրանց հետ մարտնչել ռազմի դաշտում:[73]

Հայրենիքի պաշտպանությամբ մտահոգ կանայք, փոխարինեցին ռազմաճակատ մեկնած տղամարդկանց, կանգնեցին հաստոցի և դազգահի առաջ, սկսեցին յուրացնել հարակից այնպիսի մասնագիտություններ, որոնք հատուկ էին տղամարդկանց: Պատերազմական տարիներին հանրապետության կանանց բազմաթիվ նախաձեռնություններն ու նորարարությունները հարուստ նյութ տվեցին ՀՌ-ի աշխատակիցներին, որոնք պարբերաբար անդրադառնում էին այդ թեմային և խրախուսում նրանց՝ կատարած անձնվեր աշխատանքի համար:

ՀՌ-ն պատերազմի ամբողջ ընթացքում տարբեր

72 Երևանի կարող բանվորուհիների կոչը ռազմաճակատ մեկնող զինվորներին, հանրապետական ռադիո, 1941, 30 հունիսի:

73 Հայ մտավորականության բաց նամակը հանրապետության աշխատավորությանը, հանրապետական ռադիո, 1941, 14 հուլիսի:

ռազմաճակատներից ստանում էր մարտնչող հայ զինվորների և սպաների բազմաթիվ նամակներ և ուղերձներ: Ռազմաճակատային համերաշխությամբ հայ մարտիկները ռադիոխմբագրություն էին ուղարկում հաղթանակի հավատով լեցուն կոչեր՝ անագորույն թշնամուն օր առաջ պարտության մատնելու վճռականությամբ ու հավատով: Ռադիոյի գրական-դրամատիկական, մանկապատանեկան, հասարակական-քաղաքական հաղորդումների խմբագրությունները պարբերաբար եթեր էին հեռարձակում «Նամակ ռազմաճակատից» խորագրով ամենօրյա հաղորդումը, որը կազմվում էր ռազմաճակատից ուղարկված հայ մարտիկների նամակների և ուղերձների հիման վրա: «Սիրելի հայրենակիցներ, թշնամին ճանապարհին ոչնչացնելով ամեն ինչ՝ ցանկանում է գրավել մեր երկրի մայրաքաղաք Մոսկվան: Մենք թույլ չենք տա անագորույն թշնամուն իրագործելու իր հրեշավոր պլանները, կկռվենք մինչև արյան վերջին կաթիլը»,- գրում էին Մոսկվայի մատույցները պաշտպանող դիվիզիաներից մեկի հայ մարտիկները:[74]

Պատերազմական տարիների ՀՌ-ի մասին պահպանվել են բազմաթիվ հուշեր ու պատմություններ: Ռադիոյի վաստակաշատ հաղորդավարներ Հրաչուհի Ջինանյանը, Թամարա Գալստյանը բազմաթիվ դրվագներ են պատմել ռադիոյի պատերազմական առաջին օրերի և շաբաթների ընթացքում հանրապետական ռադիոյում տիրող մթնոլորտի մասին, թե ինչպես էին աշխատակիցներն ու խմբագիրները կազմակերպում օպերատիվ հանդիպումներ, ելույթներ, վարում հարցազրույցներ և ռեպորտաժներ՝ զրույցի հրավիրելով տարբեր մասնագիտությունների և բնավորությունների տեր մարդկանց, որոնց միավորում էր հայրենիքը պաշտպանելու կամքն ու հավատը:

Թամարա Գալստյան, *վաստակաշատ ռադիոհաղորդավարուհի*

Ծանր էր պատերազմական տարիների կյանքը, բայց մենք այնքան մեծ հավատով էինք լցված մեր հաղթանակի նկատմամբ, որ նույնիսկ այն ծանր օրերին, երբ մեր զորքերը նահանջում էին՝ թողնելով մեր հողը, մեր մարդկանց գերմանացիներին, մենք դարձյալ այդ հաղորդագրությունները՝ ենթատեքստ ունենալով

74 Ռազմաճակատային նամականի, հանրապետական ռադիո, 1941 թ., 30 նոյեմբերի:

մեր հավատը, մեր նվիրվածությունը, կարդում էինք վստահություն ներշնչող տոնով:
Հիշում եմ՝ ինչպես օպերատիվ էինք աշխատում: Երբ Մոսկվան տալիս էր «Վերջին ժամը» կամ «Սովինֆորմբյուրոյի» հաղորդագրությունը, մենք՝ աշխատողներս, չսպասելով հայ հեռագրական գործակալության նյութերին, հենց ռադիոյից ընդունում էինք ռուսերենը և մինչ Մոսկվան կկարդար երկրորդ անգամ ու կտար քայլերգ, մեր «Վերջին լուրերի» խմբագրության աշխատողները, կոլեկտիվ կերպով ընդունած տեքստը թարգմանում, պատրաստում էին և հաճախ էջ առ էջ բերում ստուդիա, ու մենք սկսում էինք՝ «Հրաման գլխավոր հրամանատարի...» Շատ ցնծալի օր էր Մայիսի 9-ը՝ Հաղթանակ: Առավոտյան ժամը 6-ին բոլորս վազեցինք ռադիո:Մենք ամբողջ օրվա ընթացքում կարդում էինք պատերազմի ավարտի մասին հրամանը, ցնծալի, ուրախ,տոնական երաժշտությամբ:[75]

Ի դեպ, նկատի ունենալով Թամարա Գալստյանի երկրին մատուցած ծառայությունները և Ռադիոյում ունեցած ավանդը՝ 1977 թ. Հայաստանի Գերագույն խորհուրդը նրան շնորհեց ՀՍՍՀ վաստակավոր արտիստի կոչում:

1941թ. սեպտեմբերի 30-ին ռադիոյով եթեր հեռարձակվեց հանրապետության երիտասարդության հանրահավաքի մասին պատմող նյութը, որին անդրադարձավ նաև «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթը:[76] Հանրահավաքում հանրապետության տարբեր շրջաններից ժամանած երիտասարդները կոչ էին անում իրենց հասակակիցներին զորավիգ լինել Մայր հայրենիքին, զինվորագրվել նրան և կրծքով պաշտպանել մայրենի հողը անագորույն թշնամուց:

Երկրի համար այդ ծանր օրերին ՀՌ-ն պարբերաբար եթեր էր տրամադրում մեր անվանի գրողներին և մշակույթի գործիչներին,

75 Կլարա Թերզյան Տարիների շուրջպարը, Երևան 2011թ., էջ 293:
76 Երիտասարդական հանրահավաք Երևանում, «Խորհրդային Հայաստան», 1941 թ., 1 հոկտեմբերի:

որոնք գոտեպենդող հայրենասիրական ելույթներ էին ունենում՝ ժողովրդին քաջալերելով ընդդեմ թշնամու, կոչ անելով կազմակերպել նոր զորամիավորումներ, պատրաստելու հագուստի և սննդի խմբաքանակներ՝ ռազմաճակատ ուղարկելու համար: Ռադիոյի մշտական հյուրերն էին Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Ա. Վշտունին, Ն. Զարյանը, Ստ. Զորյանը, Մ. Արազին, Հ. Սիրասը, Հ. Շիրազը, Գ. Էմինը, Գ. Բեսը և շատ ուրիշներ, որոնք կարդում էին իրենց հայրենասիրական ստեղծագործությունները, ոգեշնչում բնակչությանը ավելի համախմբված ելնելու թշնամու դեմ, իրենց աշխատանքով նպաստելու վերջնական հաղթանակին: Ռադիոարխիվում պահպանվել է Ավետիք Իսահակյանի խոսքը ռազմաճակատ մեկնող հայ մարտիկներին, որը ժամանակին տպագրեց նաև «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթը: Մեծանուն բանաստեղծը, գիտակցելով ահագնացող վտանգի ողջ պատասխանատվությունը, կոչով դիմում է ժողովրդին. «Սիրելի՛ քույրեր և եղբայրնե՛ր, հայ ժողովուրդը նորից փորձության շեմին է, ոխերիմ թշնամին նորից ուզում է իրագործել իր հրեշավոր պլանը, ոչնչացնել մեր երկիրը, բնաջնջել ազատ սոցիալիստական երկրում ապրող ժողովուրդներին, այդ թվում՝ նաև մեզ: Մենք շատ ենք տեսել այդպիսի պատերազմներ ու կոտորածներ: Դուք պետք է ապացուցեք, որ հայ ժողովուրդը երբեք չի ընկճվել թշնամու առաջ, երբեք գլուխ չի խոնարհել, այլ պայքարել է և իր արյան գնով նվաճել ազատ ապրելու իրավունքը, դուք պետք է ապացուցեք, որ արժանի զավակներն եք մեր քաջարի նախորդների՝ Հայկի և Տիգրանի, Վարդան Մամիկոնյանի և Աշոտ Երկաթի, հաղթանակով վերադառնաք հայրենի տուն՝ սրբությամբ կատարելով ձեր պարտքը հայրենիքի առաջ»:[77]

ՀՌ-ն պատերազմական թեմատիկայով հաղորդումներ պատրաստեց նաև գրական-դրամատիկական հաղորդումների և բեմադրությունների միջոցով: Հանրապետության լավագույն թատերական խմբերի կողմից պատերազմական թեմատիկայով բեմադրվող աշխատանքները հեռարձակվում էին նաև ռադիոյով: Առաջին դրամատիկական գործը Նաիրի Զարյանի «Վրեժ»

77 Ավետիք Իսահակյանի ուղերձը ռազմաճակատ գնացող հայ մարտիկներին, Խորհրդային Հայաստան, 1941 թ., 28-ը սեպտեմբերի:

ստեղծագործությունն էր, որը ներկայացվեց նույն թվականի հոկտեմբերի վերջերին Երևանի Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնում՝ արվեստի վաստակավոր գործիչ, հետագայում ԽՍՀՄ ժողովրդական դերասան, նույն թատրոնի գլխավոր ռեժիսոր Վ. Աճեմյանի բեմադրութամբ (հետագայում հնչեց նաև ռադիոյով):

Նույն թվականի նոյեմբերի կեսերին սունդուկյանցիների երկրորդ գործը Վ. Աճեմյանի բեմադրությամբ Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպն էր, որը հետագայում նույնպես հեռարձակվեց ՀՌ-ով:

Այդ տարիներին ռադիոյում ամենաշատ օգտագործվող ժանրերից էր ակնարկը, որի միջոցով լսարանին տեղյակ էր պահվում ռազմաճակատում և թիկունքում առկա կարևոր դեպքերին և իրադարձություններին: Այս ժանրով ռադիոլրագրողները պարբերաբար ներկայացնում էին հայ մարդու կերպարը, նրան բնորոշ ազգային և հայրենասիրական գծերը, անձնազոհությունը և նվիրվածությունը հայրենիքին: Ակնարկի հերոս էր դառնում գյուղի աշխատավորը, գործարանի բանվորը, դպրոցի ուսուցիչը, ընդհանրապես հասարակ մարդը, որը պարտքի գիտակցմամբ ու հաղթանակի հավատով էր կատարում իր աշխատանքը՝ անձնական օրինակով ոգևորելով ընկերներին ու հարազատներին: Այսպես, ռադիոաշխատող Վ. Գալստյանի ակնարկի հերոսը Էջմիածնի շրջանի կոլտնտեսություններից մեկի բրիգադավար Ա. Գևորգյանն էր, որի բրիգադը պատերազմական այդ ծանր օրերին չէր լքում աշխատանքային ճակատը այնքան ժամանակ, քանի դեռ չէր հավաքել ցորենի վերջին հատիկը: Համամիութենական «Կոմսոմոլսկայա Պրավդա» թերթի սեփական թղթակից Լ. Խուդոբինի՝ «Զանգեզուրի հանքափորների մոտ» ակնարկը մեծ արձագանք գտավ ռազմաճակատում կռվող զանգեզուրցիների շրջանում, որոնք ռադիոյով լսելով իրենց համերկրացիների հերոսական աշխատանքի մասին, թղթակցի միջոցով իրենց հայրենակիցներին գրել էին. «Մենք ռադիոյով լսեցինք, թե դուք ինչպես եք աշխատում, ձեզ գովաբանում են: Դա լավ է: Բայց չգոռոզանաք: Ավելի շատ հանքաքար տվեք: Այն անհրաժեշտ է մեր երկրի արդյունաբերությանը՝ զենք արտադրելու համար»:

Չնայած պատերազմական իրավիճակին՝ 1943 թվականի նոյեմբերի

11-ին ԽՍՀՄ կապի Ժողկոմատի Հայաստանի լիազոր վարչությունը հրաման է հրապարակում՝ Հոկտեմբերյան հեղափոխության հերթական տարեդարձը բարձր մակարդակով լուսաբանելու վերաբերյալ:

Տնօրեններին և ինժեներներին, ինչպես նաև Երևանի Ռադիոցանցին, Ռադիոկենտրոնին, Հեռագրական գրասենյակին հրամայվում է մեծ պատասխանատվությամբ ստուգել տեխնիկական միջոցների վիճակը, որպեսզի հեռարձակումն ընթանա առանց ընդհատումների և խափանումներ չառաջանան:

> Երևանի Ռադիոհեռարձակման ցանցի տնօրեն ընկ. Հակոբյանին հրամայվում է.
> «Ուժեղացնել Լենինի հրապարակի և կայարանամերձ տարածքում տեղադրված ռադիոընդունիչների զվուկաֆիկացիան»:[78]

ՀՌ-ի և թերթերի խմբագրությունները շատ նյութեր էին ստանում ռազմաճակատում կռվող լրագրողներից, հրամանատարներից, քաղաշխատողներից, որոնք ներքին մղումով իրենց պարտքն էին համարում՝ թիկունքի ընթերցողներին հաղորդակից դարձնել ռազմաճակատում կռվող հայ մարտիկների հերոսություններին: Պատերազմական տարիներին հնչում էին ռազմաճակատում աչքի ընկած մարտիկների խոսքը, նրանց մասին պատմող ակնարկները, ելույթներն ու ուղերձները: ՀՌ-ն իր թողարկումներում պարբերաբար լրատվություն էր հեռարձակում արտասահմանում ապրող մեր հայրենակիցների անձնվեր նախաձեռնության մասին: 1943 թ. հունվարին Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղապահ, արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանը խնդրում է սովետական կառավարությանը՝ պետական բանկում բացել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցման ընթացիկ հաշիվ՝ միաժամանակ դիմելով արտասահմանում ապրող մեր հայրենակիցներին՝ միջոցներ հավաքելու տանկային շարասյուն կառուցելու համար: Արձագանքելով Ամենայն Հայոց Կաթողկոսի տեղապահի կոչին՝ սփյուռքի մեր հայրենակիցներն իրենց սուղ միջոցներից հանգանակություններ կազմակերպեցին

78 Ֆ.127,ց.2,գ.61,թթ. 80-82

ռազմաճակատում կռվող հայ զինվորներին զենքով ու հանդերձանքով օգնելու, ինչպես նաև «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը կառուցելու համար: Սփյուռքահայերի հանգանակած միջոցներով սովետական գործարաններում կառուցվեց այն և հանձնվեց Կարմիր բանակի զորամասերից մեկին: Կաթողիկոսին ուղղված հեռագրում Կարմիր բանակի զրահատանկային զորքերի հրամանատարությունը գրում է, որ 1944 թ. փետրվարի 29-ին հանդիսավոր պայմաններում № տանկային զորամասին հանձնվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը: Այս իրադարձությանը անդրադարձան ոչ միայն հանրապետական, այլև համամիութենական կենտրոնական զանգվածային լրատվամիջոցները: Հանգանակություններին առավել ակտիվ մասնակցեցին Մերձավոր Արևելքի երկրներում ապաստանած մեր հայրենակիցները, որոնց հիշողություններում դեռ թարմ էին Մեծ եղեռնի սարսափները: «Պրավդայի» 1944 թ. մարտի 19-ի համարում կարդում ենք հեռագիր այն մասին, որ Կարմիր բանակի զրահատանկային և մեքենայացված զորքերի հրամանատարության ներկայացրած № գվարդիական զորամասին հանձնվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը: «Պրավդա» թերթը, 1944թ. մարտի 19-ի համարում անդրադառնալով այդ նախաձեռնությանը, մասնավորապես գրում է. «Առաջին համաշխարհային պատերազմի սարսափները տեսած հայ ժողովրդի մի ստվար մասը հայրենասիրական նախաձեռնություն է հանդես բերել և ռազմաճակատ ուղարկել հայ ժողովրդի էպոսի հերոս «Սասունցի Դավթի» անունը կրող տանկային շարասյուն՝ որոշելով հաջորդ անգամ հանգանակության միջոցով կազմել և ռազմաճակատ ուղարկել «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյունը»:[79]

Պատերազմական տարիներին սփյուռքի մեր հայրենակիցների ուժերով կազմակերպվեցին և հայ ռազմիկներին ուղարկվեցին մի քանի էշելոն հանդերձանք, սնունդ և զենք: ՀՌ-ն հետագա տարիներին բազմիցս անդրադարձավ մեր հայրենակիցների հայրենասիրական նախաձեռնությանը՝ հարգանքի տուրք մատուցելով նրանց: Առաջին անգամ փորձ արվեց եթերային «ռադիոկամուրջ» ստեղծել Մայր հայրենիքի և Մերձավոր արևելքում ապրող մեր

79 Миронов В., Танковая колонна «Давид Сасунский» на вооружении у Красной Армии, Правда, 1944, 19 марта.

հայրենակիցների միջև: Ռադիոն փորձնական ռադիոեթերի ժամանակ հնարավորինս անդրադարձավ սփյուռքի մեր հայրենակիցների նախաձեռնություններին, ինչպես օրինակ Եգիպտոսում կազմակերպված համաժողովրդական հանգանակությանը, որին մասնակցած մի խումբ եգիպտահայեր գրել են. «Մեր հայրենիքը նորից հայտնվել է վտանգի մեջ, ուխտադրուժ թշնամին արդեն որերորդ անգամ ցանկանում է ոչնչացնել մեր ժողովրդին: Մենք մեր պարտքն ենք համարում բարոյապես ու նյութապես զորավիգ լինելու մեր ժողովրդի մեկ հատվածին, օգնելու մեր եղբայրներին ու քույրերին՝ դիմագրավելու թշնամուն»:[80]

Նմանատիպ լրատվությունները և մեր հայրենակիցների անձնվեր նախաձեռնությունները մի տեսակ «եթերային» կամրջի դեր կատարեցին մեր ժողովրդի երկու տարանջատված հատվածների միջև՝ նախադրյալներ ստեղծելով հետպատերազմյան հայրենադարձության և սփյուռքի մեր հայրենակիցների համար ռադիոխմբագրության հիմնադրման համար:

ՀՌ-ի արխիվային նյութերում իր առանձնահատուկ տեղն ունի 1943 թ. մարտի 21-ին հեռարձակված «Հայ ժողովրդի նամակը՝ ռազմաճակատում կռվող հայ մարտիկներին» ուղերձը, որը տպագրեցին նաև «Սովետական Հայաստան» և «Կոմունիստ» թերթերը: Նամակ-ուղերձում կոչ էր արվում կանգ չառնել ոչ մի դժվարության առաջ, քարուքանդ անել ֆաշիստական ամրությունները, ոչնչացնել նրանց տեխնիկական և կենդանի ուժը, անընդհատ շարժվել դեպի արևելք: Նամակը հիշեցնում էր, որ հազարավոր հայ մարտիկներ իրենց հերոսությամբ բարձր են պահում ժողովրդի պատիվը, հայ ռազմիկի պատիվը:

1943 թ. մարտի վերջերին նշվեց Հովհ. Թումանյանի մահվան 20-ամյակը: Այդ առթիվ տեղի ունեցան հանդիսավոր նիստեր, տպագրվեցին բազմաթիվ հոդվածներ, հեռարձակվեցին ռադիոհաղորդումներ: «Հայ ժողովրդի մեծ բանաստեղծը» ակնարկում բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Մկրյանը նշում էր, որ Թումանյանն էլ ավելի հասկանալի և մոտ է դարձել հայ ժողովրդին՝ իր մաքուր դյուցազնական ոգով, անկեղծ բարոյական

80 Լրատվությունը մեզ է տրամադրել վաստակաշատ ռադիոհաղորդավար Հրաչուհի Ջինանյանը, 20.08.1990:

հայրենասիրությամբ, դեպի կյանքն ու մարդն ունեցած իր մեծ սիրով: Նմանատիպ գրական միջոցառումները հանրապետությունում բազմաթիվ էին և պարբերական բնույթ էին կրում՝ սերտորեն շաղկապվելով ստեղծված իրադրությանը՝ լավատեսություն և հույս ներշնչելով ռազմաճակատում և թիկունքում մարտնչող հայ մարդուն:

ՀՌ-ն իր եթերաժամը բազմիցս տրամադրեց համամիութենական ռադիոյի կարևորագույն հաղորդագրումներին ու հաղորդաշարերին:

1941 թ. հոկտեմբերից այդ շարքի հաղորդումների մեջ ընդգրկվեցին շրջափակման մեջ հայտնված Լենինգրադի ռադիոյի հեռարձակումները, որոնք սկսվում էին. «Լսի՛ր մեզ, հարազատ երկիր, խոսում է Լենինգրադը, խոսում է Լենինգրադը» բառերով:

Վերջապես, 1945 թ. մայիսի 2-ին ժ՝ 14.15 րոպեին համամիութենական ռադիոյի թղթակից Ա. Մագրաչովը Բեռլինից հաղորդեց երկար սպասված լուրը. «Թանկագի՛ն բարեկամներ, այսօր խորհրդային զորքերը գրավեցին հիտլերյան Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինը, որի կենտրոնից՝ Ունտեր Դեն Լինդենից էլ վարում ենք մեր այս ռեպորտաժը: Ռայխստագի վրա վեհորեն ծածանվում է հաղթական դրոշը, իսկ Ունտեր Դեն Լինդենով քայլում են մեր զինվորները... նրանք հասան հաղթանակի, որի համար այսքան երկար մարտնչում էին...»:[81]

1945 թվականի մայիսի 2-ի հ. 939 որոշմամբ ԽՍՀՄ Սովմինը մայիսի 7-ը հայտարարում է Ռադիոյի օր՝

«ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների խորհրդի
Հ. 939 Որոշում

Հաշվի առնելով ռադիոյի կարևորագույն դերը ժողովուրդների մշակութային և քաղաքական կյանքում,երկրի պաշտպանության գործում,ինչպես նաև հայրենական գիտության և տեխնիկայի ժողովրդականացմանը, ռադիոյի բնագավառում և ռադիոսիրողներին ոգևորելու նպատակով ժողովուրդների լայն շրջանակում մայիսի 7-ը հաստատել, որպես ամենամյա Ռադիոյի օր:

81 Маграчев А. Радио в годы Великой отчественной войны, Москва, 1980 г., с. 59.

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների
խորհրդի նախագահ՝ Ի.Ստալին
քարտուղար՝ Յ.Չադաև»:

Հաղթանակի լուրը ցնծությամբ ընդունվեց հայ ժողովրդի կողմից: Հանրապետական բոլոր թերթերը հրապարակեցին, իսկ ռադիոն մի քանի անգամ հաղորդեց գերմանական զինված ուժերի անվերապահ կապիտուլյացիայի ակտը և ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը մայիսի 9-ը Հաղթանակի օր հայտարարելու մասին: Այդ օրերի ականատես և մասնակից Սիլվա Կապուտիկյանը հիշում է, թե ինչպես հազարավոր մարդիկ հավաքվել էին Լենինի(այժմ՝ Հանրապետության) հրապարակում տեղադրված բարձրախոսների մոտ՝ լսելու այդքան երկար սպասված հաղթանակի լուրը: Մարդիկ չէին կարողանում զսպել իրենց ուրախությունը, ողջագուրվում էին, արտասվում, պարում: Հաղթանակի լուրը վերաճեց համաժողովրդական տոնակատարության,- վերհիշում էր բանաստեղծուհին: «Այսօր Մեծ Միության բոլոր ժողովուրդների համար և աշխարհի ազատասեր, դեմոկրատ ժողովուրդների համար ամենապանծալի օրն է,- գրում է Ավ. Իսահակյանը,- այսօր պարտված, խորտակված Բեռլինի վրա վեհորեն, հաղթականորեն ծփում է Սովետական Միության փառապանծ մեծ դրոշը, ազատության և մարդկության սիմվոլը...»:[82]

Հաղթանակ

> «Ռադիոն ավետեց, որ հիտլերյան Գերմանիան անվերապահորեն անձնատուր է եղել,- գրում է ակադեմիկոս Հր. Աճառյանը,- ու՞ր է թե աշխարհի որևէ լեզու հարմար բառեր ունենար արտահայտելու համար այն ծով հրճվանքը և ուրախության փոթորիկը, որ համակել է մեր մեծ ու բազմազգ Միության հպարտ քաղաքացիների սրտերը»:[83]

82 Իսահակյան Ավ., Մեծ հաղթանակի օրը, Սովետական Հայաստան, 1945, № 86:
83 Աճառյան Հր., Երկար սպասված հաղթանակ, Սովետական Հայաստան, 1945, № 24:

Եվ այսպես, պատերազմական թեման տարբեր ձևերով ու ընդգրկումներով 1416 օր շարունակ գտնվեց ՀՌ-ի ամենօրյա ուշադրության կենտրոնում: Ռադիոն եթեր հեռարձակեց մի քանի հազար հաղորդագրություններ, թղթակցություններ, հարցազրույցներ, ակնարկներ, նամակներ, ռեպորտաժներ, ելույթներ, մեկնաբանություններ: ՀՌ-ի ամբողջ կոլեկտիվը պատվով ու նախանձախնդրությամբ կատարեց իր վրա դրված ծանր ու պատասխանատու առաքելությունը՝ ըստ արժանվույն ներկայացնելով ռազմաճակատում և թիկունքում մաքառող ու մարտնչող հայ մարդուն: Մեր ժողովրդի՝ ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը երկիրը վերադարձրեց խաղաղ ստեղծագործ աշխատանքի: Բնականոն աշխատանքային ռիթմի մեջ մտավ նաև ՀՌ-ն, վերակազմավորվեցին խմբագրությունների ծրագրերը և հաղորդաշարերը, յուրաքանչյուր խմբագրություն սկսեց կատարել իրեն ընձեռված գործառույթը, և նախադրյալներ ստեղծվեցին նոր խմբագրությունների ձևավորման համար: Հայրենական մեծ պատերազմի տարիներին կուտակած լրագրողական աշխատանքային մեծ փորձը հնարավորություն տվեց հանրապետական ռադիոյի աշխատակիցներին պատրաստելու ավելի օպերատիվ և հրատապ լրատվական հաղորդումներ և ծրագրեր՝ լսարանին մշտապես իրազեկելով հանրապետությունում և այլ երկրներում տեղի ունեցող դեպքերին և իրադարձություններին:

3. ՀՌ-Ն ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Չնայած հետպատերազմյան տարիների տնտեսական և սոցիալական դժվարություններին, ՀՌ-ն աստիճանաբար մտավ բնականոն հունի մեջ և լծվեց խաղաղ, ստեղծագործ աշխատանքի: Այս շրջանում հիմնվեցին մի շարք նոր խմբագրություններ, ընդարձակվեց ՀՌ-ի հեռարձակման շառավիղը, շահագործման հանձնվեց երկրորդ ծրագիրը, որը հնարավորություն տվեց ավելացնելու հաղորդաշարերի և ծրագրերի թիվը, մեծացնելու ռադիոհաղորդումների ժամաքանակն ու պոտենցյալ լսարանը:

ՀՌ-ի ղեկավար կազմում տեղի ունեցան նաև կադրային փոփոխություններ:

> «1946 թ-ի օգոստոսի 9-ին ՀԽՍՀ Ժողկոմխորհի որոշմամբ Ռադիոֆիկացիայի և ռադիոհաղորդումների կոմիտեի նախագահ Սամվել Պետրոսյանն ազատվում է աշխատանքից: Այդ պաշտոնում նշանակվում է Գոհար Աստվածատրյան»:
>
> *ՀԱԱ,Ֆ.113, ց. 19, գ.722,թ.2*

Երկար քննարկումներից և լսումներից հետո վերջապես հաստատվում է հանրապետական ռադիոյի եթեր հեռարձակման կոչնակը, իսկ ստեղծագործական կազմը համալրվում՝ երիտասարդ, խոստումնալից ռադիոլրագրողներով: Հիմնված նոր խմբագրություններից կարևորվում է Սփյուռքի համար տրվող հաղորդումների խմբագրությունը, որի մուտքը եթեր համընկավ համաշխարհային մեծ պատերազմից հետո ծայր առած հայրենադարձությանը:

Խորհրդային Միության ռադիոլրագրության մեջ եզակի երևույթ էր ազգային ռադիոկայանի հաղորդումների հեռարձակումը արտասահմանում բնակվող հայրենակիցների համար: Կարծես թե «երկաթե վարագույրի» տրամաբանությունը հակառակը պետք է լիներ, սակայն Խորհրդային Միության կառավարությունը հաշվի առնելով հայ ժողովրդի միասնական կամարտահայտությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին և Սփյուռքի անձնվեր օգնությունը թույլատրեց Հայաստանի հանրապետական ռադիոյին եթերային կապ

հաստատելու և հաղորդումներ պատրաստելու Մերձավոր արևելքի երկրներում բնակվող իր հայրենակիցների հետ:

Հետպատերազմյան առաջին տարիներին ՀՌ-ի խմբագրությունները հիմնականում կրկնում էին նախապատերազմյան շրջանի կարգախոսները՝ «Հնգամյակը՝ չորս տարում», «Հնգամյակի շինհրապարակներում», «Առաջավոր կոլտնտեսությունների փորձից», «Առաջավոր փորձի դպրոց» և այլն: Օգտագործվում էին զանգվածային աշխատանքի կազմակերպման նույն մեթոդներն ու ձևերը. արտագնա խմբագրություններ, հասարակական ստուգայցեր, արտահաստիքային թղթակցային կետեր և այլն:

Հետպատերազմյան ռադիոն վերջապես կենտրոնանում է ռադիոհաղորդումների վրա:

Սփյուռքի համար տրվող հաղորդումների հիմնումը Հայաստանի ՀՌ-ում

Ամեն ինչ սկսվեց դեռևս 1944 թ-ին, երբ ՀՌ-ն առաջին անգամ գերկարճալիք եթերով փորձնական հաղորդումներ պատրաստեց Մերձավոր Արևելքում ապրող մեր հայրենակիցների համար: Առաջին փորձնական հաղորդումները բավականին հաջող էին: Սփյուռքի մեր հայրենակիցներն առաջին անգամ լսեցին Մայր հայրենիքի ձայնը, որը նրանց համար հնչեց իբրև երազ, իբրև կարոտ ու խաբրիկ: Խորհրդային կառավարությունը, հաշվի առնելով Հայրենական մեծ պատերազմում սփյուռքահայերի գործուն աջակցությունն ու նյութական օգնությունը, թույլատրեց եթերակապ հաստատել Մերձավոր արևելքում ապրող մեր հայրենակիցների հետ:

> ***Հայկ Մարտիրոսյան,*** *արտասահմանի համար տրվող հաղորդումների խմբագիր, «Թղթապանակ N...» ռադիոհաղորդման հեղինակ*
>
> *Մենք Հայաստանի ղեկավար Գրիգոր Հարությունով ունեինք, որի հանդեպ մեր ժողովուրդը շատ մեծ, չմարած պարտք ունի: Գրիգոր Հարությունյանի ժամանակ առաջին անգամ փաստաթղթեր պատրաստվեցին Ղարաբաղի հարցով: Այդ ընթացքում Մոսկվայում կազմակերպվում*

էր Հայաստանի մշակութային տասնօրյակը, որը մինչև հիմա համարվում է մեր մշակույթի հաղթանակը:Հենց տասնօրյակի շրջանակներում դա եղավ: Հարությունյանն էլ այն անցկացրեց: Նա կազմակերպեց նաև Արցախի ազատագրության փաստաթղթերն ու այդ հարցին զուգընթաց նաև առաջ մղեց Սփյուռքահայության առաջին ներգաղթի գաղափարը: Հարությունյանը գիտեր Մոսկվայում ինչ գայլեր են նստած, և որպեսզի հայրենդարձության հարցն ավելի մատչելի ու հասկանալի լիներ, նա ասաց՝ տեսեք, ես 300 հազար հայի պետք է 1-2 տարում Հայաստան բերեմ, մենք փոքր երկիր ենք, այդքան հող չունենք, դրա համար ես խնդրում եմ նպատակահարմարություն ստեղծեք Ղարաբաղը միացնել Հայաստանին, որպեսզի այդ 300 հազար հայերին ես կարողանամ տեղավորել, իսկ ձեզ հավատացնում եմ, որ հայերը միայն օգուտ կբերեն Սովետական միությանը, որովհետև նրանց, ում ես հրավիրում եմ, բարձր որակի մասնագետներ են, որ հիմա Սովետում չկան: Եվ... Սովետում սկսեցին մտածել, որ սրա ասածը ինչ-որ առումով ճիշտ է: Եվ առաջին անգամ հարց դրվեց հայափոխանակություն անել: Ավելի շուտ... ոչ թե «հայափոխանակություն» (բառը սխալ օգտագործեցի), այլ Հայաստանի ադրբեջանցիներին տեղափոխել Ադրբեջան: Դա Գրիգոր Հարությունյանի հայրենասիրական ամենաուժեղ քայլերից մեկն էր: Մոսկվային համոզեց, և Մոսկվան համոզվեց: Այն, որ որոշ ադրբեջանցիներ ասում են՝ հայաստանյան ադրբեջանցիներ են՝ ցուցակներով... Մոսկվան հատուկ գումար տրամադրեց, նախապատրաստվեցին և այդ մարդկանց տեղափոխեցին Ադրբեջան: Հայաստանից երկու տարվա ընթացքում Գրիգոր Հարությունյանին հաջողվեց տանել 20-30 հազար ադրբեջանցու: Բայց, ցավոք, նրան ազատեցին աշխատանքից:Երբ Մոսկվայում առաջ եկավ հայրենադարձության գաղափարը (դրսից 300 հազար հայ պետք է 1-1,5 տարում գար) հարց առաջացավ՝ Հայաստանից նրանց հայրենիք կանչելու քարոզչությունը ուժեղացնել: Դա ուղղություններից մեկն էր ընդամենը...

Երևա՛նն է խոսում, Երևա՛նն է խոսում

-Երևա՛նն է խոսում, Երևա՛նն է խոսում,- այսպես սկսվեցին Սփյուռքի մեր հարենակիցների համար տրվող առաջին ռադիոհաղորդումները, որոնք հետագայում դարձան մշտական «եթերային» կամուրջ, օպերատիվ -լրատվական կապ հաստատելով Մայր հայրենիքի հետ՝ դառնալով մեր հայրենակիցների կենցաղի անբաժանելի մասը:

Հաղորդավարներ, որոնց այնքան սիրով ու ջերմությամբ էին արձագանքում ունկնդիրները՝ հեռուստահաղորդավար՝ Նարա Շլեպչյան և ռադիոհաղորդավար՝ Հրաչուհի Ջինանյան

Եթերի բացման առաջին խոսքի («Երևանն է խոսում» նախադասությամբ) պատիվն է ունեցել Հայաստանի ժողովրդական արտիստուհի Հրաչուհի Ջինանյանը: Հետագայում նա այնքան է սիրվել սփյուռքահայ ռադիոունկնդիրների կողմից, որ մեր շատ հայրենակիցներ, ի դեմս նրա հանրածանոթ դարձած ձայնի, տարիներ շարունակ իրենց կարոտն են առել հայրենիքից, հարազատներից, մայրենիից՝ նրա ձայնն ընդունելով իբրև Հայաստանի խորհրդանիշ: Այդ են վկայում դերասանուհուն հասցեագրված հազարավոր նամակները: Տիկին Հրաչուհու «եթերային» կյանքում ուշագրավ էր հետևյալ եղելությունը. 1962 թվականին, երբ նա այցելել էր սփյուռք, Երևանի ռադիոկայանի ունկնդիրների հետ հանդիպման, ներկաներից մեկը՝ տպավորված

լինելով հաղորդավարուհու աշխատանքով, խնդրել է՝ «Կ՛աղաչեմ՝ Երևանն է խոսում, ըսեք»:

Ահա այս սրտառուչ միջադեպը մեկ անգամ ևս փաստեց, որ սփյուռքահայության համար տրվող հաղորդումները ոչ միայն անհրաժեշտ են, այլև պարտադիր:

Հայաստանի ռադիոյի ժողգործիքների անսամբլը Բաթումի նավահանգստում դիմավորում է Սփյուռքից հայրենիք վերադարձողներին Կենտրոնում Օֆելյա Համբարձումյանն է,որի երգերը մեծ սիրով էին ունկնդրում Սփյուռքում (1947թ.)

1946 թ. հունիսի 27-ին ՀՌ-ն ողջունեց զանգվածային հայրենադարձության առաջին քարավաններին, որին հաջորդեցին մի շարք հաղորդումներ՝ նվիրված այդ իրադարձությանը: Ընդառաջելով հանրապետության բնակչության և սփյուռքահայության ցանկություններին՝ ՀԿԿ Կենտկոմը օգոստոսի 8-ին որոշում ընդունեց արտասահմանում ապրող հայության համար մշտական հաղորդումներ ունենալու մասին:[84] Սփյուռքահայության համար հաղորդումներ պատրաստող խմբագրության անդրանիկ թողարկումը եթեր հեռարձակվեց 1947 թ. սեպտեմբերի 10-ին՝ ժամը 19.00-ին, կարճալիք հատուկ ծրագրով: Այդ օրը մեր հայրենակիցներին շնորհավորեցին Ավետիք Իսահակյանը և Վահրամ Փափազյանը:[85]

84 Ստ. Մարության «Եթերում Երևանը» էջ 42,1998թ

85 Ոսկանյան Վ., Երևանն է խոսում, այսպես սկսվեց 1947 թ. սեպտեմբերի 10-ը, «Եթերում է Երևանը», 1962թ., 5-ը ապրիլի:

Վարուժան Ոսկանյան, *արտասահմանի համար տրվող հաղորդումների խմբագիր*

Սփյուռքահայության համար տրվող հաղորդումները, որ գերազանցապես ուղղված էին արտասահմանում ապրող մեր հայրենակիցներին, սկսեցին պատմել Հայաստանի և Սփյուռքի մասին: 1947 թ-ին, երբ հնչեց Հրաչուհի Ջինանյանի ձայնը՝ «Երևանն է խոսում», առաջին անգամ դրվեց 45 ր տևողությամբ հաղորդում՝ Մերձավոր և Միջին արևելքի հայության համար:

Երևանի ձայնը տարածվեց, հասավ Եվրոպա՝ 1957 թվականին հայերեն, նաև առաջին անգամ ֆրանսերեն ամփոփումներով: Եվ այդ ձայնը, այսպես ասենք, երանություն, երջանկություն էր սփյուռքահայության համար, որովհետև «սև վարագույրից» անդին Հայաստանի ձայնն իրավունք չուներ հասնելու. այդպես էր Խորհրդային Միության քաղաքականությունը, որը եթե խորհրդային է, սովետական է՝ այն ժամանակ ասված, ուրեմն լավագույնն է. մենք ուրիշի խոսքի կարիքը չունեինք: Այսինքն, ճնշվում էր ազատ խոսքը:

Ֆրանսահայ դաշնակահար Ռաֆֆի Պետրոսյանը հայրենիքում է և պատրաստվում է համերգի:Նրա առաջին ունկնդիրն Օհան Դուրյանն է (1957թ.)

Թեմաները շատ էին, բազմազան: Հենց սկզբից ասեմ, որ հաղորդումները լսելու գուցե առաջին շաբաթներից, նամակների հեղեղ սկսվեց Սփյուռքից դեպի Հայաստան: Պարզ է, որ այդ նամակների հիման վրա խմբագրությունը (այն ժամանակ դեռևս վարչություն կամ գլխավոր խմբագրություն չէր), «Խոսում են նամակները», «Մեր նամականին» հաղորդաշարերը բացեց և պատմում էինք Հայաստանի և՛ տնտեսության, և՛ մշակույթի ու նաև առհասարակ աշխարհի նորությունների մասին՝

կախված և՛ հայության, և՛ մյուս ազգությունների հետ... տեղեկություններ հաղորդել սփյուռքահայ մեր ունկնդիրներին:

Անմահ Կոմիտասի «Գարուն ա» երգի՝ հայի հոգու խորքը թափանցող մեղեդու կոչնակներով բացվող ռադիոյի ձայնը մտավ Լիբանանի, Սիրիայի, Իրանի, Քուվեյթի, Թուրքիայի, Եգիպտոսի, Կիպրոսի, Հորդանանի փողոցներն ու հրապարակները, տներն ու մշակույթի, ուսումնական հաստատությունները՝ մի յուրօրինակ Հայաստան պարգևելով յաթաղանի սարսափը չմոռացած հայությանը: Իսկ որքան ջերմ էին առաջին ռադիոհաղորդումներից ստացված արձագանքները. որքան կարոտ, սեր և հավատ կար դրանցում: Այդ եթերակապը սովորական կապ չէր, այլ հայրենիքի գոյությունը և նրա հարատևությունը հավաստող կապ:

«Չեմ կրնար թաքցնել ուրախությունս, անընդհատ կու լամ, երբ կը լսեմ Հայաստանի ռադիօ կայանէն Երևանի ձայնն ու երգերը: Այդ պահուն հպարտ կը զգամ ինքզինքս զգալով, որ հայրենիք մը ունիմ, որ օր-օրի կ՛առաջդիմէ»,- հալեպահայ Ներսես Գալֆայեանի այս խոսքը կարծես խտացնում էր մեր հազարավոր հայրենակիցների իղձերն ու կարոտը, սերը վերագտած հայրենիքի նկատմամբ:

Սփյուռքի համար տրվող հաղորդումների խմբագրությունն աստիճանաբար ընդլայնեց ռադիոհաղորդումների աշխարհագրությունը: Շուտով բացվեց արաբերեն լեզվով հաղորդումների բաժինը: Հայաստանի ձայնը թափանցեց արաբական երկրներ: Ամենօրյա մեկժամյա այդ ծրագիրը, որը պատրաստում ու ձայնասփռում էին խմբագրության աշխատակիցները, միլիոնավոր ունկնդիրներին պատմում էր Հայաստան աշխարհի, հայ-արաբական կապերի մասին:

Սակայն արտասահմանի հայությանն ուղղված բոլոր հաղորդումները խստորեն վերահսկվում էին ոչ միայն ՀՌ-ի, այլ նաև ժամանակի բարձրաստիճան կուսակցականների կողմից:

26.06.1951 Ռադիոկոմիտեի հ.171 հրամանը՝ արտասահմանի համար տրվող հաղորդումների մասին.

«Քաղվածք.

Վերջին շրջանում /ԻՆՕ/ արտասահմանի համար տրվող

հաղորդումներն ավելի հետաքրքիր ու բազմաբովանդակ են ներկայացվում: Սակայն պետք է նշել որոշ բացթողումներ: Ռադիոհաղորդումներում բավարար չափով չի ներկայացվում Հայկական ՍՍՀ-ի աշխատավորությունը, որն իր ամենօրյա աշխատանքով արդյունաբերության, գյուղատնտեսության, մշակույթի ոլորտներում ամրացնում է խաղաղությունը: Արտասահմանի համար տրվող հաղորդումների խմբագրությունը պարբերաբար չի պայքարում դաշնակների ռեակցիոն գործունեության, ինչպես նաև արտասահմանում գործող մյուս հայկական հակահեղափոխական կազմակերպությունների դեմ:

Հաշվի առնելով այս հանգամանքները հրամայում եմ.

Ավելի հաճախ ներկայացնել հայ աշխատավորության ձեռքբերումները, միաժամանակ ներկայացնելով նրանց պայքարը պատերազմ հրահրող անգլո-ամերիկյան ուժերի դեմ»:

Հայաստանի Ռադիոինֆորմացիայի
Կոմիտեի նախագահ *Հ.Այվազյան*

Ֆ.191,ց.2,գ.10,թթ. 89-91

Սփյուռքի հետ կապը մերձեցնելու համար 1957 թ. ստեղծվեց արտասահմանի համար հեռարձակվող հաղորդումների վարչություն, որի հիմքի վրա 1983 թ. ստեղծվեցին երկու գլխավոր խմբագրություններ՝ հաղորդումների ընդհանուր ծավալը հասցնելով 6,5 ժամի, իսկ 1993 թ. խմբագրությունները միավորվեցին «Արաքս» ռադիոգործակալության մեջ, որը կոչվեց «Հայաստանի ձայն» գործակալություն:

1955 թ. սկսվեցին կանոնավոր հաղորդումներ եթեր հեռարձակվել եվրոպական երկրներում ապրող մեր հայրենակիցների համար: Հայրենիք-Սփյուռք կապերի «ոսկի կամրջի» իր առաքելությունը ռադիոն տարեցտարի ավելի մեծացրեց՝ ծրագրերում ընդգրկելով և եթերաժամ հատկացնելով ոչ միայն Հայաստան այցելած պատվիրակությունների անդամներին, այլև Մայր հայրենիքում ամեն տարի կատարելագործվելու եկած սփյուռքահայ ուսուցիչներին, տարաշխարհի հայ գրականության, մշակույթի, մամուլի, ռադիոյի աշխատակիցների ելույթներին:

1950-ականների երկրորդ կեսին Ռադիոինֆորմացիայի գլխավոր վարչության արտասահմանի համար տրվող հաղորդումները կրկին հայտնվում են ուշադրության կենտրոնում: ՀԽՍՀ կուլտուրայի մինիստրությունը, վերլուծելով դրանք, արձանագրում է որոշ թերություններ և կայացնում որոշումներ.

Քրդական հաղորդումների խմբագիր՝ Քյարամ Չալոյան

«Քաղվածք ՀԽՍՀ կուլտուրայի մինիստրի հ. 249 հրամանից /04.06.1955/

Դեռևս լրիվ կերպով չի իրագործվում կենտկոմի բյուրոյի որոշումը ռեսպուբլիկական լուրերի թեմաների խիստ ընտրություն կատարելու մասին, որի հետևանքով հաղորդվել են մի շարք անհետաքրքիր և ռեսպուբլիկայի կյանքի համար ոչ բնորոշ ինֆորմացիաներ: Անբավարար է լուսաբանվում արտասահմանի հայ պրոգրեսիվ կազմակերպությունների գործունեությունը և նրանց պայքարը ամերիկյան իմպերիալիզմի գործակալների՝ դաշնակցության դեմ: Այդ կապակցությամբ որոշվում է.

Հաղորդվող բոլոր հոդվածները, ակնարկները, ռեպորտաժները, ինֆորմացիաները, զրույցները դարձնել նպատակասլաց, նրանցում լայնորեն արտացոլել ռեսպուբլիկայի էկոնոմիկայի և կուլտուրայի նվաճումները: Կազմակերպել դաշնակների թշնամական կոնտրռևոլուցիոն գործունեությունը մերկացնող հոդվածների և նյութերի հաղորդում»:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ
ՄԻՆԻՍՏՐ՝ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ֆ.191, ց.2, գ.32, թթ.1-4

Մինչ կուսակցական մարմինները տարբեր որոշումներ էին կայացնում Ռադիոյի՝ արտասահմանի համար տրվող հաղորդումների վերաբերյալ, Սփյուռքը ջերմորեն արձագանքում էր ՀՌ-ի հաղորդումներին և բարձր գնահատում լրագրողների աշխատանքը: Նրանք իրենց երախտագիտությունն էին հայտնում հայրենիքի ձայնը լսելու, իրենց կարոտը մասամբ փարատելու, իրենց՝ ազգի արմատներից չկտրելու այդ հայրենանվեր աշխատանքի համար:

> «Հայրենիքի կարոտով մրրկող տարագիր հայերու համար Երևանի ինքնավստահ, իրազէկ, շքաշող ու գրաւիչ ձայնը հոգեկան կազդուրիչի դերը կը կատարէ»,- գրում են հալեպցի երիտասարդները և խնդրում Հայաստանի ժամանակով 23.00-24.00 հնչեցնել «Քեզ եմ երգում, իմ հայրենիք», «Սասնա ծուռ», «Հո՛ արա եզո…», «Էս գիշեր», «Դուն էն գլխեն», «Երևանի երեկոները» երգերը»:
>
> *Ֆ.191, ց.2, գ.1116, թթ.1-4*

Տարիներ անց՝ 1962 թ. օգոստոսի 5-ին, Հայաստանի ձայնը հասավ Հյուսիսային և Լատինական Ամերիկա:

Ռադիոկոմիտեի մշտական ուշադրության կենտրոնում են եղել նաև ազգային փոքրամասնություններին ուղղված հաղորդումները:

> «Քաղվածք՝
>
> քրդերեն հաղորդումների գլխավոր խմբագիր Հաջիե Ջնդիի զեկույցից:
>
> Կարելի է ասել՝ շոշափելի աշխատանք է տարվել քրդական խմբագրության կողմից: Կոլխոզային կյանքից ներկայացրել ենք երկու հաղորդում: Մեկը կենդանի հաղորդում է՝ «Թալինի շրջանի Հակկո գյուղի կոլտնտեսականները միկրոֆոնի մոտ»:
>
> Հաղորդվել է նաև «Ռյա թազա» թերթի նյութերից: Մեր կարծիքով՝ լավ կլինի, որ մշտապես տրվի այդ թերթի համառոտ տեսությունը:
>
> Քրդական երգ ու երաժշտությունից հաղորդվում են միայն վիպերգեր, սիրային երգեր ու պարերգեր: Հերոսական երգերը գրեթե չեն հաղորդվում: Մինչդեռ դրանց մեջ ավելի

վառ են դրսևորվում քուրդ ժողովրդի ազատասիրական ձգտումները»:

ՀԱԱ, Ֆ.113,g. 47, գ.729, թ.15 12.12.1957

«1961 թ-ի մարտի մարտի 31-ին ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը կարգադրում է հատուկ ուշադրություն դարձնել Ռադիոհեռուստապետկոմի քրդերենով ռադիոհաղորդումներին և հարկ եղած դեպքում լրացուցիչ հաստիքներ տրամադրել խմբագրությանը:

ՀԱԱ,Ֆ.113, g.75, գ.191, թ.2 31.03.1961

Երևանի ռադիոյի հաղորդումներին իրենց նամակներով և թղթակցություններով մասնակցում էին սփյուռքի շատ հայրենակիցներ: «Խոսում են նամակները», «Մեր ունկնդիրների հետ», «Ռադիոլսողի պատվերով» հաղորդաշարերն ավելի հետաքրքիր, անմիջական ու լսելի էին դարձնում եթերաժամը:

Հալեպի Վարդանյան վարժարանի սաների նամակից.

«Թանկագին հարազատներ,
Ստորագրելներս, Հալէպի Վարդանեան վարժարանի Ե դասարանի երկու ուսանողներս, սոյն նամակով կ՛ուզենք մեր ջերմ սէրն ու երախտագիտութիւնը յայտնել Սովետ. Հայաստանի մեր սիրելի ու հարազատ կառավարութեան, որ Երեւանի ռատիոյին շնորհիւ առիթ ընծայեց մեզի հաղորդակից դառնալու մեր հայրենիքի կեանքի յառաջընթացին: Պատանիի մեր հոգիները կ՛ուռին ազգային հպարտութեան զգացումով,երբ կը լսենք մեր հայրենիքի ձայնը»:

Ֆ.191, g.2, գ.1116, թթ. 12-13 05.05.1954

Մի խումբ քուվեյթահայերի նամակը Երևանի ռադիոյին.

«Ներքոստորագրելներս, Կարօ, Տրդատ, Սամսոն Տէր Յովհաննէսեանները, Արկադիա Տէրեանը, Հրայր Կիրակոսեանը, և Ասպետ Նազարեանը ուրախութեամբ կ՛ունկնդրենք Հայրենիքի ուրախաբոյր երգերը, որոնք

այս ավազուտներուն մէջ կենդանութիւն կը պարքևեն բոլոր հայրենասէր երիտասարդութեան:Ուստի այժմ կը պատուիրեմ լսելու «Բինկէօլ»,, «Ով դու, գուսան» և «Ու՞ր են տանում մենաւոր» երգերը»:

Ֆ.191,g.2, գ.1119, թ.167 *13.12.1956*



1954-1960 թվականներին Հայաստանի ռադիոն հազարավոր նամակներ էր ստանում Սփյուռքից՝Լիբանանից, Իրանից, Սիրիայից, Քուվեյթից, Եգիպտոսից, ֆրանսիայից, Հունաստանից և այլ երկրներից. Դրանք այսօր էլ պահպանվում են ՀՀ արխիվներում

***Կլարա Թերզյան**, վաստակաշատ լրագրող*

Միջոցառումներ են եղել, որ պետք էր առավոտյան, կեսօրին կամ երեկոյան ձայնագրել և գիշերը հաղորդել սփյուռքի համար: Այն ժամանակվա տեխնիկան այս հնարավորությունները չուներ: Դժվարությամբ, բայց մենք հասցնում էինք: Եվ ինչ հրաշալի կապ կար ունկնդիրների հետ, հատկապես սփյուռքի ունկնդրի հետ: Օր կար, որ մենք 60-ից ավելի նամակ էինք ստանում: Եվ հետո հաղորդաշար կար, որ մենք հրավիրում էինք հարազատներին՝ սփյուռքահայերի խնդրանքով, այն հարազատներին, որոնք հայերնադարձվել էին. ուզում էին նրանց ձայնը լսել, իմանալ ոնց են ապրում: Այն ժամանակ ես զարմանում էի, որ տեխնիկան շատ ավելի թույլ էր, բայց լսելիությունը

հրաշալի: Ո՞նց էր մեզ լսում Մերձավոր և Միջին արևելքը: Եվրոպայի և Ամերիկայի համար ձայնագրում էինք և Մոսկվայի ու Խաբարովսկի կայաններից հաղորդում: Այն ժամանակ, երբ «երկաթե վարագույրը» կար, նրանք ինչպես էին լսում այդ հաղորդումները. նրանց համար դա կենարար ջուր էր: Եվ մեկը՝ իր տանը, այնքան բարձր էր ընդունիչը հնչեցնում, որ փողոցից անցնող հայն էլ լսի հայրենիքի ձայնը:

Թեհրանից՝ միջազգային գիտական ընկերությունների ֆեդերացիայի փոխնախագահ,ակադեմիկոս Հովհաննես Օհանյանի նամակը Երևանի ռադիոյին.

«Ռադիոյի կառավարչին Երևանում.
Մեծայարգ Կառավարիչ,
Բարի եղէք խնդրեմ հաղորդելու իմ կողմից լավագոյն ցանկութիւններս Ձեր վարչութեան ենթակայ ռադիո-աշխատողներին՝ ի թիւս որոնց, մանաւանդ, Հայաստանի զոյգ սոխակներ Օֆելիա Համբարձումեանին,իր երգած հայերէն երգերի համար, նմանապես Վաղարշակ Սահակեանին, որ երգեց Սայաթ-Նովայի տաղերը:
Թեհրան-Իրան»

19.01.1956
Ֆ.191, ց2, գ.1116, թ.

Լաթաքիայից՝ Խաչատուր Հովհաննիսյանի նամակը Երևանի ռադիոյին.

«Հարգելի խմբագի՛ր,
Ռադիո ունկնդիրներու քանակը երթալով կ՚աճի, կ՚աւելնայ ոչ միայն այս քաղաքին մէջ,այլև ամբողջ Սուրիոյ և Լիբանանի մէջ: Սուրիոյ և Լիբանանի զանգուածային հայությունը,որ ասկէ քանի մը տարի առաջ ենթակայ էր օտարացման,այլասերման, կարծես թէ, վերածնունդ ապրեցաւ, վերստին հայացաւ, կապուեցաւ հայրենիքին՝ շնորհիւ իր անխոնջ աշխատանքի, գերմարդկային զոհաբերութեան ոգիին: Մենք կ՚ապրինք Ձեզանով,

Ձեր երգերով, Ձեր յուսադրող խօսքերով:Դուք կարող էք վստահ ըլլալ, որ այս միտքերը կու գան հազարաւոր հայրենակիցներու սիրտերէն, թէև այն գրողը «անօթի վարժապետ է»:

Ֆ.191, ց.2, գ.1116, թթ.28-30 09.071956

Հալեպից Ջորջ Քյուլահճյանի նամակը Երևանի ռադիոյին

«Պատուարժան անդամներ Արտասահմանի հայերու համար տրուող հաղորդումներու խմբագրութեան,
Արտասահմանի հայերու համար աննման վայելքի վայրկեաններ են այն վայրկեանները, երբ կը լսենք ելոյթը հայրենադարձ մեր սիրելիներուն... Գիտէք,թէ որքան մեծ անհամբերությամբ կը սպասենք այն րոպէին, երբ հնչէ մեզի ծանօթ ձայն մը: Յարգելի տեարք, ունիմ խնդրանք մը, զորս ձեզի կը մատուցանեմ այն վստահությամբ,որ անոր իրագործման համար ձեր կարելին պիտի ընէք:
Հօրաքոյրս՝ Սիրանուշ Եթերեան, իր ընտանիքովը ներգաղթեց, և կը բնակի Շահումեանի շրջանին մէջ. այսքան երկար տարիներէ ի վեր իրենցմէ բաժնուելու մեծ կարօտն ունինք:Կարելի՞ է շուտով կատարէք մեր բոլորին ունեցած այս փափաքը»:

Ֆ.191, ց.2, գ.1121, թ 24 05.051957

Արևիկ Ավագյան, *արտասահմանի համար տրվող հաղորդումների խմբագիր*

«Սփյուռք» հասկացողությունը մեզ անծանոթ էր: Մենք չգիտեինք ինչ է սփյուռքը: Երբ որ հայրենակարոտ մարդկանց նամակները ստանում էինք, իրենց տխրություններն էին պատմում, տագնապները, վիրավորանքը, որ Մայր երկրից հեռացել են... բռնություն տեսածներիորդիները,թոռները...ԱրևմտյանՀայաստանից մազապուրծ եղած մարդկանց հայերնասիրությունը մինչև հիմա էլ զարմանք է պատճառում: Եվ ես ընկա մի ծով աշխարհ, որոնց ստեղծած գրականությունը սովետական

երկրում չկար, «արգելված գրականությունը» որոշ իմաստով արդեն մեզ մատչելի էր դառնում, թերթերը, լրագրերը սպանում էինք, ճիշտ է՝ այդտեղ էլ կեղծիք կար, ոչ թե կեղծիք, այլ փհաճ բան էր կատարվում: Հատուկ աշխատող կար, որը կնիքները դնում էր վրան ու մենք դժվարությամբ էինք ձեռք բերում «անհրաժեշտ նյութերը»:

Ամեն օր՝ ճիշտ նույն ժամին, եթերում հնչում էին «Երևանն է խոսում» բառերը՝ ռադիոընդունիչների մոտ հավաքելով սփյուռքի հազարավոր մեր հայրենակիցների՝ լսելու հայրենիքի մասին հեռարձակվող ամենաթարմ նորություններ: Հայերեն հաղորդումների ամենամեծ ծրագիրը գործակալությունը պատրաստում էր Մերձավոր և Միջին արևելքի հայության համար, որտեղ հայահոծ զանգվածը մեծ տոկոս է կազմում ու ամուր կապ ունի Մայր հայրենիքի հետ:

Ռադիոֆիկացիայի և ռադիոկոմիտեի տպագրած ծրագիրը (1948թ.)

Եվ այս գործում իր մեծ ներդրումն ունեցավ նաև գլխավոր խմբագիր Շահե Տատուրյանը:

Ի դեպ, 2018թ-ի փետրվարի 1-ից ՀՀ հանրային ռադիոյի «Ռադիոլուր» լրատվական գործակալությունը լրատվական թողարկումներ է պատրաստում նաև արևմտահայերեն: Հաղորդումը վարում է Անի Զեյթունցյանը, որը վերջին տարիներին հայրենիք է վերադարձել Սիրիայից:

1947 թ. հիշարժան էր նաև նրանով, որ մրցանակաբաշխությամբ ընտրվեց ՀՌ-ի երաժշտական կոչնակը՝ հայ մեծ երգահան Կոմիտասի «Գարուն ա» երգի մոտիվներով, որը պահպանվեց մինչև 2016թ-ի

օգոստոս: 2016-ի սեպտեմբերից Հանրային ռադիոյում օրն սկսվում է Հայաստանի հիմնով:

Ռադիոյի երկրորդ ծրագիրը

Նույն թվականին կազմավորվեց ՀՌ-ի երկրորդ ծրագիրը, որով վերաբաժանվեցին գոյություն ունեցող ռադիոծրագրերի գործառույթները. առաջին ծրագիրը դարձավ հիմնական լրատվական, հասարակական-քաղաքական և գեղարվեստական հաղորդումների ծրագիր՝ օրական եթեր հեռարձակելով 14 ժամ հաղորդում: Իսկ երկրորդը՝ գրական-դրամատիկական և երաժշտական, որի հաղորդումներն սկսվում էին ժամը 20.30-ից և շարունակվում մինչև 23.00-ը: Առաջին ծրագրում, բացի մի շարք հասարակական-քաղաքական հաղորդումների առանձին տեղեկագրերից, նախատեսվում էին վերջին լուրեր, արդյունաբերական և գյուղատնտեսական թեմաներով հաղորդումներ, ընդգրկված էին նաև մեծ կտավի գեղարվեստական գործեր (պիեսներ, սիմֆոնիկ ստեղծագործություններ, օպերաներ և օպերետներ): Այսպիսով, հանրապետական ռադիոյում ռադիոծրագրերի թիվը, ներառյալ սփյուռքի համար հաղորդումների պատրաստման խմբագրությունը, հասավ երեքի, որոնց շնորհիվ ռադիոհաղորդումների ընդհանուր ծավալը օրական կազմեց 21 ժամ:

1947 թ. հասարակական-քաղաքական հաղորդումների խմբագրությունը, վերակառուցելով իր աշխատանքները, էլ ավելի աշխուժացրեց գլխավոր լրատվական հաղորդման՝ «Վերջին լուրերի» գործունեությունը: Խմբագրությունը հիմնեց «Վերջին լուրերի» արտաստուդիական հաղորդումների շարք՝ ուղիղ եթերով հաղորդումներ հեռարձակելով հանրապետության արդյունաբերական խոշոր ձեռնարկություններից և ֆաբրիկաներ-ից, կոլտնտեսություններից ու հիմնարկություններից: Նմանատիպ թեմատիկ լրատվական թողարկումները հիմնականում տրվում էին 20-30 րոպե, որոնք պատրաստվում էին ռադիոյի երաժշտական հաղորդումների խմբագրության հետ:

Մամուլում տպագրված ռադիոծրագրերից պարզորոշ երևում է, որ արտաստուդիական հաղորդումներին հաջորդել են համերգներ՝ այդ ձեռնարկությունների կամ շրջանների աշխատավորության պատվերով՝ շուրջ մեկ ժամ տևողությամբ: Մատուցման այս ձևը հետագայում հաջողությամբ ամրապնդվեց ռադիոյում՝ դառնալով ռադիոունկնդիրների սիրելի հաղորդաշարերից մեկը:.

Լրատվական թողարկումների օպերատիվությունը բարձրացնելու նպատակով ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1949 թ. հուլիսի 6-ին որոշում ընդունեց ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առընթեր ռադիոֆիկացիայի և ռադիոհաղորդման համամիութենական կոմիտեն ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առընթեր Ռադիոինֆորմացիայի կոմիտե վերանվանելու մասին: Այդ որոշման համաձայն՝ համապատասխանաբար վերանվանվեց նաև Հայաստանի ռադիոկոմիտեն՝ կոչվելով ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր ռադիոինֆորմացիայի կոմիտե:[86]

Ռադիոհաղորդումների նկատմամբ օրեցօր աճող պահանջարկն օրախնդիր էր դարձնում «ռադիոտուն» ունենալու անհրաժեշտությունը: 1949թ-ի հունիսի 6-ին Ռադիոկոմիտեի նախագահ Գ. Աստվածատրյանը գրությամբ դիմում է Սովմինի նախագահ ընկ.Կարապետյանին Երևանի Ռադիոտան շենքի կառուցումը 1950թ-ի շինարարության պլանում ընդգրկելու համար:

Ֆ.113,g.22, գ.683, թ.5

Հանրապետության ղեկավարությունն ընդառաջում է այդ խնդրանքին և որոշում է Երևանում Ռադիոտուն կառուցել:

ՀԱԱ, Ֆ.113, g 22.,գ. 683, թ.2

86 Մարության Ստ., Եթերում Երևանն է..., Երևան,1998, էջ 41:

Եթերում է «Պիոներական լուսաբացը»

1947թ. նշանակալից էր նաև նրանով, որ հիմնվեց դպրոցահասակների ամենասիրելի հաղորդաշարերից մեկը՝ «Պիոներական լուսաբացը»[87]: Այս հաղորդաշարը դարձել էր նրանց մշտական ուղեկիցը, հավատարիմ ընկերն ու խորհրդատուն: Հաղորդաշարը բազմիցս արժանացել է հանրապետական և համամիութենական լրագրողական ամենաբարձր պարգևների ու խրախուսանքների, մասնակցել հանրապետական ու միջազգային մի շարք հավաքների ու միջոցառումների:

«Դպրոցականների մի քանի սերնդի առավոտյան արթնացրել է «Պիոներական լուսաբացը», որի հաղորդումներն սկսվում էին ամեն օր, ժամը 7.40-ին, երբ վաղ առավոտյան շեփորների հնչյունների ներքո հաղորդավարն ազդարարում էր՝ «Եթերում է «Պիոներական լուսաբացը»: Հաղորդաշարն այնքան սիրված էր, որ ինչ գործով էլ, որ զբաղված լինեին դպրոցականները, լարում էին ուշադրությունը, սպասում, թե այդ օրն ինչ է հաղորդվելու՝ հաճելի մի նորություն, օգտակար խորհուրդներ, որոնք տնից դպրոց կուղեկցեն իրենց», - հիշում է մանկապատանեկան հաղորդումների խմբագիր Էլեոնորա Գրիգորյանը:

«Պիոներական լուսաբացը» միշտ երեխաների հետ էր, նրանց հետ գնում էր արշավի, նստում դասի, հավաքույթի, կիսում ուրախությունն ու տխրությունը: Օգնում էր հետաքրքիր ապրել, կատարել բարի գործեր, օգնել մեծահասակներին, դասերը լավ սովորել, ընկերասեր լինել: Հաղորդումը սովորաբար բաղկացած էր լինում երեք-չորս էջից: Առաջին էջը բացվում էր առաջնորդող հոդվածով, որը պատմում էր դպրոցականների կատարած աշխատանքների մասին, այնուհետև եթեր էին տրվում ռեպորտաժներ և հարցազրույցներ դպրոցներից, հավաքույթի վայրերից, հետաքրքիր հանդիպումներ իրենց հասակակիցների հետ: Օգտագործվում էին ռադիոյի բոլոր արտահայտչամիջոցները՝ աշխույժ, կենդանի, խոսակցական լեզուն, համապատասխան երաժշտություն սկզբում և վերջում, ձայնային ձևավորումներ, աղմուկ, որը համապատասխան ֆոն էր հաղորդում հեղինակի խոսքին և ռադիոլսողին, ներկայացնում գործողության վայրն ու շրջապատը: Հաղորդումը դպրոցականների

87 Ինչ է, ով է, մանկական հանրագիտարան, Երևան, 1990 թ., № 4, էջ 31:

հետ վարում էին լավագույն հաղորդավարներն ու դերասանները. Արծրուն Մանուկյանը, Լիա Կարապետյանը, հետագայում Սարգիս Նաջարյանը, Ժիրայր Դադասյանը, Գայանե Սարգսյանը, Անահիտ Նավասարդյանն ու այլք:[88]

Տասնամյակներ շարունակ «Պիոներական լուսաբացը» դպրոցականների ամենասիրելի հաղորդումն էր:

Հետպատերազմյան շրջանում ՀՌ-ում կատարված կարևոր ձեռքբերումներից է 1948 թ. հիմնված ձայնագրման նոր ստուդիան, որը հնարավորություն տվեց կատարելու առաջին ձայնագրությունները: Մոնտաժի կիրառումը հնարավորություն տվեց ռադիոեթերը մաքրել խոտանից, ստեղծվեցին հիշարժան դեպքերի և իրադարձությունների մասին պատմող ձայներիզներ:

Պատերազմից հետո ՀՌ-ում կարևոր նորամուծություններից էր ռադիոհաղորդումներում մագնիտոֆոնի զանգվածային օգտագործումը, որը կարճ ժամանակաընթացքում դուրս մղեց երկար տարիներ ռադիոյում օգտագործվող ռադիոձայնագրման սարքերը: Այդ նորամուծությունը զգալիորեն բարելավեց ռադիոլրագրողների

Ռադիոյի հասարակական -քաղաքական հաղորդումների խմբագրությունը(1950-ականներ)

88 Լրատվությունը մեզ է տրամադրել հանրային ռադիոյի մանկապատանեկան հաղորդումների խմբագրության երկարամյա գլխավոր խմբագիր Էլեոնորա Գրիգորյանը, 10.08.1998թ.:

աշխատանքը, հնարավորություն տալով ավելի նպատակային օգտագործել ռադիոյի արտահայտչամիջոցները, ռադիոժանրերը, հաղորդումների տեսակներն ու ձևերը:

Ամփոփելով այս հատվածում ՀՌ-ում կատարված կառուցվածքային ու ստեղծագործական փոփոխություններն ու բարեփոխումները, կարելի է փաստել, որ հետպատերազմյան շրջանում ՀՌ-ն որակական նոր փուլ թևակոխեց: Հիմնվեց սփյուռքի համար տրվող հաղորդումների խմբագրությունը, որը հանրապետական ռադիոյի ձայնը լսելի դարձրեց Մերձավոր և Միջին արևելքի երկրներում, ձևավորվեց մանկապատանեկան հաղորդումների խմբագրության ամենասիրելի հաղորդաշարերից մեկը՝ «Պիոներական լուսաբացը», մրցանակաբաշխությամբ հաստատվեց հանրապետական ռադիոյի կոչնակը, ձայնագրման նոր ստուդիան հնարավորություն տվեց արխիվացնելու առաջին ռադիոձայնագրությունները, հիմնադրվեց ռադիոյի երկրորդ ծրագիրը, որը վերաբաշխեց գործառույթները առաջին ծրագրի հետ, խմբագրություններն ու բաժինները համալրվեցին երիտասարդ, խոստումնալից ռադիոլրագրողներով, որոնք հող նախապատրաստեցին հետագա տասնամյակներում ռադիոյի ստեղծագործական աճի և առաջընթացի համար:

«Վերջին լուրերի» խմբագրություն
Ձախից աջ՝ ռադիոյի ինֆորմացիայի գլխավոր խմբագրի տեղակալ Ստեփան Մարության, գլխավոր խմբագիր Արշակ Անանյան, խմբագիր՝ Հեղուշ Տիտանյան

4. ՀՌ-Ն «ՀԱԼՈՑՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ»

Ռադիոտան շենքի վերին ճակատային մասը

Այս ժամանակահատվածն իրավամբ կարելի է անվանել Հայկական ռադիոյի զարգացման ժամանակաշրջան: Հիմնվեցին այնպիսի հաղորդաշարեր ու ծրագրեր, որոնք ճանաչում բերեցին նրան: Այս առումով հիշատակելի են երգիծական ծրագրերը, որոնք մեծ ժողովրդականություն վայելեցին ռադիոունկնդիրների շրջանում: Երգիծական հաղորդումներն ու ծրագրերն այնքան սիրվեցին ու տարածում գտան, որ այդ տասնամյակները պատմության մեջ մտան որպես հայկական ռադիոյի «անեկդոտների ժամանակաշրջան»: Ռադիոյում ձևավորվեց ստեղծագործական մի կազմ, որը լավագույններից էր: Բացի վերը նշվածից, գրեթե բոլոր խմբագրությունները հիմնեցին մեծ թվով հաղորդաշարեր ու ծրագրեր, որոնք երկար տարիներ դարձան հանրապետական ռադիոյի կերպարը որոշող հաղորդումներ:

Հիմնվեցին նաև Երրորդ ծրագիրն ու Երիտասարդական հաղորդումների գլխավոր խմբագրությունը՝ «Երիտասարդություն» ռադիոկայանը, որը տասնամյակներ շարունակ մնաց ունկնդիրների սիրելի և լսելի ծրագրերից մեկը:

1950-ական թվականները ՀՌ-ում սկսվեցին կառուցվածքային մի շարք փոփոխություններով, որոնք որակապես ամրապնդեցին նախորդ տարիների հաջողությունները: ԽՍՀՄ նախարարների խորհրդի

1953թ. մարտի 30-ի որոշմամբ համամիութենական, հանրապետական ռադիոինֆորմացիաների կոմիտեները վերակառուցվեցին՝ դառնալով ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների կուլտուրայի նախարարության կարևոր և բաղկացուցիչ օղակներից մեկը: Նախկին Ռադիոինֆորմացիայի կոմիտեի փոխարեն կազմավորվեց Ռադիոինֆորմացիայի գլխավոր վարչություն, իսկ արդեն 1956 թ. ՀՌ-ն նոր կառուցվածքային փոփոխության ենթարկվեց: Նույն թվականի հոկտեմբերի 13-ին ստեղծվեց ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր Ռադիոհաղորդումների և հեռուստատեսության պետական կոմիտե:

ՀԱԱ,Ֆ.113, ց. 49,գ .140, թ.1 *03.02.1950թ.*

Նորաստեղծ ռադիոկոմիտեն բաղկացած էր 4 գլխավոր խմբագրություններից՝

ա/ Հասարակական-քաղաքական հաղորդումների գլխավոր խմբագրություն:

բ/ Արտասահմանի համար տրվող հաղորդումների գլխավոր խմբագրություն:

գ/ Գրական-դրամատիկական և երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագրություն:

դ/ Մանկապատանեկան հաղորդումների գլխավոր խմբագրություն:

ՀՌ-ի աշխատակիցների թիվը հասավ 400-ի: 1950-ական թվականների կեսերից երկրում տեղի ունեցող գաղափարական և քաղաքական փոփոխությունները հատկապես խրուշչովյան «հալոցքի» շրջանում հնարավորություն տվեցին ստեղծելու նոր, ավելի իրական արժեքներ քարոզող հաղորդումներ: Հասարակական-քաղաքական հաղորդումների գլխավոր խմբագրությունը բացի իր հիմնական ծրագրից՝«Վերջին լուրերից» պատրաստեց մի շարք հետաքրքիր հաղորդաշարեր՝ «Իմ հին ու նորօրյա Հայաստան», «Հայրերի ավանդներին հավատարիմ», «Իմ վերածնված Հայաստան», «Գյուղական կանչ», «Հրապարակախոսի ամբիոն», «Առաջավոր ճակատ» խորագրերով: Այս հաղորդաշարերում ռադիոլրագրողները լուսաբանում էին 1950-60-ական թվականներին Հայաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական, հասարակական,

կուլտուրայի և արվեստի բնագավառներում տեղի ունեցող վերափոխումները, բարձրացնում հասարակական ինչեղություն ունեցող բազմաթիվ հիմնահարցեր: Գրեթե բոլոր հեռարձակվող նյութերում ռադիոլրագրողները ներկայացնում էին այդ տարիների աշխատանքային հերոսներին, նրանց կատարած հայրենանվեր աշխատանքը՝ փառաբանելով կոլտնտեսություններում, սովխոզներում, գործարաններում ու ֆաբրիկաներում աշխատող մարդկանց:

Այժմ տեսնենք՝ ինչ է հաղորդել հանրապետական ռադիոն անցած դարի 1950-ական թվականներին:

«Քաղվածք 25.02.1951թ-ի ծրագրից.

5.20-5.30-Ազդանշան
5.30-5.34-ՍՍՌՄ հիմնը
5.35-5.45- Երևանյան առավոտը - նկարագրական ակնարկ
5.55-6.09- Արտաստուդիական հաղորդում Երևանի Ստալինյան ռայոնի գործարաններից

6.10-6.39-Համերգ-ծրագրում երգեր նվիրված հայրենիքին և առաջնորդին:

Ցերեկվա ժամեր

11.40-11.59-Համերգ-խորագրում Ա.Հարությունյանի կոնցերտը
16.00-16.44-Համերգ ծրագրում հատվածներ հայկական օպերաներից
20.30-20.49 - Վերջին լուրեր
Օրվա ծրագիրը եզրափակվել է ժ.12-ին՝ Հայաստանի հիմնով»:

ՀԱԱ,Ֆ 113,ց.47,գ.781,թթ.8-9

Նշենք, որ այդ տարիների լրագրողական աշխատանքն այժմ միանշանակ չի ընդունվում հասարակության ու պետական այրերի կողմից, մի մասը հակված է այն ընդունել որպես նախկին սիստեմի գաղափարախոսություն, մի մասը՝ մեր ժողովրդի ստեղծագործ աշխատանքի դրվագ: Ցանկացած դեպքում այդ և հետագա տարիներին հայ լրագրողներն ականատեսն են եղել մեր ժողովրդի և՛ հաջողություններին, և՛ դժվարություններին՝ արձանագրելով փաստացի տվյալներ այդ ժամանակների տարեգրությունից հայ ռադիոլրագրության ապագա հետազոտողների համար:

> «1953 թ-ին Հայաստանի Ռադիոինֆորմացիայի գլխավոր վարչությունը ծավալուն զեկույց ներկայացրեց Ռադիոյի աշխատանքների վերաբերյալ: Սա, թերևս, առաջին ուշագրավ վերլուծությունն էր պատերազմի տարիներից հետո: Զեկույցն ամփոփում է 1952-1953 թվականներն ու արձանագրում այն ձեռքբերումները, որոնք գրանցել են Ռադիոյի խմբագրությունները: Զեկույցում բարձր է գնահատվում հատկապես պրոպագանդայի բաժնի աշխատանքը. «Ամբողջ շարք հաղորդումներ են տրվել պարտիայի ղեկավար դերի, ներպարտիական դեմոկրատիայի, պարտիայի և ժողովրդի անխզելի կապի և այլ հարցերի մասին»:
> Իսկ ահա մանկապատանեկան հաղորդումներում, պարզվում է, որոշակի «թերացումներ» կային:Ըստ մի փաստաթղթի՝ «Խմբագրությունն իր ուշադրության կենտրոնում պիտի պահի կառավարության ու պարտիայի վերջին որոշումներն ու մատաղ սերնդին դաստիարակի հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի ոգով, սերմանի աշխատասիրություն և դժվարությունները հաղթահարելու կամք»:
>
> *Ֆ.191, ց. 2,գ. 15, թթ. 1-40 1952-1953*

Այդ տարիներին ՀՌ-ում ձևավորվում է ռադիոհաղորդավարների նոր դպրոց, որն ակտիվ մասնակցություն է ունենում նոր հիմնված

խմբագրությունների աշխատանքներին:

1951թ-ի հուլիսի 28-ի նիստի ընթացքում Ռադիոինֆորմացիայի կոմիտեն հաստատում է ռադիոհաղորդավարների կարգապահական նորմերը, որտեղ ներառված էին հետևյալ կետերը.

> «Հաղորդավարն աշխատավայր պետք է ներկայանա հաղորդումից կես ժամ առաջ: Ուշանալու դեպքում նրան բացակա կդրվի և կհրավիրվի այլ հաղորդավար:
> Առանց նյութին նախապես ծանոթանալու հաղորդավարին արգելվում է մոտենալ միկրոֆոնին:
> Առանց տվյալ հաղորդման պատասխանատուների, հաղորդավարներին արգելվում է փոփոխություն կատարել նյութերում:
> Հերթափոխն ընդունող հաղորդավարը պարտավոր է նախորդ հաղորդման ավարտից 5 րոպե առաջ մտնել ստուդիա՝ ձեռքում ունենալով տվյալ հաղորդման համապատասխան նյութերը»:
>
> *Ֆ.191, ց.2, գ.10*

1950-60-ական թվականների ՀՌ-ի լրատվության բաժինն արձանագրում էր մեր հանրապետությունում տեղի ունեցող բոլոր բարեփոխումները, հաղթանակներն ու նվաճումները. «Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանը, որը հանդիսանում է մեր արդյունաբերության դրոշակակիրներից մեկը, սոցիալիստական մրցության մեջ մտնելով Սվերդլովսկ (այժմ՝ Եկատերինբուրգ- Մ. Հ.) քաղաքի համանուն գործարանի հետ հաղթող է ճանաչվել սոցիալիստական մրցությունում և պարգևատրվել փոխանցիկ կարմիր դրոշով»,- հաղորդում էր «Իմ հին ու նորօրյա Հայաստան» խորագիրը կրող հաղորդաշարը 1958 թ. դեկտեմբերի 23-ի թողարկման մեջ:[89] Հաստոցաշինարարների այդ հաջողությունն արձանագրել էին նաև «Խորհրդային Հայաստան» և «Ավանգարդ» թերթերը: Խմբագրությունն իր ուշադրության կենտրոնում էր պահում հայ շինարարների անձնվեր

89 Առաքելյան Մ., Մեր արդյունաբերության դրոշակակիրը, հանրապետական ռադիո, 1958, 23-ը դեկտեմբերի:

աշխատանքի լուսաբանումը՝ համարյա յուրաքանչյուր հաղորդման մեջ ռադիոունկնդրին տեղեկացնելով նոր շահագործման հանձնված գործարանի, ֆաբրիկայի, բնակելի շենքի, դպրոցի, հանգստյան տան մասին:«Կապուտակ Սևանի ափին վեր է խոյացել գրողների միության նոր հանգստյան տունը, որը լրացնելով տարիներ առաջ կառուցված բնակելի մասնաշենքը՝ ամբողջական տեսք է ստացել և մոտ օրերս կընդունի իր առաջին այցելուներին»: Նմանատիպ թղթակցություններն ու լուրերը հասարակական-քաղաքական հաղորդումների խմբագրության համար դարձել էին առօրեական, Ռադիոկոմիտեում ձևավորվել էր ռադիոլրագրողների մի կուռ կոլեկտիվ, որը յուրացնելով ռադիոժուռնալիստիկայի գործառույթները, ժանրերն ու թեմատիկ առանձնահատկությունները՝ պատրաստում էր որակյալ, պրոֆեսիոնալ հաղորդումներ, որոնք ջերմ արձագանք էին գտնում ռադիոունկնդիրների շրջանում:

Դերենիկ Դեմիրճյանը խմբագիրների և Ռադիոյի աշխատակիցների հետ (1956թ. գրողի մահվանից 14 օր առաջ)

1951թ-ի ապրիլի 14-ին Ռադիոյի աշխատակիցների տեղաշարժը հանրապետության տարբեր վայրեր ապահովելու համար Ռադիոկոմիտեի նախագահ Հակոբ Այվազյանը դիմում է Մինիստրների խորհրդի նախագահին կոմիտեին նոր ավտոմեքենա տրամադրելու խնդրանքով.

«Ավտոմեքենա չունենալու պատճառով Ռադիոինֆոր-

մացիայի կոմիտեն հայտնվել է դժվար կացության մեջ: Այժմ մեր հաշվին գրանցված է 2 ավտոմեքենա՝ ԳԱԶ հ. 67-ը, որն ամբողջությամբ դուրս է եկել շարքից և 1949թ-ին տրամադրված ԲՄՎ-ն, որն արդեն երկու անգամ վերանորոգվել է: Առանց ավտոմեքենայի դժվարանում է կոմիտեի աշխատանքը. չենք կարողանում մեկնել շրջաններ, գործարաններ, ֆաբրիկաներ և ռադիոռեպորտաժներ ներկայացնել տեղերից»:

Ի պատասխան, 1951թ-ի հունիսի 5-ին Ռադիոկոմիտեն ՀԽՍՀ Նախարարների խորհրդի կարգադրությամբ ստանում է «Պոբեդա» մակնիշի մեկ մեքենա»:

ՀԱԱ,Ֆ.113,ց.52,գ.380,թ.1

1950-ականների վերջին հասարակական-քաղաքական հաղորդումների խմբագրության շրջանակներում հիմնվեց երիտասարդական հաղորդումների խմբագրությունը, որի սկիզբը դրվել էր դեռևս 1935 թ-ին: 1957 թ. հոկտեմբերի 1-ին մի խումբ երիտասարդ ռադիոլրագրողների ջանքերով ձևավորվեց խմբագրությունը, իսկ մի քանի տարի անց՝ 1962թ. նոյեմբերի 15-ին, հիմնվեց առաջին երիտասարդական ծրագիրը, որը կոչվեց «Երիտասարդություն» ռադիոկայան: Խմբագրության և ծրագրի հիմնադրումը ողջունեցին ինչպես երիտասարդական «Ավանգարդ», այնպես էլ «Խորհրդային Հայաստան» թերթերը: «Երիտասարդություն» ռադիոկայանը եթերում մնաց մոտ 30 տարի և դարձավ ՀՌ-ի ամենասիրված երիտասարդական ծրագիրը: «Երիտասարդություն»-ը եթեր էր դուրս գալիս ամեն օր, 45 րոպե եթերաժամով՝ անդրադառնալով երիտասարդությանը հուզող բոլոր հարցերին, նրա հոգսերին ու խնդիրներին: Ռադիոկայանում աշխատում և աշխատակցում էին 1950-60-ական թվականների երիտասարդ, հետագայում ճանաչված հրապարակախոսներ ու գրողներ Վ. Պետրոսյանը, Ա.Հովհաննիսյանը, Գ. Հակոբյանը, Մ. Միքայելյանը, Մ. Գալշոյանը, Ռ.Հովսեփյանը, Պ. Ստեփանյանը, Վ. Միլիտոնյանը:

Ռադիոկայանն ուներ նաև իր երաժշտական կոչնակը՝ Ա. Այվազյանի «Երիտասարդական քայլերգ» ստեղծագործության մոտիվներով,

որով սկսվում և եզրափակվում էր ռադիոկայանի աշխատանքը: Եթեր հեռարձակվող նյութերի թվով, թեմատիկայի հարստությամբ, ժանրային բազմազանությամբ «Երիտասարդություն» ռադիոկայանը նորություն էր ռադիոեթերում և, շնորհիվ երիտասարդ շնորհալի կոլեկտիվի ամենօրյա աշխատանքի այդպիսին մնաց երկար տարիներ: Առաջին իսկ հաղորդման ժամանակ ռադիոկայանը աջակցության և համագործակցության կոչով դիմեց ունկնդիրներին. «Հարգելի հասակակիցներ, եկեք միասնական ուժերով ստեղծենք մեր ռադիոկայանի հաղորդումները: Չէ՞ որ մենք ենք այս հաղորդման հիմնադիրներն ու շարունակողները»:[90] Առաջին հաղորդման ժամանակ հնչեց նաև ստեղծագործական կազմի առաջին գործնական առաջարկը. «Սիրելի՛ հասակակիցներ, եկեք միասին քննարկենք և վերլուծենք մեր ընդհանուր խնդիրները, տարակարծությունները, դժվարությունները, միասին մտածենք դրանք հաղթահարելու ձևերը»:[91] Երիտասարդական ծրագրի պատրաստմանը գործուն աջակցություն ցույց տվեց երիտասարդական «Ավանգարդ» թերթը, որը հանդես եկավ մի շարք հրապարակումներով և օգնեց իր երիտասարդ գործընկերներին՝ ավելի արդյունավետ և նպատակային պատրաստելու երիտասարդությանը նվիրված հաղորդումները:

Ռադիոկայանի լրագրողները, կարճ ժամանակահատվածում ստեղծեցին այնպիսի հաղորդումներ, որոնք ոչ միայն ներկայացնում էին լսարանի հետաքրքրություններն ու ձգտումները, այլև ձևավորում էին գեղագիտական ճաշակ:

Նոր ռադիոկայանի լրագրողների պատրաստած ծրագրերն ու հաղորդաշարերն այնքան մեծ լսարան էին հավաքում, որ գրեթե յուրաքանչյուր հաղորդում բուռն քննարկման առարկա էր դառնում հանրապետության բուհական, աշխատավորական կոլեկտիվներում: Այսպես, ռադիոկայանի «Լավագույն մասնագիտությունը» թեմայի շուրջ հաղորդումներին մեծ ակտիվությամբ արձագանքեց լսարանը՝ խմբագրություն ուղարկելով հազարավոր նամակներ:[92]

Երիտասարդները կարողացան մասնակցել բանավեճերի, որոնք օգնեցին նրանց ճիշտ ընտրելու իրենց մասնագիտությունը: Միայն այս

90 Եթերում է «Երիտասարդություն» ռադիոկայանը, հանրապետական ռադիոյի 1-ին ծրագիր, 1962, 15-ը նոյեմբերի:

91 Նույն տեղում, հանրապետական ռադիոյի 1-ին ծրագիր, 1962, 15-ը նոյեմբերի:

92 Հովհաննիսյան Ա., Ամենալավագույն մասնագիտությունը, հանրապետական ռադիոյի 1-ին ծրագիր, 1967, 3-ը սեպտեմբերի:

թեմատիկ քննարկումների ընթացքում ռադիոկայանը եթեր տվեց 3 հազար նամակ:

1950-60-ական թվականներին «Երիտասարդություն» ռադիոկայանի հաղորդումների 70 տոկոսը կազմվում էր ռադիոունկնդիրների նամակների հիման վրա: Նրանցում հնչում էին ինչպես սկսնակ ստեղծագործողների առաջին երգերը, այնպես էլ ռադիոկայանի հետ մշտապես համագործակցողներինը: Այսպես, Ռ. Ամիրխանյանի երաժշտությամբ և Ա. Սահակյանի խոսքերով ստեղծված բազմաթիվ երգեր ու կատարումներ ծնվում էին ռադիոկայանի հետ համագործակցելու ընթացքում: Մշտական ու կայուն խորագրերից էր նաև «Խոսք երիտասարդությանը» շարքը, որն անդրադառնում էր նշանավոր անձանց: Հաղորդաշարում բարձրացված հարցերն ու խնդիրները վերլուծաբար ներկայացվում էին հրավիրված մասնագետների կողմից: Ռադիոլրագրողները հաճախակի օգտագործում էին իրենց արխիվում պահպանված ձայնագրություններն ու երաժշտական համարները:[93]

Երիտասարդների գործերին և ժամանակակից կյանքին էր նվիրված «Հայրերի ավանդներին հավատարիմ» հրապարակախոսական հաղորդումների շարքը, որը կազմվում էր հիմնականում լսարանի հետ արտագնա եղանակով:

Ռադիոկայանը մեծ ուշադրություն էր դարձնում ուսանող երիտասարդության հոգսերին և ուներ հատուկ հաղորդումների շարք՝ «Ուսանողական միջօրեականներում» խորագրով, որը եթեր հեռարձակվեց 1964 թ-ին: Ուսանողական հաղորդումներում ներկայացվում էին բուհերում և տեխնիկումներում ուսանող երիտասարդների առօրյա հոգսերը, դժվարություններն ու հաջողությունները, հաճախակի լուսաբանվում էր նրանց առաջադիմության ընթացքն ու ձեռք բերած գիտելիքների կիրառումը պրակտիկ աշխատանքում:[94]

Ռադիոկայանն ուներ նաև առանձին հաղորդաշար գրականության և արվեստի մասին՝ «Գրական էջ» անվամբ (հիմնադրվեց 1965 թ-ին): Նպատակն էր երիտասարդների մեջ սեր արթնացնել գրականության և արվեստի նկատմամբ, ներկայացնել և տարածել հայ դասական և

93 Հակոբյան Գ., Երիտասարդ սերնդի դաստիարակման խնդիրը, հանրապետական ռադիոյի 1-ին ծրագիր, 1966, 24-ը հոկտեմբերի:

94 Վարդանյան Հ., Ուսանողական միջօրեականներում, հանրապետական ռադիոյի 1-ին ծրագիր, 1968, 5-ը հունիսի:

ժամանակակից ստեղծագործողների երկերը, ներկայացնել համաշխարհային գրականության դասականներին, ստեղծել առանձին մատենաշար՝ նվիրված երիտասարդությանը և նրա խնդիրներին: Հաճախակի գրական բանավեճ էր կազմակերպվում նոր հրատարակված գրքերի շուրջ: Ժամանակին այդ հաղորդաշարով ներկայացվեցին Վ. Պետրոսյանի «Մենավոր ընկուզենի», Մ. Գալշոյանի «Բովտուն» վեպերը հայ գյուղի ու նրա հիմնախնդիրների մասին, Ռ. Դավոյանի բանաստեղծական շարքերը, Հ. Մաթևոսյանի ստեղծագործությունները:

Ռադիոյի հետ, ռադիոյի կողքին
Ձախից աջ՝ Վիկտոր Համբարձումյան,Մարտիրոս Սարյան, Դերենիկ Դեմիրճյան, Ավետիք Իսահակյան (1950-ականներ)

1950-ական թթ. վերջին ստեղծվեց Ռադիոյի լավագույն և մեծ հեղինակություն վայելող երգիծական հաղորդաշարերից մեկը՝ «Երգիծանք և հումոր»-ը: Հաղորդումն ունեցել է մի շարք անվանումներ՝ «Խայթունին և Բիբարյանը խոսափողի մոտ», հետո՝ «Երգիծանք և հումոր»: Սկզբնական շրջանում հաղորդումը հասարակական-քաղաքական խմբագրության մի մասն էր, իսկ 1960-ական թթ. վերջին կազմավորվեց որպես առանձին հաղորդաշար՝ մաս կազմելով փոփոխությունների ենթարկված գրական-գեղարվեստական խմբագրության հաղորդումների շարքի: Ռադիոֆելիետոնի ժանրով հաղորդաշարն անընդհատ որակապես թարմացնում էր ծրագիրը՝ հեռարձակելով համարձակ, սուր երգիծական մանրապատումներ: Հաղորդաշարին մասնակցում էին հանրապետության ճանաչված դերասան-դերասանուհիները: 1959 թ. փետրվարին եթեր

հեռարձակվեց հաղորդաշարի անդրանիկ հաղորդումը:

1950-ականները Ռադիոյի հասարակական-քաղաքական հաղորդումների խմբագրության համար նշանակալից էին նաև նրանով, որ երեսնամյա ընդմիջումից հետո նորից վերաբացվեց գրականության և արվեստի ռադիոհամալսարանը: Հաշվի առնելով լսարանի պահանջմունքը՝ հաղորդաշարն իր զրույցների մեծ մասը նվիրեց մշակույթի և գրականության արժեքներին, ներկայացրեց հայ և արտասահմանյան գրականության լավագույն ստեղծագործությունները, գրականության և արվեստի նշանավոր գործիչներին, նրանց կյանքն ու գործունեությունը:

Ռադիոհամալսարանի ունկնդիրների առջև դասախոսություններով պարբերաբար հանդես են եկել Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Հ. Դանիելյանը, Մ. Սարյանը, Ն. Զարյանը, Գ. Սարյանը, որոնց ձայներն այսօր էլ պահվում են ռադիոյի «ոսկե» ֆոնդում»: Ռադիոհամալսարանի հաղորդումներն արդյունավետ և նպատակային կազմակերպելու համար գրեթե յուրաքանչյուր դասախոսության ժամանակ օգտագործվում էին կենդանի ընթերցանություն, ասմունք, երաժշտություն:

Եվ վերջապես, 1950-ական թվականները նշանավորվեցին նաև նրանով, որ վերջապես շահագործման հանձնվեց այն ժամանակվա լավագույն տեխնիկայով ու սարքավորումներով հագեցված Ռադիոտունը: Ճարտարապետ Հովհաննես Մարգարյանի նախագծով կառուցվող շենքը գտնվում էր Ժոխկոմխորհի ուշադրության կենտրոնում:

«ՀԽՍՀ Ժողկոմխորհի կարգադրությունը՝ Ռադիոկոմիտեի վարչական շենքի նախագծին հավանություն տալու մասին: /22.01.1952թ./

1. Բավարարել ռադիոինֆորմացիայի կոմիտեի առաջարկությունը՝ Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդին կից Ճարտարապետական գործերի վարչության ուսումնասիրությունը՝ Ռադիոինֆորմացիայի կոմիտեի վարչական շենքի նախագծային հաշվարկները ք. Երևանում, շինարարական 2 456,8 հազար ռուբլի արժեքով:

2. Հանձնարարել ՀՍՍՀ Նախարարների խորհրդին կից

Ռադիոինֆորմացիայի կոմիտեին վարչական նախագծային հաշվարկներ կատարել և դրանք հաստատել ՍՍՀՄ Նախարարների խորհրդին կից «Ինֆորմացիայի կոմիտեի» կողմից: Նախագծի տեխնիկական ուսումնասիրության ընթացքում հաշվի առնել Ճարտարապետության գործերով վարչության դիտողությունները»:

ՀԱԱ,Ֆ113.ց. 55,գ 42.,թ.1

Ուսումնասիրելով Ռադիոտան նախնական մանրակերտը՝ կարող ենք ասել, որ Հ.Մարգարյանի ոչ բոլոր ճարտարապետական մտահղացումներն իրականություն դարձան: Ռադիոտան աշտարակի սայրաձողը (շպիլ), որը պարզ երևում է էսքիզներում այդպես էլ չկառուցվեց, քանի որ 1955 թ-ին ԽՍՀՄ կառավարությունը հրամանագիր ստորագրեց «Ճարտարապետական ավելորդությունների դեմ պայքարի» մասին:



Ռադիոտունն է՝ ավարտուն տեսքով (1956թ.) Առաջին և երրորդ նկարներում Ռադիոտան մանրակերտն է (ճարտարապետ Հ.Մարգարյան 1954թ.)

Նոր շենքը հնարավորություն տվեց որակապես բարելավելու ռադիոհաղորդումների տեխնիկական հեռարձակումը, ընդլայնվեց Ռադիոյի ստեղծագործական կազմի աշխատանքը, հիմնվեցին նոր խմբագրություններ ու բաժիններ, իսկ 1960 թ. ապրիլից եթեր հեռարձակվեցին երրորդ ծրագրի հաղորդումները:

Նորաբաց ծրագրով հիմնականում հեռարձակվում էին հանրապետական և երևանյան լուրեր, դասական երաժշտություն: Երրորդ ծրագիրն օրական պատրաստում էր մոտ երկու ժամ հաղորդում: Բացի

ամենօրյա եթեր հեռարձակվող մշտական հաղորդաշարերից, ունկնդիրների ուշադրությանն էր ներկայացնում նաև «Ծաղկիր, իմ հանրապետություն» երկշաբաթյա ռադիոհանդեսը, որը եթեր էր տրվում շաբաթ օրերը և ուներ մշտական կայուն լսարան: Ռադիոհանդեսում բացի օպերատիվ լուրերից, մեծ տեղ էր հատկացվում ժողովրդական տնտեսության առաջավորների, գիտության և մշակույթի գործիչների մասին պատմող ակնարկներին, հաղորդումներին, հարցազրույցներին և ելույթներին: Ռադիոհանդեսը ՀՌ-ում առաջին անգամ կազմակերպեց և հեռարձակեց փոխկանչի հաղորդում միաժամանակ անդրկովկասյան երեք հանրապետությունների մայրաքաղաքներից՝ Երևանից, Թբիլիսիից, Բաքվից: Նման հաղորդումները հետագայում դարձան պարբերական, ՀՌ-ն նմանատիպ փոխկանչի հաղորդումներ կազմակերպեց նաև այլ հանրապետությունների մայրաքաղաքների հետ: Նորաստեղծ երրորդ ծրագիրը, որը հիմնականում մասնագիտացված էր հասարակական-քաղաքական, գրական, դրամատիկական և երաժշտական հաղորդումների ասպարեզում, ինչ-որ տեղ մրցակցում էր առաջին ծրագրի նույնատիպ հաղորդումների հետ: Ստեղծված իրավիճակը, բնականաբար չէր կարող երկար տևել և 1974 թ. երրորդ ծրագիրը տրամադրվեց ստերեոֆոնիկ ձայնագրություններին (հիմնականում հաղորդվում էր դասական երաժշտություն):

Անցած դարի 50-60-ականներին Երևանի վարձույթի խանութներից հնարավոր էր նաև ռադիոընդունիչ ձեռք բերել

Ռադիոտան նոր շենքը շահագործման հանձնելուց հետո ՀՌ-ի եթերաժամն ավելացավ մոտ երեք անգամ: Հանրապետական

հաղորդումների երեք ծրագրերի միջոցով 1960-ական թվականներին եթեր էր հեռարձակվում 38 ժամ ռադիոհաղորդում, մշտապես գործում էր 14 հազար ռադիոընդունիչ կետ և 160 հազար ռադիոընդունիչ, որը հնարավորություն էր տալիս ՀՌ-ի երեք ծրագրերի հաղորդումները տարածել ողջ հանրապետության տարածքում:

1965 թ-ին բնակելի շենքերի կառուցման ընթացում իրականացվում են ռադիոհեռարձակման ցանցի ներբնակարանային լարային ցանցի տեղադրման աշխատանքներ:Բնակարանների բոլոր սենյակներում և խոհանոցներում տեղադրվում են ռադիոչափերիզներ:

ՀԱԱ,Ֆ.113, ց.96, գ.3, թթ.1-2 *5.06.1965*

Ռադիոտան տեխնիկական հնարավորությունները թույլ տվեցին հաղորդումներ պատրաստել ոչ միայն ստուդիայում, այլև դրսում՝ շարժական ռադիոկայանի միջոցով:

Գրական-դրամատիկական, երաժշտական և մանկապատանեկան խմբագրությունների համար պարբերաբար կազմակերպվեցին որակյալ երաժշտական ձայնագրություններ: Տարիների ընթացքում ձայնադարանը հարստացավ և այժմ ռադիոյի «ոսկե ֆոնդում» պահպանվում են ավելի քան քսան հազար հեղինակային, ասմունքային կատարումներ և ռադիոբեմականացումներ:

Կլարա Թերզյան

1957 թ-ին Երևանի Մռավյան-5 հասցեում շահագործման հանձնվեց Հանրապետական ռադիոյի նոր շենքը: Ձայնագրությունների պահպանման նպատակով Ռադիոտան 3-րդ հարկում առանձնացվեց 3 սենյակ և այստեղ՝ հատուկ դարակներում տեղադրվեցին առաջին, շուրջ 60 ձայնագրությունները: Այսպես սկսվեց ռադիոյի ձայնադարանի պատմությունը:

1965թ-ին հիմնադրվեց ֆոնդային ձայնագրությունների խմբագրությունը (սկզբում ձայնագրությունները կատարվում էին 78 արագությամբ): Տարիների ընթացքում փոխվում էին ձայնագրման սարքերը, ավելանում էր ձայնագրված հաղորդումների քանակը, և այս ամենը նոր մոտեցում էր պահանջում. կար մագնիսական ժապավենների պահպանության ու քանակի վերադասավորման խնդիր: Ժամանակի

պահանջով փոխվում է նաև ձայնագրման արագությունը՝ 36:

Այդ իսկ պատճառով, ձայնադարանին՝ շենքի նկուղային հարկում նոր տարածք է հատկացվում և ստեղծվում են տեխնիկական պայմաններ՝ ձայնագրությունների երկարատև պահպանման համար. խոնավություն, ջերմաստիճան, անվտանգություն և այլ պահանջներ:

Ստեղծվում է նաև գեղարվեստական խորհուրդ, որը պատասխանատու էր ձայնագրությունների որակի համար, թե՛ բովանդակային, թե՛ տեխնիկական առումով: Ըստ այդմ, վերանայվում են բոլոր հաղորդումները, և ձայնագրությունները՝ ըստ անհրաժեշտության տեղափոխվում են նոր տարածք: Յուրաքանչյուր ձայնագրություն ունենում է իր բնութագիրը. կազմի վրա նշվում են հեղինակների, կատարողների, հնչունային ռեժիսորների և օպերատորների անունները, ինչպես նաև վերաձայնագրման տարեթիվը: Ձայնադարանում դրանք դասավորվում են համապատասխան տեղերում՝ ըստ ժանրերի:

1950-60-ական թթ. Ռադիոյում արդեն եղած ավանդույթների հիման վրա ընդլայնվեց գրական-դրամատիկական հաղորդումների գլխավոր խմբագրության աշխատանքը, որին մեծապես օգնեցին մեր անվանի դերասաններն ու ասմունքողները, ինչպես նաև նոր հիմնադրված ձայնագրման տեխնիկական բազան:

Կլարա Թերզյան

> *Հենց ընդունվել եմ Ռադիո, առաջին իսկ հաղորդումից հասկացել եմ, որ մեր մեծերն այսօր կան և վաղը կարող են չլինել: Եվ աշխատել եմ որքան հնարավոր է նրանց ձայները պահել: Հետո ասեմ, որ դա միայն իմ նախաձեռնությունը չէր. Ռադիոն ուներ իր ավանդույթը, շատ մարդիկ են ռադիոյի ֆոնդը լրացրել՝ Արևիկ Ավագյանը, հատկապես՝ Ժաննա Տեր-Հովհաննիսյանը, Գրետա Պողոսյանը: Թող ներեն մյուսները, որոնց անունները հիմա չեմ հիշում: Եվ ես միշտ ասել եմ, որ մեր ձայնադարանն իր տեսակի մեջ փոքրիկ Մատենադարան է:*

Ընդհանրապես 1950-60-ական թվականները գրական-դրամատիկական հաղորդումների հիմնադրման համար «ոսկի ժամանակաշրջան» էին, այդ թվականներին կատարվեցին այնպիսի

մնայուն և արժեքավոր ձայնագրություններ հանրապետության անվանի դերասանների մասնակցությամբ, որոնք պատիվ ու փառք կբերեին ցանկացած ռադիոկայանի:

Վահրամ Փափազյանը ձեռնամուխ եղավ «Օթելլո» և «Համլետ» ողբերգությունների ռադիոբեմականացումների ձայնագրմանը, որոնք եթեր հեռարձակվեցին 1958 թ. մայիս-հունիս ամիսներին: Բեմի անվանի վարպետի մասնակցությամբ կատարված ձայնագրություններն արժանացան ռադիոունկնդիրների ջերմ ընդունելությանը՝ սկիզբ դնելով նոր հեղինակային ձայնագրությունների ստեղծմանը: Մեկ ամիս անց Պաուստովսկու «Կույր խոհարարը» պատմվածքի հիման վրա ռադիոբեմականացում պատրաստեց Հրաչուհի Ջինանյանը: Կույր խոհարարի դերում հանդես եկավ ԽՍՀՄ ժողովրդական դերասան Հրաչյա Ներսիսյանը:

Ռադիոյի գրական-դրամատիկական հաղորդումների շարքում իր մշտական տեղը գտավ նաև «Թատրոնը խոսափողի մոտ» հաղորդաշարը: Այս հաղորդաշարի ռադիոբեմականացումների միայն թվարկումը կարող է պատկերացում տալ դրանց լայն ընդգրկման, թեմաների բազմազանության ու բազմաժանրայնության մասին: Այստեղ կարելի է հիշատակել Վ. Փափազյանի «Ժայռը», Ն. Զարյանի «Հացավանը», Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է», Լ. Տոլստոյի «Կենդանի դիակ», Ա. Շիրվանզադեի «Մորգանի խնամին», «Չար ոգին», «Պատվի համար», Մուրացանի «Ռուզանը», «Առաքյալը» և այլ ռադիոբեմականացումներ: Այս գործի նախաձեռնողներից է եղել նաև 1959 թվականից Հայաստանի հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեի ֆոնդային դրամատիկական հաղորդումների բաժնի վարիչ և գլխավոր ռեժիսոր Գրիգոր Չալիկյանը:

Ստեփան Զաքարյան *- Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամ*

> *Գրիգոր Չալիկյանը չէր սիրում «ծանր» խոսողներին: Առավել ևս ծանր կարդացող դերասաններին: Նրանց համար նույնիսկ անուն էր հորինել՝ «ջանդակով» դերասան էր անվանում:*
>
> *-Ռադիոյին մարդամոտ, հարազատ, սրտաբաց ձայներ են*

պեպք, -ասում էր նա ու ջղայնացած ձեռքը թափ տալիս, երբ իրեն չէին հասկանում:

Գ. Չալիկյանը բեմադրել է Հրաչյա Քոչարի «Կարոտ», «Նահապետ» ստեղծագործությունները, Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը», Մուշեղ Գալշոյանի «Կանչը»: Ռեժիսորի նախաձեռնությամբ բեմադրվել են նաև մանկական պիեսներ:

Վերևի շարքում ձախից՝ Արմեն Հովհաննիսյան, Արշալույս Սարոյան, Մարատ Մարինոսյան, Կիմ Արզումանյան
Ներքևի շարքում ձախից՝ Հովհաննես Հակոբյան,Ջոն Կիրակոսյան,Գրիգոր Չալիկյան

Այս թատերական գործերը շնորհիվ Ռադիոյի տեխնիկական հնարավորությունների՝ մատչելի էին դառնում լսարանին: Թատերասեր ռադիոունկնդրին կողմնորոշելու համար ռադիոհաղորդումների ցանցում շաբաթվա կտրվածքով հատկացվում էր կայուն ժամ և օր: Գրական-դրամատիկական սիրված հաղորդաշարերից մեկը՝ «Թատրոնը խոսափողի մոտ» (հետագայում՝ Ռադիոթատրոնի ժամ- Մ. Հ.) ուներ կայուն եթերաժամ և օր (կիրակի), որպեսզի ռադիոունկնդիրը հեշտությամբ կողմնորոշվեր և ունկնդրեր խմբագրության պատրաստած հերթական բեմականացումը: Բացի հայ դրամատուրգիայից, խմբագրությունը ռադիոբեմականացումներ էր պատրաստում ռուս և օտարերկրյա նշանավոր դրամատուրգների ստեղծագործությունների հիման վրա:

Ռադիոյի «ոսկե ֆոնդում» այժմ էլ պահպանվում են Վ. Շեքսպիրի ստեղծագործությունների ձայնագրությունները՝ Վ. Փափազյանի, Հր. Ներսիսյանի, Մ. Սիմոնյանի մասնակցությամբ, Բ. Բրեխտի, Բոկաչչոյի, Ֆ. Շիլլերի, Ա. Դոստոևսկու, Լ. Տոլստոյի, Մ. Լերմոնտովի, Ա. Պուշկինի, Հ. Իբսենի, Ա. Միցկևիչի և այլ հեղինակների տարբեր գործերի ձայնագրությունները:

Գրական-դրամատիկական հաղորդումների խմբագրությունը ռադիոբեմականացումներ էր պատրաստում նաև երեխաների համար՝ «Մանկական ռադիոթատրոնի ժամ» խորագրով: Հիմա էլ «ոսկե ֆոնդում» պահվում են Երևանի տարբեր թատրոններում ու բեմահարթակներում ձայնագրված բազմաթիվ ռադիոբեմականացումներ (Ջ.Ռոդարիի «Չիպոլինոյի արկածները», Ա. Լինդգրենի «Մանչուկն ու Կառլսոնը», Դ. Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոյի արկածները», Ժ. Վեռնի «Նավապետ Գրանտի որդիները», Գաբոյի «Մոխրոտիկը», Հ.Ք. Անդերսենի «Ձյունե թագուհին», «Մատնաչափիկը», Ա. Պուշկինի «Ոսկե ձկնիկը», «Տերտերն ու իր բալդի ծառան» և այլն):

Անցած դարի 60-ականներին Ռադիոն շարունակում էր մնալ սիրված և մշտապես ուշադրության կենտրոնում էր, թեև այդ շրջանում դանդաղ, բայց արդեն հաստատուն քայլերով իր ճանապարհն էր հարթում հեռուստատեսությունը: Սակայն միշտ չէր, որ խմբագրությունները ռադիոլսողներից, այդ թվում հայտնի մարդկանցից հաճելի ու խրախուսող նամակներ էին ստանում: Հնչում էին նաև քննադատական խոսքեր,երբեմն բավականին սուր:

Ստեփան Զորյանի նամակը՝ ուղղված Ռադիոհաղորդումների և հեռուստատեսության կոմիտեի նախագահ Ջոն Կիրակոսյանին.

«Քաղվածք

Հարգելի ընկեր Կիրակոսյան,

Երեկ լսեցի «Ամիրյանի ընտանիք» -ի բեմականացումը և պիտի ասեմ ամենայն անկեղծությամբ, շատ վշտացա: Ասեմ ինչու՛. մոնտաժողը, վեպի դեպքերը մի ժամի մեջ սեղմելու համար, կատարել է անհեթեթ կրճատումներ, այն էլ առանց անցումների, առանց բացատրականի, առանց անունների, այնպես որ անգամ վեպը կարդացած մարդը չի կարող հասկանալ՝ ի՞նչ է կատարվում, որտե՞ղ է կատարվում, ինչո՞ւ է կատարվում և ո՞վ է խոսում:Այս պակասների վրա

ավելանում է դերասանների անգույն, անշունչ, անհոգի խաղը:
Անցյալում էլ այսպիսի մի բան եղավ «Գրադարանի աղջկա» բեմականացման առթիվ:
Ու, շնորհակալ եմ, դադարեցրին:
Սա չի նշանակում, իհարկե, թե ես առհասարակ արգելում եմ, որ Ռադիոն օգտագործի իմ գրածները: Բնա՛վ: Ռադիոյի աշխատակիցները միշտ կարող են հատվածներով կամ լրիվ կարդան իմ գործերից, բայց կցանկանայի, որ զգուշանան հավելումներից, գռեհկացումից և այն բանից, որ գրվածքները,վայելուչ ներկայացնելու փոխարեն, չվարկաբեկեն:
Ձեր գործերին հաջողություն ցանկանալով, խնդրում եմ, ընդունել բարևներս: Ստ.Զորյան Երևան» /30.11.66 թ./

Ֆ.191,ց.5,գ.51,թ.1 և շրջ.

60-ականներին Ռադիոյում հիմնվեց նաև ռադիոունկնդիրների կողմից շատ սիրված հաղորդաշարերից մեկը՝ «Գրական ընթերցումները», որը բոլոր տարիներին ունեցավ իր կայուն և մշտական լսարանը: «Ոսկե ֆոնդում» պահպանվել են բազում հեղինակային և դերասանական ընթերցումներ անվանի դերասանների և բանաստեղծների կատարմամբ:

Կլարա Թերզյան,

Տարիների ընթացքում կաթիլ-կաթիլ հավաքել եմ նրանց մասին տեղեկություններ, և ինչ-որ մի տեղ ինձ հաջողվել է մեր պատմության սպիտակ էջերից մի քանիսը լրացնել: Իսկ ինչ վերաբերում է առօրյա հանդիպումներին, դրանք հրաշք էին: Պատկերացնո՞ւմ եք, հանիպել Ավետիք Իսահակյանին և բախտ ունենալ նրա հետ զրուցել ու ձայնագրել: Դերենիկ Դեմիրճյանին, Երվանդ Քոչարին, Հրաչյա Քոչարին, Գուրգեն Մահարուն, որ մեկին ասեմ: Ես այդ ձայնագրությունները պահել էի և 90-ական թվականների ամենասարսափելի տարիներին, կարծես մեկն ինձ ասում էր՝ վեր կաց, ժապավենից գրի առ, հետո չես հասցնելու:

Այստեղ են 1960 թ. Վահրամ Փափազյանի անզուգական

կատարումները՝ Համլետի մենախոսությունը Վ. Շեքսպիրի համանուն ողբերգությունից, Լ. Շանթի «Հին աստվածները», Պ. Դուրյանի «Լճակը», Հրաչյա Ներսիսյանի կատարմամբ «Պաղպասար Աղբարը», Յագոյի մենախոսությունը, Մ. Մեծարենցի բանաստեղծությունների գրական ընթերցումները, Ավետիք Իսահակյանի հեղինակային ընթերցումը «Աբու-Լալա-Մահարի» պոեմից, Դ. Դեմիրճյանի հեղինակային ընթերցումը «Վարդանանք» վեպից, Հ. Շիրազի բանավոր ընթերցումները՝ «Հայրենիքին» և «Հուշարձան մայրիկիս» շարքերից, Ս. Կապուտիկյանի և շատ ուրիշ հեղինակային կատարումները:

Հաղորդաշարի հիման վրա տարբեր տարիներին ձևավորվեց մի խումբ, որը երկար ժամանակ ներկայացնում էր Ռադիոյի «Գրական ընթերցումներ» հաղորդաշարը: Այդ խմբի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում հանրապետության ժողովրդական դերասանուհի Հրաչուհի Ջինանյանը, որի գրական կատարումների ցանկը հաշվվում է հազարներով: Այստեղ են աշխատել ասմունքի անզուգական վարպետներ Հայկուհի Գարագաշը, Ժան Էլոյանը, Թամար Դեմուրյանը,Գարուշ Խաժակյանը, Վլադիմիր Աբաջյանը, Վարդուհի Վարդերեսյանը, Վերա Հակոբյանը, Անդրանիկ Ղազարյանը, Շահում Ղազարյանը, Ազատ Գասպարյանը, Սուսաննա Գաբրիելյանը, Սիլվա Յուզբաշյանը, Սվետլանա Խանումյանը, Սարգիս Նաջարյանը (այժմ էլ աշխատում է), Կարեն Վարդանյանը և այլք:

«Գրական ընթերցումներ»-ով 1950-60-ական թթ. պարբերաբար ելույթ էր ունենում ասմունքի մեծվարպետ Սուրեն Քոչարյանը, որի դերասանական տաղանդը, անզուգական թավշյա ձայնը ռադիոունկնդիրների վրա անջնջելի տպավորություն էին թողնում, և յուրաքանչյուր ելույթ ռադիոունկնդրի մոտ վերածվում էր իսկական տոնի: Սուրեն Քոչարյանի կատարմամբ ներկայացվել են «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսը, արևելյան հեքիաթների ժողովածու «Հազար ու մեկ գիշերները», Հովի. Թումանյանի հեքիաթները, պոեմները, պատմվածքներն ու բանաստեղծությունները, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ե.Չարենցի քնարերգությունը, ռուս և օտարերկրյա գրողների, դրամատուրգների և բանաստեղծների երկերը: Ժամանակին այնքան մեծ էր Ս. Քոչարյանի

արտիստական արվեստի ուժը, որ երիտասարդները ցանկանում էին ընդօրինակել նրան, դառնալ նրա հետնորդն ու ըստ արժանվույն ներկայացնել դասական ստեղծագործությունները զանգվածային լսարանին:

Ռադիոյի երաժշտական հաղորդումների խմբագրությունը 1950-60-ական թվականներին հաջողությամբ շարունակեց 1920-30-երի երաժշտական ավանդույթները՝ աստիճանաբար տարբեր ծրագրերում ավելացնելով երաժշտական հաղորդումների եթերաժամը:

Երաժշտական հաղորդումների պահանջն այնքան մեծ էր, որ երրորդ ծրագիրն ութ ժամի փոխարեն սկսեց պատրաստել 12 ժամ ռադիոհաղորդում: Խմբագրությունն ամենօրյա երաժշտական համարներ էր պատրաստում հայ, ռուս, արտասահմանյան երգի սիրահարների համար: Եթեր հեռարձակվող կայուն հաղորդաշարերից բացի, խմբագրությունը հիմնեց «Երաժշտական հանրագիտարան» հաղորդաշարը, որի առաջին հաղորդումը եթեր տրվեց 1959 թ. հոկտեմբերի 29-ին: Այն ընդգրկում էր երաժշտական արվեստի տարբեր ժանրեր ու առանձնահատկություններ՝ սկսած օպերայից մինչև ժողովրդական երգեր, սիմֆոնիկ, երաժշտական համարներից մինչև զվարճալի ծրագրեր:

1962 թ. հուլիսի 15-ին հիմնվեց «Երաժշտասերների ռադիոակումբը»: Ռադիո էին հրավիրվում ինքնուս կատարողներ և երգիչներ, որոնք հայ

Ձախից՝ Ավետիք Իսահակյան, Ավագ Պետրոսյան, Հասմիկ Տեր-Ստեփանյան և Մարտիրոս Սարյան (1955թ.)

երգարվեստի հարցերի շուրջ բանավիճելուց բացի, ռադիոունկնդրին էին ներկայացնում իրենց կատարողական վարպետությունը: Այնքան շատ էր այդ հաղորդաշարում ելույթ ունեցողների ցանկությունը, որ խմբագրությունը, ունկնդիրների առաջարկով, ավելացրեց եթերաժամը: Հաղորդաշարն օգնեց բազմաթիվ ինքնուս կատարողների ճանաչման հասնելու և հետագայում համալրելու հանրապետության երաժշտական անսամբլները: Այստեղ են իրենց առաջին քայլերը կատարել հայ երգի ճանաչված վարպետներ Ավ.Պետրոսյանը, Ռ. Մաթևոսյանը, Ռ. Հովհաննիսյանը, Ն. Մնացականյանը և շատ ուրիշներ:

Երիտասարդ Ռուբեն Մաթևոսյանը ուսուցչի՝ Արամ Մերանգուլյանի հետ (1960թ.)

1950-ականներին ՀՌ երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագիր Արամ Սաթունց

Ռուբեն Մաթևոսյան, *ՀՍՍՀ ժողովրդական արտիստ*

Ես 1961 թվականին եմ կանգնել միկրոֆոնի առջև, ելույթ եմ ունեցել: Ինձ համար գերագույն հաճույք է եղել ելույթ ունենալ Հայաստանի և Սփյուռքահայության համար: Ես՝ ստուդիայում մենակ, և անսամբլը: «Ուշադրություն միկրոֆոնը միացնում ենք»,- հնչել է խոսնակի ձայնը, ներկայացրել են ինձ՝ կատարող, ստեղծագործություն: Եվ ես վերացել եմ: Վերանում էի ստուդիայում... Շատ կարևոր էր մարդը՝ իր տեսակով: Ասեմ, որ ոչ բոլորն էին կենդանի ելույթով հանդես գալիս ռադիոյում: Հնչում էին Լուսիկ Քոշյանի և մյուսների ձայները, բայց Ռադիոյում կենդանի ձայնի հնարավորություն տրված էր Օֆելյա Համբարձումյանին, Արաքսյա Գյուլզադյանին, Շողիկ

Մկրտչյանին, Հովհաննես Բաղալյանին: Հետո ինձ տրվեց իրավունք, Գոհար Գասպարյանին, Տաթևիկ Սազանդարյանին, Ավագ Պետրոսյանին, Դավիթ Պողոսյանին, Գևորգ Իվանյանին, Ֆլորա Խորենյանին, Վարդուհի Խաչատրյանին: Այս երգիչները կարող էին հանդես գալ միկրոֆոնի առջև՝ ցանկացած պահի, մնացած բոլորը՝ վաղօրոք ձայնագրված էին հանդես գալիս:

Ռադիոյում հաղորդումներն սկսեցին երաժշտական ձևավորմամբ ներկայացվել 1950-ականներից, և այդ գործի նախաձեռնողներից էր կոմպոզիտոր, երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագիր Արամ Սաթունցը: Երաժշտական ձևավորմամբ հաղորդումները, ռադիոբեմադրություններն ու գրական ընթերցումներն ավելի լսելի, գրավիչ ու հետաքրքիր դարձան:

Արամ Սաթյան, *ՀՀ կոմպոզիտորների միության նախագահ*

Սաթունցը մեծ ուշադրություն էր դարձնում այդ աշխատանքին:Նույնիսկ մի հումորային պատմություն կա այդ տարիներից: Մի անգամ կոմպոզիտորը լսում է մի դրամատիկական պիես, որտեղ երաժշտություն ընդհանրապես չի հնչում: Ձևավորելիս օպերատորն ավելի շատ բնական ձայներ /ինտերշում/ էր օգտագործել:

Վերջում հաղորդավարն ասում է.

-Երաժշտական ձևավորումն Արամ Սաթունցի:

Խմբագիրն էլ հաճելիորեն զարմանում ու լրացնում է.

-Ավելի ճիշտ՝ առանց Սաթունցի:

Երաժշտական հաղորդումների խմբագրությունը պարբերաբար սկսեց ձայնագրել և արխիվացնել հայ երգարվեստի բազմաթիվ ստեղծագործություններ ու կատարումներ և այս գործում իր նշանակալի ավանդն ունեցավ Հեռուստառադիոյի սիմֆոնիկ նվագախմբի դիրիժոր՝ Ռաֆայել Մանգասարյանը:

Նշանակալից երևույթ էր ռադիոյում 1957 թ. վերջերին Տ. Չուխաջյանի «Արշակ երկրորդ» օպերայի ձայնագրումը, որին հետևեց

Ա. Տիգրանյանի «Անուշը»: Հետագա տարիներին Երևանի մշակութային օջախներում ձայնագրվեցին և ռադիոյով հաղորդվեցին հայ, ռուս և օտարերկրյա ստեղծագործողների հարյուրավոր ձայնագրություններ, որոնք մինչև այժմ էլ հնչում են տարբեր հաղորդաշարերում:

Կոմպոզիտոր ***Մարտին Վարդազարյան***

Ռադիոյի ձայնագրության մթնոլորտը... հիանալի հնչունային ռեժիսորներ էին աշխատում: Առաջին հնչունային ռեժիսորին, որին հիշում եմ, Նորայր Իսահակյանն էր... կարծեմ: Դա 56-ին էր: Մի անգամ շատ ծիծաղելի բան տեղի ունեցավ: Ալեքսանդր Շահբազյանը ռոմանս էր գրել, սոլիստն ակորդեոնահարն էր: Վարժ նվագում էի, բայց վերջում ուրիշ նոտայի վրա էի ընկնում՝ մատս կպչում էր: Իսկ այն ժամանակ չկար...լավ, այստեղից շարունակում ենք, կամ՝ լավ, այդ նոտան ես «կուղղեմ» հնարավորությունը: Ու սկսում էինք սկզբից: Արդեն 3-րդ, 4-րդ անգամ... ես անհարմար էի զգում ասել՝ Էդուարդ Իվանիչ, դաշնամուր լիներ, էնպես կնվագեի: Ասացի՝ կարող ենք շրջել դաշնամուրի պես նվագել: Ասաց՝ հա: Նվագեցի և այդտեղ առաջին անգամ տեսա մոնտաժելը: Նորայրն ասաց՝ ես կմոնտաժեմ, տեմպի փոփոխություն չկա: Ժապավենը տարավ-բերեց ու այնպես կտրեց, որ հետո իրար վրա դնելով, կպցնելով թխկոց չլինի: Մկրատը պիտի մագնիսազերծվեր, մի խոսքով: Հիանալի հնչունային ռեժիսորներ էին: Եվ ինչն է կարևոր, բոլորը կոնսերվատորիա ավարտած երաժիշտներ էին. Էդիկ Կարապետյանը ջութակահար էր, Հովհաննեսը, Կարո Ճիզմիճյանը ֆլեյտիստներ էին: Իսկ ավելի ուշ շրջանում՝ Յուրան, /Հայկը/: Այնպիսի բավականություն

էին ստանում, ասում էին՝ եկեք տեսեք, այստեղ ոնց է հնչում: Սա նվիրվածություն է, ոչ թե մասնագիտություն, փեշակը… արվեստն է: Այսօր, արդեն պուլտերի հետ գործ ունեցող, համակարգչով ձայնագրություններ կատարողների համար սա եղել է անախրոնիզմ: Ինչպիսի վարպետություն էր պահանջվում,որ ընդամենը երեք մուտքով կարողանաս հաղորդում տալ՝ անսամբլի կատարում, երբեմն ելույթներ էր ունենում, ասենք, ջութակահարների անսամբլ, որը ստեղծվեց մի քիչ ավելի ուշ և այդ շրջանում սիմֆոնիկ նվագախումբն ստեղծվեց: Այն ժամանակ ստերեո հնչողություն չկար, հասկանալի է, բայց կար նվիրվածությունը և «կացնից ապուր եփելու ընդունակությունը»: Իրոք, զարմանալի էր երեք մուտքով ծավալային հնչողություն ստանալը: Ես այդտեղ տեսա

Ռադիոյի հաղորդավարները և աշխատակիցները.
Վերևի շարքում ձախից՝ հաղորդավարներ Սոս Մայիլյան, Զոյա Սարգսյան, Վերա Հակոբյան, Ռոզա Ղարիբյան,Ջոն Հակոբյան, Ստեփան Մազմանյան
Ներքևի շարքում ձախից՝ Թամարա Գալստյան Նարինե Երզնկյան

վարպետությունը՝ ինչպես կարելի է մոնտաժել:Սա լավ դպրոց էր, և առաջին գործիքավորումս այդտեղ արեցի:

ՀՌ-ն այդ տարիներին հիմնեց մի շարք նվագախմբեր և

երգչախմբեր, որոնք ամբողջացրին ու թարմացրին ռադիոյի տարբեր երաժշտական ուղղություններ ունեցող անսամբլների շարքը: Հանրապետության երաժշտական կյանքում նշանակալից իրադարձություն էր Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության սիմֆոնիկ նվագախումբը, որի ղեկավար ընտրվեց մաեստրո Օհան Դուրյանը: Նրա ղեկավարությամբ նվագախումբն իր անդրանիկ համերգը տվեց 1966 թ. մայիսի 7-ին՝ Ռադիոյի օրվա կապակցությամբ: Կարճ ժամանակամիջոցում այս նվագախումբը մեծ ճանաչման հասավ ոչ միայն մեր հանրապետությունում, այլ նաև սահմաններից դուրս:

1967 թ-ին հիմնվեց Ռադիոյի պատանի ջութակահարների անսամբլը՝ Գևորգ Աճեմյանի ղեկավարությամբ, որը բացառիկ համերգներով էր հանդես գալիս ամբողջ աշխարհում:

Այսպիսով, ՀՌ-ի երաժշտական հաղորդումները 1950-60-ական թթ. կազմում էին ամբողջ հաղորդումների 40 տոկոսը, ինչպես նաև՝ երրորդ ծրագրի 85 տոկոսը: Եթեր հեռարձակվող երաժշտական հաղորդաշարերի կեսը նվիրված էր հայ երգարվեստին, մյուս կեսը՝ ռուս և արտասահմանյան ստեղծագործություններին: Ռադիոծրագրերը կազմելիս անպայման հաշվի էր առնվում ռադիոլսարանի երաժշտական և գեղագիտական ճաշակը:[95]

Եվ կրկին փոփոխություններ

Կառավարության որոշմամբ՝ Ռադիոհաղորդումների և հեռուստատեսության պետական կոմիտեն դուրս է բերվում Կուլտուրայի մինիստրության կազմից: Կոմիտեի նախագահ է նշանակվում Լևոն Բաբայանը:

Ֆ.113, ց.65, գ.203, թ.2

Հաղորդավարական խմբի աշխատանքները բարելավելու նպատակով, 1958 թ-ին հաղորդավարական (դիկտորական) խմբի ավագ հաղորդավար է նշանակվում Մարատ Հալաջյանը: Համապատասխան փաստաթղթում, ի դեպ, նշված է. «Ավագ դիկտորի պարտականությունները

95 Տոնիկյան Ա., Հայ երգարվեստի պրոպագանդումը ռադիոյով, Երևան, «Խոսում է Երևանը», 1962, 13-ը ապրիլի:

կատարելու համար ընկ. Հալաջյանին պերսոնալ աշխատավարձի ֆոնդից լրացուցիչ 250 ռուբլի է վճարվում»:

Ֆ.191, ց. 2,գ. 50 26.06.1958

Հաղորդավարներից պահանջվում էր.

«Նյութերի ընթերցանության ժամանակ հանդես բերել խիստ պատասխանատվություն, բարեխղճություն, նախօրոք ծանոթանալ հաղորդվող նյութերին, թափանցել նյութի բովանդակության մեջ, ստեղծագործական որոնումներ կատարել նյութը ռադիոլսողներին հասցնելու, առավել կատարյալ արտահայտչական միջոցներ գտնելու համար: Դառնալ ռադիոհաղորդման գիտակից մասնակիցը և ոչ թե ուրիշի մտքերի մեխանիկական վերարտադրողը:

Առանձնակի ուշադրություն դարձնել լեզվի կուլտուրայի մշակման վրա:

Խմբագրություններից չընդունել անընթեռնելի ուղղումներով և կեղտոտ նյութեր»:

Այս և մի շարք այլ պահանջների հեղինակը կոմիտեի նախագահ Լևոն Բաբայանն էր:

Ֆ.191, ց.2, գ.49, թթ 4-7

Արման Նավասարդյան- *1960-ականներին ռադիոհաղորդավար, այժմ ՀՀ լիազոր դեսպան*

Մի ընկեր ունեմ՝ Հենրիկ Հովհաննիսյան, որն այստեղ /Ռադիոյում - խմբ./ հաղորդավար էր աշխատում: Մի օր ինձ ասաց. «Ձայնդ դուրս գալիս է, գուցե փորձես», «Ինչ փորձեմ՝ հարցրի», «Հաղորդավար դառնալ», «Հաղորդավարն ինչ է...»: Պայմանավորվեցինք, ու ես եկա Ռադիո: Կոնկուրս էր, ահագին մարդ կար, ձայնագրվում էին: Խիստ հանձնաժողով էր՝ Մարատ Հալաջյանի գլխավորությամբ: Դե, երիտասարդությունը ռիսկ է... և ես փորձեցի: Եկա, մտա, կարդացի: Ասացին՝ կկանչենք: Հետո կանչեցին, հավանաբար լավ էի կարդացել, ասացին՝ եթե ուզում ես, կարող ես մեզ մոտ աշխատել: Նրանք

պարզապես խոսքի և միկրոֆոնի վարպետներ էին, գուցե ոչ բոլորն էին պրոֆեսիոնալ կրթությամբ, բայց մեծ դպրոց էին անցել: Նույն Մարատ Հալաջյանը պատերազմի մասնակից էր... Սոս Մայիլյանը, Ջոն Հակոբյանը: Ես շատ երիտասարդ էի, իմ հանդեպ վերաբերմունքը շատ ներողամիտ էր, օգնում էին, մանավանդ կանայք՝ Վերա Հակոբյանը, Հրաչուհի Ջինանյանը: Նաև քաջալերում էին: Ունեինք գեղարվեստական ղեկավար՝ եթե չեմ սխալվում՝ Եղիշե Հովհաննիսյան: Շատ բծախնդիր մարդ էր: Ինքն, իհարկե, խոսքի վարպետ չէր, բայց շատ լավ գիտեր արվեստը, գրականությունը և կարողանում էր շատ լավ ղեկավարել: Ամեն հաղորդման վրա վերլուծական, լաբորատոր աշխատանք էր կատարում: Դա շատ կարևոր բան էր: Եվ երիտասարդները՝ ես, Սուրեն Պետրոսյանը, Կիմա Մուրադյանը, Կատյա Էլբակյանը, փորձ էինք ստանում: Նրանք ինչ էին անում՝ ավագ գործընկերոջը կցում էին փորձառուներին:

Մարատ Հալաջյան

«Ավելի ուշ՝ 1958թ-ի օգոստոսի 4-ին, Կոմիտեի նախագահ Լևոն Բաբայանի հրամանով որոշվում է՝ պետական կոմիտեին կից ստեղծել հաղորդավարների որակավորման հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1. Մարատ Հալաջյան- նախագահ
2. Հրաչուհի Ջինանյան
3. Թամարա Գալստյան
4. Հայկուհի Գարագաշ
5. Գարուշ Խաժակյան»

Ֆ.191, ց.2, գ. 50

«Կարևոր տեղ էր տրվում նաև ռադիոյի և հեռուստատեսության ծրագրերի հրատարակմանը: Հաշվի առնելով, որ այդ ծրագրերը հրատարակվում էին ցածրորակ թղթի վրա և մեկ գույնով, ինչն էականորեն ազդում էր վաճառքի վրա, կոմիտեն որոշում է տպագրումը

դարձնել գունավոր և հարուստ իլյուստրացիայով»:

Ֆ.191, g.2, գ.50 15.09.1958

1950-60-ական թթ. վերջնականապես ձևավորվեց Ռադիոյի մանկապատանեկան հաղորդումների խմբագրությունը, որն սկսեց հաղորդումներ պատրաստել բոլոր տարիքային խմբերի երեխաների համար: 1954 թ. սեպտեմբերի 1-ին հիմնադրվեց «Կարմիր աստղիկ» (այժմ՝ «Պստիկաշեն») հաղորդումն ամենափոքրերի համար: 1964 թ. հունվարի 13-ից եթեր հեռարձակվեց «Բարի գիշեր, երեխաներ» հաղորդաշարը: Այս խմբագրության հաջողություններին իրենց արժանի ավանդն ունեցան խմբագիրներ Գագիկ Բաղալյանը, Ռուբեն Ղասաբյանը, Ռուբեն Քանանյանը, Էլեոնորա Գրիգորյանը, Գոհար Մարտիկյանը, Մարինե Խաչկալյանը, Մարուսյա Սարգսյանը և այլք:

Խմբագրության բոլոր հաղորդումներն ունեին մշտական, կայուն լսարան, որի պահանջմունքները հաշվի առնելով էլ պատրաստվում էին ամենօրյա մանկական ռադիոհաղորդումները: Եթեր էին հեռարձակում տասնյակ ռադիոհանդեսներ ու հաղորդաշարեր: «Հասակակիցներ» ռադիոհանդեսը, որի ունկնդիրները բարձր դասարանցիներն էին, եթերում հնչում էր յուրաքանչյուր հինգշաբթի: «Կարմիր աստղիկ» (այժմ՝ «Պստիկաշեն») ռադիոհանդեսը ցածր դասարանցիների համար, հնչում էր շաբաթը մեկ անգամ: Մանկապատանեկան հաղորդումների խմբագրությունը տարբեր տարիքային խմբերի համար պատրաստում էր նաև երեք գրական հաղորդում՝ «Գեղարվեստի սրահ», «Գրական հերոսների աշխարհում», «Մանկական ռադիոթատրոն» խորագրերով:

Նախադպրոցականների համար յուրաքանչյուր ուրբաթ ռադիոյով հնչում էին բանաստեղծություններ, զրույցներ, պատմվածքներ ու հեքիաթներ: Գործում էին նաև «Պատկերազարդ գրքեր» և «Մանուկները խոսափողի մոտ» շարքերը: Իսկ ամեն օր, ժամը 21.00-ին փոքրիկների համար տրվում էր «Բարի գիշեր, երեխաներ» հաղորդումը, որի հերոսներն էին Երազիկն ու Ննջիկը /հաղորդումը երկար տարիներ վարում էին դերասաններ Մարգո Մուրադյանն ու Վեհմիր Խաչիկյանը/:

Խմբագրության երաժշտական հաղորդումներն էին «Երաժշտական օրացույցը», «Ճամփորդություն ձայնադարանում», «Հեքիաթը երաժշտության մեջ», «Ստուդիայում են երաժշտական դպրոցի սաները»,

«Երաժշտական գործիքների աշխարհում», «Հայ կոմպոզիտորների դիմանկարները» շարքերը, համերգներ, ռեպորտաժներ, որոնք հաղորդվում էին ամեն օր, իսկ շաբաթ և կիրակի օրերին կրկնվում:

Երեխաների հետ աշխատող լրագրողները մեծ նշանակություն էին տալիս նաև գիտահանրամատչելի հաղորդումներին: Ամեն շաբաթ եթեր էին հեռարձակվում «Ձեր դասագրքի էջերից», «Բնության արահետներով», «Գիտելիքների խաչմերուկներում» ռադիոհանդեսները: Ռադիոյի մանկապատանեկան հաղորդումների շուրջ համախմբված էր հանրապետության լավագույն գիտնականների, գրականագետների, մանկավարժների, ուսուցիչների և շնորհալի լրագրողների մի մեծ խումբ, որը կարևոր դեր ուներ մանկական ռադիոհաղորդումների որակի բարձրացման, երեխաների համար գրավիչ և օգտակար հաղորդումներ կազմակերպելու գործում:

«1951թ-ին մանկական հաղորդումների խմբագրության մանկավարժա-գեղարվեստական սեկցիայի կազմում են եղել բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, Լուսավորության նախարարությունից Սուրեն Օհանյանը, կոմպոզիտորներ Ազատ Մանուկյանն ու Լյուսյա Սաֆարյանը, «Պիոներ կանչ» թերթի պատասխանատու՝ Սարգիս Մնացականյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Մարտին Կասյանը, Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Հրանուշ Նազարյանը, մանկագիր Հայրապետ Հայրապետյանը»:

ՀԱԱ,Ֆ.113,ց.47,գ.783,թ.15

Արևիկ Ավագյան, *լրագրող, խմբագիր*

Այն ժամանակ՝ 1950-ականներին, խմբագիրը Շահեն Թաթիկյանն էր, Հեղուշ Տիգրանյանը մի պահ եղավ: Մանկական խմբագրությունում ես և՛ փոքրիկների համար էի հաղորդում պատրաստում, և՛ բարձր դասարանցիների համար՝ արդեն լուրջ հաղորդումներ: Փոքրիկների համար «Հանելուկ պապիկ»-ն էինք տալիս, աշխատում էինք փոքրիկ, մատչելի ճշմարտություններ երեխաներին սովորեցնել: Ինձ համար առաջնային խնդիրը եղել է ինչ-որ բան տալ երեխային, ոչ թե ծռթի-փռթի բաներ: Այն

ժամանակ ընդունված էին մակերեսային ինչ-որ բաներ: Ես միշտ ձգտել եմ խուսափել, և Շահեն Թաթիկյանն էլ էր գնում այդ խելացի ուղղությամբ: Ինձ թվում է՝ հաջողացրել եմ: Հոգով, մարմնով ես մանկական հաղորդումներին էի նվիրվել: Հեռուստատեսություն դեռ չկար, չէր ներխուժել մեր կյանք և ամենահետաքրքիր բանը ռադիոն էր: Ես զարմանում էի, թե ինչքա՜ն նամակներ էինք ստանում: Հետո մենք գնում էինք գյուղերը. այդ ժամանակ սարքավորումներ չկային, մեքենայի մեջ դնում էինք հաղորդման հսկա դինամիկներն ու գնում էինք Ապարան, Բայազետ: Խնդրում էինք երեխաներին նախօրոր պատրաստվեն: Որ շրջաններից նամակները շատ էին լինում, մեզ պարտք էինք համարում գնալ:

Կատյա Էլբակյան, *ռադիոհաղորդավար*

Շատ հաղորդումներ եմ վարել՝ տարբեր բնույթի, բովանդակության: Հետո արդեն «Վաղորդյան զանգակներ»՝ գրական-երաժշտական հաղորդում էր դա: Ես շատ մեծ հաճույքով էի կարդում... մենք Կառլեն Գևորգյան ունեինք, խմբագիր էր... պատրաստում էր «Գիտելիքների խաչմերուկներում» հաղորդաշարը: Գիտե՞ք, դա երեխաների համար ի՞նչ մատչելի հաղորդում էր: Ինչքա՜ն բան էր տալիս նրանց: Չեք պատկերացնի, թե ինչքան նամակներ, ինչքան արձագանքներ ունեինք հաղորդումից: Ունկնդրի ջերմությունն էր մեզ ստիպում, որ մենք այդ հաղորդումը լավը դարձնենք: Եվ ջերմությունը շա՜տ-շա՜տ էր, շա՜տ: Արձագանքը շատ էր: Ինձ մանկական խմբագրությունն անընդհատ կանչում էր՝ Կատյա՛ արի, նամակ ունես:

Ստացված նամակներից և ոչ մեկն անպատասխան չէր մնում: Դրանց արձագանքում էին գրեթե բոլոր ռադիոհանդեսներում, ինչպես օրինակ՝ «Հազար հարց, հազար պատասխան», «Երաժշտական արկղիկ», «Երաժշտական վիկտորինա», «Ստեղծագործում են հասակակիցները», «Հմուտների և հնարամիտների ակումբ», «Ուզում



Մրցանակներ և նամակներ
Հանրային ռադիոյի մանկապատանեկան բաժնի արխիվ

եմ ամեն ինչ իմանալ» ռադիոհանդեսներն ու հաղորդաշարերը:

Դպրոցականներին խմբագրության հետ կապելու միջոց էին նաև նրանց հաճախակի ելույթները ռադիոյով, ստուդիա հրավիրելը, խրախուսելը:

Արդեն 1960-ականների սկզբներին ՀՌ-ն ուներ ութ գլխավոր խմբագրություն: Դրանք էին՝

ա/ Հասարակական-քաղաքական հաղորդումների գլխավոր խմբագրություն:

բ/ Էկոնոմիկայի և գյուղատնտեսության հաղորդումների գլխավոր խմբագրություն:

գ/ Լրատվության և ազգային լեզվով տրվող հաղորդումների գլխավոր խմբագրություն:

դ/ Երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագրություն:

ե/ Արտասահմանյան հաղորդումների գլխավոր խմբագրություն:

զ/ Գրական-դրամատիկական հաղորդումների գլխավոր խմբագրություն:

է/ Մանկապատանեկան հաղորդումների գլխավոր խմբագրություն:

ը/ Երիտասարդական հաղորդումների գլխավոր խմբագրություն:

1960-ական թթ. ՀՌ-ն կայացած կառույց էր՝ իր խմբագրություններով, բաժիններով, չորս տասնյակից ավելի բազմաժանր ու բազմաթեմատիկ

ստեղծագործական և մասնագիտական հաղորդաշարերով ու ծրագրերով, հատկապես, երգիծական բնույթի մանրապատումներով, որը պատմության մեջ մտավ «Հայկական ռադիոյի անեկդոտներ» անունով՝ միջազգային ճանաչման արժանացնելով ՀՌ - ին:

ՀՌ-ն ուներ այն ժամանակվա նորագույն տեխնիկայով հագեցված ռադիոստուդիաներ ու տաղավարներ, եթեր էր հեռարձակվում 38 ժամ ընդհանուր տևողությամբ երեք ծրագիր: Ունենալով այսպիսի տեխնիկական և ստեղծագործական հնարավորություններ՝ ՀՌ-ն դարձավ հանրապետության զանգվածային լրատվության միջոցների բաղկացուցիչ մասերից մեկը՝ իրականացնելով իր հնարավորություններից բխող գործառույթներ ու առաջադրանքներ:

Գրական-դրամատիկական հաղորդումների խմբագրություն. Վերևի շարքում ձախից աջ՝Վահան Արամունի,Գուրգեն Շահնազ,Կլարա Թերզյան Երկրորդ շարքում՝Հրաչուհի Ջինանյան,հայագետ Վիկտոր Կոչևսկի, Հակոբ Այվազյան (ռադիոյի նախագահ),Ժաննա Տեր-Հովհաննիսյան (1962թ.)

5. ՀՌ-Ն ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Նկարահանումներ ռադիոյում (1970-ականներ)

Այս ժամանակաշրջանը բավականին տարաբնույթ ու իրարամերժ էր ՀՌ-ի համար: Պատճառներից մեկն էլ ամբողջ աշխարհում հեռուստատեսության բուռն աճն էր, որն աստիճանաբար ռադիոյին սկսեց դուրս մղել վերլուծական և զվարճալի հաղորդումներ պատրաստելու և հեռարձակելու դաշտից: Նրանից խլելով հաղորդումներ հեռարձակելու եթերային լավագույն ժամերն ու զանգվածային լսարանի գերակշիռ մասը՝ հեռուստատեսությունը ռադիոյին հյուրասենյակից «տեղափոխեց» խոհանոց: Այդ տարիներին ամբողջ աշխարհում միտում էր նկատվում և օրակարգի հարց էր դարձել ռադիոյի լինել-չլինելը: Նույնիսկ մի շարք հայրենական և արտասահմանյան խոշոր տեսաբաններ համակերպվում էին այն տեսակետի հետ, թե իբր ռադիոն չի կարող մրցակից լինել հեռուստատեսությանը և շատ շուտով կուլ կգնա նրան: Հիմք ընդունելով տարածված մտայնությունները՝ մի շարք երկրներում, այդ թվում՝ նաև Հայաստանում, զանգվածային լրատվական էլեկտրոնային միջոցներից առավելությունը տալիս էին հեռուստատեսությանը: Նույնիսկ հարց էր դրված՝ արդյոք անհրաժեշտ է մեզ ռադիոն, երբ հեռուստատեսությունն ավելի արդյունավետ և «տեսանելի» կարող է լսարանին տեղյակ պահել և իրազեկել ցանկացած լրատվության, հեռուստադիտողին հեռուստաէկրանի միջոցով ականատես դարձնել կատարվող դեպքերի ընթացքին, որը կօգնի

նրան հանգելու համապատասխան հետևության և եզրակացության:[96]

Ռադիոն իրեն բնորոշ առանձնահատկություններով ու յուրահատկություններով, իսկապես, դժվարությամբ էր մրցակցում նորաստեղծ հեռուստատեսության հետ՝ աստիճանաբար կորցնելով իր լսարանի մեծ մասը, իսկ հեռուստատեսությունն իր տեսամատուցմամբ, լրատվությանը հաղորդակից դարձնելու հնարավորությամբ ու ներազդման ուժի շնորհիվ ավելի մեծ լսարան էր հավաքում՝ դառնալով միլիոնավոր մարդկանց կենցաղի անբաժանելի մասը:

Այդ տարիներին հեռուստատեսության ամրապնդման իրողությունն արձանագրեց նաև նախկին Խորհրդային Միության ղեկավարությունը, որի 1970 թ. դեկտեմբերի 3-ի հրամանագրով ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահության ռադիոհաղորդումների ու հեռուստատեսության պետական կոմիտեն վերանվանեց Միութենական հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտե: Ըստ այդ հրամանագրի՝ Հայաստանի ռադիոկոմիտեն վերանվանվեց Հայաստանի հեռուստառադիոյի պետական կոմիտե:

Այս պատմական դեպքերի ժամանակաշրջանում էլ ձևավորվեց հանրապետական նոր հեռուստառադիոկոմիտեն, որը որոշում ընդունեց միավորելու Հեռուստատեսության և Ռադիոյի նույնատիպ խմբագրությունները՝ նախապատվությունը տալով հեռուստահաղորդումների խմբագրություններին: Հանրապետական հեռուստառադիոկոմիտեի այն ժամանակվա ղեկավարությունը այս քայլով փորձեց ամրապնդել հեռուստատեսության դիրքերը, նույնիսկ ռադիոյի երկար տարիների փորձ ունեցող մեծ թվով լրագրողների ու խմբագիրների ընդգրկեց հեռուստահաղորդումների պատրաստման գործում: Այս «նորամուծության» շնորհիվ հանրապետական հեռուստատեսությունը, իսկապես, մեծ վերելք ապրեց, նախկին ռադիոլրագրողների ջանքերով հիմնվեցին բազմաթիվ նոր հաղորդաշարեր ու ծրագրեր, կայունացավ հեռուստատեսության ստեղծագործական կազմը, նախադրյալներ ստեղծվեցին վարպետության աճի և որակյալ հաղորդումների պատրաստման ու հեռարձակման համար: Այս քայլը, ցավոք, ծանր

96 Муратов А., Телевидение или радио, Москва, Телевидение вчера, сегодня, завтра, 1974, с. 87.

ազդեցություն թողեց ռադիոհաղորդումների հետագա զարգացման, պատրաստման ու հեռարձակման վրա, աստիճանաբար խամրեցին 1950-60-ական թվականներին ձեռք բերված հաջողությունները, որակյալ ռադիոլրագրողների պակասը հնարավորություն չտվեց հիմնելու նոր հաղորդաշարեր ու թարմացնել հները, միառժամանակ ռադիոհաղորդումների պատրաստումը հեռուստառադիոպետկոմում պատշաճ մակարդակի վրա չգտնվեց: Պարզվեց, որ «վերևից» իջեցված այդ հապճեպ որոշումը ոչ միայն ծանր դրության մեջ էր դրել Հայաստանի ՀՌ-ին, այլև նախկին ԽՍՀՄ-ի միութենական հանրապետությունների ռադիոկայաններին ևս: Առաջինը «կենտրոնի» այդ որոշմանն ընդդիմացան մերձբալթյան երկրների ռադիոկոմիտեները, որոնք երկու տարի անց անջատեցին հեռուստախմբագրությունները ռադիոխմբագրություններից՝ ինքնուրույն տնօրինելով ռադիոխմբագրությունների ամենօրյա աշխատանքը:

Հայաստանի նորաստեղծ հեռուստառադիոպետկոմը, չընդդիմանալով այդ որոշմանը, մինչև 1987 թ. անփոփոխ թողեց այդ կառուցվածքային ձևը՝ առաջնությունը տալով հեռուստատեսությանը:

Սակայն ժամանակը ցույց տվեց այդ թյուր մոտեցման սնանկությունը և երկու էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցներից որևէ մեկին առաջնություն տալու անթույլատրելիությունը:

Արդեն 1970-ական թվականների կեսերին ողջ աշխարհում ռադիոն նորից վերագտավ իր տեղը զանգվածային լրատվամիջոցների համակարգում և սկսեց ոչ թե մրցակցել հեռուստատեսության և մամուլի հետ, այլ տեխնիկական հնարավորություններով փոխհամագործակցել ու լրացնել նրանց:

ՀՌ-ի խմբագրություններից, հատկապես Սփյուռքի և արտասահմանի համար տրվող հաղորդումների գլխավոր խմբագրությունը ոչ միայն չփոքրացրեց իր հաղորդման ծավալները, այլև ընդառաջելով սփյուռքահայերի խնդրանքներին՝ ավելացրեց հեռարձակվող հաղորդումների ծավալը՝ ընդգրկելով հեռարձակման նոր շրջաններ: 1970-80-ական թվականներն իրավամբ կարելի է համարել Սփյուռքի և արտասահմանի համար տրվող հաղորդումների բարգավաճման շրջան: Ամեն տարի միայն Սփյուռքի տարբեր

Ուրուգվայի հայկական ռադիոկայանի տնօրեն Հարություն Ռուբինյանը զրուցում է երաժիշտ Հակոբ Պալապանյանի հետ, որը նոր է վերադարձել Հայաստանից և ձայնագրություններ է նվիրում «Ռադիո Արմենիային» (1970 թ.)

գաղթօջախներից ՀՌ-ն ստանում էր տարեկան 20 հազարից ավելի նամակ ու բացիկ, հատկապես երիտասարդ սփյուռքահայերից, որոնց համար խմբագրությունը պատրաստում էր հասցեագրված հաղորդումներ: Եթեր էր տրվում հանրամատչելի, հետաքրքիր, ժամանակի ոգուն համահունչ թեմաներ: Ռադիոլրագրողները հաշվի էին առնում սփյուռքահայ երիտասարդության հետաքրքրությունները:

Ձախից՝
Սարգիս Մուրադյան
Ստեփան Պողոսյան
Սոս Սարգսյան

Ձախից՝
Ստեփան Պողոսյան
Ռոբերտ Արզումանյան
Վլադիմիր Խաչատուրով

Ստեփան Պողոսյան

Հատկանշական է այդ առթիվ ներկայացնել 1972 թ-ին ՀՍՍՀ նախարարների խորհրդին և ՍՍՀՄ նախարարների խորհրդին առընթեր Ռադիոհեռարձակման և հեռուստատեսության պետական կոմիտեի նախագահ Ստեփան Պողոսյանի նամակը ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա.Ե.Քոչինյանին.

«Ընկ. Ա. Քոչինյանին
Եվրոպայի հայության, հատկապես ֆրանսահայության հայրենասիրական կազմակերպությունները և ռադիոլսողների մի շարք անդամներ խնդրել են իրենց համար ամենօրյա ռադիոհաղորդումներ տալ: Պոլսահայերը նույնպես դիմել են այդպիսի խնդրանքով: ՌՎ-574 կայանը, որը գտնվում է հանրապետությունում և օգտագործվում է հանրապետական հաղորդումների համար, ամեն օր ժ. 1.30-ից մինչև 2.00-ն ազատ է :
Նկատի ունենալով վերոհիշյալը, սկսած 1970 թվի վերջերից ՀԿԿ կենտկոմի ինֆորմացիայի և միջազգային կապերի բաժնի գիտությամբ,օրական կես ժամ տևողությամբ փորձնական հաղորդումներ ենք տալիս Կ.Պոլսի և Եվրոպայի հայության համար:
Խնդրում ենք ՀԿԿ Կենտկոմի համապատասխան որոշումը այդ հաղորդումները պլանավորված ծավալի մեջ մտցնելու համար»:
Պետական կեմիտեի նախագահ՝ Ս. Պողոսյան

Ֆ.191, ց.7, գ.23 31.05.1972

Սփյուռքի և արտասահմանի համար տրվող հաղորդումների աշխատանքը կանոնակարգելու և առավել նպատակային դարձնելու համար Հանրապետական հեռուստառադիոյի պետական կոմիտեի նախագահը, դիմելով տարբեր կազմակերպություններին, որոնք սերտորեն առնչվում էին սփյուռքի գաղթօջախների հետ, խնդրում է գործուն աջակցություն ցուցաբերել նոր տեխնիկայի ձեռքբերման հարցով:

Ֆ.191, ց.7, գ.24 16.02.1972

Ռադիոհաղորդումների պետական կոմիտեն, նկատի ունենալով Ֆրանսիայում և Իրանում բնակվող հայ ազգաբնակչության լայն խավերի քաղաքական ակտիվությունը, Սովետական Հայաստանի և ամբողջ Սովետական Միության նկատմամբ նրա աճող հետաքրքրությունը և սովետական իրականության պրոպագանդման գաղափարական-քաղաքական նշանակությունը, նպատակահարմար է համարում, իր տրամադրության տակ գտնվող ռադիոկայաններով սկսել նոր հաղորդումներ:

Ֆ.191, g.7, գ.23 16.02.1972.

Հանրապետության ղեկավարությունը, նույնպես աջակցելով Պետական կոմիտեի նախաձեռնությանը, դիմում է Կենտրոնին՝ խնդրելով նոր հաճախականություններ տրամադրել Սփյուռքահայ լսարանի պահանջները բավարարելու համար:

ֆ.191, g.7, գ.19 5.05.1972

Ստեփան Պողոսյանը միութենական կենտրոնից թույլտվություն է խնդրում հեռուստառադիո, երաժշտական և գեղարվեստական ստեղծագործությունների արտադրանք կազմակերպելու և այն նաև արտասահման առաքելու համար:

Պետք է նշենք, որ Ս.Պողոսյանի դիվանագիտական փայլուն հնարքը հասավ իր նպատակակետին և որոշ ժամանակ անց իրագործվեց:

ՀԱԱ,ֆ.113, g.181, գ.385, թթ.30-32 *16.02 .1983*

Արդեն 1970-ականների վերջին ռադիոն նոր ծաղկում ապրեց՝ ընդարձակելով ոչ միայն հեռարձակման շառավիղը, այլև մեծապես ավելացնելով ռադիոունկնդիրների թիվը ողջ աշխարհում: Սրան նպաստեց այդ տարիներին արտասահմանյան զարգացած երկրներում և ԽՍՀՄ-ում մեծ տարածում գտած ռադիոտրանզիստորների արտադրությունը: Այսպիսով, մեկ անգամ ևս փաստեցինք, որ

զանգվածային լրատվամիջոցները իրենցից ներկայացնում են մի միասնական նվագախումբ, որտեղ «յուրաքանչյուր գործիք, արդյունավետության շահերից ելնելով, կատարելապես է հնչում և հնչում է իրեն հատուկ լեզվով»:[97]

ՀՌ հաղորդումների արդյունավետությունը կրկին բարձրացավ: Երկարատև պայքարից հետո ռադիոն կարողացավ հեռուստատեսությունից վերանվաճել լսարանի զգալի մասը, հստակեցրեց խմբագրությունների աշխատանքային ռիթմը՝ գլխավոր շեշտը դնելով հասցեագրված, կայուն լսարան ունեցող ծրագրերի և հաղորդաշարերի վրա:

Ռադիոյում փոն է. Սարոյանն է հյուր եկել (1976թ)

Ռադիոհաղորդումների և Հեռուստատեսության պետական կոմիտեն համագործակցում և ռադիոծրագրեր էր փոխանակում մյուս հանրապետությունների կոմիտեների հետ:

«Նոյեմբերի 27-ի ամբողջ օրվա եթերային ծրագրերը նվիրված էին Հայկական ՍՍՀ-ի և Հայաստանի կոմկուսի

97 Хелемендик В., Союз пера, микрофона и телекамеры, Москва, 1977, с. 99.

կազմավորման 50 - ամյակին: «Վերջին նորություններ»-ը և «Մայակ»-ը ողջ օրը նորություններ էին հաղորդում հոբելյանական տոնակատարությունների մասին՝ մանրամասներ ներկայացնելով, այդ առթիվ, Հայաստանի մայրաքաղաք ժամանած ՍՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Լ.Ի.Բրեժնևի զեկույցներից: Ռեպորտաժներում անդրադառնում էին նաև միութենական հանրապետությունների, Մոսկվայի և Լենինգրադի ներկայացուցչական խմբերի այցելություններին:
Հայաստանի ռադիոն ներկայացրեց «Հանրապետության սիրտը» ռադիոկոմպոզիցիան՝ նվիրված Երևանին: Երաժշտական հաղորդումները ռադիոլսողներին ծանոթացնում էին հայկական ժողովրդական երաժշտությանը, հայ երաժիշտների նոր ստեղծագործություններին, Հայաստանի ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի նոր ու հետաքրքիր կատարումներին»:

1980-ականների սկզբներին ՀՌ-ի խմբագրություններն ստեղծեցին թվով քիչ, բայց որակյալ նոր ռադիոհաղորդումներ:

Այս ժամանակաշրջանում իր արդյունավետ աշխատանքով աչքի ընկավ, հատկապես, երիտասարդության համար հաղորդումներ պատրաստող գլխավոր խմբագրությունը, որը շարունակելով 1960-ական թվականների ավանդույթները հիմնեց նոր հաղորդաշարեր ու ծրագրեր: Նոր հիմնադրածներից աչքի էր ընկնում «Մեծերի երիտասարդությունը» հաղորդաշարը, որն անդրադառնում էր մեր անվանի գրողների ու բանաստեղծների երիտասարդ տարիներին:

Սարգիս Նաջարյան, *ռադիոհաղորդավար*

Ժաննա Ամիրջանյանը երիտասարդական հաղորդումների գլխավոր խմբագրության ռեժիսորն էր: Հանրաճանաչ Խորեն Աբրահամյանի հետ ունեինք «Սև աչեր» կոմպոզիցիան, որն ինքն էր ձայնագրել՝ ինչքան էլ լսես, կլսես ու հաճույք կստանաս:

Մի օր ասացին՝ Ժաննան այդ ջահել, նոր ընդունված

տղային է կանչում՝ Սարգիս, բարձրացիր վերև՝ «երիտասարդականի» ստուդիա: Ուզում էր ինձ հետ ծանոթանալ: Ասել էին, որ ես գրական-գեղարվեստական նյութեր եմ կարդում: Դե, երիտասարդականն էլ գրական էջեր ուներ: Եվ այդ օրն ինձ համար ճակատագրական եղավ նաև Կիմա Դավթյանի իմաստով, որովհետև նա էլ Արտասահմանի համար տրվող հաղորդումների բաժնի ռեժիսորն էր:



Յուրի Լևիտանը հյուր է ռադիոյում.
Վերևի շարքում ձախից՝ Հ.Փարիկյան,Է.Մանուկյան,Ս.Նաջարյան,Ջ.Հակոբյան
Ներքևի շարքում ձախից՝ Վ.Հակոբյան,Յու.Լևիտան,Գ.Առաքելյան (1977թ.)

Ներս մտա, ասաց՝ բարև ձեզ: Դե, լսել էի ռադիոյով իրեն, կարդացածը հրաշք ու գեղեցիկ էր, ներսում էլ՝ քնարական էր: Ինձ ասաց՝ որևէ բան կարդալ գիտե՞ք:
Ես այն ժամանակվա սիրուն, «խուճուճներով» ընդունված հայերենով ասացի՝ տեքստ տվեք կարդամ: Ասաց՝ դե, մտեք ստուդիա, այնտեղ նյութ է դրված, ընտրեք, մի բան կարդացե՛ք, ես ձեզ ուզում եմ լսել /այսպես ռադիոյում ամեն օր մի նոր կերպարի հետ էի ծանոթանում՝ խմբագիրներ

և այլն/: Ասաց՝ լավ էր, բայց ձեզ հետ պետք է պարապել, ռադիոյում համապատասխան արտահայտչաձևեր կան, ձայնդ պետք է փոխել՝ պոեզիան կրծքային ձայն է ուզում: Ասաց՝ ես քեզ հետ կպարապեմ:

Հաշվի առնելով երիտասարդական լսարանի մեծությունը, նամակներում բարձրացված հարցերի արդիականությունն ու հասարակական հնչեղությունը՝ խմբագրությունը հիմնեց նաև «Քո կարծիքը, երիտասա՛րդ» հաղորդաշարը, որն անդրադառնում էր հանրապետության հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կենցաղային, մշակութային ու մարզական հիմնախնդիրներին: Հաղորդաշարի երիտասարդ լրագրողները, նամակների հիման վրա, բանավեճի էին հրավիրում մասնագիտության ընտրության, ընտանիքի, ամուսնության, հանգստի, աշխատանքի, զավակ-ծնող փոխհարաբերության և այլ թեմաների շուրջ: Հաղորդումն ավելի արդյունավետ կազմակերպելու համար հեղինակները ստուդիա էին հրավիրում հանրապետության ճանաչված հոգեբանների, մանկավարժների, ավագ սերնդի ներկայացուցիչների:

Նկատի ունենալով երիտասարդական լսարանի լրատվական և գեղագիտական պահանջները՝ հանրապետական հեռուստառադիոկոմիտեն ևս մեկ հարցում ընդառաջեց խմբագրությանն ու ավելացրեց երիտասարդական հաղորդումների եթերաժամերը, մի շարք մշտական հաղորդաշարեր, ինչպես, օրինակ՝ «Քո ժամանակակիցը», «Ուսանողական միջօրեականներում», «Ջահել ալիքը» դարձան մեկժամանոց:

Խմբագրությունը 1970-ական թվականներին պարբերաբար հաղթող էր ճանաչվում «լավագույն ստեղծագործական կոլեկտիվ» մրցությունում՝ հաճախակի նվաճելով ներկոմիտեական փոխանցիկ դրոշը:

Խմբագրությանը հաջողվեց պահպանել կայուն լսարան ունեցող ռադիոհանդեսները՝ աշխատող և ուսանող երիտասարդության համար: Նշված երիտասարդական հաղորդումները ոչ միայն բազմաթեմատիկ էին, այլև բազմաժանր: Իսկ ամենալսելի հաղորդաշարերից «Գիտելիքների աշխարհում» ռադիոհանդեսը մեծ մասամբ կազմված էր գիտահանրամատչելի զրույցներից, ռադիոռեպորտաժներից, որոնք

պատմում էին գիտության տարբեր բնագավառներում վերջին տարիներին տեղի ունեցած նոր հայտնագործությունների ու նվաճումների մասին:

Նորքի խլացուցիչները
Քչերը գիտեին, որ սրանցով էին խլացնում արտասահմանից հեռարձակվող «անցանկալի» հաղորդումները

1970-ական թթ. իր աչալուրջ գործունեությունն էր ծավալում նաև Գլավլիտը, որը մեծացրել էր վերահսկողությունը ոչ միայն ռադիոյով հեռարձակվող նյութերի,այլ ընդհանրապես ամբողջ մամուլի աշխատանքի վրա: «Գաղտնի», բայց արդեն գաղտնազերծված փաստաթղթերը վկայում են, որ խմբագրություններին կցված հատուկ աշխատակիցներն ուշի- ուշով ստուգում էին հանրությանը ներկայացվող տեքստերը, իսկ բացթողումների դեպքում արժանանում Գլխավոր վարչության խիստ գնահատականներին:

Ֆ.1254, g.7, գ.6, թ.8 1975 թ. Ֆ.1254, g.7, գ.11, թ.4 1976

Հանրապետության ռադիոլսարանը մեծ աշխուժությամբ ընդունեց 1970-ական թվականների սկզբներին մարզական հաղորդումների հիմնումը, որը համընկավ «Արարատ» ֆուտբոլային թիմի մարզական հաջողություններին: Ռադիոյի մարզական հաղորդումների խմբագրությունը նախկին Խորհրդային Միության տարբեր քաղաքներից պարբերաբար ռադիոռեպորտաժներ էր կազմակերպում սիրված թիմի մասնակցությամբ հանրապետության ֆուտբոլասեր

ռադիոունկնդիրների համար: Բացի ֆուտբոլային ռադիոռեպորտաժների հեռարձակումից խմբագրությունը օպերատիվ արձագանքում էր նաև հանրապետական և միջազգային մրցահարթակներում հայ մարզիկների մասնակցությամբ մրցաշարերին՝ տարեգրի վկայությամբ արձանագրելով մեր մարզիկների հաղթանակները: Այդ ելույթները լավագույնս լուսաբանելու համար ռադիոլրագրողները հաճախակի մեկնում էին մրցավայր՝ լսարանին թարմ լրատվություն հաղորդելու նրանց ելույթների մասին:

Իսկ ռադիոյի մյուս խմբագրությունների աշխատանքը 1970-80-ականների սկզբներին մի տեսակ ստվերում մնաց հեռուստատեսության նույնատիպ հաղորդումների համեմատ, չնայած եղան նաև մասնակի հաջողություններ:

«Ծիածան»-ի հիմնադիրն ու առաջին խմբագիրն էր Արմեն Հովհաննիսյանը Միշտ ժամանակի հետ և ժամանակից առաջ (1973թ)

Այդ տարիներին կարևոր իրադարձություն էր «Ծիածան» ռադիոկայանի հիմնումը, որի առաջին հաղորդումը եթեր տրվեց ռադիոյի օրվա կապակցությամբ 1973 թ-ի մայիսի 7-ին:

Ֆ.191, g.7, գ. 25, 11.04.1973

Այդ փաստը մեկ անգամ ևս հաստատեց, որ ռադիոն ոչ թե «հանգչում» է, ինչպես հավաստում էին որոշ տեսաբաններ, այլ ունի զարգացման մեծ հեռանկարներ: Նորաբաց ռադիոկայանի հիմնադիրն ու առաջին խմբագիրն էր հայտնի ռադիոլրագրող և հրապարակախոս Արմեն Հովհաննիսյանը:

Ռադիոկայանը հիմնադրվել էր երաժշտություն+լրատվություն

ձևաչափով, որը նորություն էր այդ տարիներին նախկին ԽՍՀՄ-ում, սակայն վաղուց կայացած կառույց էր արտասահմանյան շատ երկրներում: «Ծիածան» ռադիոկայանը ստեղծագործական աշխատանքը կազմակերպում էր մոսկովյան «Մայակ» ռադիոկայանի օրինակով՝ երաժշտական հաղորդումները քսանհինգ րոպեն մեկ ընդմիջելով օպերատիվ լրատվական թողարկումներով: Բացի ընդունված ֆորմատից, ռադիոկայանն ուներ նաև թեմատիկ ծրագրեր, որոնցով լուսաբանվում էր որևէ կոնկրետ բնագավառ կամ ուղղություն:Հաղորդումները եթեր էին հեռարձակվում ժամը 17.00-24.00-ը: Ռադիոկայանի հիմնադրումով մասնակի կառուցվածքային փոփոխություններ կատարվեցին նաև ՀՌ հաղորդումների հեռարձակման եթերացանցում: Իր օպերատիվ լրատվական թողարկումներում «Ծիածան»-ը ռադիոունկնդրին տեղյակ էր պահում հանրապետությունում և արտասահմանում տեղի ունեցող կարևոր դեպքերի, փաստերի և իրադարձությունների մասին: Ուներ խորագրերի, լուրերի թողարկման և երաժշտական ծրագրերի հեռարձակման կայուն ցանց, որն ամփոփված էր կեսժամանոց ծրագիր-հաղորդումներում: «Ծիածան»-ի հաղորդումները բացվում էին օպերատիվ լուրերի հինգրոպեանոց թողարկումներով, իսկ մնացած քսանհինգ րոպեներին հնչում էին երաժշտական տարբեր համարներ և կատարումներ: Հաջորդ տարիներին ռադիոկայանն ընդլայնեց ռադիոհաղորդումների թեմատիկան և ուղղվածությունը՝ հաղորդացանցում ընդգրկելով նոր հաղորդաշարեր ու ծրագրեր, որոնցից էին՝ «Միութենական կյանքի օրագիրը», «Միջազգային կյանքի օրագիրը», «Ռեպորտաժ օրվա թեմաներով»-ը, «Մարզական լուրերը»:

Շուրջ երկու տասնամյակ «Ծիածան»-ը դարձել էր ռադիոունկնդիրների ամենասիրված կայաններից մեկը: 1990-ական թվականների կեսերին ՀՌ-ում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունների և Երևան քաղաքի լարային ցանցի անարդյունավետ օգտագործման պատճառով «Ծիածան»- ը լուծարվեց, իսկ ստեղծագործական կազմը միացվեց ՀՌ-ի առաջին ծրագրի համապատասխան խմբագրություններին:

Երկար դեգերումներից հետո՝ 1987 թ-ին, վերջապես միմյանցից

տարանջատվեցին հանրապետական հեռուստառադիոպետկոմի խմբագրությունները: Տարիներ հետո ուղղվեց 1970-ական թթ. թույլ տված սխալը: Ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները, ռադիոն ոչ միայն վերագտավ կորցրած դիրքերը, այլև վերակառուցման ժամանակաշրջանում հանրապետությունում հաճախակի դարձած արտակարգ իրավիճակի պայմաններում դրսևորեց բարձր օպերատիվություն և ամենահասություն, այդ ասպարեզում ցույց տալով իր գերակայությունը մյուս զանգվածային լրատվամիջոցների նկատմամբ, ոչ սովորական պայմաններում առաջինը արձագանքելով տեղի ունեցող իրադարձություններին ու դեպքերին՝ լսարանին հասցնելով օպերատիվ լրատվություն:

Անդրանիկ Չալգուշյան
Ռադիոյի երաժշտական հաղորդումների խմբագիր, «Ծիր կաթին» հաղորդաշարի հեղինակ

Հանդիպում Ռադիոտանը. Վիլյամ Սարոյան, Վահագն Դավթյան, Ստեփան Պողոսյան (1976 թ.)

Ամփոփելով այս ժամանակահատվածում ՀՌ-ի գործունեությունը, կարելի է փաստել, որ ստեղծված ոչ բարենպաստ պայմաններում

ՀՌ-ն կարողացավ պահպանել իր հիմնական ծրագրերն ու հաղորդաշարերը, չնայած որակական առումով մեծ մասն ինչ-որ տեղ խամրեց: Ռադիոխմբագրությունների միացումը հեռուստատեսության նույնատիպ խմբագրությունների հետ ժամանակավորապես ստվերեց Ռադիոյի ստեղծագործական աշխատանքը: Այդ տարիներին ամբողջ աշխարհում տեղի էր ունենում հեռուստատեսության հաղթարշավը, որը ռադիոյին ոչ միայն դուրս մղեց իր պատվավոր տեղից, այլև օրակարգի հարց դարձրեց ռադիոյի լինել-չլինելը: Սակայն ռադիոն բավականին արագ վերագտավ իր դերը զանգվածային լրատվամիջոցների համակարգում և սկսեց կատարել իրեն հատուկ, տեխնիկական հնարավորությունների վրա հիմնված ստեղծագործական և մասնագիտական գործառույթներ՝ ստեղծելով նախադրյալներ որակապես նոր տիպի հաղորդաշարերի և ծրագրերի համար:

Օֆելյա Ասատրյան- *Մշակութային հաղորդումների բաժնի ղեկավար, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ*

Ես շատ լավ եմ հիշում այդ տարիների լրագրողներին,խմբագիրներին, մարդկանց,ովքեր իրենց հետ տրամադրություն էին բերում Ռադիոտուն:1974 թ-ին Արմեն Հովհաննիսյանի առաջարկով ընդունվելով «Ծիածան» ռադիոկայանի «Վերջին լուրերի» խմբագրություն՝ երեք տարի անց, խմբագրությունների վերակառուցման առիթով, կարողացա տեղափոխվել նախասիրությանս ավելի մոտ՝ «Գրականության և արվեստի» բաժին և մասնակիցը դառնալ այդ տարիների մշակութային մթնոլորտի ձևավորման կարևոր գործին: 60-70-ական թվականներից մինչև դարավերջ հանրապետությունում և Երևանում մշակութային կյանքն ուղղակի ծաղկում էր, և Ռադիոյի մշակույթով զբաղվող խմբագրությունն այդ վերելքի էպիկենտրոնն էր: Ակտիվ փոխադարձ կապերը, բազմաժանր հաղորդումները խմբագրությունը մեղվափեթակի էին վերածում: Այդ խմբագրությունը տարիներ շարունակ իր շուրջն է հավաքել գրողների, թարգմանիչների,մշակույթի տիրույթի հեղինակությունների: Ես բարեբախտություն եմ ունեցել

աշխատելու և իմ կենսական տարածքը ձևավորելու այդ մարդկանց հետ շփումների շնորհիվ:Ռադիոյի ծրագրային քաղաքականության համար կարևոր այդ օղակը տարբեր տարիների ղեկավարել են Գևորգ Աբաջյանը, Անուշավան Տեր-Գաբրիելյանը, Պերճ Ստեփանյանը,Արևշատ Ավագյանը, Մանուկ Մնացականյանը, Տավրոս Դաշտենցը, Հովիկ Հովեյանը: Մշակութային դաշտում ճանաչված անուններ էին նաև աշխատակիցները՝ Ռոմիկ Սարդարյան, Ռաֆիկ Գևորգյան, Ռաֆայել Նահապետյան,Կլարա Թերզյան, Միքայել Ուստյան, Ֆրունզիկ Կիրակոսյան, Լևոն Բլբուլյան, Երվանդ Պետրոսյան և էլի ուրիշներ:

Հաղորդավար Լենա Կարապետյան

Հետագա տարիներին ՀՌ ցանցի ընդլայնումը մեկ անգամ ևս ապացուցեց Ռադիոյի կենսունակությունը լրատվադաշտում, նրա տեխնիկական ու ստեղծագործական հնարավորությունները բազմապիսի ու բազմաբնույթ հաղորդումներ պատրաստելու, կայուն հասցեագրված լսարան և զարգացման միտումներ ապահովելու կարողությունն ու հնարավորությունները:

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՌ-Ն ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Տասնամյակներ շարունակ Խորհրդային Միությունում պետական գաղափարախոսական կառույցները, սկզբունքներն ու մոտեցումները ներկայացվում էին որպես անփոխարինելի և վերջնական արժեքներ: 1985 թ. ԽՍՀՄ-ում հայտարարված «վերակառուցման» քաղաքականությունը բախտորոշ դարձավ երկրի հետագա զարգացման պատմական ընթացքի համար: Հասարակության կենսակերպի մեջ սկսվեցին արմատական փոփոխություններ, որոնք նախադրյալներ ստեղծեցին աստիճանական անցում կատարելու միակարծությունից բազմակարծության, ամբողջատիրությունից՝ ժողովրդավարության, որն էլ, վերջիվերջո, հանգեցրեց և՛ պետության, և՛ զանգվածային լրատվամիջոցների արմատական փոփոխությունների:

«Վերակառուցման» քաղաքականության առաջին տարիներին պետության կողմից զանգվածային լրատվամիջոցներին հատկացված էր «նոր քաղաքականության» ուղեկցորդի, պաշտոնական տեսակետներ ներկայացնողի և քարոզողի դեր: Երկրում հայտարարված տարակարծությունն ու հրապարակայնությունը դեռևս հիմքեր չէին տալիս հասարակությանը ապահովելու սպառիչ տեղեկատվությամբ և ազատ խոսքով: Սակայն «վերակառուցման» որդեգրած միտումները, հակառակ նախաձեռնողների կամքի և ցանկությունների, երկրում սկսեցին ձևավորվել և զարգանալ իրենց բնորոշ օրենքներով: Զանգվածային լրատվամիջոցների հիմնադիրներ թույլատրեցին դառնալ տարբեր կազմակերպությունների և անհատ քաղաքացիների: Այսպիսով, երկրում սկսվեցին ձևավորվել նոր զանգվածային լրատվամիջոցների հիմնման իրավական հիմքերը:

ԽՍՀՄ-ում վարչահրամայական կառույցի փլուզումը և զանգվածային լրատվամիջոցների նկատմամբ ազդեցության կորուստը նոր ստեղծված պայմաններում ոչ թե նվազեցրեց, այլ ավելի սրեց պայքարը մամուլի, հեռուստատեսության և ռադիոյի նկատմամբ վերահսկողություն սահմանելու համար: Սակայն այդ պայքարը «վերակառուցման» տարիներին արդեն կրում էր ոչ թե գաղափարական, այլ տնտեսական բնույթ: Պետությունը փորձում էր

դրամի և նյութական միջոցների բաշխման շնորհիվ իր ձեռքում պահել զանգվածային լրատվամիջոցների նկատմամբ վերահսկողությունը: Մի քանի տարի շարունակ երկրում պահպանվեց զանգվածային լրատվամիջոցներին պետական դոտացիա տալու կարգը: Պետության կողմից հատկացվող միջոցները զանգվածային լրատվամիջոցների համար ծնում էին նաև լրացուցիչ պարտավորություններ և պահանջներ, առաջին հերթին, որպեսզի նրանք չքննադատեն կամ չեզոք դիրք բռնեն իշխանական կառույցների նկատմամբ, որը հանգեցրեց լրագրողների նվաստացուցիչ կախվածության պետական կառույցներից: Սակայն պետության կողմից իրականացվող բյուջետային «ներարկումները» մեծ մասամբ իրենց նպատակին չհասան, լրատվամիջոցները հիմնականում չհամակերպվեցին և փորձեցին դիմակայել պետության կողմից որդեգրած ֆինանսական ճնշումներին: Չնայած էլեկտրոնային զանգվածային միջոցների բուռն զարգացմանը, ժուռնալիստիկան 1980-ական թվականներին դեռևս մնում էր կենտրոնամետ և կուսակցականացված, որը հնարավորություն չէր տալիս զանգվածային լսարանի տարբեր խմբերին անաչառ և սպառիչ լրատվություն ստանալու, իսկ հեռարձակվող լրատվությունն այլևս չէր բավարարում լսարանի լրատվական և գեղագիտական պահանջմունքն ու հետաքրքրությունները: Արդեն 1990-ականների կեսերին պարզ դարձավ, որ պետությունն ի վիճակի չէ նոր ձևավորվող լրատվադաշտում դառնալու սեփականատեր, չնայած իր ձեռքին էր գտնվում հրատարակչությունների և կապի միջոցների մեծ մասը: Հանրապետական լրատվաշուկան աստիճանաբար սկսեց կողմնորոշվել դեպի մասնավոր կապիտալը՝ դառնալով նրա հետաքրքրության և ներդրումների օբյեկտը: Հանրապետությունում նոր ձևավորվող մասնավոր կապիտալի շուկան սկսեց ոչ միայն վերահսկել զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը, այլև հիմնել նոր բնույթի և ձևաչափի թերթեր, լրատվական գործակալություններ և հեռուստառադիոընկերություններ:

Այս առումով ՀՌ-ի գործունեության այս ժամանակահատվածը արմատապես տարբերվում է նախորդ շրջանների ստեղծագործական գործունեությունից: Եթե նախորդ շրջաններում ռադիոյի բնականոն աշխատանքը կազմակերպվում էր սովորական պայմաններում, ապա

այս ժամանակահատվածի գերակշիռ մասում, հանրապետության մյուս զանգվածային լրատվամիջոցների օրինակով իր աշխատանքն սկսեց հաճախակի կազմակերպել ոչ սովորական, արտակարգ իրավիճակի պայմաններում: Եթե «վերակառուցման» առաջին տարիներին հանրապետության լրատվամիջոցներին ոչ մի արտակարգ դրություն չէր պարտադրվում լուսաբանել, ապա 1988 թ-ի սկզբներին Լեռնային Ղարաբաղում սկսված ազգային-ազատագրական պայքարը, կարծես, ստիպեց հանրապետության լրագրողներին սթափվելու երկարատև թմբիրից (Լեռնային-Ղարաբաղին նվիրված հատվածը կներկայացվի առանձին գլխով): Իսկ տարեվերջին տեղի ունեցած աննախադեպ ուժգնության երկրաշարժը հանրապետության լրատվամիջոցներին ստիպեց աշխատելու արտակարգ իրավիճակի պայմաններում: Առանձնապես կարևորվեց ՀՌ-ի օպերատիվ գործունեությունը, որն ամիսներ շարունակ իր տեսադաշտում էր պահում երկրաշարժի հետևանքների վերացման լուսաբանումը, փրկարարական ու վերականգնողական աշխատանքների կազմակերպումն ու ընթացքը:

Այս բաժնում նպատակահարմար գտանք հանրապետության զանգվածային լրատվամիջոցների և, հատկապես, ՀՌ-ի գործունեությունը ներկայացնել արտակարգ դրության պայմաններում աշխատելու առանձնահատկություններով, որն, ի դեպ, աննախադեպ էր ոչ միայն հայ, այլև նախկին խորհրդային լրագրության պատմության մեջ:

Կոմկուսի 1985 թ. ապրիլյան պլենումից հետո, Մ. Գորբաչովն[98] ի լուր աշխարհի հայտարարեց Խորհրդային Միությունում վերափոխումների և հասարակության ժողովրդավարացման մասին, որը հասարակության կողմից ընդունվեց մեծ ոգևորությամբ և խանդավառությամբ: Շատերը հավատացին, թե վերջապես եկել է ժամանակը հրաժարվելու ամբողջատիրական անցյալից և կառուցելու ազատ, ժողովրդավարական նոր հասարակարգ: Սակայն ոգևորությունը երկար չտևեց. ինչպես ցույց տվեցին հետագա գործողությունները, հասարակությունը ոչ թե վերակառուցվեց, վերափոխվեց, այլ հայտնվեց քաոսում, ի հայտ եկան տասնամյակներ շարունակ

98 ԽՍՀՄ կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար (1985-1990 թթ.), ԽՍՀՄ-ի առաջին և վերջին նախագահը (1990-1991 թթ.):

մոռացության մատնված բազմաթիվ հիմնահարցեր, որոնց լուծմանն այն ժամանակվա ղեկավարությունը պարզապես պատրաստ չէր: Այդ անկարողությունն էլ, վերջիվերջո, հանգեցրեց Խորհրդային Միության փլուզմանը՝ պատճառ դառնալով բազմաթիվ չլուծված հիմնահարցերի փոխադրմանն արյունոտ հաշվեհարդարների և հակամարտություն-ների հարթություն: Ի դեպ՝ «վերակառուցում» տերմինն այնքան էլ նոր չէր, այն վերցված էր հին գաղափարախոսական բառապաշարից, որը շրջանառության մեջ էր դրվել դեռևս Խորհրդային Միության մյուս ղեկավարի՝ Ն. Խրուշչովի կառավարման տարիներին: Ինչպես ցույց տվեցին դեպքերի զարգացումները, «վերակառուցում» հնարավոր չէր անել ամբողջատիրական մի պետությունում, որի տնտեսությունը զարգանում էր պլանային համակարգով, չկար վերակառուցման համար անհրաժեշտ սոցիալական բազա, իսկ պլանավորված վերակառուցմամբ անհնար էր վերափոխել երկրի կառավարումն ու հասարակությունը, դա նույնն էր, թե գծագրել ու կառուցել մարդու մարմինը կամ հոգին: Այնուամենայնիվ, վերակառուցմամբ նախկին ԽՍՀՄ-ում սկսվեց վերափոխումների և զարգացումների նոր շրջան:

Արտակարգ իրավիճակների լուսաբանման փորձը ԽՍՀՄ-ում մինչ Սպիտակի երկրաշարժը

«Արտակարգ իրավիճակ» հասկացությունը հանրապետական լրատվամիջոցների կողմից շրջանառության մեջ դրվեց վերակառուց-ման տարիներին: Մինչ այդ տասնամյակներ շարունակ մեր երկրում տեղի ունեցած ցանկացած ողբերգություն՝ լիներ դա տարերային աղետ, պատահար կամ պայթյուն, խիստ գաղտնի էր պահվում հանրությունից, հաճախ էլ սխալ տեղեկատվությամբ ապակողմնորոշում նրան: Այսօր արդեն ոչ ոքի համար գաղտնիք չէ, թե ինչ արժեցավ մեզ համար տեղեկատվության բացակայությունն ու կիսատ-պռատ լրատվությունը արտակարգ իրավիճակների մասին: Գաղտնիությունն ու փակ լինելն անորոշության մատնեցին ինչպես լրագրողներին, այնպես էլ գիտական աշխատողներին, որոնք հնարավորություն չունեցան ուսումնասիրելու նման իրավիճակների առաջացման պատճառներն ու հնարավոր հետևանքները: Նմանատիպ կարևոր հարցերի մասին

վերլուծությունները հնարավոր դարձան միայն 1988 թ-ի դեկտեմբերյան երկրաշարժից հետո:

Առաջին անգամ ԽՍՀՄ-ի պատմության ընթացքում լրագրողները ոչ միայն կարողացան լուսաբանել արտակարգ իրավիճակն ու նրա հետևանքները, այլև նախադեպ ստեղծեցին հետագա նմանատիպ իրավիճակներն օպերատիվ լուսաբանելու համար:

ԽՍՀՄ-ի հանրապետությունների այդ թվում նաև հայաստանյան լրատվամիջոցները, արտակարգ իրավիճակներն օպերատիվ լուսաբանելու անհրաժեշտ փորձ և հմտություն չունեին: Ահա թե ինչու ժուռնալիստիկայի տեսությունը լրագրողների աշխատանքը արտակարգ իրավիճակի պայմաններում ուսումնասիրության նյութ չէր դարձրել:

Տասնամյակներ շարունակ մեզանում այնպիսի կարծիք էր ձևավորվել, իբր սոցիալիստական հասարակարգը բացառում է նմանատիպ երևույթները: Իսկ երբ արտասահմանյան զանգվածային լրատվամիջոցները արտակարգ պատահարի մասին լրատվություն էին հաղորդում, մեր «գաղափարական ճակատը», որպես կանոն, «սկզբունքային» հարված էր հասցնում այդ հաղորդագրություններին՝ հիմնականում դրանք որակելով որպես հակախորհրդային հիստերիա, նույնիսկ այն դեպքում, երբ տասնյակ հազարավոր մարդիկ այդ պահին շտապ և իրական օգնության կարիք էին զգում:

Մինչդեռ արտասահմանյան երկրներում այդպիսի իրավիճակների լուսաբանման համար վաղուց ստեղծվել էին համապատասխան կենտրոններ, որոնք եղած փորձի ընդհանրացմամբ մշակել էին գիտական հիմնավորված դրույթներ՝ լրագրողների աշխատանքը կարգավորելու համար:

Մինչ Սպիտակի երկրաշարժը ոչ մի արտակարգ իրավիճակ մեզանում չէր լուսաբանվել, նույնիսկ խոշորածավալները: Այսպես, 1948 թ-ին Աշխաբադում տեղի ունեցած երկրաշարժի իրական ծավալները երկար ժամանակ գաղտնի էին պահվում, իսկ ողբերգական դեպքերը, բացառությամբ պաշտոնական հաղորդագրության, այդպես էլ չլուսաբանվեցին:

Ցավոք, նմանատիպ դեպքեր տեղի ունեցան նաև «վերակառուցման» տարիներին (Չեռնոբիլյան աղետը): Չնայած մամուլի, ռադիոյի և

հեռուստատեսության հանցավոր լռությանը, դեպքերի ոչ օբյեկտիվ լուսաբանմանը, ողբերգությունը մեծ արձագանք գտավ ողջ աշխարհում: Այդ աղետից չորս տարի հետո միայն զանգվածային լրատվության միջոցներն արձագանքեցին տեղի ունեցածին, վերջապես հանրության համար լուսաբանվեցին աղետի իրական ծավալները, առաջին անգամ մենք իմացանք, որ ճառագայթման հետևանքով տասնյակ հազարավոր մարդիկ դարձել են անդամալույծ ու անաշխատունակ:

Լրագրողների հարկադիր լռությունը, ծավալների ոչ օբյեկտիվ լուսաբանումը, մեր կարծիքով, կարելի էր բացատրել նաև այն մեխանիզմների բացակայությամբ, որոնք հնարավորություն կտային համարժեք մոտեցում ցուցաբերել աղետների լուսաբանման ժամանակ: Դա ոչ միայն ու ոչ այնքան լրատվամիջոցների մեղքն էր, որքան այն պետության, որը շահագրգռված չէր նմանատիպ մեխանիզմների ստեղծմամբ:

Արտակարգ իրավիճակի պայմաններում լրատվամիջոցների աշխատանքի համար ստեղծվում են ոչ ստանդարտ պայմաններ:Նրանց առաջնահերթ խնդիրն է դառնում փրկարարական աշխատանքների լուսաբանումը: Միջազգային պրակտիկայում նմանատիպ օրինակները բավական շատ են: Այսպես՝ ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի բնագավառի գերմանացի տեսաբան Գ. Վերները 1985 թվականին Մեխիկոյում տեղի ունեցած ուժեղ երկրաշարժից հետո մի ամբողջ գիրք նվիրեց լրագրողների կողմից բնական աղետների լուսաբանմանը, աչքի տակ ունենալով «թարմ» օրինակը: «Ծանր էր դիտել ավերված քաղաքի համայնապատկերը,- գրում էր գերմանացի գիտնականը, որն այդ օրերին գտնվում էր Մեխիկոյում,- հեռուստատեսությամբ մանրամասն հեռարձակվում էր, թե ինչպես են փլատակների տակից հանում դիակները, ինչպես են ողբում որդեկորույս մայրերը...և այս ամենը բոլոր ալիքներով, երկրաշարժից անմիջապես հետո»:[99]

1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում գրանցված երկրաշարժը թե՛ ծավալով, թե՛ ուժգնությամբ դասվում է ամենաավերիչ երկրաշարժերի թվին, որ տեղի են ունեցել Կովկասում վերջին հազարամյակի ընթացքում: Առաջին անգամ լուսաբանվեցին

99 Werner J. B., Rundvunk und Fernsehen in Mexiko, Munchen, 1987, S. 29.

երկրաշարժի հետևանքները, որոնց միացան աշխարհի 67 երկրներից ժամանած 350 լրագրողներ: Լրագրողական այդ երկու բանակներն օպերատիվ կերպով ողջ աշխարհին տեղյակ պահեցին Հայաստանում տեղի ունեցած ողբերգությանը: Նրանք Աղետի գոտում կատարեցին մեծածավալ աշխատանքներ. օժանդակեցին փրկարարական և վերականգնողական ծառայություններ կազմակերպելուն, մարդասիրական օգնությունը ժամանակին հասցեատերերին հասցնելուն, տուժածներին ապահով վայրեր տեղափոխելուն:

Սպիտակի երկրաշարժի լուսաբանման առանձնահատկությունները ՀՌ-ում

Մեծ ծավալի աշխատանքները բնական աղետների հետևանքների վերացման համար, որպես կանոն, պահանջում են ավելի երկար ժամանակահատված: Եվ բնական է, որ զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը, լուսաբանման ձևերն ու մեթոդները տարբեր ժամանակահատվածներում տարբեր կերպ են դրսևորվում, որովհետև ժամանակի հետ փոխվում է նաև օպերատիվ իրավիճակը, որը պահանջում է նոր մոտեցում և աշխատանքի կազմակերպման նոր կառուցվածք: Այդ պատճառով անհրաժեշտություն զգացվեց վերլուծությունը և փաստարկումը առանձնացնել՝ ընդունելով դրանց պայմանականությունը, արտակարգ դրության պայմաններում երեք հիմնական շրջանների բաժանումը, որը համընկնում է ՀՌ-Ի երկրաշարժի հետևանքների վերացման լուսաբանման առանձնահատկությունների հետ: Դրանք են՝

1/ առաջին երկու օր,

2/ տասնհինգ օր հետո,

3/ մեկ տարի անց:

Մեր կարծիքով՝ այս բաժանումը հնարավորություն կտա ամբողջովին, հիմնավորապես ուսումնասիրելու և վերլուծելու լրագրողների աշխատանքը արտակարգ իրավիճակի պայմաններում, ավելի մանրամասն ներկայացնելու նրանց գործունեությունը յուրաքանչյուր ժամանակաշրջանում:

Եթե համեմատաբար կարճ առաջին շրջանում լրագրողները

հիմնականում պատրաստում էին օպերատիվ լրատվական հաղորդագրություններ, ձևավորելով հասարակական կարծիք կատարվածի մասին, ապա երկրորդ շրջանում նրանք ավելի շատ ուշադրություն էին դարձնում փրկարարական աշխատանքների ընթացքին, լուսաբանում փրկարարական ջոկատների ժամանումն ու օգնությունը: Իսկ երրորդ շրջանում լրագրողների աշխատանքը որակապես փոխվում է. նրանք ավելի շատ ուշադրություն են դարձնում վերականգնողական աշխատանքների ընթացքին՝ հասարակական կարծիքն ուղղելով աղետյալների օգնությանը, երկրաշարժի հետևանքների վերացմանը, քաղաքների և գյուղերի վերականգնման լուսաբանմանը:

Բոլոր երեք շրջաններում ՀՌ-ի կազմակերպական գործառույթում զգալիորեն գերազանցում էր քարոզչականը: Նույնիսկ անցումը մի շրջանից մյուսին որակապես փոխում էր զանգվածային լրատվամիջոցների դերն ու նշանակությունը՝ որպես կազմակերպիչների: Այս պայմաններում մեծանում էր լրատվության օպերատիվ մատուցման նշանակությունը: Երրորդ շրջանից հետո, երբ հիմնականում վերացվեցին բնական աղետի հետևանքները, հանրապետական զանգվածային լրատվամիջոցները նորից սկսեցին փոխկապակցման և փոխհամագործակցման գործունեությունը միմյանց հետ:

Հայաստանի հյուսիսային շրջաններում տեղի ունեցած հսկայածավալ ավերածություններով ու մարդկային զոհերով ուղեկցվող երկրաշարժը, բնական է, բնակչության շրջանում առաջացրեց բավականին մեծ հոգեբանական լարվածություն և սթրես: Այդ պատճառով հանրապետական զանգվածային լրատվամիջոցները երկրաշարժի առաջին երկու օրերին հեռարձակեցին ու տպագրեցին ամենաօպերատիվ հաղորդագրություններ երկրաշարժի ուժգնության, հաճախականության և թուլացման մասին, կազմակերպական աշխատանք տարան՝ խուճապի վերացման, փրկարարական աշխատանքները համակարգելու, փլատակների տակից աղետյալներին ազատելու վերաբերյալ: Այսպիսի իրավիճակներում առանձնապես կարևորվեց լսարանին սպառիչ տեղեկություններ հաղորդելը: Այստեղ է, որ դրսևորվեցին ռադիոյին հատուկ տեխնիկական և ստեղծագործական

հնարավորությունները: Բնակչությունը երկրաշարժի մասին առաջին հաղորդագրությունը լսեց հենց ռադիոյից, թեև կատարվածից երկու ժամ հետո: Ռադիոյի առաջին հաղորդագրություններին են անդրադարձել նաև մոսկովյան առաջատար թերթերի լրագրողներ Միխայիլ Կրուշինսկին և Ալեքսանդր Պրոցենկոն՝ Սպիտակի երկրաշարժին նվիրված «Дни скорби и мужества» գրքում:

Երկրաշարժից անմիջապես հետո ՀՌ-ի բազմաթիվ աշխատակիցներ տարբեր աղբյուրներից ցանկանում էին ստանալ օբյեկտիվ տեղեկություններ կատարվածի մասին, սակայն ապարդյուն: Տարբեր բնույթի շշուկներ էին տարածվում ռադիոկոմիտեում, սակայն ստույգ տեղեկատվություն այդպես էլ չկար: Այդ ուշացումը որքան էլ տարօրինակ է, սկզբում հանգստացնող ազդեցություն թողեց լրագրողների վրա, «լուրջ բան պատահած լիներ, բոլորն այդ մասին կիմանային», ենթադրում էին ռադիոլրագրողները: Վերջապես հաջողվեց զանգահարել հանրապետության Գերագույն խորհուրդ: Ինչ-որ ձայն հաղորդեց, որ հանրապետության հյուսիսային շրջաններում գործերը կարծես թե լուրջ են, կան ավերածություններ, իսկ Սպիտակում՝ նույնիսկ զոհեր, նախնական տվյալներով՝ 130 հոգի: Անցավ ևս մի քանի րոպե, և, վերջապես, 12.33 րոպեին հանկարծ ընդհատվեց հաղորդումը և թույլատրվեց եթեր հեռարձակելու պաշտոնական հաղորդագրություն, սակայն առանց նշելու կոնկրետ փաստեր և թվեր: Երբ հաղորդավարը հայտարարեց, որ շուտով նորից հեռարձակվելու է արտակարգ հաղորդագրություն, ռադիոլրագրողների և լսարանի մոտ անհանգստությունը մեծացավ՝ վերածվելով տագնապի: Վերջապես 13.45 րոպեին հաղորդավարը նորից ընդհատեց պլանավորված եթերը՝ դարձյալ օպերատիվ հաղորդագրություն հեռարձակելու համար: Վեց րոպե լռությունից հետո վերջապես եթեր հեռարձակվեց պաշտոնական հաղորդագրություն, սկզբում հայերեն, այնուհետև՝ ռուսերեն.

«Այս տարվա դեկտեմբերի 7-ին, 11.50 րոպեին[100] Հայաստանում տեղի է ունեցել երկրաշարժ, որն ընդգրկել է հանրապետության մի շարք շրջաններ: Նախնական տվյալներով կան ավերածություններ, մարդկային զոհեր, վիրավորներ: Առանձնապես տուժել են Լենինական

100 Հաղորդագրության մեջ Սպիտակյան երկրաշարժի րոպեն սխալ էր ներկայացված, այն տեղի է ունեցել 11.41 րոպեին:

(այժմ՝ Գյումրի), Կիրովական (այժմ՝ Վանաձոր), Գուգարքի, Ստեփանավանի, Սպիտակի և նրանց հարակից շրջանները: Հայկական ատոմակայանը և մայրաքաղաքի քիմիական ձեռնարկությունները չեն տուժել:

Կազմված է կառավարական հանձնաժողով, որը գլխավորում է հանրապետության Նախարարների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանը:[101] Տուժողներին ցույց է տրվում առաջին անհրաժեշտ բուժօգնություն...»:

Ինչպես պարզ երևում է հաղորդագրությունից, այն բավականին քիչ լրատվություն էր պարունակում, և ռադիոունկնդիրները միանգամից չկարողացան հասկանալ, թե ինչ մեծ դժբախտություն է մտել մեր հողը:

Այդպիսի հաղորդագրության պատրաստ չէր նաև նախկին համամիութենական լսարանը: Այն ժամանակ՝ դեկտեմբերի 7-ին, երեկոյան կենտրոնական հեռուստաընկերության հեռուստալրատվական-վերլուծական «Վրեմյա» ծրագրով և «Մայակ» ռադիոկայանով եթեր հեռարձակված հաղորդագրությունները ոչ բոլորն ընդունեցին որպես իսկական ողբերգության նշան: Այդ ծրագրերում եթեր տրվեցին պաշտոնական հաղորդագրություն նախկին ԽՍՀՄ-ի խոշորագույն լրատվական գործակալության՝ ՏԱՍՍ (այժմ՝ ԻՏԱՌ-ՏԱՍՍ)-ի կողմից, որտեղ մասնավորապես ասվում էր. «1988 թվականի դեկտեմբերի 7-ին Մոսկվայի ժամանակով 10.41 րոպեին Հայաստանի հյուսիսային շրջաններում տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ: Էպիկենտրոնում տատանումների ուժգնությունը կազմել է 8 բալից ավելի 12 բալանոց սանդղակի հաշվարկով: Այն ամենահզորն է եղել Կովկասում վերջին 80 տարիների ընթացքում:

Հայաստանի մի շարք շրջաններում կան զգալի ավերածություններ, մարդկային զոհեր և վիրավորներ: Առանձնապես տուժել են Լենինական, Կիրովական, ինչպես նաև Սպիտակի, Ստեփանավանի, Ամասիայի, Գուգարքի շրջանները: Ստորգետնյա ցնցումներն զգացվել են Երևանում և Թբիլիսիում, Ադրբեջանի, Դաղստանի, Չեչենո-Ինգուշեթիայի մի շարք շրջաններում:

Երկրաշարժի հետևանքների վերացման համար կազմվել է

101 Ներկայիս Հայաստանի ԳԱԱ նախագահ Ֆ. Սարգսյանը հանրապետության նախարարների խորհրդի նախագահի պաշտոնում մնաց մինչև 1989 թ.հունվարը:

կառավարական հանձնաժողով: Հանրապետության իշխանությունների հետ հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկում կազմակերպելու փրկարարական աշխատանքները, օգնելու աղետյալներին, ապահովելու մարդկանց տանիքով և սնունդով: Առաջին հերթին վերականգնվում են առավել անհրաժեշտ օբյեկտները: Զինվորների և քաղաքացիական պաշտպանության կառույցների հետ փրկարարական և վերականգնողական աշխատանքներին մասնակցելու են նաև կամավորներ: Աղետի շրջաններ են ուղարկվում բժշկական բրիգադներ»:[102]

Չնայած հաղորդագրության մեջ ասվում էր, որ «…կան նշանակալի ավերածություններ, մարդկային զոհեր և վիրավորներ», բայց աղետի ծավալները գնահատել դեռևս հնարավոր չէր: Տեղական և նախկին համամիութենական լսարանը այս շատ աղքատիկ լրատվությունից չէր կարող պատկերացում կազմել, որ այդ պահին տասնյակ հազարավոր մարդիկ կենդանի թաղված էին փլատակների տակ, որոնց անհրաժեշտ էր շտապ օգնություն և փրկություն…

Հանրապետության լրագրողները, մասնավորապես ռադիոլրագրողները առաջին երկու օրվա ընթացքում անընդհատ, ժամ ժամի հետևից եթեր էին հեռարձակում բազմաթիվ ռեպորտաժներ, թղթակցություններ, հարցազրույցներ՝ լսարանին որքան հնարավոր է օպերատիվ լրատվություն հաղորդելու տիրող իրավիճակի մասին:

ՀՌ-ն առաջին ռադիոռեպորտաժն Աղետի գոտուց եթեր տվեց դեկտեմբերի 7-ին, ժամը 23.50 րոպեին, գիշերային «Վերջին ժամ» ամփոփիչ լրատվական թողարկման ժամանակ: Այն վարում էր ՀՌ-Ի ինֆորմացիայի գլխավոր խմբագրության աշխատակից Հր. Չամչյանը՝ Լենինականից: Ստորև ներկայացնում ենք մի հատված նրա վարած ռադիոռեպորտաժից. «Լենինականի կենտրոնական հրապարակը, որն աչքի էր ընկնում իր մաքրությամբ, այժմ անճանաչելի է դարձել: Դժվարանում ես խոսել մարդկանց հետ, նրանք մի տեսակ դարձել են ինքնամփոփ ու լռակյաց: Բնակչությունը հիմնականում գիշերում է ավտոտնակներում, մնացածները վրաններ են խփել քաղաքային զբոսայգիներում կամ կուչ են եկել վառվող օջախների մոտ: Հիմա ինչքան էլ դժվար լինի, պետք է վերադարձնել մարդկանց հավատը

102 Землетрясение в Закавказье: ТАСС // Известия, 1988, 8 декабря. С. 1.

կյանքի նկատմամբ, օգնել նրանց այդ ճակատագրական ժամին դիմագրավելու...»:[103]

Սա ՀՌ-ի հաջողված փորձն էր արտակարգ իրավիճակի պայմաններում լսարանին սպառիչ տեղեկություն հաղորդելու և տեղյակ պահելու կատարվածի մասին: Թերևս հայ լրագրության արտակարգ իրավիճակում աշխատելու առաջին փորձն էր:

Առաջին օրերին բավականին արդյունավետ էին գործել նաև հանրապետական հեռուստատեսության լրագրողներն ու օպերատորները, ինչպես նաև հանրապետական թերթերի թղթակիցները: Երկրաշարժի հաջորդ օրը Հեռուստառադիոպետկոմում դադարեց գոյություն ունենալ «աշխատանքային օր» հասկացությունը, հեռուստատեսության և ռադիոյի լրագրողներն ու օպերատորները մշտապես գտնվում էին Աղետի գոտում, լուսաբանում էին աշխարհի տարբեր երկրներից ժամանած փրկարարական ջոկատների աշխատանքը:

Արտակարգ դրության պայմաններում ռադիոլրագրողները կատարում էին հետևյալ խնդիրները.

ա/ հաղորդում էին լրատվություն զոհերի թվի, ավերածության ծավալների, փրկարարական աշխատանքների ընթացքի մասին:

բ/ Լսարանին մշտապես տեղյակ էին պահում համայն աշխարհից ստացվող օգնության, առաքվող ապրանքների, դեղորայքի մասին, նշվում էին դրանց հասցեատերերը, փրկարարական ջոկատների ժամանումը:

գ/ Կազմակերպում էին որոնողական ծառայություններ՝ աղետյալներին և անհայտ կորածներին գտնելու համար:

դ/ Լուսաբանում էին վերականգնողական աշխատանքները:

Սկսած դեկտեմբերի 7-ից ռադիոհեռուստահաղորդաժամերի ծրագրերը փոփոխության ենթարկվեցին, ծրագրերի ցանցից հանվեցին զվարճալի հաղորդումները, մեծ տեղ հատկացվեց ժողովրդական մեղմ երաժշտության հեռարձակմանը: Ռադիոեթերը հիմնականում տրամադրվեց ինֆորմացիայի գլխավոր խմբագրությանը, իսկ մյուս խմբագրություններին պարտավորեցվեց սատարելու նրան:

---

103 Զամչյան Հր., Ռեպորտաժ Լենինականից, հանրապետական ռադիոյի 1-ին ծրագիր, 1988, 7-ը դեկտեմբերի:

Այս աշխատանքային ռիթմը պահպանվեց մինչև դեկտեմբերի 14-ը (բացառությամբ մի շարք ծրագրերի, օրինակ՝ «Որոնում» ծառայության):

Արդեն երկրորդ օրվանից սկսած ինֆորմացիայի գլխավոր խմբագրությունը, այժմ «Ռադիոլուր» լրատվական գործակալություն, պաշտոնական հաղորդագրությունից բացի, եթեր էր հեռարձակում օրական 20-25 սեփական հաղորդագրություն: Հիմնվեցին նոր խորագրերով ու շարքերով հաղորդաշարեր ու ծրագրեր: Այսպես, «Օպերատիվ թողարկում» հատուկ խորագրի խնդիրը օպերատիվ լուրեր հաղորդելն էր դեպքի վայրերից առաջին հերթին փրկարարական աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Երկրորդ շրջանի ծրագրերից կարելի է առանձնացնել լրատվության գլխավոր խմբագրության «Հատուկ թողարկում» հաղորդումը, որտեղ ներկայացվում էին հանրապետություն ուղարկվող հումանիտար օգնության բաժանումը Աղետի գոտում, պաշտոնական հաղորդագրություններ այլ կազմակերպչական աշխատանքների մասին: Այդ թողարկման շրջանակներում խմբագրությունը դեկտեմբերի 9-ից եթեր հեռարձակեց բնական աղետներին նվիրված «Գիտական գիտելիքներ երկրաշարժի մասին» շարքը: Նման հաղորդումներն անհրաժեշտ էին, որպեսզի բնակչությանը գիտահանրամատչելի ձևով մատուցվեին անհրաժեշտ և սպառիչ տեղեկություններ բնական աղետների, դրանց բնույթի և հետևանքների մասին: Հաղորդաշարը նպատակ ուներ նաև բնակչությանը համոզելու, որ ամենասարսափելին մնացել է հետևում, իսկ ապագան նրանց ձեռքում է, միայն պետք է ազատվել վախից և գործել ակտիվորեն:

Իրականում ստորգետնյա ակտիվության գոտիներում ապրող բնակչությունը մշտապես կարիք էր զգում երկրաշարժի մասին գիտահանրամատչելի լուսաբանման: Այդ շարքի առաջին ձայնագրված նյութը ՀՌ-ն կազմակերպեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի ճարտարապետության բաժնի գիտական աշխատակից Մ. Գրիգորյանի մասնակցությամբ, որը եթեր հեռարձակվեց դեկտեմբերի 9-ին: Ծրագրում հաղորդվում էր, որ Հայաստանի հյուսիսային շրջաններում երկրաշարժը կազմել է 8 բալ, իսկ այն շրջաններում, որտեղ հիմքը հիմնականում ջրից և ավազից էր՝ 9 բալ: Հիշենք, որ 7 բալանոց երկրաշարժերն առանձնապես ավերածություններ չեն գործում:

Հարցազրույցում չասվեց՝ որ ցնցումներն են վտանգավոր, որոնք՝ ոչ: Լենինականը սեյսմակայուն քարտեզի վրա նշված է 8-բալանոց գոտում, սակայն դեկտեմբերի 7-ին ստորգետնյա ցնցումներն այստեղ հասան 10 բալի: Իսկ Սպիտակի շրջանը նշված էր 7-բալանոց սեյսմակայունության գոտում, այնինչ ցնցումների իրական ուժն այստեղ անցավ 10 բալից:

Հարցազրույցում նշվում էր, որ Երևանում նախագծերն օժտված են ցնցումների դեպքում կայուն սեյսմադիմակայունությամբ, և որ խոշորապանել տները կդիմանան ստորգետնյա տարերքի ուժին: Նման լրատվությունը լսարանին հանգստացնելու միտում ուներ և մասնակի թուլացնում էր հոգեբանական լարվածությունը:

Երկրորդ շրջանում ռադիոն համեմատաբար օպերատիվորեն արձագանքեց հանրապետությունում այդ օրերին տարածված զանազան բնույթի ասեկոսեներին ու բամբասանքներին: Այսպես՝ «դեկտեմբերի 12-ին Երևանում լուր տարածվեց, իբր օգնություն բերող արտասահմանյան ինքնաթիռներից մեկն ընկել է հայկական ատոմակայանի վրա: Ինքնաթիռն, ի դժբախտություն մեզ, իսկապես վթարի էր ենթարկվել, սակայն բարեբախտաբար չէր ընկել ատոմակայանի վրա: Շատ մարդիկ, լրատվությունը ժամանակին չստանալով, մեկնում էին Մեծամոր ավան, որի հարևանությամբ գտնվում էր ատոմակայանը, որպեսզի համոզվեն, թե ինչ է կատարվել: Տեսնելով ատոմակայանի անվտանգ աշխատանքը՝ համոզվում էին, որ այդ լուրերը ասեկոսեներ են»:[104]

Հետագա օրերին ՀՌ-ն ավելի օպերատիվ և արդյունավետ սկսեց օգտագործել իր հնարավորությունները և եթեր հեռարձակեց բազմաթիվ հերքումներ տարբեր բնույթի լուրերի ու բամբասանքների դեմ, որոնք տարածվում էին Երևանում և Աղետի գոտում: Դեկտեմբերի 12-ին Երևանում լուրեր տարածվեցին՝ իբր սպասվում է էլ ավելի հզոր ու կործանարար երկրաշարժ: Լուրը լսելուն պես հազարավոր մարդիկ դուրս նետվեցին իրենց տներից, դպրոցներում դադարեցվեցին պարապմունքները, քաղաքում խուճապ առաջացավ: Այս անգամ, ի տարբերություն նախորդի, Ռադիոն կարողացավ արագ կողմնորոշվել և ժամանակին հերքել այդ լուրերը: Առանձնապես դժվար էր հերքել տարածվող բամբասանքները, որոնք գալիս էին Աղետի գոտուց:

104 Բալայան Զ., Դիմակայում, Երևան, 1989, էջ 100:

Դեկտեմբերի 15-ին ամբողջ հանրապետությունում լուրեր տարածվեցին, իբր աղետյալներին ուղարկում են Սիբիր, իսկ որբացած երեխաներին հավաքում և ուղարկում են անհայտ ուղղությամբ՝ նպատակ ունենալով «փոշիացնել ազգը»:[105]

Լուր ստանալու հաջորդ օրը լրատվության գլխավոր խմբագրությունը «Հատուկ թողարկում» ծրագրում եթեր հեռարձակեց իրազեկ ու հեղինակավոր մարդկանց խոսքը, որոնք պատասխանատու էին Աղետի գոտուց բնակչության տեղափոխման համար: Ռադիոլրագրողի այն հարցին. «Ու՞ր են ուղարկում աղետյալներին», պետական բարձրաստիճան պաշտոնյան պատասխանել էր. «Կանանց և երեխաներին ուղարկում ենք Սև ծովի ծովափնյա առողջարաններն ու հանգստյան տները: Մենք որոշել ենք ուղարկել նույնիսկ ամբողջ դպրոցներ: Առողջարաններում և պանսիոնատներում դպրոցական տարիքի երեխաների հետ կզբաղվեն մեր ուսուցիչները, դասերը կանցկացվեն հայոց լեզվով...»:[106]

Հանրապետական ռադիոն, ներկայացնելով իրերի իրական վիճակը, մեծ ծավալի բացատրական աշխատանք էր տանում ռադիոունկնդիրների շրջանում՝ նրանց ջանքերը նպատակամղելով աղետյալների օգնությանն ու փրկությանը:

Հաղորդումներ օգնության, վշտակցության, աղետյալներին օգնելու թեմաներով

Արտակարգ իրավիճակի պայմաններում առանձնապես կարևորվում է աղետյալներին օգնության հասնելու գործը: Այս բնույթի հաղորդումները վերլուծելու ժամանակ հաշվի են առնվում ՀՌ-ի գործունեության երեք շրջանները. շրջանների բաժանումը հնարավորություն է տալիս ավելի հիմնավոր ներկայացնելու յուրաքանչյուր փուլում ռադիոյի կատարած աշխատանքը և փոխհարաբերությունները լսարանի հետ: Այն դրսևորվեց հետևյալ կերպ. առաջին շրջանի ընթացքում ՀՌ-ն կազմակերպեց

105 Акопов А., Долг памяти //Журналист, М., 1989, № 1, с. 20.

106 Զադայան Վ., Հինգշաբթի, այս ժամին, հանրապետական ռադիոյի 1-ին ծրագիր, 1988, 16-ը դեկտեմբերի:

հնարավորինս օպերատիվ լրատվություն, օգնեց լսարանին կարճ ժամանակաընթացքում կողմնորոշվելու ստեղծված իրավիճակում և խուճապի չմատնվելու: Երկրորդ շրջանում ՀՌ-ն հանդես էր գալիս հասարակական կարծիքի ձևավորման կազմակերպչի դերում՝ կոչ անելով ռադիոունկնդիրներին աղետյալներին չթողնել դժբախտության մեջ: Երրորդ շրջանում ՀՌ-ն շարունակում էր հետևել հասարակական կարծիքի կազմակերպմանն ու ձևավորմանը՝ քարոզելով համընդհանուր օգնություն և գթություն:

«Տառացիորեն երկրաշարժի առաջին ժամերին սկսվեց օգնության ցուցաբերումը,- ներկայացնում էր ՀՌ-ի լրագրողը: Սկզբնական շրջանում Լենինականի, Սպիտակի, Կիրովականի, Ստեփանավանի և տուժած այլ քաղաքների ու գյուղերի բնակիչները, կտրված լինելով արտաքին աշխարհից, չունենալով հաղորդակցության ոչ մի կապ՝ այդ ողբերգության դեմ հանդիման մենակ չմնացին: Նրանք շուտով համոզվեցին, որ դժբախտության մեջ նրանց չթողեցին, և ողջ աշխարհը օգնության ձեռք մեկնեց նրանց»:[107]

Նմանատիպ թղթակցություններն օգնում էին լսարանին մշտապես գտնվելու լրատվական հոսքում և ստանալու օպերատիվ լրատվություն, այս դեպքում անգնահատելի էր ռադիոյի դերը, որի շնորհիվ լսարանը ժամանակին իմանում էր, թե որտեղից են գալիս անհրաժեշտ բուժօգնությունը, դեղորայքը, փրկարարական ջոկատները, աղետը ինչ մասշտաբներ է ընդգրկել, ինչպես են կազմակերպվում փրկարարական և վերականգնողական աշխատանքները: Ինչպես վկայում են հեռուստառադիոպետկոմի հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայության տվյալները, հարցվածների 90 տոկոսը երախտագիտությամբ էր արձագանքել ռադիոյի օպերատիվ աշխատանքին՝ փրկարարական և վերականգնողական աշխատանքների կազմակերպման գործում ունեցած ներդրման համար:[108]

Հայ ժողովրդի ողբերգությունը դարձավ համայն մարդկության

---

107 Մարգարյան Ա., Օգնությունը շարունակվում է, Հանրապետական ռադիոյի առաջին ծրագիր, 1988, 11-ը դեկտեմբերի:

108 Զադայան Վլ., Հինգշաբթի, այս ժամին, հանրապետական ռադիոյի 1-ին ծրագիր, 1989, 22-ը փետրվարի:

ընդհանուր վիշտը, որի վկայությունն են համաշխարհային լրատվական գործակալությունների բազմաթիվ հեռագրերը:

ԱՄՆ-ի ՅՈՒՊ-ի լրատվական գործակալության հաղորդագրության համաձայն՝ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Իտալիայում, Լեհաստանում և այլ երկրներում սկսել են երկրաշարժից տուժածների համար հավաքել առաջին անհրաժեշտության առարկաներ՝ Հայաստան ուղարկելու համար, տարբեր տեղերից ստացվում են ցավակցական հեռագրեր: «Ֆրանս պրես» գործակալությունը հաղորդում է, որ Փարիզի մոտակայքում գտնվող օդանավակայանից փրկարարական աշխատանքների մեծ փորձ ունեցող 180 մասնագետ պատրաստվում է մեկնել Հայաստան: Նրանց տրամադրության տակ կան անհրաժեշտ սարքավորումներ, 21 վարժեցված շներ, որոնք կարողանում են հայտնաբերել փլատակների տակ մնացած մարդկանց: Շտապ Հայաստան է մեկնել անգլիական բարձր որակավորում ունեցող, ուլտրակարմիր տեսախցիկներով զինված մասնագետների մի խումբ, հաղորդում է «Ֆրանս Պրեսը», որը կարող է հայտնաբերել փլատակների տակ հայտնված մարդկանց: Նրանք զինված էին այդպիսի իրավիճակներում մարդկանց փրկելու այլ սարքավորումներով, այսպես կոչված՝ ձայնորսիչ սարքերով, որոնք որոշակի հեռավորության վրա փլատակների տակից կարող են որսալ անգամ թույլ ձայներ և որոշել աղետյալի գտնվելու վայրը: Ամերիկյան Սի-Բի-Էս հեռուստաընկերությունը հաղորդում է, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունների առջև այնպիսի ծանր խնդիր է ծառացել, որը դժվարությամբ կարող են լուծել նույնիսկ մեծ պետությունները:

Ռադիոլսարանը հետաքրքրություն հանդես բերեց նմանատիպ երկրաշարժերի ժամանակ փրկարարական աշխատանքների կազմակերպման ընթացքին, ցանկանալով իմանալ, թե ինչքան ժամանակ մարդը կարող է մնալ փլատակների տակ առանց ջրի և սննդի:

Այդ թեմատիկային ռադիոյի խմբագրությունները նվիրեցին մի շարք հաղորդումներ, սակայն դրանք այնքան էլ որակյալ չէին. զգացվում էր այդպիսի հաղորդումների պատրաստման փորձի պակաս: Այն ինչ լսարանը լրագրողներից և մասնագետներից սպասում էր հենց

այդպիսի հաղորդումներ, որոնք աղետի առաջին օրերին չհաջողվեց կազմակերպել:

Հայաստանի օգնությանն արժանի ներդրում ունեցան նաև մի շարք երկրների նախագահներ: Նյութական օգնություն ցուցաբերեց սփյուռքահայությունը: Մի շարք երկրների հայ գաղթօջախներ կազմակերպեցին բարեգործական աճուրդներ, որոնցից ստացված ողջ հասույթը հատկացվեց Հայաստանի օգնության ֆոնդին:[109] Ըստ ՀՌ-ի տվյալների՝ Հայաստանին օգնություն ցուցաբերած երկրների թիվը 1989 թ. մայիսին անցավ 142-ից:

Ընդհանրացնելով այս շրջանում ռադիոլրագրողների աշխատանքը՝ կարելի է փաստել, որ նրանք, չնայած դժվարություններին, հիմնականում կատարեցին իրենց առջև դրված առաջադրանքները՝ բավականին կարճ առաջին շրջանի ընթացքում եթեր հեռարձակելով հիմնականում պաշտոնական լրատվություն, իսկ լրատվական մեկնաբանությունը և վերլուծությունը դեռևս բացակայում էին: Աստիճանաբար վերահսկելով իրավիճակը՝ նրանք սկսեցին եթեր հեռարձակել օպերատիվ հասարակական հնչեղություն ունեցող նյութեր, ինչպես նաև ռադիոունկնդիրների ձայնագրված խոսքն ու ելույթները:

«Որոնում» ռադիոծառայություն

Մեծ աղետների ժամանակ հազարավոր մարդիկ կորցնում են իրենց հարազատներին և բարեկամներին: Ռադիոլրագրության պատմության մեջ մշակված չէր մի այնպիսի ծառայություն, որը կարողանար գործել խոշոր աղետներից և վթարներից հետո՝ հազարավոր մարդկանց իրազեկ դարձնելու աղետի պատճառով կորցրած հարազատների մասին: Ընդունված չէր այդպիսի խոշորածավալ աղետներից հետո կազմակերպել «Որոնում» ծառայություններ: Տարիներ շարունակ հայրենական զանգվածային լրատվամիջոցները լռության էին մատնում այդպիսի բնական աղետների լուսաբանումը, իսկ արտաքին աշխարհի լրատվությունը փակված էր «երկաթե վարագույրով»: Այդ էր պատճառը, որ շատերի ճակատագիրն անհայտ էր մնում նույնիսկ մի քանի տարի,

109 Գթությունը շարունակվում է, Եթերում է Երևանը, 1989, 2-8-ը ապրիլի:

այդպիսին էր իրավիճակը նույնիսկ «վերակառուցման տարիներին»: Թաքցվում էին այնպիսի խոշորամասշտաբ աղետներ, ինչպիսիք են՝ Չեռնոբիլը կամ «Ադմիրալ Նախիմով» զբոսանավի կործանումը:

Այդ շարքում՝ առաջին բացառությունը Սպիտակի երկրաշարժի լուսաբանումն էր, երբ ողբերգությունից անմիջապես հետո ՀՌ-ի կառուցվածքում հիմնադրվեց օպերատիվ «Որոնում» ծառայությունը: Մարդկանց որոնման այդպիսի ծավալներով ու չափերով ծառայության հիմնադրումն իր նախադեպը չուներ նախկին խորհրդային ժուռնալիստիկայի պատմության մեջ: Այդ ծառայության հաղորդումները մշտապես հավաքում էին մեծ թվով ռադիոունկնդիրներ: Հարցման արդյունքների համաձայն, որն անցկացրել էր «Հինգշաբթի, այս ժամին» ռադիոհաղորդաշարը, լսարանի մոտ 95 տոկոսը գոհ էր ծառայության աշխատանքից՝ որոնման աշխատանքները արդյունավետ և նպատակային կազմակերպելու համար: Ծառայության գործունեության շնորհիվ հազարավոր մարդկանց հաջողվեց փնտրել և գտնել իրենց հարազատներին և բարեկամներին:

Ռադիոյի լրատվության գլխավոր խմբագրությունը, իր վրա վերցնելով այդ ծանր պարտականությունը, «Որոնում» օպերատիվ ծառայության աշխատանքներն սկսեց կազմակերպել 1988 թ. դեկտեմբերի 12-ից՝ ընդգրկելով խմբագրության բոլոր աշխատակիցներին: «Ելնելով այն հանգամանքից, որ անհայտ կորածների թիվն անընդհատ ավելանում է, դեկտեմբերի 16-ին այդ ծառայության մեջ ընդգրկվեցին պրոպագանդայի և երիտասարդական խմբագրությունների աշխատակիցների մեծ մասը: Կազմվեց հերթապահության գրաֆիկ դեկտեմբերի 7-22-ը, ներառյալ շաբաթ և կիրակի օրերը»:[110]

Նպատակաուղղված աշխատանքը տվեց իր առաջին արդյունքները: Ծառայության շնորհիվ իրար գտան 17 հազար մարդ: Ծառայությանն էին դիմում ոչ միայն հանրապետության տարբեր շրջաններից, այլև նախկին ԽՍՀՄ-ի տարբեր հանրապետություններից՝ Ռուսաստանի Դաշնությունից, Վրաստանից, Ադրբեջանից, Թուրքմենստանից, Ուզբեկստանից, Ուկրաինայից, Բելոռուսիայից, Ղազախստանից, արտասահմանյան տարբեր պետություններից և քաղաքներից:

110 Մարության Ստ., «Որոնում» ծառայություն, «Եթերում է Երևանը», 1989, 2-8-ը հունվարի:

Դիմումներ էր ստացվում նաև սփյուքահայությունից:

«Որոնում» ծառայության հաղորդումները եթեր էին հեռարձակվում ՀՌ-ի առաջին ծրագրով ժամը 14-ին, 17-ին և 19-ին, հաճախ էլ 11-ին և 21-ին: Ծառայությունը գործեց մինչև 1989 թ. հունիսի 15-ը: Ընդհանուր առմամբ եթեր հեռարձակվեց 460 թողարկում. «Ամեն օր խմբագրությունը ստանում էր ավելի քան 250 հայց, 20-25 նամակ և հեռագիր՝ անհայտ կորած հարազատներին և բարեկամներին գտնելու խնդրանքով: Այդ ծառայության հաղորդումները սփոփում և հանգստացնում էին հազարավոր մարդկանց ցավը՝ ջանք չխնայելով, հնարավորին չափ օպերատիվ արձագանքելու նրանց խնդրանքներին»:[111]

«Որոնում» ծառայության փոստն աշխատում էր մեծ ծանրաբեռնվածությամբ: Նրա հասցեով ուղարկվեցին ավելի քան 10 հազար հայց՝ 50 հազար քաղաքացիների անուններով: Եթե ծառայությունը հիմնականում պատասխանում էր նամակներին և հեռախոսազանգերին, ապա ավելի ուշ կազմակերպվեց քաղաքացիների ընդունելություն. բացելով ծառայության նոր խորագիր՝ «Որոնումը» օգնեց գտնելու հարազատներին և բարեկամներին:

Իսկ 1989թ. ապրիլի սկզբներին ռադիոյի լրատվության գլխավոր խմբագրության ջանքերով եթեր հեռարձակվեց նոր պարբերական հաղորդաշար, որը կոչվեց «Որոնում-2»: Նոր ծառայության նպատակն էր որոնելու այն մարդկանց, որոնց աղետից հետո հանրապետությունից տեղափոխել էին այլ հանրապետություններ և տարածաշրջաններ: Սակայն հաղորդաշարը ռադիոունկնդիրների շրջանում մեծ ընդունելություն չգտավ և շուտով հանվեց եթերից:

Պաշտոնական լրատվություն

Որոշ ռեպորտաժներ տրվում էին նախկին ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի արտագնա նիստերից, բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ մամուլի ասուլիսներից, որտեղ օպերատիվ քննարկվում և միջոցներ էին ձեռնարկվում ստեղծված իրավիճակից դուրս գալու, Աղետի գոտում բնականոն ընթացք ապահովելու

111 Մարության Ստ., Հանրապետական ռադիոյի «Որոնում» ծառայության փոստը, «Եթերում է Երևանը»,1989, 2-8-ը հունվարի:

մասին: Երկրաշարժի հետևանքների վերացման հանրապետական հանձնաժողովում այդ նյութերը քննարկվում էին բավականին արդյունավետ և օպերատիվ: Սակայն այստեղ կարևոր դեր էր խաղում ոչ միայն լրագրողների նախաձեռնությունը, այլև այդպիսի աշխատանքների ոչ սովորական բնույթը: Զանգվածային լրատվամիջոցները մշտապես օպերատիվորեն արձագանքում էին հանձնաժողովի ընդունած փաստաթղթերին, պետական կառույցների որոշումներին՝ լսարանին իրազեկելով ընդունված որոշումների մասին: Հանրապետական թերթերում, ռադիոյով և հեռուստատեսությամբ աղետի մասին հիմնական լրատվությունը տրվում էր «այսօր» կամ «երեկ» բառերով՝ օպերատիվ ներկայացնելով հանձնաժողովի աշխատանքային առօրյան: ՀՌ-ն լսարանին պարբերաբար տեղյակ էր պահում հանրապետական և միութենական հանձնաժողովներում երկրաշարժի հետևանքների վերացման ձեռնարկվող քայլերին, լայնորեն լուսաբանում Աղետի գոտի ժամանող բարձրաստիճան պետական այրերի կատարած քայլերը: Այդ հանձնաժողովները մեծ ծավալի աշխատանք կատարեցին՝ փոխհամագործակցելով Աղետի գոտում իշխանության բոլոր աստիճանի ղեկավարների հետ, փրկարարական և վերականգնողական աշխատանքները ավելի հստակ և արդյունավետ կազմակերպելու համար:

ՀՌ-ի կողմից պաշտոնական լրատվության օպերատիվ և ժամանակին լուսաբանելը մարդկանց մեջ վստահություն և հավատ էին ներշնչում, արգելք հանդիսանում ասեկոսեների տարածմանը՝ բնակչությանը կոչ անելով ակտիվ գործողություններով օգնել վերականգնելու Աղետի գոտու ավերված գյուղերն ու քաղաքները:

Հեղինակավոր անձանց ելույթները

Երկրաշարժից հետո բազմաթիվ ելույթներ եղան հանրապետական հեռուստառադիոեթերում և մամուլում: Զանգվածային լրատվամիջոցները ժամանակին կազմակերպեցին հանրապետությունում հեղինակություն վայելող մարդկանց ելույթներն ու խոսքը: Արտակարգ իրավիճակի պայմաններում լսարանը կարիք էր զգում նման անձանց խոսքին: Այս դեպքում կարևորը ոչ այնքան

գործնական խորհուրդներն էին, որքան սփոփանքի, քաջալերանքի և համերաշխության կոչը, որը լսարանի վրա ունենում է հոգեբանական, զգացմունքային մեծ ազդեցություն:

Հիշեցնենք, որ բանավոր խոսքը, ճարտասանական ելույթները Հայաստանում ավանդաբար բարձր են գնահատվել: Դեռևս Հին Հայաստանում լայն տարածում ունեին բանավոր խոսքի տարբեր ձևերի կիրառումը: Ժողովրդական բանավոր ելույթների փորձը մեր օրերում բավականին հմտորեն օգտագործեցին ՀՌ-ն և հեռուստատեսությունը: Արտակարգ իրավիճակներում, երբ Աղետի գոտու հետ կապող միակ լրատվական միջոցը ռադիոն էր, նպատակահարմար գտան եթեր հեռարձակել սիրված բանաստեղծների և գրողների խոսքը: Առաջինը եթեր տրվեցին Սիլվա Կապուտիկյանի, այնուհետև Վահագն Դավթյանի ելույթները: Սակայն լսարանի կողմից ջերմությամբ ընդունվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Առաջինի անհուն ցավով համակված հայրապետական խոսքը, որը եթեր հեռարձակվեց դեկտեմբերի 8-ին հայկական ռադիոյով և հեռուստատեսությամբ: Մեր ժողովրդի համար այդ ծանր օրերին Ամենայն Հայոց Հայրապետի խոսքերը հույս և հավատ էին ներշնչում, որ մենք վերահաս դժբախտության մեջ մենակ չենք, մեզ հետ են համայն աշխարհի բարի կամքի տեր մարդիկ:

Կաթողիկոսի ելույթից հետո հանրապետական հեռուստառադիոխմբագրությունները մեծ թվով նամակներ և հեռագրեր ստացան, մարդիկ անկեղծ շնորհակալություն էին հայտնում Ամենայն Հայոց կաթողիկոսին ժողովրդի նկատմամբ տածած հայրական հոգատարության համար:

«Երբ ես լսեցի Վազգեն Առաջինի հայրապետական խոսքը,- խմբագրությանն ուղղված նամակում գրում է պատերազմի և աշխատանքի վետերան Վանուշ Միքայելյանը,- ինձ թվաց՝ ես լսում եմ դարերի խորքից եկող իմ ժողովրդի ձայնը: Մենք պետք է դիմակայենք դժբախտությանը, ինչպես դա եղել է մեր ժողովրդի բազմադարյա պատմության ընթացքում: Այդպիսին է մեր ճակատագիրը, այդպիսին է մեր ցավը»[112],- եզրափակում է նամակագիրը:

112 Հանրապետական ռադիոյի նամակների բաժին, հանրապետական ռադիոյի առաջին ծրագիր, 1988, 10 դեկտեմբերի:

Հատկանշական է, որ Հայրապետին էին դիմել ոչ միայն հայերը, այլև ռուսները, ասորիները, վրացիները, ուկրաինացիները, եզդիները, տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչներ, տարբեր ծառայողական դիրք ունեցող մարդիկ՝ սկսած ծառայողներից, բանվորներից մինչև ակադեմիկոսներ և նախարարներ:

Ընդհանրացնելով այս բաժնում ներկայացված նյութերը՝ կարելի է եզրահանգել, որ չնայած ստեղծված ոչ սովորական իրավիճակին, անհրաժեշտ փորձի պակասի պայմաններում, ռադիոլրագրողները հիմնականում կատարեցին իրենց առջև դրված առաջադրանքները՝ բավարարելով լսարանի լրատվական պահանջները: Իր հերթին լսարանը, մշտական կապ պահպանելով խմբագրությունների հետ, օգնեց լրագրողներին ավելի օպերատիվ և արդյունավետ արձագանքելու լսարանի պահանջմունքին՝ պատրաստելու հրատապ, հաղորդումներ և ծրագրեր:

Լրագրողների աշխատանքը Աղետի գոտում

Այս բաժնի ուսումնասիրության նյութն աննախադեպ էր ոչ միայն հայ, այլև նախկին ԽՍՀՄ-ի լրագրության պատմության ողջ ընթացքում: Տարբեր երկրների լրագրողներ, չնայած գաղափարական հակամարտությանը, համագործակցեցին միմյանց հետ, գործուն աջակցություն ցույց տալով աղետի մեջ հայտնված մարդկանց՝ նպաստեցին փրկարարական ջոկատների ձևավորմանը՝ իրենց երկրներ հաղորդելով օպերատիվ լրատվություն կատարվածի մասին, ակտիվորեն մասնակցելով հասարակական կարծիքի ձևավորմանն ու տարածմանը: Առաջին անգամ 67 երկրներից ժամանած 338 լրագրող լուսաբանեց այդպիսի մեծածավալ ողբերգություն: 557 խորհրդային լրագրողների հետ նրանք ծանրակշիռ ավանդ ունեցան հազարավոր մարդկանց փրկության գործում: Դեռ ոչ մի անգամ մարդկային ցավն ու տառապանքները չէին դարձել աշխարհի տարբեր երկրներում ապրող միլիոնավոր մարդկանց առօրյա մտածումների առարկա: Հայերի ողբերգությունը հասավ նույնիսկ Սան-Տոմե փոքրիկ պետություն, որտեղ ապրում է ընդամենը 25 հազար մարդ: Այս պետության բնակիչները որպես անվերադարձ օգնություն աղետյալներին

ուղարկեցին 50 հազար ամերիկյան դոլար:[113]

Այսպիսի գթասրտությամբ, որով համակվել էին բազմաթիվ երկրներ և ժողովուրդներ, իրենց ներդրումն ունեին նաև լրագրողները, որոնք, օբյեկտիվ և օպերատիվ լուսաբանելով դեպքերն ու իրադարձությունները, մարդկանց կոչ էին անում օգնություն ցուցաբերել աղետյալներին:

Հայաստանի ժուռնալիստների միությունը, որն աշխատում էր առանց հանգստյան օրերի, հնարավոր ամեն ինչ արել էր՝ կազմակերպելու լրագրողական կորպուսի բնականոն աշխատանքը, ստեղծել էր համապատասխան պայմաններ լրագրողների համար իրենց խմբագրություններ և գործակալություններ ուղարկելու Աղետի գոտում պատրաստված ռեպորտաժները, հարցազրույցներն ու թղթակցությունները: Իհարկե, ամեն ինչ չէ, որ ստացվում էր. փորձի, տեխնիկայի, տրանսպորտի պակասը խանգարում էր լրագրողներին հնարավորինս արդյունավետ օգտագործելու իրենց հնարավորությունները, Աղետի գոտուց հստակորեն համագործակցելու իրենց խմբագրությունների և գործակալությունների հետ: Սակայն այդ ծանր օրերին նրանք իրենց պարտքն էին համարում լինել ամենուր, ինչքան հնարավոր է՝ շատ բան իմանալ, հնարավորինս մեծ թվով մարդկանց հետ զրուցել: Լրագրողներն այցելում էին Աղետի գոտու տարբեր հատվածներ, փաստացի օպերատիվ լրատվություն հաղորդելով լսարանին Աղետի գոտում ծավալված փրկարարական և վերականգնողական աշխատանքների մասին, ներկայացնելով աղետի մեջ հայտնված մարդկանց արիությունն ու հաստատակամությունը, իրավիճակի ամբողջական պատկերը: Սպիտակի երկրաշարժի ժամանակ հատկապես կարևորվեց փրկարարական աշխատանքների լուսաբանումը, որը դարձավ լրագրողների գլխավոր թեման:

Ի տարբերություն մեր լրագրողների, Աղետի գոտում աշխատող արտասահմանյան լրագրողներն արդեն ունեին արտակարգ իրավիճակի պայմաններում աշխատելու հարուստ փորձ: Իսկ աղետի գոտում հայ լրագրողների ծավալած աշխատանքը պայմանականորեն կարելի է բաժանել մի շարք թեմաների՝

113 Գալոյան Ալ., Օգնությունը շարունակվում է, հանրապետական ռադիոյի առաջին ծրագիր, 1988, 27 դեկտեմբերի:

ա/ Աղետի գոտուց ուղարկված առաջին հաղորդագրությունները (փրկարարական աշխատանքների լուսաբանում):

բ/ Աղետյալների վկայությունները երկրաշարժի և նրա հետևանքների մասին:

գ/ Ընդօրինակման արժանի խիզախության, արիության, հերոսության, կազմակերպված գործողությունների մասին պատմող նյութեր:

Պատահաբար առաջինն Աղետի գոտում հայտնվեցին հանրապետական հեռուստատեսության լրագրողներն ու օպերատորները: Նրանք այդ ժամանակ գտնվում էին Սպիտակ գնացող ճանապարհին: Ընդհանրապես, երկրաշարժի առաջին ժամերին բավականին սուր էր զգացվում ամբողջական և մանրամասն լրատվության պակասը: Շատ լրագրողներ Աղետի գոտի էին մեկնում անկազմակերպ, տարերայնորեն՝ ցանկանալով ինչ-որ չափով լուսաբանելու իրավիճակը, օպերատիվ լրատվություն տրամադրելու լսարանին: Մեջբերենք ականատես հեռուստալրագրողների վկայությունները, որոնք հրապարակվեցին 1989 թ. «Սովետական արվեստ» ամսագրում. «Մեր ստեղծագործական խմբերից մեկը մեկնեց Սպիտակ, որպեսզի հաղորդում պատրաստի տեղի վերելակաշինական գործարանի մասին: Խումբը Սպիտակ ժամանեց երկրաշարժից 15 րոպե անց, չկար ոչ գործարանը և ոչ էլ Սպիտակը...հողը մեր ոտքերի տակ ծանր հևում էր, ստորգետնյա ցնցումները դեռևս շարունակվում էին: Ամեն կողմից մեզ վրա էին թափվում քարեր, փայտեր... չորս բոլորը արյունոտված, կիսախելագար մարդիկ էին: Մենք չգիտեինք՝ ինչով օգնել այդ դժբախտներին: Հասկացանք, որ պետք է շտապ նկարահանել և ժապավենը ուղարկել Երևան: Կատարելով նկարահանումները՝ մենք ցանկանում էինք հնարավորին չափ օգնել աղետյալներին: Մեր գիտակցության մեջ ամեն ինչ խառնվել էր՝ և՛ բնության դաժանությունը, և՛ լրագրողական պարտքը, և՛ ինչ-որ չափով մարդկանց օգնելու ձգտումը»:[114]

Հանրապետության հեռուստալրագրողների նկարահանած ռեպորտաժը եթեր հեռարձակվեց նույն օրը երեկոյան մոսկովյան հեռուստաընկերության առաջին ալիքի լրատվական-վերլուծական

114 Մտքերը բարձրաձայն, Սովետական արվեստ (այժմ՝ Արվեստ), 1989թ., № 3, էջ 13:

«Վրեմյա» ծրագրով:

ՀՌ-ի և հեռուստատեսության լրագրողներն ու օպերատորները շաբաթներ շարունակ գտնվում էին Աղետի գոտում, ռեպորտաժներ պատրաստում Լենինականից, Կիրովականից, Սպիտակից, Ստեփանավանից, ինչպես նաև աղետի ենթարկված գյուղերից ու ավաններից, օպերատիվ լուսաբանում փրկարարական խմբերի աշխատանքը, որոնք ժամանել էին ինչպես հանրապետության տարբեր շրջաններից, այնպես էլ տարբեր պետություններից: Հայ ռադիոլրագրողները կարողացան նույն օրվա գիշերը ռեպորտաժ պատրաստել Աղետի գոտուց. «Այժմ շատ կարևոր է արագ կազմակերպել փրկարարական խմբեր և ուղարկել աղետի ենթարկված շրջաններ, ժամանակը չի սպասում, նույնիսկ մեկ րոպե հետո ուշ կլինի»,- հաղորդում էին նրանք:[115]

Հայաստանի ցավն ու վիշտը լուսաբանեցին աշխարհի գրեթե բոլոր երկրների թերթերը, ռադիոն և հեռուստատեսությունը, այն հասավ մինչև Չուկոտկա, Կուրիլյան կղզիներ, Մուրմանսկ, Ավստրալիա, Ատլանտյան օվկիանոսի ճկնորսական ավանները, Ալյասկա՝ վերածվելով ընդհանուր վշտի:

Թղթակիցները ներկայացնում էին նաև Հայաստանի հյուսիսային շրջանների ճանապարհների անմխիթար վիճակը, որը, փաստորեն, դարձել էր աղետյալ շրջանները հանրապետությանը կապող հիմնական երակը, շինարարների անբարեխիղճ աշխատանքի մասին, որոնց կառուցած բազմահարկ շենքերը փլվեցին, ինչպես լուցկու տուփեր: Այս թերթերի լրագրողները ռեպորտաժներ պատրաստեցին Աղետի գոտուց, որոնց շնորհիվ բազմաթիվ երիտասարդական ջոկատներ ժամանեցին Հայաստան՝ փրկարարական անհետաձգելի աշխատանքներին մասնակցելու համար:

Լրագրողների համար չափազանց դժվար էր աշխատել Աղետի գոտում. նրանց մեծ մասը աշխատում էր նույնիսկ առանց տարրական պայմանների: Ոչ թե հետաքրքրությունից ելնելով էին նրանք մեկնում Աղետի գոտի, այլ յուրաքանչյուրը յուրովի պատմում էր այն մասին, ինչ տեսնում և լսում էր, իրենց խմբագրություններ ուղարկելով անհրաժեշտ

115 Չամչյան Հր., Ռեպորտաժ Աղետի գոտուց, հանրապետական ռադիոյի առաջին ծրագիր, 1988, 7 դեկտեմբերի:

օպերատիվ լրատվություն:

ՀՌ-ն հուզիչ ռեպորտաժ էր պատրաստել մոսկվացի փրկարար Ա. Տերենտևի մասին.«Ոչ ոք նրան չէր համոզել հավաքելու ճամպրուկը, հրշեջներից փոխ առնել անհրաժեշտ փրկարարական գործիքներ, հագուստ և մեկնել Հայաստան,-ներկայացնում է իր հերոսին ռադիոլրագրողը,- նա դժվարությամբ մեկնեց Մոսկվայից, տոմս չկար, իսկ մի քանի օր հետո նրան տեսավ ողջ երկիրը: Լենինականի Շիրակացու փողոցի բնակիչները բառացիորեն «Վրեմյա» ծրագրի հեռուստաօպերատորին խնդրում էին. «Նկարահանեք մեր եղբորը, նա փրկի՛չ է, հերո՛ս»:

Նմանատիպ ակնարկները բավականին մեծ թիվ էին կազմում հանրապետական հեռուստառադիոհաղորդումներում և թերթերի էջերում:

Ինչպես ցույց տվեց Աղետի գոտում լրագրողական աշխատանքային փորձի վերլուծությունը, լրագրողների մեջ աստիճանաբար բարձրանում էր ինչ-որ չգիտակցված բողոքի ձայն, որոնց աշխատանքն այդ ծանր պայմաններում լավ չէր կազմակերպված, նրանց չէին տրամադրվել անհրաժեշտ փոխադրամիջոցներ՝ փրկարարական աշխատանքները լուսաբանելու համար: Նույնիսկ արտասահմանցիները գիտեին, որ Հայաստանում չկար անհրաժեշտ տեխնիկա՝ երկրաշարժից հետո փրկարարական աշխատանքները կազմակերպելու համար, հանրապետությունում չկային փրկարարական ջոկատներ: Աղետի առաջին օրը տուժածներին և վիրավորներին հիմնականում հանում էին ողջ մնացած հարազատները և կամավորները: Դեռ լավ է, որ տարբեր երկրներից և հանրապետություններից ժամանած փրկարարական ջոկատները ժամանակին տեղ հասան, սակայն ամենաթանկ ժամերը, տասնյակ ժամերը բաց էին թողնված:

Ընդհանուր առմամբ ՀՌ-ով եթեր հեռարձակվեց փրկարարական աշխատանքներին նվիրված 70 ռեպորտաժ:

Կույր տարերքը խլեց բազմաթիվ լրագրողների և նրանց ընտանիքների կյանքեր, մեծապես տուժեցին Լենինական, Կիրովական, Սպիտակ և Ստեփանավան քաղաքներում գտնվող ռադիոկայաններն ու քաղաքային թերթերի խմբագրությունները:

ՀՌ-ի ենթակայության ներքո գտնվող Լենինականի քաղաքային

ռադիոկայանը[116] և քաղաքային «Բանվոր» թերթը (այժմ՝ «Գյումրի»), որոնք տեղավորված էին միևնույն շենքում, երկրաշարժի ժամանակ հիմնահատակ քանդվեցին:

Ողջ մնացած յոթ լրագրողներ աղետից մեկ շաբաթ անց հրատարակեցին քաղաքային թերթի հերթական համարը, իսկ քաղաքային ռադիոկայանը չկարողացավ թերթի նման օպերատիվ ռադիոհաղորդումներ կազմակերպել. շենքի փլատակների տակ էր մնացել հիմնական տեխնիկան, և միայն արտակարգ միջոցառումների շնորհիվ, բարձրախոսների օգնությամբ հնարավոր դարձավ աշխատեցնել շարժական ռադիոկայանը: Քաղաքային ռադիոկայանի աշխատանքները կազմակերպելու համար մասնագետներ հրավիրվեցին Երևանից և Մոսկվայից, որոնք կարճ ժամանակահատվածում կարողացան ապահովել ռադիոկայանի հեռարձակումը: Բարձրախոսները Լենինականի մարդաշատ վայրերում տեղադրվեցին դեկտեմբերի 13-ից սկսած: Երկրաշարժից մեկ շաբաթ անց լրագրողները քաղաքացիական պաշտպանության ջոկատների համատեղ ջանքերով կարողացան կազմակերպել և հեռարձակել առաջին ռադիոհաղորդումները բարձրախոսների օգնությամբ:

Լենինականում քաղաքային ռադիոկայանի աշխատանքները բարձրախոսների օգնությամբ կազմակերպվեցին մինչև 1989 թ. հունիսը, երբ մոնտաժվեցին նոր ռադիոկայանի հիմնական սարքավորումները և ձևավորվեց ռադիոխմբագրության ստեղծագործական կազմը: Այդ աշխատանքների կազմակերպմանն օգնեց նաև Հայրենական մեծ պատերազմի փորձը, երբ բարձրախոսների միջոցով բնակչությանը տեղյակ էր պահվում հնարավոր ռմբակոծությունների մասին:

---

116 Գյումրիի ներկայիս ռադիոկայանը «Լենինականյան կյանք» անվանումով հիմնադրվել է 1967 թվականին, այն եթեր է դուրս գալիս ամեն օր 45 րոպե տևողությամբ: Չնայած երկրաշարժի ժամանակ ռադիոկայանը վնասվեց, բայց հետագայում շարժական ռադիոկայանի օգնությամբ կարողացավ եթեր դուրս գալ և լուսաբանել հայրենի քաղաքում փրկարարական և վերականգնողական աշխատանքների ընթացքը: Այժմ Գյումրու ռադիոկայանը մաս է կազմում Հայաստանի հանրային ռադիոյին: Եթեր է հեռարձակվում «Շիրակի ռադիոկայան» անվանումով: Բացի «Շիրակի ռադիոկայանից», Գյումրիում եթեր է հեռարձակվում նաև «Շանթ» մասնավոր ռադիոկայանը:

Այս փորձը հետագայում՝ 1993-94 թթ. կիրառվեց Սյունիքի մարզային ռադիոկայանի կողմից, երբ ադրբեջանական օդուժը ռմբակոծում էր սահմանային Կապան մարզկենտրոնը:[117]

Դեկտեմբերի 7-ի հետևանքներն առավել ողբերգական ընթացք էին ունեցել Սպիտակում: Սպիտակցի լրագրողների մեծ մասը զոհվել էր:[118]

Ինչպես Լենինականի, այնպես էլ Սպիտակի, Կիրովականի, Ստեփանավանի ռադիոկայանների աշխատանքը բարձրախոսների միջոցով կազմակերպվեց մինչև 1989 թ. հունիս ամիսը:

Տեղական ռադիոն բարձրախոսների միջոցով կազմակերպեց առավել կարևոր հաղորդումների ծրագիր, որի միջոցով եթեր հեռարձակվեցին ճանաչված մարդկանց ելույթներ, հանրապետությունում հայտնի գրողների և դերասանների խոսքը: Դեկտեմբերի 15-ին Սպիտակում բարձրախոսների օգնությամբ բնակչությանը դիմեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, երջանկահիշատակ Վազգեն Առաջինը, որը համբերության, հանգստության, սիրո կոչ արեց աղետյալ ժողովրդին: Կաթողիկոսն անմեղ զոհերի հիշատակին մատուցեց հոգեհանգստի պատարագ, հաղորդվեց հոգևոր երաժշտություն:[119]

Երկրաշարժի հետևանքների վերացման առաջին օրերից շինարարական հրապարակներում ստեղծվել էր արտադրական և բնակելի շենքերի կառուցման աշխատանքային մթնոլորտ: Տեղացի լրագրողները աշխատում էին մեծ նվիրումով ու պարտքի զգացումով: Աղետի գոտում աշխատող լրագրողների համատեղ ուժերով կազմակերպվեցին մի շարք ռադիոծրագրեր, ինչպես, օրինակ՝ «Անձնագիր №», «Աղետի գոտու հիմնահարցերը», «Վերականգնման աշխատանքների խրոնիկա» և այլ հաղորդումներ: Նշված հաղորդումներում հնչեցին ռեպորտաժներ Աղետի գոտում նոր կառուցվող թաղամասերի, գյուղերի, հիվանդանոցների, դպրոցների, մշակույթի նոր օջախների մասին: Այդ ծրագրերում հաճախակի ելույթ էին ունենում շինարարական հրապարակի ինժեներները, ճարտարապետները, շինարարները, պատվիրատուները:

117 Обзор провинциальных средств массовой информации Армении, Средства массовой информации Армении, Ереван, 1996, с. 74.

118 Борисова С., Живые и мертвые, Журналист, Москва, 1989, № 2, с. 59.

119 Հատուկ թողարկում, հանրապետական ռադիոյի 1-ին ծրագիր, 1989, 15-ը դեկտեմբերի:

Բարձրախոսների միջոցով պարբերաբար հաղորդվում էին զգուշացումներ կիսավեր շենքերի պայթեցման և նոր բնակելի շենքերի համար համապատասխան շինհրապարակներ պատրաստելու, մեզ օգնության ժամանած Ուկրաինայի շինարարների կողմից առաջին բնակելի տան հանձնման արարողության, ուզբեկ շինարարների կառուցած բնակելի շենքերի հանձնման առթիվ կազմակերպված հանդիսությունների, իտալական և նորվեգական ավանների բացման և այլնի մասին:

Տեղի բնակչության համար տեղական ռադիոն կանոնավոր եթեր էր հեռարձակում երաժշտական ողջույններ, համարներ կամ գրական-երաժշտական կոմպոզիցիաներ: Աստիճանաբար տեղական ռադիոկայանների պարբերաբար չընդհատվող ռադիոթողարկումները դարձան Աղետի գոտու բնակիչների կենցաղի բաղկացուցիչ մասը՝ դառնալով փյունիկի նման վերհառնող ավերված քաղաքների և գյուղերի ամենօրյա վերելքն արձանագրող տարեգիրներ:

Տեղական ռադիոհաղորդումների տեխնիկական որակն այնքան էլ բարձր չէր, որը հետևանք էր ստեղծված ծանր իրավիճակի: Օրինակ՝ Լենինականում «ռադիոտուն» դարձավ ոչ մեծ զինվորական վրանը, որը տեղադրվեց քաղաքի զբոսայգիներից մեկում, այդտեղ տեղադրվեցին համապատասխան սեղաններ, ձայնագրման, մոնտաժման և երաժշտական ձևավորման մի քանի ռադիովահանակներ: Չնայած նման պայմաններին՝ լրագրողները պատասխանատվության մեծ զգացումով կատարեցին իրենց մասնագիտական պարտականությունները՝ բոլորի հետ հավասար կրելով Աղետի գոտում ստեղծված ծանր պայմանները:

Իհարկե, այս տիպի անսովոր առաջադրանքներ լրագրողները կատարում էին այնքան, որքան կարելի էր օգտագործել տեղական ռադիոյի հնարավորություններն ու առանձնահատկությունները:

Ռադիոլրագրողները շաբաթներ շարունակ հերթապահում էին հանրապետության տարբեր հիվանդանոցներում՝ հրաշքով փրկված աղետյալների մոտ, թարմ հետքերով գրի առնում նրանց պատմածները երկաթբետոնե գերության մեջ եղած ժամանակ: Որպեսզի ամբողջական պատկերացում կազմենք, թե ինչ էր տեղի ունեցել ավերակների տակ մնացած մարդկանց հետ, ներկայացնենք

այդ օրերին ռադիոլրագրողների կողմից արված ձայնագրություններից մի քանիսը, որոնք հեռարձակվեցին ՀՌ-ի տարբեր ծրագրերով:

Այդպիսի ձայնագրությունները դեռևս իրենց նախադեպը չունեին հայրենական ժուռնալիստիկայում, առաջին անգամ եթեր էին տրվում այնպիսի մարդկանց վկայությունները, որոնք վերապրել էին ողջ ողբերգությունը՝ «հայտնվելով այն աշխարհում»: Այս ձայնագրություններն արժեքավոր են նաև նրանով, որ հետագայում լրագրողների, հոգեբանների և սոցիոլոգների համար կարող են դառնալ ուսումնասիրության թեմա և գիտական մշակման նյութ:

«Հինգշաբթի, այս ժամին» հաղորդաշարի աշխատակիցների կողմից կատարած հեռախոսային հարցումների արդյունքներով ռադիոունկնդիրների մեծամասնությունը գոհ էր ստացված տեղեկատվությունից, գոհ էր նաև Աղետի գոտու բնակչությունը, որը եթեր հեռարձակված ռադիոհաղորդումներից սպառիչ և օպերատիվ տեղեկություններ ստացավ փրկարարական և վերականգնողական աշխատանքների մասին: Ռադիոլսարանի կողմից հավանության էին արժանացել «Հինգշաբթի, այս ժամին», «Հատուկ թողարկում», «Մեր թղթակցի ռեպորտաժը Սպիտակի գյուղերից», «Դիրքորոշում», «Հրապարակախոսի ամբիոն», «Աղետի էպիկենտրոնում», «Լրատվական թողարկում», «Որոնում», «Անձնագիր №», «Վերականգնողական աշխատանքների խրոնիկա» և «Սուրհանդակ» հաղորդաշարերն ու ծրագրերը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՅԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀՌ-ՈՒՄ

Նախկին ԽՍՀՄ-ում ազգամիջյան բախումները, առաջին հերթին, հետևանք էին ազգային հարցում պետության վարած սխալ քաղաքականության, որն ի վերջո բերեց մեծ ընդհարումների ու արյունահեղության: Խորհրդային պետության կազմավորման առաջին տարիներին՝ 1920-ական թվականներին, սխալ ազգային քաղաքականության հետևանքով մի շարք միութենական հանրապետություններում ոտնահարվեցին ազգային փոքրամասնությունների իրավունքները, որոնք մերթ ընդ մերթ վերածվում էին կամ բազմամարդ ցույցերի, կամ զինված ընդհարումների:

Ազգային հարցը հատկապես սուր բնույթ էր ստացել անդրկովկասյան և միջինասիական հանրապետություններում, որտեղ 1980-ական թվականների վերջին ծագեցին մի շարք էթնիկական բախումներ: Ազգային հարցի բարձրացումն առավել կազմակերպված բնույթ կրեց Լեռնային Ղարաբաղում. արցախահայությունն արդարացի պահանջ բարձրացրեց՝ վերամիավորվելու մայր Հայաստանին և ազատվելու Ադրբեջանի հայատյաց քաղաքականությունից:

Կենտրոնական զանգվածային լրատվամիջոցները հենց սկզբից չպաշտպանեցին և միտումնավոր չլուսաբանեցին արցախահայության ազգային-ազատագրական պայքարը: Այդ առումով հատկապես աչքի ընկան պետության ամենախոշոր լրատվամիջոցները՝ ՏԱՍՍ(այժմ՝ ԻՏԱՐ-ՏԱՍՍ) լրատվական գործակալությունը, «Վրեմյա» գլխավոր լրատվական հեռուստածրագիրը և կուսակցական գլխավոր պաշտոնաթերթ «Պրավդան», որոնք, հավատարիմ մնալով կոմունիստական կենտրոնի վարած ազգային քաղաքականության հիմնադրույթներին, ոչ միայն լռության մատնեցին և աղավաղեցին փաստերը, այլև քամահրական վերաբերմունք ցուցաբերեցին արցախահայության պահանջատիրությանը: Այնինչ, այդ պայքարի հիմնադրույթները պաշտոնապես ամրագրվել էին Լեռնային Ղարաբաղի օրենսդիր բարձրագույն կառույցի կողմից:

Ինչպես էին աշխատում լրագրողներն այդպիսի արտակարգ իրավիճակներում: Փաստորեն կոմունիստական ամբողջատիրության ողջ պատմության ընթացքում լրագրողներն առաջին անգամ անդրադարձան և լուսաբանեցին մեր հասարակության ամենանուրբ և ամենածանր թեման՝ ազգամիջյան հակամարտությունները: Տարիներ շարունակ ազգային փոքրամասնությունների մասին խոսելը համարվում էր անիմաստ և ոչ տեղին: Նախկին ԽՍՀՄ-ի բոլոր իրավական փաստաթղթերում ազգային հարցը ներկայացվում էր որպես «անվերադարձ» լուծված, և բնական է՝ լրագրողները չէին կարող անդրադառնալ մի թեմայի, որը գոյություն չուներ: Վերակառուցման տարիներին ազգային փոքրամասնությունների հետ կապված հիմնահարցերն այնպիսի սրությամբ բարձրացվեցին, որ լրագրողներից շատերը պատրաստ չէին ստեղծված արտակարգ իրավիճակներում լուսաբանելու այդպիսի բախումները: Նրանցից շատերը, չխորանալով փաստերի մեջ, միտումնավոր սխալ էին մեկնաբանում համակարտության ծագման պատճառները, հաճախ կամայականորեն աղավաղում էին փաստերը՝ փորձելով պահպանել «զուգակշռություն» կոչվող սխալ գաղափարական մոտեցումը՝ բախման հիմնահարցերը մղելով երկրորդ պլան:

Եթե 1988թ. մարտի 21-ին քաղբյուրոյի արտակարգ նիստի ժամանակ, երբ քննարկվում էր Սումգայիթ քաղաքում փետրվարի 26-28-ը տեղի ունեցած եղեռնագործությունը, տրվեր օբյեկտիվ քաղաքական և իրավական գնահատական, չէինք ունենա հազարավոր զոհեր, իսկ հարյուր հազարավոր մարդիկ չէին դառնա փախստական, լրագրողները լսարանին կհասցնեին դեպքերի օբյեկտիվ պատկերը, և ոչ թե կապակողմնորոշեին հասարակական կարծիքը:

Արցախյան ազատամարտի լուսաբանման առանձնահատկությունները ՀՌ-ում

ՀՌ-ն սկզբնական շրջանում հասկանալի գաղափարական ճնշման պատճառներով չէր արձագանքում այդ դեպքերին՝ հիմնականում եթեր հեռարձակելով Մոսկվայից ստացված պաշտոնական լրատվությունը, որը տևեց մոտ ութ ամիս: Եթե երկրաշարժի հետևանքների վերացման

լուսաբանման ժամանակ ՀՌ-ն օպերատիվ արձագանքում էր դեպքերին, ապա այս դեպքում, բացառությամբ 1988թ. մարտի 28-ի Սումգայիթի եղեռնագործությանը նվիրված ռադիոհաղորդման, ՀՌ-ի լրագրողները մինչև նույն թվականի նոյեմբերը չկարողացան դույզն-ինչ արձագանքել Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ ծավալված դեպքերին: Այդ ժամանակամիջոցում պասիվ էին նաև հանրապետական մամուլն ու հեռուստատեսությունը: Նույնիսկ ամռան թեժ ամիսներին, երբ ամբողջ լեռնային երկրամասը քաղաքական գործադուլի էր դուրս եկել, հանրապետական լրատվամիջոցները նյութեր էին պատրաստում հանրապետության առողջարանների մասին՝ զարմանք արտահայտելով զբոսաշրջիկների և հանգստացողների սակավության առիթով: Այդ ժամանակահատվածում լսարանը փաստորեն հանրապետական լրատվամիջոցներից համարյա լրատվություն չէր կարողանում ստանալ: Իրականում միակ աղբյուր էր մնացել… Երևանի թատերական հրապարակը, որը 1988թ. հուլիսի 3-4-ը «Զվարթնոց» օդակայանավայանում տեղի ունեցած դեպքերից հետո շրջափակվեց խորհրդային բանակի կողմից: Կիսատ-պռատ լրատվությունը, հասարակական կարծիքից իրական դեպքերի քողարկումը հանգեցրեց նոր արյունալի իրադարձությունների: Իրար հաջորդեցին Ադրբեջանի կողմից ձեռնարկված մի շարք պատժիչ գործողություններ: Սումգայիթի հայկական ջարդերին հետևեցին հայ բնակչության զանգվածային վտարումը պատմական հայրենիքի մաս կազմող հայկական գյուղերից, ինչպես նաև՝ Բաքվից և Գանձակից, կենտրոնի կողմից կանխամտածված ազգամիջյան բախումներ հրահրվեցին Ադրբեջանի հայաբնակ վայրերում: Եվ միայն 1988թ. նոյեմբերին, երբ Հայաստան հորդեցին հայ փախստականների առաջին թալանված քարավանները, հանրապետական լրատվամիջոցները փորձեցին արձագանքել դեպքերին՝ լսարանին հաղորդելով օպերատիվ լրատվություն: Ցավոք, դա երկար չտևեց և արդեն մեկ ամիս անց մյուս վերահաս աղետը՝ երկրաշարժը, առժամանակ պիտի ստվերեր այդ դեպքերը, որոնք նոր ուժով պիտի պոռթկային արդեն հաջորդ ամիսներին և տարիներին:

Հակամարտության առաջին տարիներին Մոսկվան Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ պարբերաբար կիրառում էր լրատվական

շրջափակում, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը երկար ժամանակ լսարանից թաքցնում էր հակամարտության դրդապատճառներն ու շրջափակման փաստը: Դեպքերն ու իրադարձություններն այնպես էին ներկայացվում («Պրավդա», «Վրեմյա» լրատվական հեռուստածրագիրը և ՏԱՍՍ լրատվական գործակալությունը), կարծես կատարվածն աննշան դեպք էր, որն արդեն այդ ժամանակամիջոցում ստացել էր իր լուծումը:

Արցախյան ազատամարտի լուսաբանմանը մասնակցեցին տասնյակ լրագրողներ՝ աշխարհի 13 երկրներից. իրենց մասնագիտական պարտքը կատարելիս Լեռնային Ղարաբաղում զոհվեցին տարբեր ազգության վեց լրագրող, իսկ տասնչորսը վիրավորվեց:

Եթե առաջին շրջանում, սկսած 1988թ. փետրվարից մինչև դեկտեմբեր, Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող դեպքերը հիմնականում լուսաբանում էին մոսկովյան թերթերը, ռադիոն և հեռուստատեսությունը, իսկ տեղական լրատվամիջոցները հիմնականում վերահեռարձակում էին այդ նյութերը, ապա երկրորդ շրջանում հանրապետական զանգվածային լրատվամիջոցները աշխուժացրին իրենց աշխատանքը: Սկսած 1989թ., երբ ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի այսպես կոչված «կազմկոմիտեն»՝ Ա.Վոլսկու ղեկավարությամբ, հանրապետական լրատվամիջոցները ավելի հաճախակի սկսեցին անդրադառնալ այդ թեմատիկային, սակայն գաղափարական ճնշումների պատճառով չկարողացան զորավիգ լինել 1988թ. վերջին անօրինաբար ձերբակալված «Ղարաբաղ» կոմիտեի ղեկավարներին, որոնց տեղափոխեցին մոսկովյան հայտնի բանտերից մեկը: Երկրորդ շրջանը տևեց մինչև 1989թ. հունիսը, երբ բանտից ազատվեցին «Ղարաբաղ» կոմիտեի ղեկավարները: Այդ շրջանում պայքարը մտավ նոր որակական փուլ, և սկսվեց օրինական ճանապարհով Արցախի ճանաչման գործընթացը, որն ամրագրվեց 1989թ.դեկտեմբերի 1-ին Հայաստանի Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային ժողովի ընդունած համատեղ փաստաթղթով: Փաստաթղթում նշվում էր, որ Հայաստանի Հանրապետությունը, ելնելով ազգերի ինքնորոշման իրավունքից, հարգում է Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության խնդրանքը և ընդունում իր կազմի մեջ: Այս փուլից

սկսվում է պայքարի լուսաբանման երրորդ շրջանը, որը տևեց մինչև 1991թ. սեպտեմբերի 2-ը, երբ արցախահայությունը, օգտվելով ազգերի ինքնորոշման իր իրավունքից, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը հռչակեց անկախ հանրապետություն՝ ձեռնամուխ լինելով պետությանն անհրաժեշտ կառույցների ձևավորմանն ու կառուցմանը: Այդ շրջանում ՀՌ-ի լրագրողները սկսեցին հաճախակի այցելել Արցախ, լինել տարբեր շրջաններում՝ այնտեղից պատրաստելով բազմաթիվ ռեպորտաժներ և հարցազրույցներ Կազմկոմիտեի աշխատանքի, մարտական գործողությունների մասին, և, հատկապես, 1991թ. ապրիլի 30-ին Գետաշենում տեղի ունեցած դեպքերի, երբ խորհրդային բանակը «Կոլցո»(«Օղակ») օպերացիայի ժամանակ հայաթափեց հայկական հինավուրց գյուղերը: Այդ շրջանում ՀՌ-ն արտակարգ իրավիճակի պայմաններում պատրաստեց և հեռարձակեց տասնյակ ռեպորտաժներ, հարցազրույցներ Արցախում և նրա շուրջ ստեղծված իրավիճակի մասին՝ լսարանին տրամադրելով օպերատիվ և օբյեկտիվ լրատվություն տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

Իսկ չորրորդ շրջանն ընդգրկում է 1991թ. սեպտեմբերի 2-ից մինչև 1994թ. մայիսի 12-ը, երբ երկարատև ազատամարտից հետո արցախահայությունն ազատագրեց Ադրբեջանի կողմից օկուպացված իր տարածքների մեծ մասը, դիմակայեց թշնամու ռազմական ճնշմանը՝ ջախջախիչ հարվածներ հասցնելով նրան՝ ստիպեց ստորագրել հրադադարի պայմանագիր, որը պահպանվում է մինչև օրս: Այս շրջանը բավականին արդյունավետ էր ՀՌ-ի համար: Հայաստան-Արցախ կապի ամենաօպերատիվ միջոցը լինելով՝ ՀՌ-ն եթեր հեռարձակեց հարյուրավոր ռեպորտաժներ, ակնարկներ, հարցազրույցներ, թղթակցություններ ԼՂՀ-ում տեղի ունեցող մարտական գործողությունների մասին: Տնտեսական շրջափակման և էներգետիկ ճգնաժամի պայմաններում ՀՌ-ն, փաստորեն, դարձել էր ամենահուսալի զանգվածային լրատվամիջոցը, և պատահական չէր, որ այդ ժամանակահատվածում ամենամեծ լսարանը ռադիոյինն էր: Էներգետիկ ճգնաժամի տարիներին հանրապետության բնակչության 65 տոկոսն օրվա օպերատիվ և հրատապ լրատվությունն ստանում էր ՀՌ-ից, որն այդպիսին մնաց մինչև պատերազմի հաղթական ավարտը:

Այդ տարիների՝ ՀՌ-ի պատրաստած լրատվությունից առանձնապես հուզիչ էր 1992թ. մայիսի 9-ի Հայաստանի և Արցախի ռադիոլրագրողների համատեղ պատրաստած գիշերային հաղորդումը Շուշիից, երբ եթեր հեռարձակվեց «Հարսանիք լեռներում» ռազմական օպերացիայի հաջող ավարտի մանրամասները պատմող ռեպորտաժը, որի արդյունքում հայ ազատամարտիկները լեգենդար Կոմանդոսի հրամանատարությամբ ընդամենը մի քանի օրվա ընթացքում ազատագրեցին հայոց հինավուրց Շուշին: Այս իրադարձությունը լուսաբանեցին հանրապետական բոլոր զանգվածային լրատվամիջոցները:

ՀՌ-ն, իր հետագա հաղորդումներում բազմիցս անդրադառնալով Արցախում ծավալված ազատամարտի թեմատիկային, եթեր հեռարձակեց մարտական գործողությունների ժամանակ արված ձայնագրություններ՝ ներկայացնելով մեր նորօրյա հերոսների սխրագործությունների մասին պատմող բազմաթիվ ակնարկներ և ռեպորտաժներ:

ՀՌ-ն տարեգրի վկայությամբ և ջանասիրությամբ արձանագրեց արցախահայության բոլոր հաղթանակները՝ սկսած Խոջալուից, որին հետևեցին Շուշին, Բերդաձորը, Հադրութի և Մարտակերտի գյուղերի ազատագրումը, Մարտունու շրջանի հերոսական պաշտպանությունը՝ Հայաստանի ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի հրամանատարությամբ, Շահումյանի շրջանի հայդուկների պայքարը՝ Շահեն Մեղրյանի հրամանատարությամբ, Լաչինի միջանցքի բացումը, որով ցամաքային կապ հաստատվեց Հայաստանի և Արցախի միջև: Հետևողականորեն լուսաբանելով ԼՂՀ-ի շուրջ անվտանգության գոտու ստեղծման ժամանակագրական դեպքերը, ինչպես նաև հարակից շրջաններում (Քելբաջար, Աղդամ, Կուբաթլի, Ֆիզուլի, Ջեբրաիլ) թշնամական հենակետերի ոչնչացումը, որը ԼՂՀ-ն հասցրեց երկար սպասված հրադադարի:

Այս շրջանում ՀՌ-ն պարբերաբար եթերը տրամադրում էր նաև հանրապետության և Արցախի ճանաչված մտավորականներին, որոնք, օգտվելով ՀՌ-ի ընձեռած օպերատիվ կապի հնարավորություններից, քաջալերանքի կոչով դիմում էին Հայաստանի և Արցախի բնակչությանը՝ դիմակայելու և հաղթելու թշնամուն: Ալվարդ Պետրոսյանի, Արմեն

Հովհաննիսյանի, Զորի Բալայանի, Բագրատ ՈՒլուբաբյանի, Ալվարդ Բարխուդարյանի, Ժաննա Գալստյանի, Վարդան Հակոբյանի և այլոց հրապարակախոսական ելույթները ջերմ արձագանք էին գտնում ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում:

1994թ. մայիսից սկսվեց ազգային-ազատագրական պայքարի հինգերորդ շրջանը, որը շարունակվում է մինչ օրս: Եթե նախորդ շրջանում ՀՌ-ն լուսաբանում էր արցախահայության զինված գոյապայքարը, ապա հինգերորդ շրջանում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, հետագայում Արցախի Հանրապետության կայացման կարևոր փուլերը, անկախ պետականության պայմաններում ձևավորվող պետական կառույցների աշխատանքը, բանակի կայացումը, ավերված գյուղերի վերականգնումը, ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերը հարցը խաղաղ ճանապարհով լուծելու գործընթացը և այլն:

Բացառություն կազմեց 2016թ. Ապրիլյան պատերազմի ժամանակահատվածը, երբ նախահարձակ թշնամին ցանկանում էր ուժի դիրքերից հասնել ցանկալի արդյունքի, որը նրան չհաջողվեց: Այդ ժամանակահատվածում Հանրային ռադիոն, հատկապես նրա լրատվական ծառայությունը՝ «Ռադիոլուրն» աշխատում էր արտակարգ ռեժիմի պայմաններում և հեռարձակում էր անընդհատ թարմացվող օպերատիվ և հրատապ լրատվություն, որն հիմնականում ստանում էր սեփական թղթակցական ցանցից:

Այժմ ԼՂՀ-ի Հայաստանի ռադիոկայանի միջոցով հնարավոր է դարձել կանոնակարգելու երկու հայկական հանրապետությունների ռադիոկայանների բնականոն աշխատանքը, հատկապես, օպերատիվ լրատվության ասպարեզում: Ռադիոկայանները պարբերաբար միմյանց են տրամադրում փոխանակային հաղորդումներ, օգնում պատրաստելու ապագա ռադիոլրագրողներ, հաճախակի փոխայցելությունների միջոցով փորձի փոխանակում կատարում այդ բնագավառին առնչվող մասնագիտական հարցերի շուրջ:

Ընդհանրացնելով ՀՌ-ի գործունեությունը Լեռնային Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարի և դրանից հետո հաստատված զինադադարի ժամանակ՝ կարելի է եզրակացնել, որ օպերատիվ զանգվածային լրատվամիջոցը, չնայած առաջին շրջանի պարտադրված պասիվությանը, հետագայում վերագտավ իր տեղը

և հատկապես չորրորդ շրջանում գործեց մեծ արդյունավետությամբ և օպերատիվությամբ՝ գերազանցելով հանրապետական մյուս զանգվածային լրատվամիջոցներին: Եթե առաջին, երկրորդ և երրորդ շրջաններում ռադիոլրագրողները հիմնականում հաղորդում էին տեքստային նյութեր, ապա չորրորդ և հինգերորդ շրջաններում մեծամասամբ եթեր հեռարձակեցին ձայնագրություններ՝ մասնակիցների կենդանի խոսքով:

Հետագա տարիներին ՀՀ հանրային ռադիոյում և մի շարք մասնավոր ռադիոկայաններում հիմնվեցին զինվորական թեմատիկայով մի շարք գերատեսչական և հեղինակային հաղորդաշարեր, որոնցից կարելի է նշել գերատեսչական, ՊՆ «Ասպարեզ» /1992թ./, Հանրային ռադիոյի հեղինակային «Ապրելու բանաձև» ծրագիրը, որը եթեր է հեռարձակվում 2003թ-ից մինչ օրս (հեղինակ-վարող Գոհար Մարտիկյան): Լրատվական ռադիոյի հեղինակային «Հետախույզի օրագիրը» հաղորդման հեղինակն է հայկական առաջին դիվերսիոն-հետախուզական ջոկատի հրամանատար Վովա Վարտանովը:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻ ՓՈՒԼԸ

Ալեք Մանուկյան, 5, Հայաստանի հանրային ռադիո

1. Հայաստանի հանրային ռադիոն արդի փուլում

Անկախ պետություն հռչակվելուց հետո Հայաստանի Հանրապետության զանգվածային լրատվամիջոցները, այդ թվում նաև ՀՌ-ն արմատական և կառուցվածքային փոփոխությունների ենթարկվեցին: Նոր պայմաններից ելնելով՝ անհրաժեշտություն էր զգացվում լրատվամիջոցների աշխատանքը համապատասխանեցնել նորաստեղծ ազգային պետության շահերին ու գաղափարախոսությանը: ՀՌ-ում այդ գործընթացն սկսվեց կառուցվածքային փոփոխություններով. նախկին հեռուստառադիոպետկոմի փոխարեն 1992 թվականին ստեղծվեց նոր հեռուստառադիովարչություն, որի համակարգում Հայաստանի ռադիոմիավորումը դարձավ ինքնուրույն կազմակերպություն՝ իրավաբանական անձի կարգավիճակով:

Ռադիոընկերության աշխատանքն արդյունավետ դարձնելու նպատակով նախկին գլխավոր խմբագրությունների փոխարեն հիմնվեցին երեք նոր ռադիոգործակալություններ՝

1. «Հանրապետության ձայն» գործակալություն, որը ներառեց նախկին հասարակական-քաղաքական, երիտասարդական, մանկապատանեկան, գրական-գեղարվեստական գլխավոր խմբագրությունների աշխատանքը, ինչպես նաև «Երևան» և «Եզդիների համար» ծրագրերը:

2. Ինֆորմացիոն-լրատվական գործակալություն, որը կատարում էր նախկին ինֆորմացիայի գլխավոր խմբագրության աշխատանքը:

3. «Արաքս» գործակալություն, որը հիմնականում հաղորդումներ էր պատրաստում արտերկրի համար և կատարում սփյուռքի համար տրվող հաղորդումների նախկին գլխավոր խմբագրության աշխատանքը:

Ձևավորվեցին նաև առանձին, ինքնուրույն միավորումներ: Երաժշտական «Մեղեդի» և «Սպորտ» միավորումների խմբագրությունները շարունակեցին աշխատել հեռուստատեսության նույնատիպ խմբագրությունների հետ:

«Մեղեդի» միավորման մեջ ներառվեցին հեռուստառադիովարչության բոլոր երաժշտական կոլեկտիվները (ժողգործիքների անսամբլ, սիմֆոնիկ նվագախումբ, ջութակահարների անսամբլ, ժողովրդական-ազգագրական երգի համույթ, «Արևիկ» մանկական երգչախումբ, կամերային երգչախումբ, էստրադային-սիմֆոնիկ նվագախումբ): Հետագա տարիներին ռադիոընկերությունը նոր կառուցվածքային փոփոխությունների ենթարկվեց. չդիմանալով ժամանակի փորձությանը՝ լուծարվեց «Հանրապետության ձայն» գործակալությունը, մի շարք ծրագրեր դարձան խմբագրություններ, «Արաքս» գործակալությունը վերանվանվեց «Հայաստանի ձայն», որն ավելի սերտացրեց կապը Սփյուռքի հայ գաղթօջախների հետ: «Հանրապետության ձայն» գործակալությունը ռեպորտաժներ, հարցազրույցներ, թղթակցություններ պատրաստեց մարզերից ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից, ակնարկներ՝ մեր ժամանակակիցների մասին: Ռադիոլրագրողներն անաչառ ներկայացնում էին հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակը, այն դժվարություն-խոչընդոտները, որոնց հանդիպում

էին արտասահմանցի մեր բարեկամները՝ տնտեսության կառավարման մեխանիզմների անկատարության, գործարարների համար նպաստավոր պայմաններ չստեղծելու, թղթարարության և բյուրոկրատական քաշքշուկների մասին: Հաճախակի եթեր էին տրվում տեսություններ հանրապետական թերթերի էջերից՝ ներկայացնելով հայրենիքում գործող ավանդական ու նոր կուսակցությունների, անկախ, կառավարամետ պարբերականների տեսակետներն ու վերլուծությունները Հայաստանում և արտերկրում տեղի ունեցող կարևոր դեպքերի, փաստերի և իրադարձությունների մասին: Գործակալությունը մեծ աշխատանք էր կատարում արտերկրի մեր հայրենակիցներին հասցնելու, քարոզելու մեր ազգային, հոգևոր արժեքները, ինչպես նաև հաղորդելու հայաստանյան մշակութային կյանքի առավել ուշագրավ նորությունները:

Հայաստանի ազգային ռադիո

ՀՌ-ի համար կարևոր իրադարձություն էր 1995 թ-ի հոկտեմբերի 15-ին նախկին Տեղեկատվության նախարարության կոլեգիայի որոշումը, որով ռադիոն անջատվեց հեռուստատեսությունից՝ կոչվելով Հայաստանի ազգային ռադիոընկերություն (այժմ՝ Հանրային ռադիո): Ազգային ռադիոընկերությունն անկախ զանգվածային լրատվամիջոց էր, որը ֆինանսավորվում էր ՀՀ կառավարության կողմից: Ռադիոընկերությունն օրական պատրաստում էր 38 ժամ ռադիոհաղորդում: Ռադիոընկերության համակարգում գործում էին մի շարք ինքնուրույն խմբագրություններ և ծրագրեր՝ քաղաքական-տնտեսական, լրատվական, արտասահմանի համար, երիտասարդական, մանկապատանեկան, սպորտային, երաժշտական, «Անդրադարձ» և «Երևան» ծրագրերը, ինչպես նաև առևտրա-գովազդային գործակալությունը:

Անկախ պետականության հաստատումից հետո ՀՌ-ի ստեղծագործական աշխատանքը կարելի է բաժանել երկու հիմնական շրջանների, առաջին՝ 1991-1995թթ.՝ մինչև Ազգային ռադիոընկերության հիմնումը, և երկրորդ՝ 1995-2018թթ.:

Առաջին շրջան

Առաջին շրջանում ռադիոընկերությունում սկսվեցին կառուցվածքային, ստեղծագործական փոփոխություններ, առանց բացառության թարմացվեցին բոլոր ծրագրերն ու հաղորդումները, հիմնադրվեցին մեծ թվով ռադիոծրագրեր և հաղորդաշարեր, որակապես թարմացվեց ռադիոլրագրողների ստեղծագործական կազմը, ընդգրկվեցին երտասարդ և խոստումնալից լրագրողներ, որոնք նոր խոսք ու ասելիք բերեցին ՀՌ՝ ձեռնամուխ լինելով նոր ծրագրերի և հաղորդաշարերի ստեղծմանը: Այս շրջանում ՀՌ-ի աշխատանքը պայմանավորված էր Հայաստանի սահմանամերձ շրջաններում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ընթացող պատերազմական գործողություններով: Այդ տարիներին էլեկտրաէներգիայի անջատումներն ինպես ամենուր, այնպես էլ Ռադիոյում սովորական բան էին: Այդ է վկայում, օրինակ, Հեռուստառադիոպետվարչության պետ Ս.Գևորգյանի գրությունը Օպերատիվ կառավարման հանրապետական շտաբ՝ Ռադիոտան շենքի էլեկտրասնուցման խնդրի վերաբերյալ.

«Օպերատիվ կառավարման հանրապետական շտաբ
պր-ն Գ.Մարտիրոսյանին

Հայտնում եմ Ձեզ, որ Հանրապետական Ռադիոտան շենքն ապահոված է երկկողմանի էլեկտրական սնուցումով, սակայն անջատումների պայմաններում՝ գործող ուղղություններով շենքի անխափան էլեկտրամատակարարումն ապահովելն անհնարին է, քանի որ այդ ուղղությունները սնում են նաև մեծաքանակ սպառիչներ:

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը համապատասխան կազմակերպություններին՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Ռադիոտան աշխատանքներն անխափան կազմակերպելու, ինչպես նաև այլ հնարավորություններ տրամադրելու համար»:

Հեռուստառադիոպետվարչության պետ Սամվել Գևորգյան
Ֆ.113,g.180,գ.517 *29.01.1993*

Այդ շրջանում Ռադիոն հանրապետական լրատվամիջոցների համակարգում ամենաարդյունավետն ու օպերատիվն էր: Հանրապետական լսարանի 65 տոկոսը նախապատվությունը տալիս էր ռադիոյին, որը տնտեսական և էներգետիկ ճգնաժամի պայմաններում դարձել էր ամենամատչելի և օպերատիվ կապի միջոցը, իսկ լարային ցանցով լրատվություն ստացող հանրապետության մարզերի համար, փաստորեն՝ միակ լրատվամիջոցը:

1993 թ. ապրիլին՝ արմատական փոփոխությունների ամենաբուռն շրջանում Հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական վարչության պետ է նշանակվում Տիգրան Հակոբյանը:
Նրա որոշմամբ Հայաստանի ռադիոմիավորման «Հայք» ծրագրի հիման վրա ստեղծվում է «Հայք» գլխավոր խմբագրություն՝ ազգային լեզուներով ռադիոհաղորդումների համար, խմբագրությանը թույլատրվում է ռուսերեն հաղորդումներ պատրաստել նաև եզդիների, ասորիների, ուկրաինացիների, հույների, հրեաների, գերմանացիների համար:

ՀԱԱ,ֆ.191,g.22,գ. 4, թթ.49-50 *30.07.1993*

Տիգրան Հակոբյան- *Հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական վարչության պետ /1993-1995/ թթ.*

Իրականում դժվար տարիներ էին, և ես ստիպված էի անդադար շենքն էլեկտրաէներգիայով ապահովել կամ վառելիքի խնդիրներով զբաղվել՝ հաղորդումների հեռարձակումն ապահովելու համար: Նաև տեխնիկական վերազինման խնդիր կար: Տարբեր առիթներով լինելով աշխարհի առաջադեմ ռադիոկայաններում՝ տեսնում էի,

թե ինչպես են վերազինվում դրանք, նոր համակարգչային գործիքներ կիրառվում: Եվ առաջին կոմպյուտերներն իմ օրոք հայտնվեցին Ռադիոյում: Հիշում եմ, որ տեխնիկական աշխատողները նույնիսկ դիմադրում էին՝ ասելով, որ հին գործիքներն ավելի հուսալի են,բայց ասփիճանաբար նոր ծրագրեր ներդրվեցին և թվային գործիքներ կիրառվեցին, ինչը մի քանի անգամ արագացնում էր աշխատանքը:

Որակապես նոր ռադիոհաղորդումների սկիզբը դրվեց դեռևս 1990-ական թվականների սկզբներին, երբ Ռադիոյում կատարվեցին առաջին կառուցվածքային տեղաշարժերը՝ կրճատվեց այլ ռադիոկայաններից (հատկապես ռուսական) ներմուծվող քաղաքական բնույթի ռադիոհաղորդումների տեսակարար կշիռը՝ աստիճանաբար մեծացնելով տեղական ռադիոծրագրերի արդյունավետությունը:

ՀԱԱ,ֆ.113,ց.164,գ.226,թ.1

Հիմնվեցին հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, երիտասարդական մի շարք հաղորդումներ ու ծրագրեր, որոնք նորություն էին Ռադիոյում («Տարակարծության ամբիոն», «ժամանակը և մենք», «Ասպարեզ», «15 րոպե», «Հինգերորդ ալիք», «Խաչմերուկ», «Կանաչ ռադիոգիրք», «Եթեր ց՛պահանջ», «Հրապարակախոսի ամբիոն», «Վահան»), կազմվեց նոր լրատվական-վերլուծական հաղորդումների ցանց, տեխնիկապես հնարավոր դարձավ ռադիոեթերը դարձնել «կենդանի», եթեր տրվեցին և այժմ էլ շարունակվում են հեռարձակվել հաղորդումներ, որոնք ոչ վաղ անցյալում քաղաքական և գաղափարական նկատառումներով, հաճախ, արգելվում էին:

Այդ շրջանում ռադիոյի գործունեությունը բնութագրվում է մի քանի էական հատկանիշներով.

ա) Քաղաքականացված էր ռադիոհաղորդում պատրաստող ստեղծագործական խմբերի մեծ մասը, որն ակտիվ մասնակցություն ուներ հանրապետությունում տեղի ունեցող գործընթացներին, նպաստում էր հասարակական կարծիքի ձևավորմանը:

բ) Մեծ տեղ էր հատկացվում այնպիսի թեմաների լուսաբանմանը, որոնք ոչ վաղ անցյալում կամ չէին թույլատրվում կամ քաղաքական նպատակներով արգելված էին (այլախոհություն, տարակարծություն, ազգային-ազատագրական պայքարի լուսաբանում, ներքին և արտաքին սփյուռքի օբյեկտիվ լուսաբանում, սոցիալական շերտերի իրական կյանքի վերլուծություն պահանջող հաղորդումներ, հոգևոր-կրոնական թեմաներով ծրագրեր):

գ) Ռադիոյում մեծ տեղ սկսեցին հատկացնել քննադատական հաղորդումներին և հաղորդաշարերին, որոնք դրական միտում ունեին և տանում էին դեպի պրոֆեսիոնալիզմ և գործնական լրագրություն:

դ) Ռադիոյում կարևոր միտում էր նաև նյութի մատուցման բազմազանությունն ու նոր մեթոդների կիրառումը:

Արժե նշել ժանրային բազմազանությամբ և համադրությամբ ստեղծված հաղորդումները («Ձայն Մեծաց», «Եթեր ց՛պահանջ», «Ասպարեզ», «Տարակարծության ամբիոն», «Խաչմերուկ», «Հրապարակախոսի լսարան») կամ հաղորդման տեսակների ու ալիքների խաչաձևմամբ հիմնադրվածները («Ժամանակը և մենք», «Կանաչ ռադիոգիրք», «Հինգերորդ ալիք», «Ձեղնահարկ» և այլն): Այդ շրջանում և հետագա տարիներին մեծ հեղինակություն էին վայելում Ռադիոյի պատրաստած նոր հաղորդաշարերը՝ լրատվական-հրապարակախոսական, լրատվական-երաժշտական-հրապարակախոսական, լրատվական-վերլուծական սկզբունքներով («Հայաստանի ձայն» ռադիոգործակալության հաղորդումները, «Իրավունք», «Պատուհան», «Ձեղնահարկ», «Բյուրակն», «Ընտանիք», «Եթեր ց՛պահանջ», «Անահիտ» և այլն):

Առաջին շրջանում աչքի ընկավ Կ. Վարդանյանի հեղինակած «Ստերեոստուդիա» երաժշտական-լրատվական-վերլուծական ծրագիրը, որը հիմնադրվեց 1993թ-ի օգոստոսի 1-ին: Հեղինակային հաղորդաշարն իր բնույթով նման էր արտասահմանյան մի շարք ռադիոկայանների «երաժշտություն+լուրեր» ռեժիմով աշխատող ծրագրերին: Բացի հանրամատչելի, ժամանակակից և դասական երաժշտությունից, այն առանձին էջեր էր տրամադրում սոցիալական և տարիքային տարբեր խմբերի («Այր մի Ադամ», «Ձեզ համար, կանա՛ յք»), հաճախակի ընդգրկում զվարճալի, խորհրդավոր պատմություններ

առեղծվածային դեպքերի և փաստերի մասին (առեղծվածային դեպքերի սիրահարների համար), հատուկ հաղորդում էր նվիրում հումորի և երգիծանքի սիրահարներին (հումորի էջ), ինչպես նաև գրական-գեղարվեստական ստեղծագործությունների ունկնդիրներին («Համաշխարհային գրականության էջերից», «Նամականի», «Պոեզիայի ժամ», «Գրական ընթերցումներ»):

Յոթ ժամ տևող այս երաժշտական-լրատվական-վերլուծական ծրագիրը հավաքում էր ՀՌ-ի ամենամեծ լսարանը: Հեղինակը՝ Կարեն Վարդանյանն ամբողջ ծրագիրը վարում է բացառապես ուղիղ եթերով՝ անմիջական հեռախոսակապի մեջ գտնվելով լսարանի հետ:

Հետագա տարիներին մեծ ժամաքանակ պահանջող հաղորդման եթեր հեռարձակումը դարձավ ոչ նպատահարմար և ֆինանսական դժվարությունների պատճառով փակվեց:

Երկրորդ շրջան

Երկրորդ շրջանը, որն ընդգրկում է 1995-2018թթ., առաջին հերթին պայմանավորված էր խաղաղ, ոչ պատերազմական պայմաններում ստեղծագործական աշխատանքով, ռադիոհաղորդումների մեծ մասը ձերբազատվեցին ավելորդ քաղաքականացվածությունից, որը պայմանավորված էր 1994թ. մայիսից Հայաստանի սահմանամերձ շրջաններում և ԼՂՀ-ում հաստատված հրադադարով: Վերջինս հնարավորություն տվեց պատերազմական իրավիճակի անհանգիստ, լարված գաղափարախոսությունից անցում կատարել խաղաղ պայմաններում աշխատանքի բնականոն ռիթմին, նպաստել նոր հաղորդումների ստեղծմանը: Այս շրջանում հիմնվեցին քաղաքական-տնտեսական, հասարակական, երաժշտական-զվարճալի, մանկական, հոգևոր (կրոնական), իրավական, ռազմահայրենասիրական նոր հաղորդաշարեր, որոնք որակապես թարմացրին ռադիոծրագրերն ու հաղորդումները:

Նոր հաղորդաշարերի հիմնմանը մեծապես նպաստեց Ազգային ռադիոյի նորանշանակ տնօրեն, ռադիոյում աշխատանքային փորձ և հմտություն ունեցող, երիտասարդ հրապարակախոս Ստեփան Զաքարյանը:

Ինձ բախտ վիճակվեց ռադիոն ղեկավարել ինչ-որ առումով ամենածանր ժամանակ՝ պատերազմական ցուրտ տարիներին: Եվ առաջին լուրջ խնդիրը որ կար, ոչ թե այն էր, թե ինչպես պետք է լուրջ խնդիրներին արձագանքեր

Ձախից՝ Հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական վարչության պետ Տիգրան Հակոբյան,Ազգային ռադիոյի տնօրեն Ստեփան Զաքարյան և Հեռուստատեսության լրատվական ծառայության տնօրեն Արայիկ Մանուկյան (1994թ.)

ռադիոն, այլ նախ պետք էր լուծել ամենապարզ խնդիրը՝ ինչպես ապահովել Ռադիոյի բնականոն աշխատանքը, որովհետև հոսանքի անջատումներ էին լինում, և ռադիոն աշխատում էր շարժական կայանով: Այդպես ապահովում էինք ընդամենը մի քանի ստուդիայի աշխատանք: Ստիպված էինք շատ հաղորդումներ ուղիղ եթերում հեռարձակել, որովհետև հնարավորություն չկար մոնտաժելու. այդքան ստուդիաներ չկային:

Այնպես եղավ, որ կառավարությունը որոշեց ռադիոյին առանձին հնարավորություն տալ և որոշ ժամանակ անց,

Ռադիոն իհարկե դարձավ այն հիմնարկությունը, որտեղ միշտ հոսանք կար: Ես հիշում եմ, որ մտնում էի Ռադիո, բոլոր հարկերից ճաշի հոտ էր գալիս, որովհետև բոլոր աշխատակիցները բերում, ռադիոյում ճաշ էին եփում: Ես դեմ չէի: Ես զգում էի՝ վիճակն այնպիսին էր, որ պետք էր գուցե... ամեն ինչ հանդուրժել:

Միջազգային ռադիոժուռնալիստիկայի զարգացման ժամանակակից միտումները հաշվի առնելով՝ ազգային, այնուհետև Հանրային ռադիոն փորձում էր արմատական, գաղափարական փոփոխություններ կատարել, արմատավորել հրապարակախոսությունն ու բազմակարծությունը, ձերբազատվել արհեստական, վարկաբեկված ապազգային գաղափարախոսությունից, ձևավորել ազգային մտածողության և շահերի վրա հիմնված հաղորդումներ:

1997-ից մինչև 2015 թվականը Հայաստանի հանրային ռադիոյի գործադիր տնօրեն՝ Արմեն Ամիրյան

1997թ-ից ազգային ռադիոն սկսեց ղեկավարել Արմեն Ամիրյանը, որն Ազգային, այնուհետև՝ Հանրային ռադիոն ղեկավարեց տասնութ տարի:

Ներկայացնում ենք երիտասարդ գլխավոր տնօրենի գրագրությունը հանրապետությանղեկավարության հետ, որը մեկ անգամ ևս վկայում է նրա կազմակերպչական ունակությունների և գործելակերպի մասին:

Հայաստանի ազգային ռադիոյի գլխավոր տնօրեն Ա.Ամիրյանի գրությունը Խ. Հարությունյանին՝ իր Ֆրանսիա կատարած գործուղման արդյունքների մասին.

«Հայտնում եմ Ձեզ, որ հոկտեմբերի 9-ից 15-ը Ստրասբուրգ և Փարիզ

կատարած այցելության ընթացքում կարևոր հանդիպում ունեցա «Thomson» ֆիրմայի, «Thomcast» առևտրական ընկերության և ռադիո RFI-ի նախագահների հետ:
«Thomcast» ընկերության հետ ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն՝ իրենց իսկ միջնորդությամբ ֆրանսիական կառավարությունից գրանտ ստանալու և նույն «Thomcast» ընկերությունից նորագույն ռադիոհաղորդիչներ ձեռք բերելու մասին:
RFI-ի նախագահի հետ հանդիպման ընթացքում քննարկվեց RFI-ի միջազգային ծրագրերը՝ մասնավորապես թուրքերեն, արաբերեն և պարսկերեն հաղորդումների վերահեռարձակումը Մոնտե-Կառլոյից Երևան տեղափոխելու խնդիրը:
Բանակցությունների ընթացքը ցույց է տալիս, որ գարնանը հիշյալ ծրագրերը հնարավոր է ձայնասփռվեն Հայաստանի ազգային ռադիոյի միջնորդությամբ:
Այս պայմանավորվածությունը Հայաստանի ազգային ռադիոյին կբերի լուրջ եկամուտներ»:
Հայաստանի ազգային ռադիոյի
գլխավոր տնօրեն՝ Ա.Ամիրյան»
ՀԱԱ,ֆ.113,ց.180,գ.1200,թ.61-62 *16.10.1997*

1998թ. հունվարի 19-ին ՀՀ Կառավարության որոշմամբ «Տեղեկատվության և գրահրատակչության» վարչության «Հայաստանի ազգային հեռուստատեսություն» «Հայաստանի ազգային ռադիո» «Երևան» ստուդիա և «Տերյան» ստուդիա պետական ձեռնարկությունները պետական բաժնետիրական ընկերությունները վերակազմավորվեցին «Հայաստանի ազգային ռադիո» պետական բաժնետիրական ընկերության:
Ֆ.113,ց.188,գ.70,թթ.1-2 *19.01.1998*

Ազգային ռադիոյի ստեղծագործական կազմը համալրվեց նոր, շնորհալի ռադիոլրագրողներով, որոնք հիմնեցին մի շարք

հեղինակային ռադիոհաղորդումներ (Մ.Գրիգորյան՝ «Այլընտրանք», Լ.Մելքոնյան՝ «Ուրբաթ, այս ժամին», Ն. Քյարունց՝ «Ռադիոպասիանս», Ս. Հակոբջանյան՝ «Սպիտակ տանգո», «Բումերանգ» և այլն):

Ի տարբերություն այլ հաղորդումների, հեղինակային հաղորդումներում ընդգծվում են ռադիոլրագրողի ոճը, անհատականությունը, նյութին տիրապետելու կարողությունը, լսարանի հետ շփվելու հմտությունը: Հեղինակային հաղորդումը՝ հեղինակ-լրագրողի «ես»-ի ինքնահաստատումն ու ինքնաբացահայտումն է եթերում: Այս գործընթացն արմատական փոփոխություններ մտցրեց Ազգային ռադիոյի ստեղծագործական գործունեության մեջ՝ մեծ տեղ հատկացնելով լրագրողական, կենդանի եթերով պատրաստված հեղինակային հաղորդումներին, որտեղ միաժամանակ հանդես է գալիս և՛ իբրև հաղորդման հեղինակ, և՛ վարող, և՛ խմբագիր, հաճախ էլ՝ պրոդյուսեր:

Երկրորդ շրջանի հաղորդումներում ավելի մեծ տեղ հատկացված հեղինակային հաղորդումներն առավել հրատապ փաստերի, դեպքերի և իրադարձությունների վերաբերյալ կողմնորոշելով լսարանին, մասնակից էին դարձնում քննարկվող թեմաներին:

Այդ տարիներին Ազգային ռադիոյում արմատավորվեց ռադիոհաղորդումների մի նոր տեսակ ևս՝ խաղային ծրագրերը, որոնք վաղուց մեծ ճանաչում ունեն արտասահմանյան ռադիոկայաններում: Խաղային ծրագրերը բավականին կարճ ժամանակահատվածում՝ հատկապես 1995-98թթ., մեծ հեղինակություն վայելեցին ռադիոունկնդիրների շրջանում: Հատկապես հաջողված էին «Ռադիոպասիանս»-ն ու «Բումերանգ»-ը, որոնց հաղորդումները ոգևորում էին լսարանին: Ռադիոծրագրերի ցանկում նմանատիպ հաղորդումների ընդգրկումը ռադիոընկերության աշխատանքը դարձրեց ավելի արդյունավետ ու բազմաբնույթ: Սակայն հետագա շարունակություն չգտավ:

Այդ նորարարություններն իրենց հերթին ՀՌ-ին ապահովեցին՝

ա) «Կենդանի» եթերի կիրառում, որը հանգեցրեց մի շարք ռադիոծրագրերի հիմնմանը («Ստերեոստուդիա», «Այլընտրանք», «Ուրբաթ, այս ժամին», «Ռադիոմիքս», «Ռադիոէքսպրես»):

բ) Ռադիոլսարանի հետ կապն ավելի արդյունավետ դարձնելու հա-

մար հաճախակի օգտագործվեց հետադարձ կապը՝ ազատ խոսափող, ուղիղ հեռախոսակապ, որոնք հաջողությամբ իրականացնում էին «Երևան» ծրագիրը և «Ուրբաթ այս ժամին» լրատվական-վերլուծական հաղորդաշարը: Այդ հաղորդումները մշտապես կազմակերպվում էին հեռախոսային և համակարգչային կապով, ճեպահարցազրույցներ կազմակերպում Երևանի մարդաշատ վայրերում, կապ ստեղծելով տարբեր թղթակցական կետերի միջև:

Այդ գործում, հատկապես նկատելի էր Ռադիոյի հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի արդյունավետ գործունեությունը, որն իր «Կարծիք» հաղորդաշարի միջոցով ունկնդրին պարբերաբար ծանոթացնում էր ռադիոընկերության վարած ծրագրային քաղաքականության առանձնահատկություններին, նրա եթերային դրսևորումներին, բազմաշերտ լսարանի տեղեկատվական և գեղագիտական պահանջներին ու մոտեցումներին:

Հաղորդաշարի հիմնադիր-վարող Սերգո Երիցյանը մշակել և ՀՌ-ի ունկնդիրների շրջանում անցկացնում էր սոցիոլոգիական հետազոտություններ, ճշտելու լսարանի մոտեցումն ու պահանջմունքը կոնկրետ հաղորդումների նկատմամբ, հաղորդումների պատրաստման ընթացքում մասնակից դարձնելով սոցիոլոգների՝ հաղորդումների արդյունավետությունը և անմիջական կապը ռադիոունկնդիրների հետ ավելի նպատակային դարձնելու համար:

գ) Այս շրջանում ռադիոընկերությունը մասնակի վերազինվեց համակարգիչներով, որոնց շնորհիվ բարձրացավ ռադիոհաղորդումների մատուցման որակը, արտահայտչամիջոցների նպատակային օգտագործումը:

Ժամանցային-խաղարկային հաղորդումները ՀՌ-ում եթեր էին հեռարձակվում հիմնականում երաժշտական ծրագրերի հետ՝ կազմելով բոլոր հաղորդումների 50-60%-ը:

Հայաստանի հանրային ռադիո

2000թ. հոկտեմբերի 9-ին երկարատև քննարկումներից հետո ՀՀ ԱԺ կողմից ընդունվեց «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, որը հնարավորություն տվեց ձևավորելու երկու նոր կառույցներ և կանոնակարգելու հանրային և մասնավոր

հեռուստառադիոընկերությունների գործունեությունը:

«ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ տարածքում Հայաստանի հանրային ռադիոյի ծրագրի սփռումն ապահովող միջոցառումների մասին.

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի հանրային ռադիոյի ծրագրի սփռումն ապահովող միջոցառումների ծրագիրը:
2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանն ու Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը. Հայաստանի հանրային ռադիոյի ծրագրի սփռումն ապահովող միջոցառումների իրականացման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման հարցը քննարկել յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագիծը կազմելիս:
3. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը. անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում ապահովել Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի հանրային ռադիոյի ծրագրի սփռումն ապահովող միջոցառումների ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումը ծրագրով սահմանված ժամկետներում և ծավալներով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2001 թվականի հուլիսի 12-ից»:

Հայաստանի Հանրապետության
Վարչապետ Ա.Մարգարյան»

ՀԱԱ,ֆ.113,ց.206,գ.605,թթ. *12.07.2001*

Արդեն հաջորդ իսկ տարում ձևավորվեցին Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը և Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը: ՀՀ Նախագահի հրամանագրով 2001թ. հունվարի 19-ին ձևավորվեց Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը՝ բաղկացած հինգ հոգուց, որի նախագահ ընտրվեց ճանաչված հեռուստամեկնաբան, հեղինակվարող Տիգրան Նաղդալյանը: Ցավոք, ողբերգական մահն ընդհատեց Տ.Նաղդալյանի գործունեությունը, և կարճ ղեկավարեց խորհուրդը, բայց հասցրեց կատարել մի շարք կառուցվածքային փոփոխություններ, որոնք իրենց հետագա շարունակությունը գտան 2003թ-ից խորհրդի ղեկավար ընտրված, 1991թ. «Հայլուր» լրատվական հեռուստածրագրի տնօրեն Ալեքսան Հարությունյանի կողմից: Ա.Հարությունյանի ղեկավարման տարիներին Հանրային հեռուստատեսությունը և ռադիոն դարձան Եվրոպական հեռարձակողների միության անդամ, իրավունք ստանալով լուսաբանելու և հեռարձակելու «Եվրատեսիլ» միջազգային երգի փառատոնը:

ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ՝ Ռուբեն Ջաղինյան

2013թ-ից Հանրային հեռուստառադիոխորհուրդը ղեկավարում է Ռուբեն Ջաղինյանը, որը ոչ միայն մեծ ուշադրություն է դարձնում Հանրային ռադիոյի եթերացանկի թարմացմանը, այլև Հանրային ռադիոյի ժառանգությանը, հատկապես 2017 թ-ից թվային արխիվացման ենթակա ձայնադարանին: Կիրառվում են տեխնոլոգիական նորամուծություններ՝ առկա ֆոնդի վերամշակման, ձայնագրությունների որակի բարձրացման, երկարատև պահպանության, օգտագործման և հանրայնացման համար: Նախագիծը ղեկավարում է հայտնի երգիչ, երաժիշտ Արթուր Իսպիրյանը: Նախատեսվում է «ոսկե ֆոնդի» ժապավեններն ամբողջությամբ թվայնացնել ժամանակակից սարքավորումներով:

Ձայնադարանի «ոսկե ֆոնդում» պահպանվում է շուրջ 99 հազար հեղինակային, երաժշտական կատարումներ, գրական-գեղարվեստական հաղորդումներ, ասմունք, ռադիոբեմականացումներ: Արխիվացման աշխատանքները կունենան շարունակական բնույթ, քանի որ տարվա ընթացքում ձայնադարանը համալրվում է նոր ձայնագրություններով և անուններով: Ֆոնդում պահպանվել են ոչ միայն հայերեն, ռուսերեն, այլ նաև քրդերեն, եզդիերեն, ադրբեջաներեն, արաբերեն ձայնագրություններ, երգ-երաժշտություն, մշակութային, մանկական հաղորդումներ, ռադիոբեմադրություններ, հայ մեծերի ելույթներ, հարցազրույցներ և այլ նյութեր: Բացի այդ, ֆոնդն այսօր շարունակաբար համալրվում է տարբեր անհատների և կազմակերպությունների կողմից նվիրաբերված նյութերով:

Թվայնացվում են բոլոր ռադիոհաղորդումները, ռադիոներկայացումները և այն ամենը, ինչ պահպանվում է ձայնադարանում: Իսկ կայքէջում ձայնային ֆայլերը կներկայացվեն հեղինակների ֆոտոալբոմներով և կենսագրականներով՝ կներկայացվի նաև երգացանկը, ձայնագրության տարեթիվը, մշակումները և այլ մանրամասներ: Կայքում ձայնագրությունները ներկայացվում են ըստ դասակարգումների՝ դասական, ժողովրդական, էստրադային, ռադիոբեմադրություններ, հատուկ ելույթներ, հարցազրույցներ, մեծերի խոսք և այլն: Կայքն օգտատերերին կներկայացվի երեք լեզվով:

Վերաբացվել է երբեմնի հանրահայտ «6-րդ ստուդիան», որտեղ տասնամյակներ շարունակ ձայնագրվել են հայ և օտարազգի մեծ

երաժիշտներ և նվագախմբեր: Բարեկարգվել է Ռադիոտան բակն ու դիմացի պուրակը, տեղադրվել է Դավիթ Մինասյանի «Եթեր» քանդակը, որից անդադար հնչում են հայկական սիրված երգեր: Ռադիոտան՝ փողոցին հարող պուրակում է գտնվում «Նվիրյալների արահետը», որտեղ տեղ են գտել ռադիոյի և հեռուստատեսության վաստակաշատ անձանց անուններով հուշաքարերը: Վերանորոգվեց ամբողջ տարածքը, տեղադրվեց վերելակ, վերագործարկվեց կաթսայատունն ու շենքի ջեռուցման համակարգը, նորոգվեց տանիքը, տեղադրվեցին արևային մարտկոցներ:

Ներկայումս ռադիոընկերությունն օրական պատրաստում է 52 ժամ ռադիոհաղորդում: Ռադիոընկերության համակարգում գործում են մի շարք ծրագրեր և հաղորդումներ՝ քաղաքական-տնտեսական, լրատվական, արտասահմանի համար, առողջապահական, ժամանցային, մանկապատանեկան, մարզական, երաժշտական:

Հանրային ռադիոյի ծրագրերից են «Ռադիոլուր», «Լուրեր արևմտահայերեն», «Խոսենք հայերեն», «Ապրելու բանաձև», «Համասփյուռք», «Գերդաստաններ», «Անծանոթ Երևան», «Ստատուս քվո», «ՀայԹեք», «Վերնատուն», «Մենք և մեր բառերը», «Երաժշտական եռանկյունի» և այլ հաղորդումներ:

2003 թ-ին ծնվեց «Ապրելու բանաձև» հեղինակային հաղորդաշարը, որի հեղինակ-վարողն է Գոհար Մարտիկյանը: Այն անդրադարձ է Արցախյան հերոսամարտին կյանքը զոհաբերած հայ երիտասարդ սերնդին:

Ազատամարտիկների կերպարակերտումը ծրագրի հեղինակը կատարել է պատմավավերագրական փաստագրումներով, որոնք ներկայացված են գեղարվեստա-հրապարակախոսական ստեղծագործությանը բնորոշ չափանիշներով:

Հաղորդաշարն իր էջերում մեծ տեղ է հատկացրել նաև 2016թ. Ապրիլյան պատերազմի հերոսներին՝ եթեր հեռարձակելով բազմաթիվ ակնարկներ: Ըստ հեղինակի վկայության՝ հաղորդաշարը եթեր է հեռարձակել 1000 - ից ավելի ակնարկ:

2001-ին Հայաստանի ազգային ռադիոն վերանվանվեց Հայաստանի հանրային ռադիոյի (ՀՀՌ): 2005-ին ՀՀՌ-ն դարձավ Եվրոպայի հեռարձակողների միության լիիրավ անդամ, ձեռք բերելով

այդ միության բոլոր նախագծերը հեռարձակելու իրավունք: 2007-ին առաջին անգամ՝ «Արևիկ» մանկական երգչախմբով, մասնակցեց և հեռարձակեց «Եվրատեսիլ» մրցույթը: 2008-ից իրականացնում է բացառապես թվային հաղորդումներ:

ՀՀՌ-ն միջազգայնորեն ճանաչված միակ պետության կողմից ֆինանսավորվող ռադիոկայանն է, որն ունի քրդերեն, եզդիերեն, ասորերեն հաղորդումներ, համացանցում ներկայացված է 11 օտար լեզուներով: Ռադիոհաղորդումներում առանձնապես կարևորվում են ժամանակի փորձություն բռնած մեզ բարեկամ երկրների բարիդրացիական հարաբերությունները, փոխհամագործակցությունը, փոխօգնությունը, մշակութային, կրթական, սոցիալ-տնտեսական և քաղաքական կապերը: Հատկանշանական փաստ է արձանագրվել Թուրքիայի Դիարբեքիր քաղաքում, երբ տեղի նախկին քաղաքապետին՝ Օսման Բայդեմիրին լրագրողները հարցրել են, թե որտեղից է այդպես փայլուն տիրապետում քրդերենին, քաղաքապետը պատասխանել է. «Քրդերենի իմացության համար պարտական եմ մորս և հայկական ռադիոյին»:[120]

ՀՀ հանրային ռադիոյի տասնամյակների կուտակած փորձն ու մեդիակառավարման ժամանակակից մոտեցումներն արդյունք են տալիս:[121]

2016 թ-ի սեպտեմբերի 1-ին ՀՀ 90-ամյա հանրային ռադիոն անցավ թվային հեռարձակման՝ տրվեց թվային հեռարձակման մեկնարկը: Այժմ ցանկացած թվային ազդանշան ընդունող հեռուստացույցով ՀՀ ամբողջ տարածքում հնարավոր է ունկնդրել Հանրային ռադիոյի հաղորդումները:[122]

Ամբողջ աշխարհում գործում է ռադիոլրատվության խիտ ցանց, ներառելով բոլոր կարգի ռադիոկայանները՝ սկսած փոքր ռադիոյից (գործարանային, բուհական, քաղաքային, մարզային), վերջացրած հանրապետական, տարածաշրջանային, միջպետական,

---

120 ՀՀ հանրային ռադիո, Արտերկրի համար տրվող հաղորդումներ, Երևան, 2010թ., 25 հունիսի:

121 Մուրադյան Լ., Հանրային ռադիոն հոբելյանը նշում է նոր եթերաշրջանով, << Ռադիոլուր>> լրատվական գործակալություն, 01 սեպտեմբերի, 2016թ.:

122 Վարդանյան Ա., Սա այն հոբելյաններից է, երբ շնորհավորանքները վերաբերում են բոլորին. ՀՀ Նախագահը՝ Հանրային ռադիոյում, << Ռադիոլուր>> լրատվական գործակալություն, 05 սեպտեմբերի, 2016թ.:

մայրցամաքային և համաշխարհային (Ազատություն, Ամերիկայի ձայն, Բի-Բի-Սի և այլն), որոնք ամեն օր մեծաքանակ լրատվություն են հաղորդում իրենց լսարանին: Հայաստանի հանրային ռադիոն լրատվական այսօրինակ հեղեղի մեջ ճիշտ կողմնորոշվելու և գործելու համար ներկա փուլում հնարավորինս ինտեգրվում է տարածաշրջանային ռադիոշուկային, արդյունավետ օգտագործելով արբանյակային, համացանցային և թվանշային ռադիոհեռարձակման հնարավորությունները:

2. ՀՀ հանրային ռադիոն և հայաստանյան ռադիոշուկան

Անդրադառնալով հանրապետական ռադիոշուկայի ձևավորման և զարգացման ժամանակակից միտումներին, անհրաժեշտ է մեկնակետ ընտրել 1991թվականը, երբ Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց որպես անկախ պետություն: Անկախ պետականության հռչակումից հետո Հայաստանում գործում էր միայն պետական մենաշնորհ ունեցող հանրապետական ռադիոն: Ամբողջատիրության և միակարծության պայմաններում պետական ռադիոն կատարում էր «կոլեկտիվ պրոպագանդիստի, ագիտատորի և կազմակերպչի» գործառույթ: Այն կարևոր տեղ էր զբաղեցնում հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում, ակտիվորեն մասնակցում տեղի ունեցող բոլոր գործընթացներին: Սակայն մասնավոր ռադիոընկերությունների հիմնումը և պետական ռադիոյին կառավարության կողմից ֆինանսավորման նվազեցումը էականորեն ազդեցին պետական ռադիոյի դերի և նշանակության, հատկապես ազգային մշակույթի հովանավորողի և պահպանողի իմիջի վրա:

1990-ականների սկզբներին կազմալուծվեցին Ռադիոյին պատկանող առաջնակարգ նվագախմբերը, լուծարվեցին դրամատիկական հաղորդումների գործող ստուդիաներն ու ռադիոդարբնոցները, մշակութային և գիտահանրամատչելի հաղորդումները փոխադրվեցին անհարմար եթերաժամերի, որոնք բավարար թվով ռադիոլսարան չէին ապահովում:

Հետագա տարիներին՝ հատկապես 2000-ական թվականներից սկսած, Հանրային ռադիոն աստիճանաբար դուրս եկավ այդ վիճակից և մեծ մասամբ վերականգնեց երաժշտական նվագախմբերն ու հաղորդումների մի մասը:

1990-ական թվականների կեսերին պետական ռադիոն եթերում այլևս մենաշնորհային վիճակում չէր, նրա հետ սկսեցին հաջողությամբ մրցակցել մինչ այդ հանրապետությունում նորություն հանդիսացող մասնավոր ռադիոկայանները: Ռադիոեթերը դարձավ ավելի բազմաբնույթ ու բազմազան, ավելի մատչելի դարձավ ռադիոինֆորմացիայի օպերատիվ հայթայթումը, եթերը դարձավ ավելի ազատ, բաց՝ ցանկացած թեմայով բանավեճի: Ռադիոշուկայում կատարվեցին ֆինանսական զգալի ներդրումներ՝ մեծացնելով ռադիոհաճախականության ընդգրկման տիրույթները, իսկ այդ ընթացքում աղքատացած պետությունը ի վիճակի չէր ֆինանսապես և տեխնիկայով ապահովելու պետական կառույցին, թեև շարունակում էր իր ձեռքում պահել հեռարձակման և եթերային քաղաքականությունը: Սակայն ստեղծված պայմաններում առանց կապիտալ ներդրումների առաջնակարգ հաղորդումներ և ծրագրեր ստեղծելը դառնում էր դժվարամատչելի:

Իսկ առաջին մասնավոր ռադիոկայանները Հայաստանում հիմնվեցին 1990-ական թվականների կեսերին:

1994թ. դեկտեմբերին 5-ին ամերիկյան համալսարանի մի խումբ ուսանողներ որպես դիպլոմային աշխատանք ներկայացրին մինչ այդ ընդունված չափանիշներին չհամապատասխանող ռադիոծրագրեր, որոնց հիման վրա հիմնադրվեց Հայաստանում առաջին մասնավոր ռադիոկայանը՝ Հայ FM 105.5-ը: Արևմտյան ռադիոժուռնալիստիկայի չափանիշներով հիմնված ռադիոկայանն աշխատում է լրատվություն-երաժշտություն-գովազդ ձևաչափով /ֆորմատով/: Ձևաչափը ռադիոյում

երկու իմաստով է օգտագործվում. որպես ռադիոկայանի ծրագրերի ամբողջության ձև և ոճ կամ որպես յուրաքանչյուր հաղորդման ձև:[123] ՀՀ մասնավոր ռադիոողորտի զարգացմանը նպաստեց առևտրային ռադիոկայաններում կիրառվող համակարգչային ծրագրավորումը, որը հաճախ կոչվում է նաև «ծրագրավորված անիվ»: ՀՀ մասնավոր ռադիոհեռարձակման ցանցի ծրագրավորումը էականորեն տարբերվում է ՀՀ հանրային ռադիոընկերության ծրագրավորումից, որը և մասնավոր ռադիոկայանների առանձնահատկությունն ու լսարան գրավելու հնարանքներից մեկն է:

FM (Freguence modulation «կապուղային մոդուլյացիա») ձևաչափը եթեր էր հեռարձակվում գերկարճալիք դիապազոնի վերին հաճախականությամբ և երկար տարիներ անհասանելի է եղել նախկին Խորհրդային Միության երկրների ռադիոլսարանի համար: ԽՍՀՄ–ում գործում էր ցածր հաճախականության սեփական ռադիոընդունիչների համար նախատեսված դիապազոնը, որին հասանելի չէր արտասահմանյան FM կայանների հեռարձակումները:

Նմանատիպ ռադիոկայաններից լսարանն առաջին հերթին սպասում է անաչառ լրատվության հեռարձակում, կարևոր դեպքերի, փաստերի, իրադարձությունների անմիջական արձագանք, ուղիղ հեռարձակում, որն օգնում է ռադիոունկնդրին կարծիք կազմել հաղորդվածի նկատմամբ, ինչպես նաև ինտերակտիվ կապ լսարանի հետ: Իսկ ամբողջ օրվա ընթացքում երաժշտության հնչեցումը այդ ռադիոկայանները դարձրեցին լսելի և սիրելի տարբեր տարիքային և սեռային խմբերի համար: Առաջին անգամ երաժշտությունը լսարանին մատուցվեց դիջեյների միջոցով, որոնք ռադիոունկնդրին մատուցում, մատչելի էին դարձնում հեռարձակվող երաժշտությունը: Ձևաչափի առումով պետք է նկատել, որ ռադիոկայանները հաղորդում են ոչ թե պարզապես երաժշտություն, այլ որևէ երաժշտական ուղղության պատկանող երաժշտություն, լսարանին կողմնորոշելով ռադիոկայանի նախընտրած ոճին, ձևին և մատուցման առանձնահատկություններին: Այս առումով Հայ FM 105.5-ը, օրինակ, հաղորդում է հիմնականում ժամանակակից էլիտար երաժշտություն, իսկ «Ռադիո Հայ»-ը՝

123 Քոիլեր Դ., Ֆորմատ, Ռադիոհեռուստատեսային լուրերի պատրաստման և մատուցման ձեռնարկ, Երևան (թարգմանություն անգլերենից), 2001, էջ 88:

հայկական ժողովրդական և ժամանակակից երաժշտություն:

Երաժշտություն+լուրեր ռեժիմով աշխատող ռադիոկայանները («Ռադիո Վան», «Հայ ՖՄ 105.5», «Ռադիո Մարշալ», «Ռադիո Հայ» ռադիոկայան) հաջողությամբ մրցակցում են Հանրային ռադիոյի նմանատիպ հաղորդաշարերի և ծրագրերի հետ, սակայն նկատելիորեն զիջում են լրագրողական վարպետության և նյութի մատուցման ասպարեզում: Այդ մրցակցության շնորհիվ Հանրային ռադիոյում բավականին բարձրացավ երաժշտական, լրատվական հաղորդումների որակը, մեծացավ այդ հաղորդումների նկատմամբ լսարանի հետաքրքրությունն ու լսելիությունը:

Հայ FM 105.5-ով Հայաստանում սկսվեց մասնավոր ռադիոկայան-ների հիմնադրման գործընթացը: Արդեն մի քանի ամիս անց հիմնվեց ՀՌԱԿ-ին պատկանող «Ռադիո Լաստո» ռադիոկայանը, որն այժմ չի գործում, նրան հետևեցին «Արձագանք» ռադիոկայանը, «Սիթի FM»՝ այժմ՝ «Սպուտնիկ-Արմենիա», «Ռադիո Վանը», «Ռադիո Հայը», «Ռադիո Շանթը», «Իմպուլս-Մայակ»-ը՝ այժմ՝ «Լրատվական ռադիո» և ուրիշներ:

Այժմ Հայաստանում գործում է 18 մասնավոր ռադիոկայան, որոնք ռադիոշուկայում ունեն իրենց ուրույն տեղը, եթեր հեռարձակվելու կապուղիները, հեռարձակման շառավիղն ու պոտենցիալ լսարանը:

Օպերատիվ լրատվության հեռարձակման, երաժշտական բազմաժանր և տարբեր ուղղություններ ունեցող երաժշտության մատուցումը լսարանի մոտ փոխեց ավանդական մոտեցումները հանրապետության խոշորագույն ռադիոկառույցի նկատմամբ: Չընդունելով մասնավոր ռադիոընկերությունների մրցույթի հրավերը, ՀՌ-ն ինքնուրույն դուրս եկավ ստեղծված իրավիճակից, բարձրացնելով լրատվական և երաժշտական հաղորդումների որակական հատկանիշները և շատ շուտով արձանագրեց նկատելի առաջընթաց այդ ասպարեզում: Հատկապես օպերատիվ լրատվության ասպարեզում Հանրային ռադիոյին հաջողվում է, ավելի որակյալ, ավելի մեծ շառավղով, ավելի շատ տեղեկատվություն հեռարձակել, քան մյուս ռադիոկայանները՝ ունենալով մետրային, դեցիմետրային, արբանյակային թվային հեռարձակման սարքավորումներ և միջոցներ:

1990-ական թվականների սկզբներից հայաստանյան ռադիոշուկա մուտք գործեցին նաև միջազգային ճանաչված մի

շարք ռադիոընկերություններ՝ «Ամերիկայի ձայն», «Ազատություն», «Միր» հեռուստառադիոընկերության հայաստանյան մասնաճյուղը, ֆրանսիական «RFI», որոնք հայաստանյան ռադիոշուկայում հատկապես օպերատիվ տեղեկատվության հավաքման և տարածման ասպարեզում ամենօրյա, անհաշտ մրցակցության մեջ են ՀՀ հանրային և մասնավոր ռադիոկայանների հետ:

3. Հայաստանյան ռադիոշուկայի օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները

Անկախ պետականության հռչակումից հետո Հայաստանի լրատվադաշտում կատարվեցին գաղափարական և կառուցվածքային լուրջ տեղաշարժեր: Հանրապետական նորաստեղծ լրատվաշուկայի աշխատանքը բնականոն և արդյունավետ դարձնելու համար Հայաստանի Հանրապետության բարձագույն օրենսդիր մարմինը ընդունեց մի շարք օրենքներ, որոնց միջոցով կանոնակարգվեց նոր ձևավորված լրատվաշուկան և պայմաններ ստեղծվեցին նրանց բնականոն գործունեության համար: Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենսդրական դաշտը ներառում է Ազգային ժողովի կողմից ընդունված և հանրապետության նախագահի կողմից վավերացված մի շարք գերատեսչական ակտեր ու օրենքներ: ՀՀ Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում մինչև այժմ ընդունվել է իրավական դաշտը կարգավորող ութ օրենք, որոնց կիրառումը մեծապես նպաստեց ռադիոընկերությունների գործունեությունը կանոնակարգելուն և պաշտպանելուն («ԶԼՄ-ի մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին», «Հեռահաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Հեռուստատեսութան և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ-օրենք», «Լիցենզավորման մասին»):

Տեղեկատվական բնագավառը կարգավորվում է նաև այլ իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության ընդունած միջազգային պայմանագրերով:

Անկախ պետականության պայմաններում առաջին իրավական փաստաթուղթը՝ «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքն էր, որն ընդունվեց հանրապետության Գերագույն խորհրդի (այժմ՝ Ազգային ժողով) կողմից 1991թ. հոկտեմբերի 8-ին:[124] Սույն օրենքով մամուլ և զանգվածային լրատվության մյուս միջոցներ են համարվում՝ թերթերը, հանդեսները,

124 Հայաստանի Հանրապետության օրենքը հեռուստատեսության և ռադիոյի մասին՝ հարակից օրենքներով, Երևան, 2011, էջ 31:

փաստավավերագրերը, տեղեկագրերը և պարբերականները, որոնք միանվագ հրատարակվում են 100 օրինակից ավելի տպաքանակով, ինչպես նաև հեռուստառադիոծրագրերը, կինովավերագրերը, որոնք պարբերաբար ստեղծվում և հրապարակայնորեն տարածում են լուրեր և տեղեկություններ՝ սույն օրենքով սահմանված կարգով: Ըստ օրենքի՝ մամուլ և զանգվածային լրատվության մյուս միջոցներ ստեղծում և տարածում են խմբագրությունները, լրատվական գործակալությունները, հրատարակչությունները, զանգվածային լրատվություն թողարկող այլ հաստատությունները, որոնք ազատ են և գրաքննության չեն ենթարկվում: Այս օրենքը հնարավորություն տվեց նոր պայմաններից ելնելով լրագրության ասպարեզում անցում կատարելու տոտալիտար, ամբողջատիրական գաղափարախոսությունից դեպի բաց, քաղաքացիական հասարակություն:[125]

Օրենքի առաջին երկու հոդվածներում ամրագրված հիմնադրույթները հետագայում հիմք հանդիսացան մշակելու ավելի կատարյալ օրենսդրական փաստաթղթեր և ամրագրել այդ ոլորտի այն նվաճումները, որոնք ձեռք բերվեցին վերջին տասնամյակի ընթացքում: «ԶԼՄ-ների մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո վերը նշված օրենքը դադարեց գործելուց:

Ռադիոոլորտի կայացման համար կարևոր որակական փուլ էր 1993թ. ապրիլի 17-ին ընդունված «Լեզվի մասին» ՀՀ օրենքը, ուր մասնավորապես սահմանվում էին Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության հիմնական դրույթները: Այս փաստաթուղթը ամրագրեց զանգվածային լրատվամիջոցներում հայերենի գերակայությունն ու պետական պաշտպանվածությունը: Ռադիոոլորտի համար օրենքը կարևորվում էր նաև նրանով, որ օրենքի ընդունումից ընդամենը մեկ տարի անց հանրապետությունում հիմնվեցին մեծ թվով մասնավոր ռադիոկայաններ, որոնց հայերենի գործածության մակարդակը հեռու է գրական լինելուց, որոնք հաճախ տուրք են տալիս անգլիախառն ու ռուսական առոգանությամբ հայերենին: Ճիշտ է՝ ժամանակի ընթացքում օրենքի գերակայության պայմաններում ռադիոդաշտը կանոնակարգվեց հայերենի կիրառման առումով, սակայն ռադիոկայանները դեռ շատ աշխատանք ունեն եթերային խոսքը

125 Նույն տեղում, էջ 32:

կատարյալ և գրագետ դարձնելու համար: Մայրենիի դերն առավել կարևորվեց, երբ հանրապետական ռադիոտիրույթում թույլատրվեց օտարերկրյա հեռուստառադիոընկերությունների գործունեության ծավալումը: Հայերենի գործածության և կիրառման շառավղի պահպանումը դարձավ օրախնդիր, որը օրենքի շրջանակներում կանոնակարգվում է և թույլ չի տրվում մայրենիի հաշվին ներմուծելու օտար հաղորդումներ: Այդ է վկայում նաև սույն օրենքի 4-րդ հոդվածը, ըստ որի՝ հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են օտար լեզվով ելույթների զուգահեռ հայերեն թարգմանություն, միաժամանակ խրախուսելով լրատվամիջոցներով հայերենի քարոզչության ու լեզվաշինության զարգացմանը: Այժմ արդեն կարելի է փաստել, որ հանրապետական լրատվամիջոցներում, հատկապես էլեկտրոնայիններում վերջին տարիներին ձևավորվել են հայերենի մատուցման նոր ոճ և մեթոդներ, որոնք հնարավորինս պահպանում են եթերը օտարամոլությունից ու խոսակցական, ժարգոնային կապակցություններից: Մայրենիի անաղարտ եթեր հեռարձակման համար հանրապետության ռադիոկայանները դեռևս շատ անելիք ունեն, հատկապես դիջեյների լեզվի իմացության և կիրառման որակական աստիճանն անհրաժեշտ եթերային պահանջներին համապատասխանող հայերենին հասցնելու համար:

«Լեզվի մասին» ՀՀ օրենքին օրգանապես կապված է ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Գովազդի մասին» ՀՀ օրենքը, որն սկսեց կիրարկվել 1996թ. ապրիլի 30-ից: Այն սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գովազդի ստեղծման և տարածման իրավական հիմքերը և նպատակ ունի անհրաժեշտ պայմաններ ապահովել հասարակության, գովազդ սպառողների, գովազդատուների, գովազդի ստեղծման ու տարածման համար: Օրենքում ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում գովազդի լեզուն հայերենն է:[126] Այս առումով կարևոր է նշել գովազդի գործունեության հնարավորությունները զանգվածային էլեկտրոնային լրատվամիջոցներում, մանավանդ,որ ողջ աշխարհում լրատվամիջոցները հիմնականում գործում են գովազդից ստացված

126 Նույն տեղում, էջ 94:

շահույթների հաշվին:[127] Այս գործունեությունը կանոնակարգելու համար գովազդի մասին օրենքի 9 հոդվածը ամբողջովին նվիրված է էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցներում գովազդի կիրառման ձևերին, ըստ որի արգելվում է մինչև 10 րոպե տևողությամբ ռադիոհաղորդումներում և մինչև 20 րոպե տևողությամբ հեռուստահաղորդումներում մեկ անգամից ավելի գովազդային ընդհատումը: Արգելվում է ռադիոհեռուստատեսային հաղորդման ընթացքում հեռարձակել գովազդ ավելի, քան 20 րոպեն մեկ հաճախականությամբ և յուրաքանչյուր մեկ եթերային ժամի հաշվով 14 րոպեից ոչ ավել տևողությամբ: Նման հիմնադրույթները լայն կիրառություն ունեն ամբողջ աշխարհում, հատկապես ԱՄՆ-ի հեռուս-տառադիոընկերություններում, որոնք երեկոյան մեկ ժամի համար նախատեսում են 12 րոպե գովազդ: Իհարկե, այս հիմնադրույթների կիրառությունը և գովազդային լեզվի անաղարտության պահպանումը հայաստանյան ռադիոընկերություններում դեռևս բավարար մակարդակի վրա չեն, ոչ միշտ է պահպանվում հայերենի՝ որպես գովազդային լեզվի կիրառության աստիճանը: Սա հատկապես վերաբերում է մասնավոր ռադիոշուկային, որը վերահեռարձակելով օտարերկրյա ռադիոընկերությունների հաղորդումները, հաճախ վերահեռարձակում է նաև ռուսերենով և անգլերենով գովազդային հոլովակներ: Գովազդային դաշտի նկատելի անկատարության վրա ազդում է նաև «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» և «Գովազդի մասին» օրենքներում նկատված մի շարք թերություններն ու բացթողումները. մասնավորապես, հստակ ձևակերպված չեն առևտրային և սոցիալական գովազդ հասկացությունները: Այսպես՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և «բ» պարբերություններում օգտագործվում է «առևտրային գովազդ» հասկացությունը: Գովազդը ընդհանրապես և գովազդը զանգվածային տեղեկատվության էլեկտրոնային լրատվամիջոցներում կարգավորվում է «Գովազդի մասին» ՀՀ օրենքով, ուստի անդրադառնալով նշված օրենքին՝ կտեսնենք, որ «առևտրային

127 Кумылганова И.А., Законодательство в сфере рекламы, история регулирования и практика применения; Учебное пособие для студентов, М., факультет журналистики МГУ им. М.В.Ломоносова, 2011.

գովազդ» հասկացությունը ամրագրված չէ օրենքի 2-րդ հոդվածում, մյուս հասկացությունների շարքում:[128]

Գիտակցելով ԶԼՄ-ների գոյության համար գովազդի կենսական նշանակությունը՝ գովազդատուն կարող է գովազդի միջոցով ուղղակի կամ անուղղակի գրաքննություն իրականացնել ԶԼՄ-ի նկատմամբ, ազդել լրատվամիջոցի հրապարակումների բովանդակության և խմբագրական անկախության վրա:

Հարցի կարգավորումը կարևոր է նաև այն պատճառով, որ գովազդ հեռարձակելով ԶԼՄ-ն, այն հասցնում է հազարավոր սպառողների, և գովազդի՝ օրենքին հակասելու դեպքում կարող են լուրջ վնաս հասցվել սպառողի շահերին, ասենք, եթե գովազդը պարունակում է կեղծ, մարդու, առողջության համար վտանգավոր տեղեկություններ:[129]

Օրենքում նմանատիպ ձևակերպման կարիք ունի նաև սոցիալական գովազդը: «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ «գովազդակիրը պարտավոր է բնակչության առողջության և առողջապահության, բնության պահպանության, սոցիալական պաշտպանության հարցերով ազգային շահեր ներկայացնող և առևտրային բնույթ չկրող սոցիալական գովազդների համար առաջնահերթ տրամադրել գովազդին հատկացվող տարեկան եթերային ժամանակի (տպագրական մակերեսի) ոչ պակաս, քան 5 տոկոսը»: Նշված հոդվածի առաջին խնդիրը կապված է սոցիալական գովազդի արտադրության և տեղաբաշխման համար խրախուսման բացակայությամբ: Երկրորդ խնդիրը կապված է այդ տեսակի գովազդի համար սահմանված ծավալի վերահսկողության հետ:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքում արմատական էր 2007թ. ապրիլի 9-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից կատարված «Հովհարային գովազդի» մասին լրացումը, որի նպատակն էր եթերում արգելել թաքնված և ապօրինի գովազդի ցուցադրությունը: «Հովհարային գովազդի» մասին լրացումով եթերը ազատվեց ալկոհոլի և ծխախոտի գովազդի ցուցադրությունից: Սակայն 2014թ. ԱԺ մարտյան լսումների ժամանակ նորից հարց բարձրացվեց թույլատրել հեռուստառադիոընկերություններին 22.00-ից մինչև 6.00-ը ցուցադրել

128 Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք, Երևան, 2011թ., էջ 4:
129 Դոյդոյան Շ., ԶԼՄ և օրենսդրություն, Երևան, 2007, էջ 128:

թունդ ալկոհոլային խմիչքների գովազդ, որը նրանց կբերի հավելյալ եկամուտ:

Գովազդային շուկան այժմ հանրապետությունում մասնագիտացված է և բաշխված զանգվածային լրատվամիջոցների միջև:

Հայաստանյան ռադիոշուկայի համար կարևոր խթանիչ հանգամանք հանդիսացավ «Հեռահաղորդակցության մասին» օրենքը, որն սկսեց գործել 1998թ. փետրվարի 17-ից: Եթե նախորդ օրենսդրական ակտերը կանոնակարգում էին հայաստանյան ռադիոշուկայի ստեղծագործական, եթերային, ծրագրային քաղաքականությունը, ապա «Հեռահաղորդակցության մասին» օրենքը կարգավորում է այդ ոլորտում առկա տեխնիկական հիմնահարցերը, դրանք տեղափոխելով իրավական կարգավորիչ դաշտ: Համաձայն ընդունված օրենքի սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում հեռահաղորդակցության բնագավառում գործունեության իրականացման իրավական հիմքերը, դրա մասնակիցների իրավասությունը և պատասխանատվությունը, ինչպես նաև հեռահաղորդակցության ծառայություններից օգտվողների իրավունքների պաշտպանության նորմերը: Մեր հանրապետությունն այժմ ունի ռադիոհաճախականությունների առումով կապուղիների սահմանափակ տիրույթ, որտեղ գործում են հանրային և մասնավոր ռադիոընկերություններ, ինչպես նաև ռադիոկայմեր, որոնց ծառայություններից օգտվում են հանրային և մասնավոր ռադիոկայանների մեծ մասը: Այս դաշտի կանոնակարգման համար սույն օրենքի 13-րդ հոդվածը ամբողջությամբ նվիրված է ռադիոհաճախականության տիրույթի և հեռահաղորդակցության արբանյակների ուղեծրային դիրքերի օգտագործմանը: Համաձայն սույն հոդվածի ռադիոէլեկտրոնային միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիությունը և խանգարումներից պաշտպանություն ապահովելու նպատակով հեռուստառադիոհաճախականության տիրույթի առանձնացման, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության ձեռք բերման, ներմուծման և շահագործման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում դրանց արտադրության դեպքում մշակման, նախագծման և արտադրության

պայմանների իրավունքը վերապահված է կառավարությանը:[130] Այս հոդվածի կիրարկումը հնարավորություն է տալիս ռադիոեթերը զերծ պահել անորակ ինքնաշեն սարքավորումների շահագագործումից ու վերահսկողության դաշտում պահել ճառագայթահարման ֆոնը:

Նկատի ունենալով, որ մասնավոր ռադիոընկերությունների որոշ մասը իրենց հաղորդակները տեղադրել են բնակելի շենքերի տանիք-ներին կամ նրանց շատ մոտ, սույն օրենքը պարտավորեցնում է նրանց ճառագայթման աղբյուր հանդիսացող հաղորդակցության միջոցները անպայման գրանցել, գործել հատկացված հաճախականության շառավղում՝ հնարավորինս վնաս չհասցնելով մոտակայքում բնակվող մարդկանց առողջությանը: Հեռարձակող ընկերությունների վերահսկողությունը կատարվում է պետական կառույցների միջոցով, որոնք տեխնիկական հաղորդակցման միջոցները վերահսկելուց բացի ապահովում են նաև դրանց տեխնիկական շահագործումը:

Հայաստանյան ռադիոշուկայի օրենսդրական դաշտի կարգավորման գործում կարևոր նշանակություն ունեցավ Ազգային ժողովում երկար քննարկումների նյութ դարձած «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» փաստաթուղթը, որն օրենքի ուժ ստացավ 1999թ. դեկտեմբերի 8-ին: Սույն օրենքը, ինչպես նշված է 1-ին հոդվածում, կարգավորում է գիտության, գրականության, արվեստի ոլորտների ստեղծագործությունների (հեղինակային իրավունք), կատարումների, ինչյունագրերի (ֆոնոգրամ), հեռարձակող կազմակերպությունների հաղորդումների(հարակից իրավունքներ) ստեղծման և օգտագործման հետ կապված հարաբերությունները:

Հեղինակային իրավունքի կիրառումը հնարավորություն տվեց վճռական պայքար ծավալելու մեծ չափերի հասնող եթերահենության, առանց թույլտվության հաղորդումների ու ծրագրերի հեռարձակման դեմ, կանոնակարգելու արտասահմանյան ռադիոարտադրանքի մուտքը հանրապետական լրատվաշուկա և դրանց որակական չափանիշների սահմանումը: Օրենքը լրագրողներին հնարավորություն տվեց պաշտպանելու հեռարձակվող նյութերի և ծրագրերի նկատմամբ իրենց հեղինակային իրավունքը: Այդ է վկայում օրենքի 20-րդ հոդվածը, որն ամբողջովին նվիրված է տեսալսողական ստեղծագործության

130 «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք, Երևան, 2011թ., էջ 4:

հեղինակային իրավունքի պաշտպանմանը, համաձայն որի տեսալսողական ամբողջական ստեղծագործության հեղինակներն են՝ սցենարի հեղինակը, բեմադրող ռեժիսորը, հատկապես տվյալ տեսա-լսողական ստեղծագործության համար ստեղծված երաժշտության հեղինակը(տեքստի կամ առանց տեքստի), բեմադրող օպերատորը, ինչպես նաև ամբողջական տեսալսողական ստեղծագործության ստեղծմանը պայմանագրով մասնակցած և ստեղծագործական աշխատանքին ուրույն արդյունք ներդրած այլ անձինք:

Հաշվի առնելով վերջին տասնամյակում հայաստանյան լրատվադաշտում տեղի ունեցող փոփոխությունները՝ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում կատարվեցին մի շարք լրացումներ, որոնք ուժի մեջ մտան 2013թ. նոյեմբերի 9-ին: Օրենքում կատարված լրացումները վերաբերում են զանգվածային լրատվամիջոցներում հեղինակային իրավունքների պահպանման առանձնահատկություններին: Օրենքը միտված է լուծում գտնել նաև լրատվադաշտում նկատված բացասական երևույթների դեմ, հատկապես՝ «cope paste»-ի, նախատեսելով վնասի հատուցում՝ 100-200 հազար դրամի չափով: Համաձայն լրամշակված տարբերակի՝ վերատպումը թույլատրվում է իրականացնել միայն մեջբերման նպատակն արդարացնող ծավալով, որը կարող է լինել առանց հեղինակի համաձայնության և վարձատրության վճարման:[131]

Նշված օրենսդրական ակտերը նպաստեցին ամբողջացնելու և կանոնակարգելու հանրապետական էլեկտրոնային լրատվաշուկայում առկա ստեղծագործական և ինտեգրացիոն գործընթացները և նախապայմաններ ստեղծեցին հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կանոնակարգող «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի ընդունմանը: Մոտ հինգ տարի տևած խորհրդարանական լսումներից հետո 2000թ. հոկտեմբերի 9-ին Ազգային ժողովը վերջապես ընդունեց «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը: Եթե նախորդ օրենքները կանոնակարգում էին լրագրողական գործունեության որևէ բնագավառ, ապա այս վերջին օրենքով կազմավորված

131 «Հեղինակային իրավունքի մասին» ՀՀ օրենքը մտավ ուժի մեջ, Panorama.am, 10.11.2013:

խորհուրդն ու Ազգային հանձնաժողովը կանոնակարգում են հանրային և մասնավոր հեռուստառադիոընկերությունների գործունեությունն ու լիցենզավորումը: Սույն օրենքը սահմանում է հեռուստառադիոընկերությունների (հեռուստաընկերություններ և ռադիոընկերություններ) կարգավիճակը, կանոնակարգում է դրանց հիմնադրման, լիցենզավորման և ղեկավարման կարգը, իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմքերը, հեռուստառադիոընկերությունների ստեղծման ու գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:

Չնայած հնչեցված տարաբնույթ և տարատեսակ կարծիքներին «Հեռուստատեսության և ռադիոյի» ՀՀ օրենքը կիրառվեց, և կարճ ժամանակահատվածում ձևավորվեցին հեռուստառադիոոլորտը կարգավորող երկու հիմնական կարգավորիչ կառույցները, որոնք սկսեցին համապատասխանաբար կանոնանակարգել հանրային և մասնավոր հեռուստառադիոոլորտները: Օրենքի ուժ ստացած Հանրային հեռուստառադիոհեռարձակումը կանոնակարգվում է Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից, իսկ մասնավոր հեռուստառադիոհեռարձակումը ՀՀ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից, որն ունի պետական հիմնարկի կարգավիճակ: Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հձնձնաժողովի գործունեությունը կանոնակարգվում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով, իր կանոնակարգով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: ՀՀ Հեռուստատեսության ազգային հանձնաժողովի առաջին կազմը նշանակվեց ՀՀ նախագահի կողմից 2001թ. մարտի 19-ին: Իսկ մինչ այդ ՀՀ նախագահի մեկ այլ հրամանագրով 2001թ. հունվարի 19-ին նշանակեց ՀՀ հանրային հեռուստառադիոխորհրդի կազմը, որը կանոնակարգում է հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:

Եթե խորհրդի պարագայում ավելի հստակություն կար և տարիներով կուտակված էր այդ կառույցների հետ աշխատելու համապատասխան փորձ, ապա Ազգային հանձնաժողովի պարագայում եղան բազմաթիվ հիմնախնդիրներ կապված մասնավոր հեռուստառադիոոլորտի գործունեության կանոնակարգման

հետ: Պատճառն այն էր, որ մինչ այդ ոչ մի օրենք չէր ընդունվել կանոնակարգելու մասնավոր հեռուստառադիոընկերությունների աշխատանքը: Ազգային հանձնաժողովի ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ կանոնակարգել մասնավոր ոլորտի գործունեությունը և նրանց հետ հարաբերությունները տեղափոխել իրավական դաշտ: Կարճ ժամանակահատվածում Ազգային հանձնաժողովը ընդունեց 8 ենթաօրենսդրական կարգեր, մշակեց իր գործունեությունը կարգավորող կանոնակարգ, որով էլ հիմք դրեց այդ ոլորտի կանոնակարգմանն ու լիցենզավորմանը: Ազգային հանձնաժողովը, համաձայն սույն օրենքի 37-րդ հոդվածի, իրականացնում է եթերային հաճախությունների հրապարակային և մրցութային հատկացումը, հաստատում է լիցենզիայի ձևը, հատկացնում այն, կազմում և հրապարակում է լիցենզիա ստացածների ցուցակը, հսկում լիցենզիայում նշված պայմանների կատարումը, հեռուստառադիոհաղորդումների տեսագրությունների և ձայնագրությունների միջոցով պարզում է դրանց համապատասխանությունը գործող օրենսդրությանը:

Ժամանակակից փուլում հայաստանյան ռադիոշուկան իրավական տեսակետից պաշտպանված է և կանոնակարգվում է Ազգային հանձնաժողովի կողմից: Վերջինիս միջոցով նախադրյալներ են ստեղծված պաշտպանելու և խրախուսելու հայրենական արտադրողին, նախանշելու ռադիոընկերությունների տեղն ու դերը լրատվաշուկայում, նպաստելու ընկերությունների վարած ծրագրային և գովազդային քաղաքականությանը, ոլորտի հետագա զարգացմանը: Իսկ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ կանոնակարգելու մասնավոր հեռուստառադիոոլորտի գործունեությունը և հեռուստառադիոընկերություններին առնչվող բոլոր հարցերը լուծել իրավական հարթությունում:

Նկատի ունենալով մրցույթների անցկացման առանձնահատկությունները ՀՀ էլեկտրոնային լրատվաշուկայում, նպատակահարմար գտանք լիցենզավորման ողջ գործընթացը ներկայացնել առանձին ենթագլխով՝ կարևորելով օրենսդրորեն կարգավորվող այդ գործընթացի կարևորությունը հայաստանյան էլեկտրոնային լրատվաշուկայի զարգացման տեսանկյունից:

Մանավանդ, որ ոլորտի մասնագետները առանձնապես կարևորեցին մրցույթների անցկացման անհրաժեշտությունն ու բազմակարծության ապահովումը հեռուստառադիոեթերում:

4. Ռադիո ոլորտի լիցենզավորումը Հայաստանի Հանրապետությունում

Հետխորհրդային ժամանակաշրջանում նախկին Խորհրդային Միության հանրապետությունների ռադիոշուկայում կատարվեցին ստեղծագործական և կառուցվածքային փոփոխություններ: Հայաստանը նույնպես անմասն չմնաց այդ գործընթացներից: Անցման շրջանի դժվարություններով պայմանավորված, մեզանում նույնպես արձանագրվեցին ռադիոկայանների հիմնման զգալի աճ:

Արդեն 1990-ական թվականների կեսերին մասնավոր ռադիոոլորտում սկզբում տարերայնորեն, այնուհետև բնականոն ձևավորման ընթացքը հանգեցրեց հանրապետությունում տարբեր ձևաչափեր ունեցող ռադիոկայանների հիմնում: Հանրապետական ռադիոոլորտի աշխատանքը կանոնակարգելու, լիցենզավորելու, գործունեության անհրաժեշտ իրավական դաշտ ձևավորելու համար, համաձայն «ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի, ձևավորվեցին երկու համապատասխան կառույցներ՝ ՀՀ հեռուստառադիոխորհուրդը, որը կանոնակարգում է ՀՀ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը, և ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը, որն իրականացնում է մասնավոր հեռուստառադիոոլորտի լիցենզավորումն ու մոնիտորինգը:

Հաշվի առնելով հանրապետությունում ռադիոշուկայի առանձնահատկություններն ու զարգացման միտումները՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձաժողովը կիրարկում է բացառապես դաշտը կարգավորող գործառույթներ. կազմակերպում և կանոնակարգում է եթերային հաճախությունների հրապարակային և մրցութային հատկացումը, հաստատում է լիցենզիաների ձևերը, կազմում և հրապարակում է լիցենզիայի տերերի ցուցակը, հսկում է լիցենզիայում նշված պայմանների կատարումը, ռադիոհաղորդումների

ձայնագրությունների օգտագործման միջոցով պարզում դրանց համապատասխանությունը գործող օրենսդրությանը, ինչպես նաև տեխնիկական միջոցների համապատասխանությունը գործող ստանդարտներին և տրված լիցենզիային:[132]

Նշենք, որ հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում լիցենզավորումը արմատապես տարբերվում է այլ ոլորտների լիցենզավորումից, որը պայմանավորված է առաջին հերթին այդ ոլորտում հեռուստառադիոկապուղիների սահմանափակ քանակությամբ ու սահմանափակ տեխնիկական հնարավորություններով:

Բնականաբար, հարց է ծագում. ինչո՞ւ է ռադիոկապուղիների քանակությունը սահմանափակ և ի՞նչ է նշանակում սահմանափակ ռեսուրսի կապուղի:

Դեռևս անցյալ դարի 1920-ական թվականներին, երբ նոր էին ձևավորվում ռադիոոլորտի գործունեության հիմնական ուղղությունները, զարգացած երկրներում, ինչպես, օրինակ, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում պետության կողմից նշանակված հատուկ կարգավորիչ մարմինների միջոցով մշակվեց կապուղիների ռացիոնալ օգտագործման այնպիսի հայեցակարգ, համաձայն որի՝ սահմանվեցին եթերի օգտագործման հնարավորություններն ու թույլատրելիության սահմանները: Կարգավորիչ մարմինը, չափագրելով տվյալ պետության տարածքում կապուղիներով հեռարձակման հնարավորությունները, որոշում էր լիցենզիա ստացած ռադիոկայանների եթեր հեռարձակելու համար նախատեսված ֆիզիկապես սահմանափակ կապուղիները և դրանց թույլատրելիության սահմանները, միաժամանակ արձանագրելով, որ դրանց մեծացման դեպքում կարող է խախտվել տվյալ պետության համար նախատեսված եթեր հեռարձակման հնարավոր սահմանները և ներթափանցում այլ պետության եթերային տարածք:[133]

Արդեն 1920-ական թվականների վերջերին Ամերիկայի Միացյալ Նահանգներում եթերային հաղորդումներ էին պատրաստում վեց հազարից ավելի ռադիոկայաններ: Այդ ռադիոհաղորդումներն

132 Հայաստանի Հանրապետության օրենքը հեռուստատեսության և ռադիոյի մասին՝ հարակից օրենքներով, Երևան, 2011, էջ 18:

133 Рихтер А.Лицензирование и ограниченный ресурс частот, В кн. Законодательное регулирование общесчтвенного и частного вещания, Ереван, 2002, с.147.

ունկնդրում էին ամերիկյան ընտանիքների ավելի քան 40 տոկոսը: Հաշվի առնելով այդ իրողությունները՝ 1927թ. ԱՄՆ-ի կառավարությունը աշխարհում առաջինն ընդունեց «Ռադիոյի մասին» օրենք, որը նպատակ ուներ կանոնակարգելու շուկայական հարաբերությունների պայմաններում ռադիոկայանների գործունեությունը և այդ հարաբերությունների կարգավորումը տեղափոխել իրավական դաշտ: Համաձայն «Ռադիոյի մասին» օրենքի ստեղծվեց դաշնային հանձնաժողով, որի պարտականություններն էին լուծել հեռարձակողների տեխնիկական խնդիրները, մրցութային եղանակով կազմակերպել հեռարձակման կապուղիների հատկացումը և տնօրինումը, կանխել զանազան ռադիոազդանշանների անօրեն հեռարձակումը եթերում, ինչպես նաև լիցենզիայի տրամադրում մրցույթով հաղթած ռադիոկայաններին՝ համաձայն իրենց հեռարձակման ձևաչափի (դեցիմետրային, մետրային, լարային):[134]

Զարգացած երկրներում ռադիոկայաններին տրամադրված կապուղիների օգտագործումը արդյունավետ դարձնելու և տվյալ պետության սահմաններից դուրս դրանք կանոնակարգելու համար արդեն 1930-ական թվականների կեսերին փորձեր կատարվեցին կապուղիների տրամադրման տեխնիկական չափանիշները համապատասխանեցնելու միջազգային ստանդարտներին: Այդ նպատակով 1936թ. Ժնևում ստեղծվեց Հեռահաղորդակցության միջազգային միություն, որն ամեն տարի կազմում և ազգային պետական կառավարման հեռահաղորդակցության մարմիններին է տրամադրում տվյալ պետության տարածքում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար նախատեսված հաճախությունների ցանկը:[135] Այդ միջազգային հեռահաղորդակցության ծառայությունից այժմ օգտվում է նաև Հայաստանի Հանրապետության պետական կառավարման հեռահաղորդակցության մարմինը, որին միջազգային միությունը պարբերաբար տրամադրում է Հայաստանի Հանրապետությունում եթերային հաճախությունների ցանկը, որն էլ իր հերթին այն փոխանցում է հեռարձակման հաճախությունների

134 История мировой журналистики, под ред. А.Г. Корнилова, Ростов-на-Дону, 2000, с. 279.

135 Նույն տեղում՝ էջ 280:

մրցույթ կազմակերպող ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին:

Համաձայն Ազգային հանձնաժողովի կանոնակարգ-օրենքի ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի կամ ցանկացած գրանցված կազմակերպություն հնարավորություն ունի մասնակցելու Ազգային հանձնաժողովի կողմից կազմակերպվող եթերային հաճախությունների մրցույթին, սակայն, նկատի ունենալով կապուղիների ֆիզիկապես սահմանափակ քանակությունը, տվյալ կապուղիով եթեր կարող է հեռարձակվել այն անձը կամ կազմակերպությունը, որը հաղթող է ճանաչվել տվյալ կապուղու համար հայտարարված մրցույթում և լիցենզիայի պահանջներին համապատասխան կարող է վարել ինքնուրույն ծրագրային քաղաքականություն:

Հաշվի առնելով լիցենզավորման բնագավառում ձևավորված միջազգային փորձը, ինչպես նաև ռադիոկապուղիների սահմանափակ քանակությունը և պետության պարտավորություններն այդ ոլորտում տարակարծության և այլակարծության ապահովումը, Ազգային հանձնաժողովը հնարավոր է դարձնում հեռարձակողների առջև դնել մի շարք պարտադիր պահանջներ և չափանիշներ, որոնք ներառված են նաև լիցենզիա տալու համար նախատեսված պայմանների ցանկում:

Հայաստանի Հանրապետությունում ռադիոհաղորդումների հեռարձակման լիցենզիա տալու գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնական փուլերի.

Առաջին՝ 1991-2001 մարտ, երբ հեռարձակման լիցենզիան տրամադրում էր ՀՀ կապի նախարարությունը, հիմնական նախապայման ընդունելով հեռարձակողի տեխնիկական պատրաստվածությունը:

Երկրորդ՝ 2001թ. մարտից մինչ օրս, երբ լիցենզիան տրամադրում է ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը, որն իբրև նախապայման ընդունում է ոչ միայն տվյալ ռադիոկայանի տեխնիկական հագեցվածությունը, այլև նրա վարած ծրագրային քաղաքականությունը, աշխատակազմի պատրաստվածությունը և ֆինանսական հնարավորությունները:

Հեռարձակողին լիցենզիա տրամադրելու դրույթներն արտացոլված են Հայաստանի Հանրապետության «Հեռուստատեսության և ռադիոյի

մասին» օրենքում, ինչպես նաև հարակից օրենքներում:

Պետք է նշենք, որ ռադիոդաշտը կարգավորող օրենքների կազմման և կիրարկման համար հիմք են հանդիսացել եվրոպական երկրներում գործող նմանատիպ միջազգային կոնվենցիաներն ու հիմնական օրենքները: Այդ կոնվենցիաներն ու օրենքներն ընդունած պետությունների ռադիոընկերությունների գործունեությունը կանոնակարգվում է միջազգային ընդունված չափանիշներին և նորմերին համապատասխան:

Այսպես, ՀՀ պետական կառավարման հեռահաղորդակցության մարմինը, օգտվելով Հեռահաղորդակցության միջազգային միության ներկայացրած ցուցակից, կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար նախատեսված եթերային հաճախությունների ցանկը և պարբերաբար տրամադրում Ազգային հանձնաժողովին: Իր հերթին, Ազգային հանձնաժողովը ըստ անհրաժեշտության, բայց տարին առնվազն մեկ անգամ, հրապարակում է հաճախությունների ամբողջական ցանկը և հայտարարում ազատ (չզբաղեցված) հաճախությունների մրցույթ, ամեն տարվա սկզբին սահմանում է մրցույթի անցկացման կարգը, պայմանները և ժամկետները՝ ելնելով եթերային հաճախությունների առկա վիճակից, ինչպես նաև սահմանում՝ լիցենզիա ստացողի համար վճարի չափը և մուծումների կարգը:

Համաձայն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 47 հոդվածի՝ լիցենզիան միակ օրինական հիմքն է, որը թույլ է տալիս մրցույթով հաղթողին իրականացնել հեռուստառադիոհաղորդումների արտադրություն, օգտվել որոշակի հաճախականությունից՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիոհաղորդումների իրականացման նպատակով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի: Հեռարձակման լիցենզիան տրվում է բացառապես մրցութային կարգով՝ հաճախությունների ցանկին համապատասխան:

Իսկ լիցենզիայի տիրոջ ընտրության ժամանակ Ազգային հանձնաժողովը հաշվի է առնում ռադիոընկերություններում սեփական արտադրության հաղորդումների գերակայությունը, հայրենական

արտադրության հաղորդումների գերակայությունը, դիմողի տեխնիկական և ֆինանսական հնարավորությունները, ինչպես նաև աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությունը:

Եթե դիմողը հավակնում է ստանալ կաբելային (մալուխային) հեռուստառադիոհաղորդումների իրականացման լիցենզիա, ապա նա պարտավոր է ներկայացնել նաև տեղական ինքնակառավարման մարմինների համաձայնությունը՝ համապատասխան ցանց ստեղծելու ժամանակ տեխնիկական պայմանների իրականացման վերաբերյալ:

Ելնելով այդ պայմաններից և հաշվի առնելով մայր օրենքի համապատասխան հոդվածները՝ Ազգային հանձնաժողովը մշակել է հաճախությունների մրցույթին մասնակցելու համապատասխան դիմում և տեղեկատվության ձև:

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից մշակված ռադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի մասին օրինակելի փաստաթղթերում, որոնք մշակվել են Ազգային հանձնաժողովի կողմից հաշվի են առնվել տեղական ռադիոշուկայում հայրենական արտադրողի շահերը, սեփական արտադրանք ունեցող ռադիոկայանների շահերը, տեղական լսարանին ամբողջական, սպառիչ տեղեկատվություն հաղորդելու անհրաժեշտությունը, հեռուստառադիոկայանների կողմից վարվող ծրագրային, երաժշտական և գովազդային քաղաքականությունը, աշխատակազմի պատրաստվածությունը, ֆինանսական հնարավորությունները և լիցենզային վճարը: Լիցենզային վճարի և տեղական լուրերի հեռարձակման հարցերում Ազգային հանձնաժողովը որոշեց տարբերակում դնել մայրաքաղաքային և մարզային ռադիոկայանների միջև:

Հեռարձակման լիցենզիան Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից տրվում է մրցույթում հաղթած կազմակերպությանը կամ անհատին՝ տասը տարի ժամկետով:

Արդի փուլում հանրապետական ռադիոշուկայում գործող տասնութ լիցենզավորված մասնավոր ռադիոկայաններից տասնվեցը գործում են մայրաքաղաքում, երկուսը՝ մարզերում: Դրանք լիցենզավորված են Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից և գործում են համապատասխան տիրույթներում: Հանրային

ռադիոընկերությունների շարքում իր ուրույն տեղն ունի «Վէմ» ռադիոկայանը, որ եթեր է հեռարձակում հիմնականում հոգևոր-կրոնական, մասնավորապես Հայ Առաքելական եկեղեցուն նվիրված քարոզչություն, ինչպես նաև հոգևոր և դասական երաժշտություն:

Բացի վերը նշված մասնավոր ռադիոկայաններից ՀՀ տարածքում միջպետական պայմանագրով, շուրջօրյա վերահեռարձակվում են ֆրանսիական «PFI», «Ազատություն» և «Միր» ռադիոընկերությունները:[136]

Հայաստանի հանրային ռադիոյի ծրագրային հեռարձակման քաղաքականությունը կանոնակարգվում է ՀՀ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից:

Այժմ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակվում են 25 ռադիոընկերություններ:

Ստորև ներկայացնում ենք ամբողջական ցուցակը.

Հայաստանի հանրային ռադիոընկերություններ

1.	Հայաստանի հանրային ռադիո, մետրային, արբանյակային,	FM 69,8 ՄՀց, FM 107,6 ՄՀց
2.	«Շիրակ» մարզային հանրային ռադիո,	FM 102.5 ՄՀց
3.	Հանրային ռադիոյի երկրորդ ծրագիր, FM «Իմ ռադիո»	103.8 ՄՀց
4.	«Վէմ» ռադիոկայան	5. FM 91.1 ՄՀց

Մասնավոր

1.	«Ռադիո Երևան»,	FM 101.9 ՄՀց հանրապետական սփռում
2.	«Հայ ՖՄ»	FM 105.5 ՄՀց
3.	«Ռադիո Հայ»,	FM 104.1 ՄՀց հանրապետական սփռում
4.	«Ռադիո Վան»,	FM 103.1 ՄՀց
5.	«Ռուսսկոյե ռադիո»,	FM 104.9 ՄՀց
6.	«Ռադիո Մարշալ»,	FM 103.5 ՄՀց

136 Միջպետական պայմանագրով հեռարձակվող հեռուստառադիոընկերությունները Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից չեն լիցենզավորվում: «Վեմ» ռադիոկայանը 2015թ. ընդգրկած է ՀՀ Հանրային հեռուստառադիոխորհրդի կազմում:

7. «Լավ ռադիո», FM 106.9 ՄՀց
8. «Սպուտնիկ-Արմենիա», FM 106.0 ՄՀց
9. «Լրատվական ռադիո», FM 106.5 ՄՀց
10. «Ռադիո Ավրորա», FM 100.6 ՄՀց
11. «Ավտոռադիո», FM 89.7 ՄՀց
12. «Ռադիո Ջան», FM 90.7 ՄՀց
13. «Ռադիո Շանսոն», FM 90.2 ՄՀց հանրապետական սփռում
14. «Ռադիո Շանթ», Գյումրի, FM 104.1 ՄՀց
15. «Լոռու ՄԻԳ», Վանաձոր, FM 103.8 ՄՀց
16. «Փոփ FM», FM 89.3 ՄՀց
17. «Քիսս FM», FM 88.3 ՄՀց
18. «Եվրոպա պլյուս», FM 87.5 ՄՀց

Միջպետական պայմանագրով աշխատող ռադիոընկերություններ

1. «ՖՄ-102.4» Ֆրանսիական միջազգային ռադիոկայան, 102.4 ՄՀՑ
2. «Ազատություն» ռադիոկայան [137]
3. «Միր» հեռուստառադիոընկերության հայաստանյան մասնաճյուղ, 93.7 ՄՀց

Մասնավոր ռադիոալիքներում տեղի ունեցող փոփոխությունները մրցակցային դաշտ ստեղծեցին նաև Հայաստանի հանրային ռադիոյի համար: Հանրային կառույցի լրատվամիջոցը որակապես վերանայեց իր վարած ծրագրային քաղաքականությունը, և համապատասխանեցրեց հանրապետական ռադիոշուկայի պահանջներին՝ պատրաստելով մրցունակ և որակապես նոր ռադիոհաղորդումներ:

Արդի փուլում շուկայական հարաբերությունների պայմաններում հայաստանյան ռադիոալիքների հետագա զարգացման վրա մեծապես ազդում են նաև նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը, առցանց ռադիոն, համակարգչային տեղեկատվական բանկի ստեղծումը, մուլտիմեդիան և ցանցային ժուռնալիստիկան:

137 «Ազատություն» ռադիոկայանի հաղորդումները հեռարձակվում են «Երևան» և «Ռադիո Հայ» մասնավոր ռադիոկայանների եթերում:

Ժամանակակից փուլում ողջ աշխարհում ընթանում են հեռահաղորդակցման միջոցների և համացանցի սրընթաց զարգացման և տարածման անշրջելի գործընթացներ, առանց որոնց անհնար է պատկերացնել հանրային կյանքի որևէ ոլորտ կամ բնագավառ:

Գլոբալացման և արմատական փոփոխությունների դարաշրջանում տեխնիկական միջոցների զարգացումն ու առաջընթացն առաջ բերեցին հաղորդակցման և տեղեկատվության հավաքման և փոխանցման նոր, առավել հասանելի և արդյունավետ միջոցներ, որոնք իրենց հերթին ձևավորեցին հանրային և անհատական հաղորդակցման նոր հարաբերություններ, ձևեր և դրսևորումներ:

Արդի փուլում գլոբալացումը դարձել է արագ փոփոխվող աշխարհի խորհրդանիշ:

Ըստ հայ տեսաբանի՝ «Այսօրվա գլոբալացումն հասարակական-տնտեսական տեխնոլոգիական օրինաչափ գործընթացների օբյեկտիվորեն անխուսափելի հետևանք է, որի մեջ ակամա ներգրավված են բոլոր ազգերն ու պետությունները»:[138] Տեսաբանների մեծ մասը հակված է այն տեսակետին, որ գլոբալացումը նոր երևույթ չէ և իր դրսևորումներն է ունեցել նախորդ դարերում ևս[139], մի մասը կարծում է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և համացանցը հնարավորություն են տվել գլոբալ տեղեկատվամիջոցներին առավել ակտիվ դերակատարում ունենալ հասարակական-քաղաքական, մշակութային արժեքների տարածման ասպարեզում և դառնալ տարբեր քաղաքակրթությունների և մշակույթների մերձեցման և տարածման միջոց:[140] Այդ պատճառով է, որ խոշորագույն տեղեկատվամիջոցները

138 Մկրտչյան Ա.Ս., Գլոբալիզացիա, թե «գլոբալիզացիա», Ի սկզբանէ էր Բանն, /ժուռնալիստիկայի և գրականագիտության հարցեր/, Երևան, 2004, էջ 21:

139 Manuel Castells, The rise of network society, sekond edition, Singapore, 2010, 65 p., Անանյան Գ.Գ., Հանուն և ընդդեմ գլոբալիզացիայի, Երևան, 2003, էջ 6, Вартанова Е.Л., Постсоветские трансформации российских СМИ и журналистики, М., 2013, стр.147.

140 Засурский Я.Н. Информационное общество и СМИ // Медиаскоп //. 20.06.2006г., стр. 89, Մկրտչյան Ա.Ս., Գլոբալիզացիա, թե «գլոբալիզացիա», Ի սկզբանէ էր Բանն, /ժուռնալիստիկայի և գրականագիտության հարցեր/, Երևան, 2004, էջ 19:

գլոբալացման հնարավորություններն օգտագործելով կարճ ժամանակահատվածում կարողացան նորանկախ պետություններում ձևավորել տեղեկատվական ազդեցության այնպիսի գոտիներ, որոնք հնարավորություն տվեցին տեղեկատվամիջոցներին կառավարելու և ուղղորդելու տեղեկատվական գլոբալ հոսքերը: Վերջին տասնամյակներում մեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական և տնտեսական նոր հարաբերություններով պայմանավորված գլոբալացման գործընթացները որակական նոր կարողություններ ստեղծեցին տարածաշրջանային նորանկախ երկրների, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության համար: Նոր ձևավորվող տեղեկատվական հոսքերում մեծապես կարևորվեց և արժևորվեց հանրապետական ռադիոյի տեղն ու դերը որպես գլոբալ տեղեկատվական նոր դաշտի առանցքային խաղացողի և ձևավորողի: Գլոբալ արմատական փոփոխությունները մեծապես ազդեցին հանրապետական ռադիոյի վարած ծրագրային քաղաքականության և կարգավիճակի վրա, որոնք համընկան տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական փոփոխություններով, հատկապես «սառը պատերազմի» ավարտով, սոցիալիզմի սիստեմի փլուզմամբ և նոր, շուկայական տնտեսական հարաբերություններով պայմանավորված: Այդ պատճառով մեզանում զանգվածային տեղեկատվամիջոցների, հատկապես, հանրապետական ռադիոյի հետագա զարգացումը տեղի ունեցավ թռիչքաձև և բավականին կարճ ժամանակահատվածում, որը լուրջ նախադրյալներ ստեղծեց նոր, գլոբալ ռադիոտեղեկատվական, քարոզչական հարաբերությունների ձևավորմանը, տեղեկատվական գլոբալ հոսքերի կտրուկ մեծացմանն ու ընդլայնմանը, որոնց շնորհիվ Հանրային ռադիոն դարձավ գլոբալ տեղեկատվության և մշակույթի տարածման ամենամատչելի և ամենաընդունելի լրատվամիջոցներից մեկը:

Ռադիոյի զարգացման միտումները բավականին դրական է գնահատել հայտնի սոցիոլոգ և փիլիսոփա Մանուել Կաստելսը, մասնավորապես նշելով, որ շնորհիվ համացանցի ռադիոն ռենեսանս է ապրում, դառնալով ամենատարածված կապի միջոցն աշխարհում»[141]:

141 Кастельс М. Галактика Интернет: Размышления об Интернете, бизнесе и обществе/ пер. с англ. А. Матвеева под ред. В.. Харитонова. Екатеринбург, 2004. С.223.

Գլոբալացման գործընթացները, մեր կարծիքով, Հայաստանի Հանրային ռադիոյին տվեցին ոչ միայն լայն հնարավորություններ ինտեգրվելու տարածաշրջանային և միջազգային տեղեկատվական շուկաներին, այլև սերտացնելու կապերը Սփյուռքի և արտերկրի մի շարք պետական, ոչ պետական, հոգևոր-կրոնական կառույցների հետ: Հատկապես մեզ նման մեծ սփյուռք ունեցող երկրների համար համացանցի և թվանշային տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործումը բավականին սերտացրել է տեղեկատվամիջոցների, հատկապես ռադիոկայանների գործունեությունը, փոխադարձ լսելի դարձնելով եթեր հեռարձակվող հաղորդումներն ու ծրագրերը: Վերջին տասնամյակներում ՀՀ-ում և Սփյուռքում գործող ռադիոկայանները թվանշային տեխնոլոգիաներից և հատկապես համացանցի հնարավորություններից օգտվելով ձևավորեցին մուլտիմեդիա հնարավորություններով ինտերակտիվ երկլեզու և եռալեզու կայք էջեր, կազմակերպեցին առցանց հեռարձակում, անհամեմատ սերտացնելով հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունները: Հայաստանյան և Սփյուռքի ռադիոկայանները դարձան ինտերակտիվ տեղեկատվական և քարոզչական հարթակ՝ հնարավորություն տալով տարբեր երկրներում ապրող մեր հայրենակիցներին միմյանց հետ շփվելու և մասնակցելու կազմակերպվող համահայկական տարբեր միջոցառումներին, պարբերական և առաջնահերթ դարձրին մայրենիի, հոգևոր և մշակութային ինքնության քարոզչությունը ռադիոեթերում: Սփյուռքի պայմաններում գործող չորս տասնյակից ավելի ռադիոկայանների և ռադիոժամերի մեծ մասը, ինչպես նաև մեկ տասնյակի հասնող առցանց ռադիոկայանները համացանցի միջոցով լսելի են դարձել Հայաստանի Հանրապետությունում: Իր հերթին սփյուռքի և արտասահմանի ռադիոունկնդրի մշտական լսելիության շառավղում է գտնվում ոչ միայն ՀՀ հանրային ռադիոն, այլև համացանցային հեռարձակում ապահովող եթերային և առցանց ՀՀ մասնավոր ռադիոկայանները:

Գլոբալացման պայմաններում ՀՀ հանրային ռադիոյի զարգացման գործընթացները Հայաստանի Հանրապետությունում պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ փուլերի.

ա/ տեղեկատվական տեխնոլոգիաներով պայմանավորված, որը հնարավորություն տվեց անցում կատարելու

ռադիոհեռարձակման նոր թվանշային ստանդարտների,

բ/ Համացանցի զարգացմամբ և նրա հնարավորությունների օգտագործմամբ,

գ/ Շարժական սարքերի, հատկապես բջջային հեռախոսների օգտագործմամբ:

Անդրադառնալով տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը պետք է նշենք, որ Ժամանակակից փուլում տեղեկատվական տեխնոլոգիաները ողջ աշխարհում այնպիսի առաջընթաց են արձանագրել, որ հնարավորություն են տվել ռադիոհեռարձակման ոլորտին թևակոխելու որակական նոր, թվանշայնացման փուլ:

Հայաստանում թվանշային հեռարձակման նոր ստանդարտների է անցել ՀՀ հանրային ռադիոն: Հեռարձակման նոր ստանդարտներով պայմանավորված Հանրային ռադիոն զգալիորեն մեծացրել է միջազգային սփռման շառավիղն ու զգալիորեն բարելավվել հեռարձակվող հաղորդումների լսելիությունը: Հայաստանյան մասնավոր ռադիոկայանները նույնպես նախապատրաստական աշխատանքներ են տանում անցում կատարելու նոր ստանդարտների:

Պետք է նշել, որ չնայած ժամանակակից փուլում էականորեն մեծացել են ռադիոհեռարձակման տեխնիկական հնարավորություններն ու ձևերը, այնուամենայնիվ աշտարակային, մետրային հեռարձակումը աշխարհի ցանկացած պետության, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության համար, ունի ռազմավարական նշանակություն և առաջնահերթություն: Այդ իրողություններից ելնելով մեր պետությունը մեծ ուշադրութուն է դարձնում Հանրային ռադիոյի հեռարձակման հնարավորություններին, ներքին և արտաքին լսարանների համար պատրաստվող և հեռարձակվող տեղեկատվությանը:

Օգտվելով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հնարավորություններից, Հայաստանի Հանրապետության ռադիոշուկայում գործող մասնավոր ռադիոկայանները փորձեր են կատարում դուրս գալ միջազգային ռադիոհեռարձակման ասպարեզ և հաղորդումներ պատրաստել տարածաշրջանային երկրների ռադիոլսարանների համար:

Անդրադառնալով համացանցի հնարավորությունների

օգտագործմանը, պետք է նշենք, որ այն նոր ասպարեզ և հեռանկարներ բացեց Հայաստանի Հանրապետությունում և Սփյուռքում գործող ռադիոընկերությունների համար: Հայաստանի Հանրապետությունում այդ գործընթացն սկսվեց 1990-ականների կեսերից և իր շարունակությունը գտավ հետագա տարիներին: Հայաստանի Հանրապետությունում գործող ռադիոընկերությունների համացանցային ռադիոկայքերի հիմնական «դոմեյնը» 1994թ. օգոստոսի 26-ին գրանցված am տիրույթն է: Համացանցի զարգացումը հնարավորություն տվեց հեռարձակվող ռադիոկայաններին, այդ թվում նաև Հանրային ռադիոյին բացի օֆլայն հեռարձակումից կազմակեր-պելու նաև առցանց հեռարձակում, որը կարճ ժամանակահատվածում բավականին մեծ լսարան հավաքեց: Հանրային ռադիոյի ի հայտ գալը համացանցում նախանշեց մրցակցության և զարգացման նոր շրջափուլ՝ էականորեն մեծացնելով պոտենցիալ և իրական լսարանի թիվն ու տեղեկատվություն հաղորդելու շառավիղը:

Հանրային ռադիոն կարողացավ ժամանակին ճիշտ կողմնորոշվել և արդյունավետ օգտագործելով համացանցի հնարավորությունները գտավ տեղեկատվության տարածման նոր ուղիներ ու միջոցներ: Հիմնելով մուլտիմեդիա հնարավորություններով, կոնվերգենացված, ինտերակտիվ ռադիոկայք և կազմակերպելով առցանց հեռարձակում կարողացավ ընդարձակել հեռարձակման շառավիղը՝ ռադիոկայանը կողմնորոշելով աշխարհի տարբեր երկրներում գտնվող իր ռադիոունկնդիրներին: Այդ աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու համար Հանրային ռադիոն սոցիալական ցանցերում սկսեց ձևավորել կայքէջեր և աջակցման խմբեր, որոնց միջոցով պարբերաբար կազմակերպում է առցանց քննարկումներ և բանավեճեր:

Մուլտիմեդիականությունը, կոնվերգենացումը և ինտերակտիվությունը, որոնք թվանշայնացման գործընթացների արդյունք են, դարձան արդի ռադիոլրագրության բնութագրիչներն ու կողմնորոշիչները:

Ժամանակակից փուլում առցանց հեռարձակում են ապահովում մի շարք հայաստանյան ռադիոընկերություններ՝ «Ռադիո Վանը», «Լրատվական ռադիոն», «Ռադիո Վեմը», «Ռադիո Երևանը»,

«Ազատություն» ռադիոկայանի հայաստանյան ծառայությունը և այլն:

Հայաստանյան ռադիոոլորտի վերջին տարիների նորություններից է ռադիոկայանների կողմից համացանցի տեսալսողական հնարավորությունների օգտագործումը, որի շնորհիվ «անտեսանելի» ռադիոն ոչ միայն դարձավ «տեսանելի», այլև սկսեց հաջողությամբ մրցակցել լրատավական և օպերատիվ տեղեկատվություն տարածող հեռուստաընկերությունների հետ՝ սկիզբ տալով որակապես նոր հաղորդումների՝ ռադիոդիտմանը: Նմանատիպ գործունեության հաջողված օրինակներից են «Լրատվական ռադիոյի», «Ազատություն» ռադիոկայանի, «Ավրորա» ռադիոկայանի կողմից պատրաստվող օպերատիվ տեսալսողական հաղորդումները, որոնք ռադիոդիտողների բավականին մեծ լսարան են ապահովում:

Հայատանյան ռադիոկայանները ներկայացված են նաև You Tube տեսահոսթինգում, որը հնարավորություն է տալիս նրանց օգտվելու տեղեկատվական այս նոր հարթակում առկա դրսևորման ձևերից ու միջոցներից:

Շարժական սարքերի, հատկապես բջջային հեռախոսների միջոցով ռադիոն մեծ տարածում է գտել ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Այժմ առցանց հեռարձակման հնարավորություն ունեն Լոս Անջելեսում գործող, շուրջօրյա հեռարձակում ապահովող «Երևաննայթս», «Ռադիո Հայ», Բոստոնի «Անկախ ձայնասփյուռ», Մոնրեալի «Նարեգ», Փարիզի «Այբ FM», Բեյրութի «Սևան», «Վանա ձայն», Մոնտեվիդեոյի «Արմենիա» և այլ հայկական ռադիոկայաններն ու ռադիոժամերը:

Շարժական ռեսուրսի ծառայությունները հնարավորություն են տալիս առցանց հեռարձակում իրականացնող ռադիոկայաններին կատարելու երկարաժամկետ և կարճաժամկետ հավելվածների արխիվացում՝ հնարավորություն ընձեռելով օգտատերերին իրենց հարմար ժամին ունկնդրելու արխիվացված հավելվածները: ՀՀ-ում շարժական կապի նմանատիպ ծառայություններից օգտվում են ՀՀ հանրային ռադիոն, «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությունը, «ՎԷՄ», «Սպուտնիկ-Արմենիա» և այլ ռադիոկայաններ:

Պետք է նշենք, որ Հայաստանում բջջային FM հաճախականությամբ ռադիոունկնդիրների թիվը 2-3 անգամ գերազանցում է առցանց

հեռարձակմամբ ռադիոունկնդիրների թվին:

Նման միտում է նկատվում նաև ամբողջ աշխարհում:

2016թ. փետրվարի 2-ին Հանրային ռադիոյի տնօրեն նշանակվեց Արման Սաղաթելյանը: Պաշտոնավարման կարճ ժամանակահատվածում Ա.Սաղաթելյանն ավարտին հասցրեց Հանրային ռադիոյի թվայնացման աշխատանքները, որը հնարավորություն տվեց ամբողջությամբ անցում կատարելու թվային ստանդարտների ու հեռարձակման: Թվային հեռարձակման սկիզբը ՀՌ-ում տրվեց 2016թ. սեպտեմբերի 1-ին:

2016-ից մինչև 2017 թվականը Հայաստանի հանրային ռադիոընկերության գործադիր տնօրեն՝ Արման Սաղաթելյան

Ա.Սաղաթելյանի պաշտոնավարման ընթացքում ավելացավ ՀՌ-ի «խոսակցական» բաղադրիչը, հիմնվեցին մի շարք սոցիալ-քաղաքական, առողջապահական, իրավական բնույթի հաղորդաշարեր, մեծ ուշադրություն դարձվեց լսարանի հետ շփման ինտերակտիվությանն ու անմիջական կապին:

Հայաստանի հանրային ռադիոընկերության գործադիր տնօրեն՝ Մարկ Գրիգորյան

2017թ. հունիսի 12-ից ՀՌ-ն ղեկավարում է հայտնի լրագրող Մարկ Գրիգորյանը, որը հաղորդացանցում էականորեն մեծացրել է երաժշտական ծրագրերի ժամաքանակը: Դա նաև լսարանի պահանջն է՝ հեռարձակել բազմաժանր և բազմաթեմա երաժշտական նյութ:

Ըստ Մարկ Գրիգորյանի՝ վերջին մեկ տարում Ռադիոյի կյանքում տեղի է ունեցել երկու կարևոր իրադարձություն՝ «Թավշյա» հեղափոխությունը, երբ Ռադիոն անկաշկանդ կեցվածքով, հետևողականորեն և անաչառ հայացքով լուսաբանեց դեպքերի ամբողջ ընթացքն ու կրկին հայտնվեց ռադիոլսարանի ուշադրության կենտրոնում: Հաջորդը Ռադիոյի նոր կայքի ստեղծումն է. այն համացանցում ներկայացվում է թեև հին հասցեով՝ armradio.am, բայց նորացված ու ամբողջական տեսքով:

Ռադիոյի Նվիրյալների արահետը

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Անանյան Գ.Գ., Հանուն և ընդդեմ գլոբալիզացիայի, Երևան, 2003:
2. Ամիրբեկյան Վ., Հայաստանի մամուլը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Երևան, 1971:
3. Գալյան Մ., Մի ակնարկ Հայաստանի ռադիոսիրողների շարժման մասին, Եր.,
4. Ռադիոաշխատող, 1937, N 4-5:
5. Դոյդոյան Շ., ՁԼՄ և օրենսդրություն, Երևան, 2007:
6. Երիցյան Ս., Խոհեր[a] կադրից դուրս, Երևան, 2002:
7. Կարագուլյան Վ.,Ռադիոհաղորդումների բնույթը, Երևան, Ռադիոաշխատող, 1936, № 9- 10:
8. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928:
9. Պողոսյան Ստ., Սովետական Հայաստանի հեռուստատեսությունը և ռադիոն, Երևան, 1985:
10. Ձորյան Ստ., Հուշերի գիրք, Երևան,1991:
11. Ղազարյան Գ., Սովետական Հայաստանի ռադիոհաղորդման և ռադիոֆիկացման 10 տարին, «Ռադիոաշխատող», Երևան, 1937, № 6:
12. Տոնիկյան Ա., Երաժշտական հաղորդումները երկրորդ տասնամյակի շեմին,
13. «Ռադիոաշխատող», Երևան, 1937, №6:
14. Թերլեմեզյան Ռ., Ռադիոն և մասսաների երաժշտական դաստիարակությունը, «Խորհրդային Հայաստան», 1940, 22-ը հոկտեմբերի:
15. Հեռուստատեսություն և ռադիո: Լրագրություն և ստեղծագործական մենեջմենտ, Երևան, Երևանի մամուլի ակումբ, Ինտերնյուս, Բաց հասարակության ինստիտուտ, 2000:
16. Հովսեփյան Մ., Ռադիոշուկայի ձևավորման և զարգացման ժամանակակից միտումները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2002:
17. Հովսեփյան Մ.Մ., Ռադիոժուռնալիստիկայի հիմունքներ. պատմություն և տեսություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2014:
18. Հովեյան Հ., Գրական գեղարվեստական հաղորդումների առանձնահատկությունները հանրային ռադիոյի եթերում, «Ժուռնալիստիկա», պրակ Գ, Երևան, 2001:

19. Նժդեհ Գ., Ցեղի հավիտենական զենքը, Երևան, 1998:
20. Նժդեհ Գ., Ցեղային արթնություն, Երևան, 1998:
21. Ոսկանյան Վ., Երևանն է խոսում, այսպես սկսվեց 1947 թ. հոկտեմբերի 10-ը, «Եթերում է Երևանը», 1969, 5-ը ապրիլի:
22. Մարության Ստ., Եթերում Երևանն է, Երևան, 1998:
23. Մկրտչյան Ա.Ս., Գլոբալիզացիա,թե «գլոբալիզացիա», Ի սկզբանէ էր Բանն, /ժուռնալիստիկայի և գրականագիտության հարցեր/, Երևան, 2004:
24. Քոիլեր Դ., Ֆորմատ, Ռադիոհեռուստատեսային լուրերի պատրաստման և մատուցման ձեռնարկ, Երևան (թարգմանություն անգլերենից), 2001:
25. Айдинян В., В зоне бедствия, Голос Армении, 1988, 12 декабря.
26. Акопов А., Долг памяти, Журналист, Москва, 1989, № 1,
27. Бугрим В., Истина о Чернобыле, Киев, 1994.
28. Балаян З., Противостояние, Ереван, 1989.
29. Вартанова Е.Л., Постсоветские трансформации российских СМИ и журналистики, Учебное пособие, М., Аспект Пресс, 2013.
30. Варсегов Н., Иванов-Смоленский Г., Умнов В., Друзья познаются в беде, М., «ЭКомсомольская Правда», 1988 г., 9 декабря.
31. Гай Д., Унесу боль твою, Москва, 1989.
32. Крушинский М., Проценко А., Дни скорби и мужества, Москва, 1989.
33. Ерицян С., Телевидение в системе средств массовой информации, Автореф.канд.дис., МГУ, Москва,1987г.
34. Саркисян А., Хатунцев В., Наша боль и трагедия, М., Правда, 1988, 9 декабря.
35. Левитан Ю., 50 лет у микрофона, Москва, 1980.
36. Основы радиожурналистики, под ред. А.А.Шереля. классический университетский учебник, Москва, 2005.
37. Овсепян М.М., Радиовещание в чрезвычайной ситуации: Деятельность радио Армении по ликвидации последствий землетрясения, Автореф. канд. дис., МГУ, Москва, 1991.
38. Овсепян М.М., Радиорынок Армении /Откуда и куда путь держим. Журнал Журналист, N 11, РФ, Москва, 2002г.
39. Прокопчук С., Асланян С., Свирин В., Раны Армении, М., Труд, 1988, 9 декабря.
40. Прохоров Е., Введение в журналистику, Москва, 2011.

41. Кастельс М. Галактика Интернет: Размышления об Интернете, бизнесе и обществе/ пер. с англ. А. Матвеева под ред. В.. Харитонова. Екатеринбург, 2004.
42. История мировой журналистикиё под ред. А.Г. Корниловаё Ростов-на-Донуё 2000.
43. Рихтер А., Лицензирование и ограниченный ресурс частот, В кн. Законодательное регулирование общесчтвенного и частного вещания, Ереван, 2002.Шеин В.Н., Современная радиожурналистика, теория и практика, Минск, 2010.
44. Ружников В., Так начиналось: Историко-теоретический очерк советского вещания,1917 1928,Москва, 1987.
45. Засурский Я.Н. Информационное общество и СМИ // Медиаскоп //. Москва, 2006г..
46. Шойгу С. Л., Воробьев Ю. Л., Владимиров В.А., Катастрофы и государство.- М., 1997.
47. Manuel Castells, The rise of network society, sekond edition, Singapore, 2010.
48. Hyulen P., Kart T., Handbuch Radiojournalisten, Deutshe Welle-Akademie, Berlin, 2010.
49. Hovsepyan M.M., Peculiarites and trends of development of Radio Market in Armenia: digital radio ahead, 2-nd international Radioforum, Iran, Tehran, 2009.
50. Werner J., Rundvunk und Fernsehen in Mexiko, Munchen, 1987s.
51. UNESCO Statist. Pb . Paris, 2010.
52. Պարբերական հրատարակություններ
53. «Հայաստանի Հանրապետություն», «Ազգ», «Ավանգարդ»,
54. «Հայաստան» («Խորհրդային Հայաստան»), «Եթեր» («եթերում է Երևանը»), «Երեկոյան Երևան», «Արցախ» («Խորհրդային Ղարաբաղ»), «Գրական թերթ», «Ռադիոծրագիր», Ռադիոաշխատող», «Ռադիոֆրոնտ»,
55. Голос Армении» - («Коммунист»), «Эпоха» («Комсомолец»),«Эфир» («В эфире Ереван»), «Известия», «Комсомольская Правда», «Литературная газета» «Московские новости», «Правда». «Труд», «Вечерняя Москва»
56. ՀՀ ռադիոշուկայի ոլորտը կարգավորող օրենքներ
57. « Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենք, Երևան, 1991:

58. «Լեզվի մասին» ՀՀ օրենք, Երևան, 1993:
59. «Գովազդի մասին» ՀՀ օրենք, Երևան, 1996:
60. «Հեռահաղորդակցության մասին» ՀՀ օրենք, Երևան, 1998:
61. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք, Երևան, 1999:
62. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք, Երևան, 2000:
63. «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ-օրենք», Երևան, 2002:
64. «ԶԼՄ»-ների մասին ՀՀ օրենք, Երևան, 2003:
65. Հարցազրույցներ
66. Ստեփան Պողոսյանի, Ստեփան Զաքարյանի, Գրիգոր Չալիկյանի, Կլարա Թերզյանի, Ռուբեն Մաթևոսյանի,Վարուժան Ոսկանյանի,Արման Նավասարդյանի,
67. Տիգրան Հակոբյանի, Հայկ Մարտիրոսյանի,Արամ Սաթունցի, Մարտին Վարդազարյանի
68. Կատյա Էլբակյանի,Արևիկ Ավագյանի, Սարգիս Նաջարյանի, Օֆելյա Ասատրյանի հետ:
69. Արխիվներ
70. ՀՀ ՊՊԿԱ - Հայաստանի հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ (1919-1920):
71. ՀՀ ՆՊԿՊԱ - Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ (1920-2000): Հայաստանի Հանրապետության հանրային ռադիոյի ընթացիկ արխիվ (1927-2018):
72. Հայաստանի Հանրապետության հանրային հեռուստատեսության ընթացիկ արխիվ (1985-2018):
73. Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի Ազգային հանձնաժողովի ընթացիկ արխիվ (2001-2018):
74. Հայաստանի Հանրապետության հանրային հեռուստառադիոխորհրդի ընթացիկ արխիվ (2001-2018):